

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր Ի Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ

ԵՐԵՎԱՆ
2005

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

II

Մեկնաստորյա՛ր

Արմեն և Բերսարե ճերեճեան Հիմնադրամի - ԱՄՆ

ԵՐԵՎԱՆ - 2005

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀԴՏ 94/99
ԳՄԴ 63.3 (5)
Մ 663

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հովհաննիսյան Ն. Հ. (նախագահ)
Բայբուրդյան Վ. Հ., Գրեկյան Ե. Հ.
Կարամանուկյան Ը. Հ., Հակոբյան Ա. Հ.,
Չոբանյան Պ. Ա., Սաֆրասայան Ռ. Ա.

Մ 663 Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ
(հոդվածների ժողովածու):-Եր.: «Զանգակ-97», 2005.-168էջ:

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
կազմակերպած Երիտասարդ արևելագետների հանրապետական XXVI
գիտական նստաշրջանի նյութերը (2005թ. մայիսի 26-27):

Թեմատիկ առումով ժողովածուում ներկայացված հոդվածներն
արժարժում են Մերձավոր Արևելքի նոր և նորագույն պատմության,
քաղաքականության, միջազգային և տարածաշրջանային հարաբերու-
թյունների, հին և միջին դարերի պատմության, արվեստի, լեզվաբանության
և հարակից այլ հարցեր:

Նախատեսվում է արևելագետների և ընթերցող լայն շրջանների
համար:

Մ 0503030000
0003 (01)-2005

ԳՄԴ 63.3 (5)

ISBN 99930-2-525-9 - Հանդիմանվում է, 2005թ.

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NEAR EAST

II

This publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. — USA

YEREVAN — 2005

The book is recommended for publication by the Scientific Council of the
Institute of Oriental Studies, National Academy of Sciences
Republic of Armenia

EDITORIAL BOARD

Nikolay Hovhannisyan (President)
Vahan Bayburdyan, Yervand Grekyan
Shahen-Hakob Karamanukyan, Aleksan Hakobyan,
Pavel Chobanyan, Ruben Safrastyan.

The book includes papers presented at the XXVI Republic Conference
of Young Orientalists of Armenia (26-27 May, 2005)

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ (ԱԻ)

ԵՐԿՈՒ ՈՒՐՁԱՆԱ՞

Ներածություն

Մուծածիրի պատմությունը լուսարանվել է Ուրարտուի, մասամբ, Ասորեստանի և Մաքաստանի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, ինչպես նաև սեպագիր տարբեր տեքստերի հրատարակություններին զուգահեռ: Ըստ այդմ, Մուծածիրը դիտվել է որպես ուրարտացիների բնօրրան և ուրարտական տերության հոգևոր կենտրոն¹: Ըստ այլոց՝ արիական (կամ մասամբ արիական) բնակչությանը, արիական իշխող վերնախավով պետական կազմավորում²: Նրա քրմապետ-արքա Ուրգանան ներկայացվում է որպես մերթ Ասորեստանին հնազանդ, անգամ ենթակա անձ, որն իրեն համարում էր ասորեստանյան արքայի ստրուկը, մերթ՝ Ուրարտուին, ակնհայտ հակասորեստանյան կեցվածքով: Այս երևույթը դիտվել է Ուրգանայի վարած դիվանագիտական խաղ՝ ըստ անհրաժեշտության ասուրամետ կամ ուրարտամետ վուլերով³:

Մեր օրերում Ուրարտուին և Մուծածիրին վերաբերող աղբյուրների վերագնահատման, խնդիրների նորովի լուսարանման և նոր հարցադրումների փորձ են ձեռնարկել Գ. Լաֆրանկյին և Ս. Պարպոլան, Ա. Իվանչիկը, Ս. Չավադցյին, Մ. Մավինին, Ա. Պետրոսյանը, Մ. Հմայակյանը և այլք⁴:

Լուսարանման կարող մնան հարցերից մեկի՝ ուրարտա-մուծածիրյան հաջամարտությանն ու դրա հնարավոր դրսևորումներին է առնչվում ներկայացվելիք նյութը:

Տեքստային վկայություններ

ա. ասորեստանյան աղբյուրներ.

Ուրարտական արքա Ռուսա Մարդուրդու ժամանակաշրջանին են պատկանում Մուծածիրը կամ վերջինիս քրմապետ-արքա Ուրգանային հիշատակող ասորեստանյան արքունի դիվանների առնվազն քսան տեքստեր

(գեկուցագրեր)՝ հայ ընթերցողին գերազանցապես անծանոթ կամ էապես ճշգրտված: Մեզ հետաքրքրող, ուրարտուս-մուծածիրյան հակամարտությանը վերաբերող գեկուցագրերը ընդհանուր առմամբ տասներկուսն են: Դիտարկենք տեքստերը ըստ իրադարձությունների զարգացման ստորև առաջարկվելիք հաջորդականության:

Այս խմբի առաջին գեկույցը վկայում է Մուծածիրին սահմանակից ուրարտական Ուեսի մարզում, ընթացող ռազմական նախապատրաստությունների և զորքերի կենտրոնացման մասին⁵: Թերևս, այս խմբի մեջ կարելի է ներառել չորս այլ տեքստեր՝ նամակներ, ըստ որոնց ասորեստանյան արքան պահանջում էր նոր մանրամասներ պարզել Ռուսայի մտադրությունների և ուրարտական կողմի հնարավոր գործողությունների մասին⁶:

Թվով չորս տեքստեր տալիս են դեպի Մուծածիր իրագործված արշավանքի նկարագրությունը՝ ուրարտական առաջապահ զորախմբի մուտքը Մուծածիր և Խալդի աստծո տաճարում մարզայետների կողմից իրականացված պաշտամունքային արարողությունը: Սպասվել է նաև ուրարտական արքայի ժամանումը, որն այդ նպատակով Ուեսիից շարժվել էր Մուծածիր՝ մնացյալ մարզայետների հետ և զորքերի հիմնական զանգվածով⁷:

Երեք այլ տեքստեր վկայում են ուրարտական բանակի և մուծածիրյան ուժերի միջև տեղ գտած ընդհարումների մասին: Ընդ որում, ռազմական գործողությունները սկսել է մուծածիրյան կողմը՝ ասորեստանյան արքունիքի պահանջով: Քաղաքում գտնվող ուրարտական առաջապահ զորախումբը՝ երկու մարզային զնդեր, ջախջախվել են, ուրարտական մարզայետերից մեկը սպանվել: Հաջորդ դրվագը վերաբերում է Մուծածիրը պաշարած ուրարտական զորքերի բանակատեղիի վրա ձեռնարկված անհաջող գրոհին, քաղաքի նվաճմանը Ռուսայի կողմից և Ուրզանայի փախուստին դեպի Ասորեստան⁸:

Վերջին խումբ աղբյուրները վերաբերում են իրադարձությունների եզրափակիչ փուլին՝ Ուրզանայի հետապնդմանը մարզայետ Կակկադանուի կողմից, վերջին ճակատամարտին՝ Ասորեստան տանող Անդարուտուի լեռնանցքում, և Ուրզանայի գերեվարությանը: Նշված իրադարձությունների հետ կախելի է առնչել խիստ վնասված երկու այլ տեքստեր, որոնցից մեկը ռազմական գործողությունների ենթատեքստում հիշատակում է Ուրզանային և Ռուսային⁹: Մեզ հետաքրքրող այս վերջին տեքստում հիշվում է նաև Մուծածիրում ինչ-որ մեկին (մարզայետ¹⁰, արքա¹¹) հաստատելու մասին⁹:

բ. ուրարտական աղբյուրներ

Ասորեստանյան աղբյուրների վերահիշյալ փաստերը հավաստում են գտնում Մուծածիրի մերձավորությամբ բարձրացված ուրարտական երկլեզու կոթող-վիմարներում (Թոփուզավա, Մերգլ, Քարվան, Մովանա):

Թովուզավայի արձանագրության համաձայն, Մուծածիրի նվաճումից հետո Ուրզանան Ռուսայի կողմից հաստատվում է տեղի մարզպետ. այնուհետև նա երկրի արքա: Փաստորեն, աղբյուրի տվյալները չեն վկայում տեքստում հիշատակվող Ուրզանայի ունեցած իրական իշխանության մասին: Այնուհաստից, սկզբնապես նա չէր երկրի առաջնորդը (իհարկե՛, եթե հավաստի են առաջարկված ընթերցումները)¹⁰:

Թովուզավայի կրկնօրինակը հանդիսացող Մովանայի ծավալուն արձանագրությունը հայտնում է հավելյալ մանրամասներ՝ Ռուսայի դեմ Մուծածիրի առաջնորդի թշնամական քայլերի մասին: Նույն տեքստում առաջին անգամ և ուղղակիորեն շեշտվում է տեղ գտած ռազմական գործողությունների մասին, որի արդյունքն էր Ուրզանայի գերեվարությունն ու գահազրկումը¹¹: Այս փաստը հիշվում է նաև ասորեստանյան աղբյուրներում: Ընդ որում, դրանցից մեկը վերաբերում է արդեն գերեվարված Ուրզանային և մյուս մուծածիրցիներին, որոնք տարվել էին Ուեսի, ուր և, չի բացառվում, ենթարկվել մահապատժի¹²:

Մյուս կողմից, Թովուզավայի տեքստի վերընթերցումը աներկբա վկայում է Ուրզանայի վախճանի մասին. zašgubi՝ Մշzanani արտահայտության համար, առանց երկմտանքի, կարելի է առաջարկել նման թարգմանություն¹³:

Մովանայի կոթողի վերը բերված տեղեկությանը հաջորդում է Ուրզանային գահ բարձրացնելու մասին դրվագը: Հավելյալ մանրամասնություններով նույնն է վկայում նաև Թովուզավայի արձանագրությունը¹⁴:

Փաստորեն, զործ ունենք ակնհայտ հակասությունների հետ, երբ մի դեպքում Ուրզանան համարվում է գահազրկված և անգամ սպանված, իսկ մյուս կողմից նշվում է Ուրզանայի «նոր գահակալության» մասին: Նման պայմաններում որքանով է հնարավոր գահին տեսնել նույն Ուրզանային, երբ, թվում է, վերջինս այլևս գոյություն չուներ:

Մյուս Ուրզանա

Ուրզանա անունը, որպես Մուծածիրի առաջնորդի, հայնդիպում է հետագա աղբյուրներում և՛ մեկ էական տարբերությամբ: Անձնանվան բոլոր հիշատակումներն արդեն պատկերում են, ուրբարտական բացարձակ ազդեցության տակ գտնվող անձի, որը այդպիսին մնաց իր գահակալության ողջ շրջանում: Նա Ռուսայի կողքին էր տեղաթափված բոլոր դժվարին օրերին (աստուրա-ուրարտական հակամարտություն, կիմերական արշավանք և այլն), ի վերջո, դրա համար հատուցելով «վախճված ճշտանքի»¹⁵: Գլխի կորստյամբ (Մարզոն II-ի «VIII տարվա արշավանքը» Ուրարտու և Մուծածիր):

Ինչ ինչպե՛ս, հնարավոր է թվում ենթադրել, որ հետագայում շարունակաբար հիշվող Ուրզանան, որ կարող էր և պատկանել այլ անձի (մյուս Ուրզանա), կարծես՝ միևնույն արքայատոհմից, եթե նկատի ունենանք

ուրարտական աղբյուրների որոշ վկայություններ: Այս պարագայում, քննարկվող անունը կարելի է ընդունել իբրև մուծածիրյան մեծ հովվի գերագույն հոգևոր կոչում կամ որպես դինաստիական անուն /գահանուն (հմմտ. հայ քրմապետ Արձանի անունը¹⁵):

Թվագրումը

Ոչ ուրարտական և ոչ էլ ասորեստանյան վերը հիշված աղբյուրները չունեն հստակ թվագրություն¹⁶: Վերջնական չեն նաև Ուրարտուի արքա Ռուսա Մարդուրդուի գահակալության թվականները: Ասկայն, բազմաթիվ նկատառումներ այնուամենայնիվ թույլ են տալիս առաջարկելու մուծածիրյան դեպքերի մոտավոր թվագրություն Աալմանասար V-ի իշխանության վերջին և Մարգոն II-ի կառավարման առաջին տարիներով (Ջ.ա. 724^o-721^oթթ.), երբ, օրինակ, Ասորեստանը զբաղված էր Հրեաստանի դեմ մղվող ծանր պատերազմով և դրանով իսկ անկարող՝ խոչընդոտելու Ռուսայի գործողությունները Մուծածիրում:

Պատմական եանախորք

Մուծածիրի նկատմամբ լիակատար վերահսկողություն հաստատած Ռուսան այնուամենայնիվ չփորձեց երկիրը միացնել ուրարտական տերությանը, թերևս չկամենալով խախտել Մուծածիրի՝ որպես «միջազգայնորեն ճանաչված սրբազան քաղաք»-ի հնուց ի վեր ձևավորված իրավունքները¹⁷: Ասորեստանյան արքունիքի թույլ փորձը՝ տեղի ուժերով խոչընդոտելու Ռուսային, ավարտվեց անհաջողությամբ: Ուրարտական տերությունը սկսեց առավել մեծ չափերով միջամտել տարածաշրջանային գործերին: Հետագա աղբյուրները գծագրում են գործողությունների արդեն փորձված ձեռագիր. Ռուսայի քաղաքականությունը՝ այս կամ այն երկրում իշխանության բերելու ցանկալի անձանց, մեծ կամ փոքր մասշտաբներով կրկնում էին մուծածիրյան իրադարձությունները: Այսպես, ռազմական միջամտությունների շնորհիվ Ջիկիրտու երկրում իշխանության բերվեց Միտատտին, Անդիայում՝ Տելուսինան, Ուիշդիշում՝ Բազդատսին, արդեն վերջիններիս ձեռքով և Ռուսայի անմիջական աջակցությամբ Մանայում սպանվեց երկրի ասսուրամեա արքա Ածան և գահ բարձրացվեց Ուրոսունուն, Խաբիլի երկրում իրականացված իշխանավախության արդյունքում տեղի թագուհու և անչափահաս¹⁸ թագածառանգի փոխարեն գահին բազմեցվեց ուրարտուհի:

Եզրահանգումներ

ա. Այսպիսով, ասորեստանյան և ուրարտական աղբյուրները վկայում են Ուրարտուի և Մուծածիրի միջև տեղի ունեցած պատերազմի մասին, որի արդյունքում Մուծածիրում վերահաստատվեց ուրարտական ազդեցությունը:

բ. Ամենայն հավանականությամբ, Մուծածիրում իրականացվեց իշխանափոխություն, սպանվեց երկրի քրմապետ-արքուն, գահ բարձրացվեց ուրարտամեա կողմնորոշման անձ:

գ. Աղբյուրները գծագրում են Ռուսայի իրագործած մի քաղաքականություն, որի նպատակն էր Ասորեստանի և Ուրարտուի միջև ընկած երկրներում տապալել ասորեստանյան ազդեցության տակ գտնվող և նրա հովանավորությունը վայելող ուժերին՝ իշխանության բերելով ուրարտամեա անձանց և օգտագործելով նրանց Ասորեստանի դեմ:

դ. Սեպագիր աղբյուրները թերևս կարող են վկայել Ուրգանա անվան ոչ պարզապես անձնանուն լինելու օգտին. դրա տակ հնարավոր է տեսնել տարբեր անձանց, տվյալ ժամանակահատվածի համար երկու զահակալների՝ երկու Ուրգանայի:

YERVAND GREKYAN

(IOS)

TWO URZANAS?

The paper deals with the military confrontation between the Urartian Empire and the land of Muşasir/Ardini. Based on analysis of twelve Assyrian and some Urartian cuneiform inscriptions the author gives preliminary comments on the reasons, main enlargements and the results of the confrontation, on dating of the sources, consequently - of the events. It is also suggested to consider the name of the King of Muşasir - *Urzana* as title/throne name of "great shepherds" of the holy city and the land of Muşasir. It seems possible to recognize at least two different leaders under the name of Urzana of the land of Muşasir.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Меликишвили Г.А., К вопросу о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1947, № 4, с. 21сл.; он же: Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1948, № 2, с. 37сл.; он же: Древневосточные материалы по истории народов Закавказья: I. Наири-Урарту, Тбилиси, 1954: Дьяконов И.М., История Мидии от древнейших времен до конца IVв., М.-Л., 1956. Пиотровский Б.Б., Ванское царство (Урарту), Москва, 1959; Арутюнян Н.В., Биайнили (Урарту), Ереван, 1970 ըստմնափորձումներում և այլուր:

2. Грантовский Э., Ранняя история иранских племен в Передней Азии, Москва, 1970, с. 298сл.; Амаякян С., Варуна-Ахурамазда и Уарубаине-Багмашту. Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей, Ереван, 1990, с. 48-49. Burney Ch., The God Haldi and the Urartian State, in Mellink M.J., Porada E., Özgüç T (eds.), "Aspects of Art and Iconography: Anatolia and its Neighbors, Studies in Honor of Nimet Özgüç", Ankara, 1993: 108-109. Петросян А., 'Армянский Мхер, западный Митра и урартский Халди, «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժանրերը», Երևան, 2004, էջ 50-51 և այլուր: Ամփոփ պատմությունը՝ R.M. Boehmer – M. Salvini, Muşafir, RLA, vol. VIII, 1993-1997: 444-450.
3. Меликишвили Г., 1954: 291-294. K. Kessler, Zu den Beziehungen Zwischen Urartu und Mesopotamien, in V. Haas (Hrsg.), Das Reich Urartu: Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v. Chr., Xenia, 17, Konstanz, 1986: 65 և այլուր:
4. Lanfranchi G.B. –Parpola S., The Correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern Provinces, SAA, V, Helsinki, 1990, p. XVIIff., XX (այլուր՝ SAA V). Ivantchik A., Les Cimmériens au Proche-Orient, Orbis Biblicus et Orientalis, Bd. 125, Fribourg-Suisse – Göttingen, 1993: 45ff. Zawadzki S., Review of A.I. Ivantchik, Les Cimmériens au Proche-Orient (Fribourg-Suisse – Göttingen, 1993), "Orientalia", vol. 65, 1996: 47. Salvini M., Muşafir (A. Historisch), 445. Kravitz K.F., A Last-Minute Revision to Sargon's Letter to the God, JNES, vol. 62, No. 2, 2003: 81-95. Тер-Мартirosов Ф., О царе Армении Барзанесе, ՊԲՀ, քիվ 1, 2000: 185-198: Петросян А., Указ. соч., с. 53. Դևեջյան Ս. – Հմայակյան Ս., Լոռիքերդյան կոյարգեզաձև կնիքների շուրջ, *Տարեգիրք*, Երևան, 2004: 39 և այլուր):
5. SAA V, No. 87.
6. SAA V, No. 85'-86', 114', 128'.
7. SAA V, No. 11, 88, 147-148.
8. Parpola S., The Correspondence of Sargon II, part I: Letters from Assyria and the West, SAA, I. Helsinki, 1990, No. 30'; Lanfranchi G.B. –Parpola S., SAA V, No. 12, 130.
9. SAA V, No. 89, 187, 191.
10. Сун Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, № 387-ի (նշված գրականությամբ): Հմմտ., սակայն, Salvini M., I documenti, in Pecorella P.E., Salvini M. (eds.), Tra lo Zagros e l'Urmia, Incunabula Graeca LXXVIII, Roma, 1984: 87ff. idem. Geschichte und Kultur der Urartaer, 1995: 83.
11. André-Salvini B. – Salvini M., The Bilingual Stele of Rusa I from Movana (West-Azerbaijan, Iran), SMEA, 44/1, 2002: 21-23: Assyrian Version, 40'-48'.
12. Տերստունյան Է. Ես դեռ չեմ լսել, թե ինչ պատահեց այդ մարդկանց հետ, արդյոք նրանք սպանվել են, թե արտաքսվել: Տես SAA V, No. 89 և 112.

13. Բառացի՝ սպանեցի/ռչնչացրի Ուրգանային: Տես և հմտ. Salvini M., I documenti, Roma, 1984: 91, ապա և Van Loon M., Review of Pecorella P.E., Salvini M. (eds.), Tra lo Zagros e l'Urmia (Roma, 1984), Bibliotheca Orientalis, XLIV, No. 1/2, January-Maart, 1987: 261.
14. Salvini M., I documenti, 1984: 84ff. (Assyrian Version, 18'-21'. Urartian Version, 20'-21'). André-Salvini B. – Salvini M., SMEA, 44/1, 2002: 22-23: Assyrian Version, 48'-52'.
15. Համադրությունը՝ Հակոբյան Ռ., Արարատյան քաղաքապետության վերջին տարիների ժամանակազրույցան մասին, «Գարուն», քիվ 5, 1992, էջ 78-81:
16. Հավանական քվազրույցները տես նաև Дьяконов И.М., Ассириовавилонские источники по истории Урарту (ВДИ, № 2-4), 1951, тексты № 2-7.
17. Բնորոշումը՝ Salvini M., Muşasir, S. 445.

ԴԱԼԱԼՅԱՆ ՏՈՐՔ

(ԵՊՀ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՔԱ ԲԱՐՁՐԱՆԵՍԸ ԼԵԶՎԱԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Հայաստանի՝ որպես անկախ (կամ կիսանկախ) միացյալ թագավորության մասին ամենավաղ պատմական հիշատակությունը օտար հեղինակների գրական երկերում գտնվում է Ջ.ա. I դարի հույն պատմագիր Դիոդորոս Միկիլիացու «Պատմական գրադարանում» [II.1 8-9]: Դիոդորոսը (Ջ.ա. 90-20 թթ.) խոսելով իրենից մի քանի դար առաջ տեղի ունեցած իրադարձությունների մասին՝ հիշատակում է Հայաստանի թագավոր Բարզանեսին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված անունը բացակայում է Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած պետությունների արքայացանկերում՝ հետազոտողների մեծ մասը Բարզանեսին համարել է մտացածին կամ առասպելական անձնավորություն: Հայաստան բառի գործածությունը տվյալ հատվածում, իր հերթին, համարվել է ավելի ուշ իրողությունների վերագրում հին ժամանակներին: Սա ապացուցելու համար բերվել է Դիոդորոսի երկի նույն հատվածը, որտեղ խոսվում է Ասորեստանի արքայի կողմից Բաբելոնը գրավելու մասին և միևնույն ժամանակ ասվում է, որ ներկայիս (= Ջ.ա. I դարի) Բաբելոն քաղաքը դեռևս չէր կառուցվել:

Այս համեմատությունն իրականում այնքան էլ ճիշտ չէ, քանի որ հույն պատմիչը գրում է Բաբելոնիա երկիրը գրավելու մասին՝ և ոչ թե քաղաքը, բացի այդ՝ բաբելացիները գոյություն ունեին որպես առանձին ժողովուրդ, նաև կար Բաբելոն քաղաքը (արդեն Ջ.ա. II հազարամյակում), իսկ «ներկայիս Բաբելոն» ասելով՝ Դիոդորոսն, ըստ ամենայնի, ի նկատի ունի նոր Բաբելոնը՝ վերակառուցված Նաբուգոդոնոսոր II-ի կողմից Ջ.ա. VI դարում: Դիոդորոսի այդպես գրելու պատճառն այն է, որ նա Բաբելոնի կառուցումը վերագրում է Նինոսի կին Շամիրամին:

Ամեն դեպքում, Բարզանես կոչվող արքայի մասին տեղեկությունն ըստ արժանվույն չի գնահատվել և չի մեկնաբանվել հայագիտության ու արևելագիտության մեջ: Այնինչ Դիոդորոսի հաղորդած պատումն ամենևին առասպելաբանական տարրեր չի պարունակում: Միակ դիցաբանականն այստեղ Նինոս թագավորի կերպարն է, որը խորհրդանշում է Ասորեստանի հզորության առավելագույն շրջանը և իր մեջ, ըստ երևույթին, խտացված ձևով մարմնավորում է Աշշուրի մի քանի արքաների՝

Դիոդորոսի համաձայն՝ Արաբիայի թագավոր Արիայոսի հետ դաշնակցելուց և Բաբելոնը գրավելուց հետո Ասորեստանի արքա Նինոսը

մեծաթիվ զորքով ներխուժում է Հայաստան, ավերում մի շարք քաղաքներ և կոտորում տեղի բնակիչներին: Ստիպված նրանց թագավոր Բարզանեսը առատ ընծաներով դիմավորում է Նինոսին և հանձն առնում կատարելու նրա բոլոր հրամանները: Նինոսը դաշինք է կնքում Բարզանեսի հետ, համաձայնում, որ նա զորք ուղարկի իրեն և միջոցներ՝ իր բանակի համար: Դրանից հետո ավելի հզորացած Նինոսը արշավում է Մարաստան, հաղթում Փառնոս թագավորին և նրան, իր կնոջ ու յոթ որդիների հետ միասին, խաչը հանում²:

Ն. Արունցի մի հետաքրքիր ենթադրության համաձայն՝ Դիոդորոսի երկում տեղի է ունեցել անունների շփաթ, և իրականում Բարզանեսը արաբների արքան էր, իսկ Արիայոսը՝ Հայաստանի թագավոր Արա Գեղեցիկն է³: Առաջին հայացքից հավանական թվացող այս վարկածը, սակայն, Բարզանես անվան ստուգաբանությունից հետո կորցնում է իր արժեքը: Նախ, ԱնաեՍիճո անձնանունն, անկասկած, իրանական ծագում ունի, և պատմության մեջ հայտնի երկրորդ ու վերջին Բարզանեսը, ըստ Արիանոս պատմիչի, առնչվում էր պարթևների սատրապին⁴: Մեր կարծիքով՝ ԱնաեՍիճո անձնանվան արմատը հատկապես մոտ է *oubrenin* և *mihgin* պարսկերեն *warz-* «հմայք» արմատին, որը ցայսօր առկա է *ou. warzqn / warzun* «սիրելի» բառի մեջ: Այդպիսով, ԱնաեՍիճո սկյութական անունը պետք է որ նշանակեր «սիրելի, սիրելյան, հմայիչ» (հմմտ. *հայ. Սիրելյան, արար. Իսին* անունները)⁵:

Սկյութական այս անձնանվան արմատը՝ *warz-*ը, հիմնականում երկու ստուգաբանություն ունի. այն կա՛ն համեմատվում է *հայ. զեղձ «սաստիկ փափագ»* բառի հետ և բխեցվում *հ.-ե. *welgh-* «ցանկություն» նախածնից⁶, կա՛ն էլ կապվում է *հ.-ե. *werg-* «բանել, զործել, դյութել» արմատի հետ⁷: Բոլոր դեպքերում, *հ.-ե. *welgh-* և **werg-* նախածները մոտ են ոչ միայն հնչյունապես, այլև իմաստներով, ուստիև դրանք կարելի է պարզապես մեկ արմատի տարատեսակներ համարել:

Փաստորեն, «հնդեվրոպացիների» պատկերացմամբ՝ սերը, այն է՝ ցանկությունն ու տենչանքը, անմիջականորեն առնչվում էր դյութանքի և հմայական հատկությունների հետ: Դա երևում է նաև պահպանված մի շարք ժառանգ ձևերում, որոնք երկու իմաստներն էլ ունեն, ինչպես *միջ. պարսկ. warz-* «հմայք, դյութանք», «կախարդանք», սողդ. **warz (wrtz)* «երաշք», ռուս. *ворожить* «կախարդել» և «տենչալ», բուլղ. *вражб* «կախարդ», հուն. *ονεία* «միստերիա», «սրբազան արարողություն»⁸: Այս հասկացություններն, ամենայն հավանականությամբ, անմիջականորեն աղերսվել են մեռնող-հարություն առնող աստծո պաշտամունքին և դրա հետ կապված ծեսերին⁹:

Հ.-ե. **welgh-* կամ **werg-* նախածնի պարզական արմատն էր **wel-*, որը հնդեվրոպական նախալեզվում ուներ մոտ ութ տարբեր իմաստներ¹⁰: Այս նախածնը և նրա տարբեր ձայնդարձերը հայերենում տվել են մի շարք ժստանգ-ձևեր, ինչպես՝ 1) գել «ալորած, պիրկ» / գեղ- «ալորված» (> գեղձ «պատատուկ, քաղեղ») / գելուլ «ալորել, ճմլել» / գելումն «սրտի ճմլվելը» /

գեղ- «սեր, տենչանք» (> գեղձ «սաստիկ փափագ») / գելոց «սրկիչ գործիք» / գելարան «տանջելու գործիք», 2) գալ «տորք» (> գալար) / գաղ- (> գաղձ-ն «պատատուկ, գայլխոտ»), 3) գիլ «գլորվել» (> գել, գլան, գլոր) / գիղ > *գղել (գայթազղել)¹¹:

Հայերեն գեղեցիկ բառի արմատն, ըստ այդմ, կարող էր լինել թե՛ գեղ- «տրորված, պիրկ» ձևը, թե՛ գեղ- «սեր, տենչանք» (որից՝ «ցանկալի, տենչալի») ձևը և թե՛ գիղ արմատի մի տարատեսակը (որպես «գայթակղիչ»): Ստացվում է, որ հայոց մեռնող-հարություն առնող աստծո՝ Արայի մակղիքը իր նշանակությամբ և իմաստով շատ մոտ է եղել սկյութական Անաթոլիոս անվանը: Դա՝ զարմանալի չէ, քանի որ ըստ ավանդության՝ Արան համարվում էր Ասորեստանի թագուհի Շամիրամի սիրելին (միգուցե առասպելի այլ տարբերակով՝ սիրելանը): Ընդ սիում, հաշվի առնելով այն, որ *werg- նախածնն ունեցել է և՛ «դյութել», և՛ «դյութվել» իմաստները, Արայի Գեղեցիկ մակղիքը կարելի է մեկնաբանել նաև որպես «դյութված» (հմմտ. Շամիրամի հուտոթքները):

Հավանաբար, Արա Գեղեցիկի կերպարն իր մեջ պարունակել է գեղ / գել արմատի ու նրա տարատեսակների պարունակած բոլոր դիցաբանական նշանակությունները, և ոչ թե միայն զուտ հետազայում առաջացած «գեղեցիկ, սիրուն» իմաստավորումը¹²: Ըստ էության, Արա Գեղեցիկ կապակցության թարգմանությունն է ներկայացնում՝ ըրոտ Անաթոլիոս կազմությունը. այս անունը կրել են Գամիլիքի երեք թագավոր Զ.ա. I դարում:

Մովսես Խորենացու (V դ.) հաղորդմամբ [գ. I, գլ. ԺԵԴ] «Արան Նինոսի վախճանից քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին, Նինոսից նույնպիսի շնորհի արժանացավ, ինչպես և իր՝ հայր Աբամը» (այսինքն՝ մարգարտե վարսակալ կրել և Նինոսի երկրորդը կոչվել): «Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով՝ ցանկանում էր տեսնել նրան...»¹³: Խորենացին, որը որոշ տեղերում հետևում է Դիոդորոսի «Պատմական գրադարանին», չէր կարող չիմանալ, որ վերջինս որպես Նինոսի ժամանակակից նշում է Բարգանեսին: Ուրեմն, Պատմահայրը պատահական չէ՝ նախապատվությունը տալիս առասպելախառը պատմական ավանդությանը, որտեղ հայոց աննասիրված աստվածներից մեկի անունով կոչվում է մի կոնկրետ պատմական անձնավորության: Ըստ որում, այստեղ առաջնային դեր է խաղում նրա «Գեղեցիկ» մակղիքը, որն իբրև թե պատերազմի պատճառ է դառնում:

Իհարկե, Արամի որդի Արա Գեղեցիկի պատմական կերպարը հավաքական է, ինչպես է՝ Նինոսինը: Ե՛ւ Շամիրամինը: Մակայն՝ նրա ձևավորման հիմքում ընկած մի քանի պատմական դեմքերից մեկը կարող էր առավել մեծ նշանակություն ունենալ թվում է, թե դա՝ ասուրական արձանագրություններում հիշատակվող ևսրբա՝ Մարդուրի I-ն է՝ Արամեի հնազորողը (Զ.ա. IX դ. II կես):

Սարդուրի կամ Սարդուր անունը միակն է ուրարտական արքայանուններից, որը գրվում է միանգամից երկու որոշագրով՝ ^{md}Sar₃-duri. այդ որոշագրերից առաջինը՝ անձնանվան, իսկ երկրորդը դիցանվան ցուցիչ է: Սա նշանակում է, որ Սարդուր անձնանունը դիցակերտ է, այսինքն՝ նրա առաջին մասում առկա է աստվածության անուն: Նույն արքայանվան ^{md}Istar-duri գրության ձևը ցույց է տալիս, որ այն կազմված է սիրո, տարփանքի և ռազմի աստվածուհի Իշտարի անունից¹⁴: Գ. Ղափանցյանի կարծիքով՝ Սարդուրի անվան առաջին մասում ընդհանրապես կարդացվել է Իշտար դիցանունը¹⁵: Սի արձանագրության մեջ այդ արքայանունը հենց այդպես էլ գրված է՝ ուղղակի Իշտարի գաղափարագրով¹⁶: Փաստորեն, ^{md}Istar-dur(i) > ^{md}Istar-dur(i) > ^{md}Istar-dur(i) անձնանունը պետք է ունենար մոտավորապես հետևյալ իմաստը՝ «Իշտարի սիրելի» (?), «Իշտարին ծանված» (?), «Իշտարի տոբը» (?)¹⁷:

Սարդուրի I արքան վեց շինարարական արձանագրություն է թողել Վանի ժայռի ստորոտում՝ միևնույն բովանդակությամբ, գրված ասուրերեն լեզվով, ուր պատմվում է Ալնիունի քաղաքից իր՝ քարեր բերելու և պարիսպ կառուցելու մասին¹⁸: Մեզ հայտնի չէ այս Սարդուրիի (և հաջորդ Սարդուրիների) իսկական անունը, համեմայն դեպս ասուրերեն (իսկ հետագայում՝ ուրարտերեն) նրանք կոչվել են այդ անվամբ: Սարդուրի I-ը ինքն իրեն անվանում է «արքա մեծ, արքա հզոր, արքա տիեզերքի, արքա Նախրիի, արքա, որին հավասարը չկա, զարմանալի հովիվ՝ մարտից չերկնչող...»¹⁹: Ուշագրավ է, որ «Ուրարտու» կամ «Բիայնա» երկրանունը նրա տիտղոսաշարում չկա:

Ըստ արքայական սեպագիր աղբյուրների՝ Ք.ա. 830թ. Ասորեստանի արքա Սալմանասար III-ի գորավար Դայյան-Աշշուրը ճակատամարտում հաղթեց «Տուշայայի արքա» Սարդուրիի գորքերին, գրավեց Ունգամունի քաղաքն իր շրջակա բնակավայրերով և հիմնահատակ ավերեց դրանք: Ք.ա. 826թ. նույն գորավարը Մուծաժիրի տարածքով հասավ «ուրարտական ամրոցներին», սակայն չգրավեց դրանք, այլ անսպասելիորեն թեքվեց դեպի արևելք՝ Գիլգան, իսկ ապա՝ Անդիա երկիրը, ներկայիս Ատրպատականում (հյուսիսային Մարաստան)²⁰: Հնարավոր է, որ Դայյան-Աշշուրը արդեն դաշինք էր կնքել Սարդուրիի հետ, ինչպես Նինոսն է Հայաստանի մի շարք քաղաքներ ավերելուց հետո դաշինք կնքում Բարզանեսի հետ և այնուհետև զբաղվում Մարաստանի գործերով:

Աբայիցով, Սարդուրիի հետ առնչվող ռազմական իրադարձությունները շատ նման են Նինոսի և Բարզանեսի հակամարտության պատմությանը: Միակ բանը, որ մեզ հայտնի չէ աղբյուրներից, Սարդուրիի և Բարզանեսի վախճանի հանգամանքներն են: Ինչ վերաբերում է Աբայի մահվան մասին, հորինացու հաղորդած պատմւնին, թե իբր նա պատահականորեն սպանվել է Շամիրամի գորքերի ղեկավարած

ճակատամարտում, ապա դա կարող է այնքան էլ չհամապատասխանել իրականությանը և զուտ առասպելի ազդեցության հետևանք լինել (մանավանդ որ Արային նորից հաջորդում է Արա անունով թագավոր): Այս Արայան Արան իշխում է մինչև Շամիրամի մահը:

Հատկանշական է, որ Դիոդորոսի և Խորենացու պատմությունների Շամիրամը հենց Իշտարի պատմականացված տարբերակն է, կամ այլ կերպ ասած՝ Շամիրամի դիցաբանական կերպարը օժտված է Իշտար դիցունու հատկանիշներով, նա իր ամուսին Նինոսի հետ միասին խորհրդանշում է Ասորեստանի ծաղկուն ժամանակաշրջանը: Այդ պատճառով՝ «Իշտարին ձոնված» Սարդուրին կամ «Շամիրամի սիրելի» Արա Գեղեցիկը՝ Հայկական լեռնաշխարհի որոշ շրջաններում բնակվող կամ ավելի ուշ հայտնված սկյութների կողմից կարող էր կոչվել *Miēra-warza(n), *Aria-warza(n), *Baga-warza(n) անձնանունների տիպի մի բարդությամբ, որից մեզ հասել է միայն երկրորդ՝ Warza(nes) բաղադրիչը Դիոդորոսի վկայությամբ: Շատ հավանական է նաև, որ ԱննաՄիսի անվանաձևի առկայությունը Դիոդորոսի երկում բացատրվի նրա հիմնական աղբյուր Կտեսիաս Կնիդացու՝ աքեմենյան արխիվներից օգտված լինելու հանգամանքով:

TORK DALALYAN
(YSU)

THE KING OF ARMENIA *BARZANES* IN THE LIGHT OF
THE MYTHOLOGICAL AND
LINGUISTIC RESEARCH

Diodoros in his "Historical Library" mentions about Armenian king ԱննաՄիսի in regard to his conflict with the Assyrian king Ninus" [II, 1, 8-9]. This Scythian name can be etymologized by *Iran*. *warz- 'charm' c.f. *Osset*. warzən / warzun 'to love', *M.Pers.* warz- 'charm'). In turn, this root is connected with *I.E.* *welg'h- or *werg- which has become in Armenian զեղ-ձ զե՜-յ 'intense desire'. Movšes Xorenac'i calls Ara Ge³-ec'ik (literally Ara the Beautiful) a contemporary of Ninus and the lover of Semiramis, Ninus's wife. Ninus and Semiramis are the symbols of the Assyrian might, the latter has typical features of the goddess Istar. The Urartian king Sarduri I (IX c. B.C.) seems to be an historical prototype for Barzanes of Diodoros and Ara of Xorenac'i. The cuneiform writing of the name of Sarduri contains the ideogram of Istar, it has been also written as Ištarduri. In fact, the name of Sarduri has meant "Istar's gift" or "Istar's lover". Therefore one can suppose that the name ԱննաՄիսի attested by Diodoros is the second part of some lost name like the names 'ԱննաՄիսի, ԼեւոնաՄիսի etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սեպագիր տեքստերում հայտնի չէ Նինոս անունով թագավոր:
2. Դիոդորոս Սիկիլիացի. Պատմական գրադարան (հատվածներ), աշխատասիրությամբ Ս.Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 16:
3. Արոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 376:
4. Justi F., Iranisches Namenbuch, Marburg, 1895, p. 65. Ֆ. Յոստին այս ԱննաՍիճծ անունը համեմատում է ավեստ. varezāna բառի հետ:
5. Այս անունը հանդիպում է նաև քարոտության միջոցով կազմված անձնանուններում՝ ԼեռնիճաճաՍիճծ «Միհրի սիրելի», սողդերեն āw'rz (*Bagawarza) «աստծո սիրելի» ևն [Абаев В.И., Историко-этимологический словарь осетинского языка, т. IV, Лен., 1989, с. 54]:
6. Petersson, Arische und armenische Studien, Lund, 1920, p. 128.
7. Абаев В.И., Указ. соч. с. 54.
8. Նույն տեղում: Ինչ վերաբերում է ոռու. вразиться «սիրահարվել» քարբառային բառին, ապա այն փոխառյալ է դրվում սկյութերենից:
9. Չուր չէ, որ warz- արմատը «հնայագերծվելով» պարզապես նշանակել է «զործել, անել», «հողը մշակել»: Բացի այդ, պատահական չէ, որ ԼեռնիճաճաՍիճծ, *Bagawarza անունների առաջին մասում առկա դիցանունները մեռնող-հարություն առնող աստվածների անուններ են:
10. Pokorní J., Indogermanisches Etymologisches Wörterbuch, II Band, 1136-1145; Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 55: Հայերենում *wel- արմատի ունեցած դիցարանական նշանակությունների մասին անհ. Петросян А., Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии, ԼՀԳ, 1987, No. 1, էջ 56-70.
11. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, 530, 533: Հայերենում զեղ, զեղձ, զաղձ(ն), զալ-ար բառերի համանմանությամբ հ.-ե. *dhel- արմատից և նրա ձայնդարձերից ունենք դեղ, դեղձ, դաղձ(ն), դալ-ար բառերը [նույն տեղում, 647-649]:
12. Դեռ ավելին, սովորաբար աստվածների մակդիրներն իրենք իրենց հերթին լինում են դիցանուններ և սկզբում զործածվելով որպես քաղադրյալ-սինկրետիկ աստվածության անվան քաղկացուցիչ մաս՝ ավելի ուշ իմաստագրվում են և ենթարկվում մորոզի «ժողովրդական ստուգարանության» (folksetymologie). օրինակ՝ Վահագն Վիշապա-Քաղ (հետագայում՝ «վիշապ քաղող»), Տորք Անգեղ-Եայ (հետագայում՝ «ան-զեղ, տզեղ»), Ամանոր Վանա-Տուր (հետագայում՝ «վան, իջևան տվող»), Անուշաւան Սաւա-մուր (հետագայում՝ սոսիներին նվիրված), Աստղիկ Վարդա-Մատն (հետագայում՝ «վարդի մատներով»), Արա Գեղ-եցիկ, Արամազդ Արի ևն:
13. Մովսիսի Խորենացույ պատմութիւն հայոց (քննական քննազիւրը Մ. Արիդյանի և Ս. Հարությունյանի, աշխատասիրությամբ Ստ. Մալխասյանի), Երևան, 1981, էջ 53, 61:

14. Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960, с. 440; Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, с. 560.
15. Ղափանցյան Գ.Ա., Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 49:
16. Իզումնով Վ.Ա., Կարագյոզյան Հ.Հ., Հմայակյան Ս.Գ., Օձասարի սեպագիր արձանագրությունը, ՊԲՀ, 1997, թիվ 1, էջ 193-202:
17. Եմբաղությունը, թե Սարդուր(ի) անունը կազմված է ուրարտական ⁴Sar-di-
i աստվածուհու անունից, քիչ հավանական է, քանի որ այդ անունները գրվում
են տարբեր սեպանշաններով. վերջինը՝ sar, իսկ առաջինը՝ sar, որն ըստ
երևույթին կարող էր կարդացվել նաև s'ar:
18. Арутюнян Н.В., նշվ., աշխ., էջ 9-11.
19. Арутюнян Н.В., նշվ., աշխ., էջ 9.
20. Համապատասխանաբար՝ Grayson A.K., Assyrian Rulers of the Early First
Millennium BC (858-745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia (RIMA):
Assyrian Periods, vol. III, Toronto, 1996, A.O.102.14: 141b-146a., A.O.102.16:
228'-244' (Բ.ա. 830թ.) A.O.102.14: 174b-190; A.O.102.16 320'b-341'a (Բ.ա.
826թ.).

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՀԱՄՄԻԿ
(ԵՊՀ)

**ԽԻՂԻԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ**
(Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)

Իսլամը, հուդայականությունն ու քրիստոնեությունը, ինչպես նաև ցանկացած մոնոթեիստական կրոն ենթադրում են անասան և հաստատուն հավատ միայն մեկ Աստծո հանդեպ: Մակայն շատ հաճախ նմանատիպ կրոններում ի հայտ են գալիս պաշտամունքի այլ առարկաներ ու կերպարներ: Սրանց թվին են պատկանում երկնային լուսատուների, քարերի, ծառերի և դրանց հետ կապված որևէ սրբի պաշտամունքը: Ըստ ընդունված կարծիքի, սրբերի պաշտամունքը ցանկացած միաստվա-ծությունում այն դուռն է, որաեղից ներթափանցում են այլ կրոնների ու հավատալիքների տարրեր պաշտամունքները: Այստեղ հաճախ կարելի է տեսնել միաստվածությանը նախորդած կրոններին հատուկ դրսևորումներ:

Այս երևույթներն, անշուշտ, հատուկ են նաև իսլամին: Մինչիսլամական կրոնների «մնացուկների» առկայությունը իսլամում հնարավորություն է տալիս տեղեկություններ քաղել մինչիսլամական արարական հավատալիքների, կրոնների մասին, որոնք դուրս են մղվել իսլամի կողմից: Վերջիններին ուսումնասիրությունն էլ հնարավորություն է տալիս բացատրել այս կամ այն մուսուլմանական երկրում եղած կրոնական առանձնահատկությունները:

Իսլամում սրբերի պաշտամունքի՝ առ այսօր արված ուսումնասիրություններն արդեն պարզ են դարձրել, որ այս կամ այն կերպարը փոխառված է նախորդ կրոններից՝ քրիստոնեություն, հուդայականություն, զրադաշտականություն, իսկ որոշ կերպարների մեջ էլ կարելի է ճանաչել տեղային աստվածություններից որևէ մեկին:

Մա, անշուշտ, չի նշանակում, որ սրբերի պաշտամունքի և այլ սովորույթների արմատները անպայմանորեն հանգում են վերոնշյալ կրոններին կամ հեթանոսությանը: Իսլամի ընդունումից հետո նախաիսլամական շրջանի բազմաթիվ սովորույթներ, հավատալիքներ ու նախապաշարումներ կամ ոչնչացել են, կամ խիստ վերհաստատվել ու ներմուծվել իսլամ: Այդ շերտի հայտնաբերումն ու լուսաբանումը մինչ օրս զիտական լուրջ ուսումնասիրությունների կարիք ունի:

Իսլամում սրբերի պաշտամունքի ուսումնասիրությունը հաճախ բախվում է իրական դժվարությունների այն պարզ պատճառով, որ

ուղղահավաստ իսլամը դեմ է հավատքի ցմանատիպ դրսևորումներին: Իսլամի տարարնույթ ուղղություններում սրբերի պաշտամունքը և նրանց նվիրված արարողություններն ու ծեսերը հաճախ կատարվում են ընդհատակյա և, ըստ էության, փակ են ուսումնասիրողի և առհասարակ տվյալ համայնքից դուրս գտնվող որևէ մեկի համար²: Բացի այդ, մուսուլմանական պետությունների մեծ մասը, լինելով ուղղահավաստ, չի խրախուսում այս ծիսակարգերին նվիրված գրականության հրատարակումը, ինչի հետևանքով հաճախ ուշադրություն չի դարձվում ժողովրդական ծեսերի ու ավանդույթների ուսումնասիրությանը: Սրբի պաշտամունքի այս կամ այն դրսևորման ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում գիտության մի քանի ոլորտների՝ ազգագրության, պատմության, կրոնագիտության համար, ուստի այսօր ևս շարունակում է մնալ արդիական խնդիր:

Ներկայացվող աշխատանքն ուղղված է մուսուլմանական երկրներում ամենից պաշտված և սիրված սրբի՝ Խիդրի³ (պարսիկների մոտ Խիզր, քուրքերի մոտ Հըզըր, եգիպտացիների և քրդերի մոտ Խըդր նաբի) պաշտամունքի ուսումնասիրությանը: Ինչպես արաբական, այնպես էլ առաջավորասիական մուսուլման ժողովուրդների մոտ Խիդրի պաշտամունքը ուղեկցվում է բազմաբնույթ արարողակարգերով ու ծեսերով, որոնք նույնպես իրենց էությանը կապված են մինչիսլամական տեղական (իրանական, քյուրքական, արաբական) հավատալիքների հետ: Օրինակ, միջինասիական գրեթե բոլոր երկրներում հողագործական ավանդույթը կապված է Խիդրի կերպարի հետ: Հավանական է, որ նախկինում այս դերը միայն տրված է եղել տարածաշրջանում հայտնի Բորո-յե Դեհղանին⁴, սակայն համամուսուլմանական սուրբ և մարգարե Խիդրը դուրս է մղել նրան: Տարբեր ժողովուրդների մոտ դիտարկելով Խիդրի պաշտամունքը և այն ծիսակատարությունները, որոնք նվիրված են նրան, կարելի է առանձնացնել նրա հիմնական գործառնությունները: Դրանք են.

- ա. բուսականության և հողագործության հովանավոր⁵,
- բ. ճանապարհորդների հովանավոր,
- գ. աղքատների և կրոնապաշտների հովանավոր⁶:

Անշուշտ կան նաև այլ հատկանիշներ՝ այս կամ այն ժողովրդի մոտ (ինչպես երիտասարդների կամ սիրահարների հովանավոր, պտղաբերության հովանավոր), սակայն սրանք տեղային առանձնահատկություններ են: Այն հարցին, թե արդյոք Խիդրը իսլամական ավանդույթում իր տեղը գտած հեթանոս աստված է, թե Արաբական աշխարհին հայտնի է դարձել միայն իսլամի ընդունումից հետո, և հետևաբար անցել մյուս մուսուլման ժողովուրդներին, միանշանակ դժվար է պատասխան տալ: Ակնհայտ է մի բան, որ այսօր այս պարզունակ թվացող պաշտամունքը ծայրաստիճան տարածված է մուսուլմանական երկրներում և դեռևս մանրամասն ուսումնասիրության կարիք ունի:

Այստեղ խնդիր է դրված ներկայացնել պաշտամունքի դրսևորումներն ու առանձնահատկությունները, անդրադառնալ նրա հիմնական գործառույթներին, դիտարկել սույն պաշտամունքի այս կամ այն դրսևորումը նախ արաբական, ապա նաև Առաջավոր Ասիայի այլ ժողովուրդների մոտ: Աշխատանքում օգտագործվել են մի շարք ուսումնասիրություններ, ինչպես նաև սկզբնաղբյուրներ: Կարևորագույն աղբյուրների շարքում կարելի է նշել Ղուրանը՝ իր մեկնաբանություններով, ու հադիսները⁷:

HASMIK TOVMASYAN
(YSU)

THE IMAGE OF *KHIDR* IN THE NEAR-EASTERN BELIEFS

As in other monotheistic religions, in Islam too, apart from the beliefs and ceremonies of the official church, there exist, on the level of folk beliefs, numerous saints and rituals related with their worship. Oftentimes, these are the avatars of gods or spirits, which existed before the advent of Islam, and then were adapted by the Muslims, be they originally Christian, Judaic, or pagan. Very often, however, it is very difficult to trace the origin of such saints in the previous religions. One of the reasons for this is that the Orthodox Islam is not very much in favour of such expressions of religiosity, and hence, many rituals and beliefs connected to a particular figure have remained exclusively the domain of the private life of a given community, being thus very difficult to study for people from outside.

The present work attempts to elucidate the image of *Khidr* in the Near Eastern folk beliefs and identify its main features common among all the peoples of the region. The study of this figure has shown that they all share the most important features of this saint; according to these, *Khidr* is a) the patron of agriculture and plants, b) the protector of roads, and c) the protector of the poor and the pious. This suggests that the worship of this saint must have a common origin in all these countries, having initially been, judging from his functions, a pagan deity. However, the state of contemporary science does not allow us so far to give a definitive answer to this question, leaving the problem of the provenance of this cult still subject to further research.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Гольдциэр И., Культ святых в исламе, Москва, 1938; Басилов В., Культ святых в исламе, Москва, 1970.
2. St'u Walker W.S., Uysal A.E., An Ancient God in Modern Turkey: Some Aspects of the Cult of Hizir, The Journal of American Folklore, vol. 86, No. 341 (Jul-Sep), 1973, p. 287.
3. Khidr կամ al-Khadir անվանումները հանգում են արաբերեն kha-di-ra արմատին, որը նշանակում է կանաչ, կանաչող լինել (տե՛ս Баранов Х.П., Арабско-русский словарь, М., 1996):
4. St'u Krasnawolska A., Some Key Figures of Iranian Calendar Mythology (Winter and Spring), Krakow, 1998: 121-161; Басилов В., Культ святых в исламе, М., 1970, с. 10-40.
5. Արդեն իսկ անունը ցույց է տալիս կապը բուսականության և բնության հետ: Հատկանշական է, որ Արաբական թերակղզում պաշտվող աստվածները հաճախ անվանվում էին իրենց ունեցած գործառույթների անուններով, ինչպես՝ Dhu Samawi, Dhu Ghaba («Երկնքի տիրակալ», «Ամտառի տիրակալ»):
6. Wensinck A.J., "al-Khadir", Encyclopaedia of Islam, 2nd ed.; Wiener A., The Prophet Elijah in The Development of Judaism /Depth-Psychological Study/ , London, 1980; Bussel F.W., The Persistence of Primitive Beliefs in Theology: A Study in Syrian Syncretism, 'Ali, Elyun, El, Helios and Eliyah", Folclore, 28, No. 3 (Sep.), 1917: 279-294.
7. Մասնավորապես՝ Al-Th'alibi, Qisas al-anbiya, Cairo, 1290; Al-Tabari, Bayan fi Tafsir al-Quran, Cairo s.a.; Сахих Аль-Бухари, Мухтасар, Москва, 2003.

ԽԱՆՁԱԴՅԱՆ ՄԱՐԻԱՄ (ԱԻ)

ԻՍՈՒՎԱՅԻ ԱՐՔԱՅԻ և ԽԵԹԱԿԱՆ «ՄԵԾ ԱՐՔԱՅԱԴՍՏԵՐ» ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Հողվածի քեման Զ.ա. 13-րդ դարի խեթա-խուվական հարաբերություններն են, մասնավորապես խեթական և խուվական արքայաանների միջև առկա ազգակցական կապերը: Ինչպես հայտնի է, խեթական արքունիքը տարբեր պետությունների և իշխանությունների հետ խնամիական կապերի հաստատումն օգտագործում էր որպես իր քաղաքական շահերի առաջխաղացման հարմար միջոց: Կախյալ արքաների պարագայում դա ապահովում էր տվյալ պետության արտաքին կողմնորոշման խեթամետ ուղղվածությունը. ամուսնական պայմանագրերը սովորաբար ենթադրում էին նրանց պարտավորվածությունը հետագայում գահը փոխանցել խեթական արքայադստեր ժառանգին¹, ինչն էլ բնականաբար ավելի էր նպաստում տվյալ երկրում խեթական ազդեցության ուժեղացմանը:

Նման հարաբերություններ առկա էին նաև կարևոր ռազմաքաղաքական դիրք զբաղեցնող Իսուվայի և Խեթական պետության միջև: Ըստ Ա. Քոսյամի, արքայատոհմերի միջև ազգակցական կապերի ձևավորման ժամանակազրական վերին սահման կարելի է համարել Իսուվայի նվաճման շրջանը Զ.ա. 15-րդ դարում²: Այդ կապերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ պահպանվել են Զ.ա. 13-րդ դարի խեթական աղբյուրներում, որոնք խոսում են խեթական արքայադստերից մեկի՝ Կիլուշխեայի Իսուվայի արքայատոհմի անդամ լինելու մասին:

Այս արքայադստեր անունը դիցանվանակերտ է: Անվան առաջին մասի՝ *ke(i)lus-* (նաև *kel-/keli-/keldi-/kelum-*) մասնիկի իմաստը մինչ այժմ հստակեցված չէ, ամենայն հավանականությամբ, այն նշանակում է «լավ զգալ», «լավ վիճակի մեջ լինել»³: Անվան երկրորդ մասը – խուրրիական առասպելաբանության աստվածուհիներից մեկի՝ *Hebat* աստվածուհու անունն է⁴: Այսպիսով, Կիլուշխեայ անունը կարող է ստուգաբանվել հետևյալ կերպ. «Հեբաթ (աստվածուհու գործությամբ) լավ լինել» կամ «Հեբաթն իմ բարորությունն է»:

Կիլուշխեայան աղբյուրներում հանդես է գալիս որպես *DUMU.SAL.GAL*⁵ կամ որպես *DUMU.MUNUS.GAL* - «մեծ արքայադուստր»⁶: Այս տիտղոսը խեթական արքայադստերի կարգացանկում ամենաբարձր տեղն է զբաղեցնում: Ենթադրվում է, որ այս տիտղոսն էին կրում «առաջին կնոջ դստերը», տվյալ դեպքում՝ Խաթուսիլիս III-ի և Պուդուխեայի դստերը⁷:

Ուսումնասիրողները տարակարծիք են այն հարցում, թե Կիլուշխեպան Պուրուխեպայի դուստրն էր, թե՛ քույրը: Հօգուտ Պուրուխեպայի դուստր լինելուն արտահայտվել է Թ. վան դեն Հոուտը, փաստարկելով, որ Կիլուշխեպայի որդու՝ Էխլի-շարրումայի և Թուդխալիյաս IV-ի միջև առնվազն մեկ սերնդի տարբերություն կա, և ավելի ճիշտ կլինի Կիլուշխեպային դիտել որպես Պուրուխեպայի դուստր, այլ ոչ թե քույր⁸: Նույն կարծիքին է Հոուինք թեն Քեյթը⁹: Նշենք, սակայն, որ այս դարաշրջանում ամուսնական տարիքը բավականին ցածր էր, և չէր բացառվում մի կողմից փոքր քրոջ, մյուս կողմից՝ ավագ քրոջ որդու միջև ենթադրվելիք տարիքային հավասարությունը: Հետևաբար, չենք կարող Էխլի-շարրումայի և Թուդխալիյաս IV-ի տարբեր սերունդներին պատկանելու փաստից հետևություններ անել նրանց միջև առկա տարիքային տարբերության մասին: Ինչևհետե, ուսումնասիրողներն ավելի հակված են կարծել, որ Կիլուշխեպան է Խաթուսիլիս III-ի և Պուրուխեպայի «մեծ արքայադուստր» տիտղոսը կրող դստրերից մեկը, որը կնության է տրվել Իսուվայի արքային:

Նրա ամուսնու անվան հետ կապված կան որոշակի տարակուսանքներ: Քորուջութեփեյի կնիքների արձանագրությունները վերծանելով՝ Հ. Գյութերբորը կնիքներում [...] -Sarrumma և Կիլուշխեպա անունների մեկտեղ հանդես գալու վստտից եզրակացրել է, որ այս երկու կնիքներում խոսքը կարող է գնալ Ari-Sarrumma-ի մասին¹⁰, որը Ուլմի-Թեշուփի պայմանագրում հիշատակվում է որպես Իսուվայի արքա¹¹: Այս բնույթի պայմանագրերի կնքման ժամանակ վկա կարող էին լինել միայն արքայական տան անդամները, կամ արքայատան հետ խնամիական կապեր ունեցող անձինք¹²: Այս համատեքստում պատմական Իսուվայի տարածքում հայտնաբերված կնիքները միանշանակորեն պետք է պարունակեն Ari-Sarrumma անունը¹³: Սակայն, Ari-Sarrumma անվան հետ մեկտեղ Կիլուշխեպայի մահվան մասին պատմող արձանագրություններում (KUB 40-80-1, 2 /CTH 297/ և KUB XL 90 /CTH 295/) վկայված է նաև Ali-Sarrumma անձնանունը: Դատական այս արձանագրությունների համադրությունը¹⁴ ուսումնասիրողների շրջանում տարակուսանք է առաջացրել Կիլուշխեպայի ամուսնու անվան վերաբերյալ: Մենք, առավել համոզիչ համարելով Ari-Sarrumma անվան օգտին քերվող փաստարկները, գտնում ենք, որ Ali-Sarrumma անվան ի հայտ գալն ամենայն հավանականությամբ պետք է համարել խեթերեն լեզվում առկա r/l վտխանցման հետևանք: Նշենք նաև, որ Ali + Sarrumma անվան առաջին մասը որևէ կերպ չի ստուգաբանվում, մինչդեռ Ari-Sarrumma անունը կարող ենք ստուգաբանել խուրիերեն ari- տալ¹⁵ և Sarrumma անունների համադրությամբ. «Թեշուփի/Շարրումայի¹⁶ տրված»:

Հուլինք թեն Քեյթը հաշվի առնելով այն փաստը, որ Թուդխալիյաս IV-ը իր գահակալության առաջին շրջանում Կիլուշխեպայի որդի Էխլի-շարրումայի ժամանակակիցն էր, գտնում է, որ այս ամուսնությունը պետք է որ

տեղի ունեցած լինելը Խաթուսիլիս III-ի գահակալման կեսերին, մոտավորապես Զ.ա. 1258 և 1244 թվականների միջև¹⁷: Ավելի ստույգ տարեթիվ որոշելու համար եթե ընդունենք, որ Էլսի-շարրումման 1234 թվականին Նիխրիայի ճակատամարտին մասնակցելու համար զոհն 16 տարեկան պետք է լիներ, ապա կարող ենք ավելի կոնկրետացնել ամուսնության տարիները 1358-1350 թվականների միջակայքում: Կիլուշխեպայի մահվան մասին վկայող վերահիշյալ դատական արձանագրությունների համադրումը քույլ է տալիս փաստել, որ Կիլուշխեպայի մահը տեղի է ունեցել Արի-շարրումայի գահակալման վերջին շրջանում՝ 1240 և 1235 թվականների միջև: Եթե ենթադրենք, որ Թուղխալիյասն Արի-շարրումային գահընկեց է արել մինչև Նիխրիայի ճակատամարտը 1234/3թ.¹⁸, քանի որ այս ճակատամարտի հետ կապված արդեն հիշատակվում է Էլսի-շարրուման, ուրեմն Արի-շարրումայի ապստամբությունը պետք է որ տեղի ունեցած լիներ մի երկու տարի առաջ՝ 1238-1235թթ. միջև, այսինքն անմիջապես Թուղխալիյաս IV-ի գահակալումից (մոտավորապես 1240-1220թթ.) հետո: Այս փաստերը համադրելով, կարող ենք առաջարկել ղեպքերի հետևյալ հաջորդականությունը.

ա. Իր գահակալության սկզբնական շրջանում Արի-շարրուման լույս վերաբերմունք է ցուցաբերել խեթական արքունիքի նկատմամբ, ինչը պայմանավորված էր նրա՝ Խաթուսիլիս III-ի փեսա լինելու հանգամանքով: Հավանաբար այս փուլին են վերաբերում Պուդուխեպայի աղոթք-խոստումները՝ ուղղված «Իսուվայի արքայորդու» ենթադրաբար Էլսի-շարրումայի առողջացմանը¹⁹:

բ. Իր գահակալության հաջորդ փուլում, հավանաբար 1240 թվականից հետո, Արի-շարրուման որոշ գործողություններ է ձեռնարկել՝ ուղղված խեթական տերության, կամ, ավելի ճիշտ, կառավարող արքայի դեմ, ինչով էլ բացատրվում է նրա անձի հիշատակումներն իր համար աննպաստ դատական արձանագրություններում և նամակներում: Եթե ճիշտ համարենք Ali-Sarrumma և Ari-Sarrumma անունների նույնականությունը, կարող ենք եզրահանգել, որ Արի-շարրուման ուղղակիորեն կամ անուղղակիորեն ասպարեզից հեռացրել է իշխող արքային՝ Թուղխալիյասին նվիրված կնոջը, ինչին էլ հետևել է նրա՝ Թուղխալիյասի դեմ արքայազն Խեշնիի դավադրության մեջ ներգրավվելն ու գահընկեց արվելը: Առավել հստակ պատասխան տալ անհնար է փաստերի սակավության և այս տեքստերը ժամանակագրորեն ճիշտ տեղաբաշխելու անհնարիության պատճառով: Արի-շարրումայի նման կեցվածքը միզուցե բացատրվում է նրանով, որ Իսուվայում հավանաբար ձևավորվել էր կամ վաղուց առկա էր հակախեթական տրամադրությունների մի պիք: Վասալ այս պետության խիստ կարևոր ռազմաքաղաքական դիրքն ու նշանակությունը և 13-րդ դարում հարևան Ասորեստանի հզորացումը ստիպել էին խեթական թագավորությանը գործադրել ամեն ջանք՝ Իսուվան

ագղեցության իր ոլորտում պահելու համար. արքա Արի-շարրումմային կնության էր տրվել իր կարգավիճակով ամենաբարձր կարգի արքայադստրերից մեկը: Բայց և այնպես, չնայած որ այս ամուսնությունը լրացուցիչ մինչդիմաստիական օղակ ստեղծեց Իսուվայի և Խեթական թագավորության փոխադարձ և տարաբնույթ կապերի շղթայում, այն ամբողջությամբ չկարողացավ բացառել Իսուվայում առկա հակախեթական տրամադրությունները, որոնց հետագա զարգացման համար լրացուցիչ խթան հանդիսացավ Թուդիսալիյաս IV-ի գահակալման սկզբնական շրջանի քաղաքական ճգնաժամը:

MARIAM KHANZADYAN

(IOS)

THE DYNASTIC MARRIAGE BETWEEN THE KING OF IŠUWA
AND “GREAT PRINCESS” KILUSHEPA

The article deals with the dynastic marriage between royal families of the Hittite Empire and the Kingdom of Išuwa in the 13th century B.C. The marriage of Ari-Sarrumma with such a high-ranked Princess Kilusheba, the daughter of Hattusilis III and Queen Puduheba, constituted closer relations between the Hittite court and the King of a vassal-state Isuwa, which were situated in the most strategic areas of the Empire itself. But this marriage itself did not mean that the Hittite Empire had an absolute hegemony over the Kingdom of Isuwa in the second half of 13th century B.C.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Bryce T., The Hittite Kingdom, Oxford, 1999, p. 51.
2. Քոսյան Ա., Իսուվան (Ծոփքը) մ.թ.ա. XIII – XII դարերում, ՊԲՀ, թիվ 1, 1997, էջ 179:
3. Laroche E., Glossaire de la langue hourrite, RHA, tome XXXIV, 1976, p.143.
4. Хачикян И., Хебат, МНМ, II, с. 586.
5. Այս տիտղոսի վերաբերյալ տես De Roos J., Who was Kilushepa?, JOL, 1985-1986, p. 76-77.
6. Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ DUMU.MUNUS.GAL տիտղոսը թարգմանվում է նաև որպես «արքայի կին, որը չի թագավորում որպես Տավանաննա», փաստարկելով, որ այս

տիտղոսով հանդես եկող արքայադստրերը կամ արդեն թագուհի էին, կամ մոտ ապագայում պատրաստվում էին թագուհի դառնալ: Տես Philo H.J. Houwink ten Cate, *The Hittite Dynastic Marriages of the Period between ca. 1258 and 1244 B.C.*, *AoF*, 23, 1996, pp. 48-50.

7. Philo H.J. Houwink ten Cate, *op.cit.*, p. 52.
8. Th. van den Hout, *Der Ulmitešub-Vertrag Eine prosopographische Untersuchung*, Wiesbaden, 1995, p. 126.
9. Philo H.J. Houwink ten Cate, *op. cit.*, p. 48.
10. Güterbock H.G., *Hittite Hieroglyphic Seal Impressions from Koructepe*, *JNES*, 1973, No. 1-2, pp. 139-141.
11. Քոսյան Ա., *Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը*, Երևան, 1999, էջ 73:
12. Ըստ պ.գ.դ. Արամ Քոսյանի բանավոր հաղորդման:
13. Քոսյան Ա., *Իսուվան (Շոփքը) մ.թ.ա. XIII – XII դարերում*, էջ 178-179: Նաև տես Քոսյան Ա., *Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը*, էջ 73:
14. Riemsneider K.K., *OLZ*, 70, 1975, p. 260; Klengel H., *Or.Ant.*, 15, 1976, p. 88, *Archi A. – Klengel H.*, *AF*, 12, 1985, p. 61.
15. Laroche E., *RHA*, tome XXXIV, 1976; p. 52.
16. Šarruma աստծո անունն է, որը խուրրիական դիցաբանությունում հանդես է գալիս որպես Թեշուբի և Հեբաթի որդի, թարգմանաբար՝ «Թեշուբ աստծո ցլիկ/որդի» (Хачикян И., Хебат, *МНМ*, том II, с. 586); Laroche E., *Glossaire de la langue hourrite*, *RHA*, tome XXXV, 1977, p. 218.
17. Philo H.J. Houwink ten Cate, *op.cit.*, p. 53.
18. Քոսյան Ա. *Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը*, էջ 73:
19. De Roos J., *Who was Kilushepa?*, *JOL*, 1985-1986, p. 81.

ՀԱՍՅԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ (ԱԻ)

ՍՈՍԱՆՎԵՐ ԱՆՈՒՇԱՎԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՈՒ ԽՈՒՌԻԱԿԱՆ ՁՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

Սոսանվեր Անուշավանի մասին տեղեկություններ պահպանվել են Խորենացու «Հայոց պատմության» Արա Գեղեցիկին և Շամիրամին նվիրված առասպելաշարքում¹: Սոսանվեր Անուշավանը Արայան Արայի (Կարդոսի) որդին էր և եամապատասխարար Արա Գեղեցիկի թոռը: Արա Գեղեցիկ, Արայան Արա և Սոսանվեր Անուշավան եռյակը գործառույթային առումով շատ մոտենում է դյումեզիլյան եռֆունկցիոնալ միասնությանը, որի գլուխ կանգնած Արա Գեղեցիկն օժտված է գլխավոր աստծուն բնորոշ հատկանիշներով (պտղաբերության, մեռնող-հարություն առնող աստծո, անդրաշխարհի, ինչպես նաև ռազմի գործառույթներով), այսինքն նա բազմաֆունկցիոնալ բնույթ ունի²: Արա Գեղեցիկի որդին՝ Արայան Արան, այս համակարգում ռազմական գործառույթի ներկայացուցիչն է, իսկ երրորդ՝ պտղաբերության գործառույթի կրողը դառնում է Արայան Արայի որդի Սոսանվեր Անուշավանը: Ըստ Խորենացու, նրա պաշտամունքը կապված էր սոսի ծառի հետ (ծառերի պաշտամունքը հին աշխարհում ամենուր կապվում էր երրորդ ֆունկցիայի աստվածությունների հետ):

Սոսանվեր Անուշավանը որպես երրորդ տիպի աստվածություն համարժեք է Սասնա Ծռեր էպոսի Փոքր Մհերին կամ «Վիպասանքի» Արտաշեսի և Մաթենիկի որդուն՝ Արտավազդին: Նրա մասին, բացի վերը նշվածից, Խորենացին հայտնում է, որ Սոսանվեր Անուշավանը կարողանում է Նինվասից կամ Ջամեսեսից՝ Շամիրամի որդուց, բարեկամների օգնությամբ ետ ստանալ նախ մեր երկրի մի մասի կառավարումը, հետո ամբողջ երկրի իշխանությունը³: Առասպելից պարզ չէ, թե ո՞վ է Սոսանվերի մայրը, սակայն մեզ հայտնի է, որ նրա հորը՝ Կարդոսին, Շամիրամը Արա Գեղեցիկի նկատմամբ տածած սիրո պատճառով կոչում է Արայան Արա և նշանակում է երկրի գլխավոր: Վերջինս պատերազմում զոհվում է Շամիրամի հետ: Փաստորեն Արայան Արան Շամիրամի դաշնակիցն էր ու զինակիցը, ինչը թույլ է տալիս առաջադրել վարկած, որ Սոսանվերի մայրը հնարավոր է Շամիրամը լիներ (այս միտքը հիմնավորող այլ փաստարկներ կրելվեն ստորև): Հայտնի է, որ Շամիրամի կերպարը ծագում է Նինվեի Իշտարի կերպարից, իսկ վերջինս էլ՝ Նինվեի Շավուշկայից⁴: Իշտարի կերպարը համադրելի է նաև կովկասյան ավանդազրույցների կենտրոնական կերպարի՝ Մաթանեյ-Մաթանայի հետ: Օրինակ, կաբարդինական հերոսուհու անունն էր Իշաար-Մաթանեյ⁵:

Կովկասյան Մաթանեի համարժեքն է հայկական ավանդույթում պահպանված Արտաշեսի կինը՝ արևմտյան արքայադուստր Մաթենիկը⁶, որի որդին էր Արտավազդը (հիշենք վերը նշված Արտավազդի և Մոսանվերի համարժեքությունը, որպես երրորդ ֆունկցիայի ներկայացուցիչներ): Կովկասյան տարրերակներում Մաթանա-Մաթանեյի որդու անունն է օս. Մոսլան, աղբյ. Մոսրուկո, արխ. Սասրկվա, որոնք ծնվում են քարից՝ Մաթանայի գետային արկածի հետևանքով: Օրինակ, աղբյուրական տարրերակում Մաթանեյը գետում լվացք անելիս՝ տեսնում է մյուս ափին ծերունի հովիվ Մոսին, որը ապշած նրա գեղեցկությունից, բեղմնավորում է առափնյա քարը. ծնված տղայի անունը դնում են Մոսրուկո: Կովկասյան տարրերակներում Մոսլան, Մոսրուկո և Սասրկվա (ըստ ժողովրդական ստուգաբանության նշանակում է Մոսի որդի⁷) համահնչյուն են Մոսանվերի անվանը: Նրա անունը համահնչյուն է նաև աղբյուրական առասպելներում առկա Մոուսըրըշ աստծո անվանը, որը համարվել է ինչպես հողագործության, այնպես էլ անասնապահության հովանավոր աստվածություն⁸: Հավանականորեն նա կապված է եղել նաև արևի պաշտամունքի հետ⁹: Այսինքն, համակարգելով վերը նշվածը, ստանում ենք հետևյալ համադրումները.

<i>Արայան Արա և Ըամիրամ</i>	<i>Արաաշես և Մաթենիկ</i>	<i>Մաթանեյ և Մոս (աղբյ.)</i>
<i>Մոսանվեր Անուշավան</i>	<i>Արտավազդ</i>	<i>Մոսլան /Մոսրուկո/ Սասրըրկվա</i>

Նկատենք նաև, որ Մոսանվեր նշանակում է «սոսու ընծայած» (կամ «սոսուն նվիրված»), իսկ կովկասյան Մոսլան, Սասրըրկվա տարրերակներում նրանց անվանումները նշանակում են «Մոսի որդի», որոնք իմաստային առումով զրեթե նույնական են: Մոսանվերի անվան, «նվեր, ընծա» իմաստի հետ ուշագրավ զուգահեռներ կարելի է նկատել խոտի-խեթական ժայռից ծնված հերոսի՝ Ուլլիկումմիի մասին առասպելներում: Կումարբին՝ նրա հայրը, որ բեղմնավորելով ժայռը ծնում է Ուլլիկումմին, խորհում է, թե ինչպես քաքցնի նրա գոյությունը մինչև նրա մեծանալը և, հանձնելով նրան որպես «ընծա, նվեր» Իրսիքրա աստվածներին, պատվիրում է տանել որդուն դեպի Սև հողերը¹⁰: Մոսանվեր Անուշավանը իր ծնունդով չի կապվում ժայռի հետ, ինչպես կովկասյան առասպելների վերոհիշյալ հերոսները, կամ Ուլլիկումմին, սակայն նա, ինչպես տեսանք, համարժեք է Փոքր Ահերին և Արտավազդին՝ ժայռում փակված հերոսներին:

Հաջորդ զուգահեռը հետևյալն է. Մաթանայի մասին կովկասյան առասպելներում առկա է գետի ափից Մաթանայի և հովվի երկխոսությունը: Հայկական առասպելում Մաթենիկի և Արտաշեսի հանդիպումը ևս կայանում է գետի ավին: Այստեղ չկա քարի սյուժեն, սակայն առկա է նրանց բաժանող

գետը և նրանց որդին է Արտավազդը (որը համարժեք է Սոսանվերին, Սուսանին): Ուշագրավ զուգահեռ այս երկու՝ կովկասյան և հայկական սյուժեների հետ պահպանվել է նաև Ուլլիկումնիի երգի տարբերակում, երբ Նինվեի Շավուշկան՝ Նինվեի Իշտարը (որը համարժեք է Շամիրամին և Մաթանային) տեղեկանալով, որ Ուլլիկումնի կովելու է եղբոր հետ, զնում է ծովափ՝ երգով մեղմելու Ուլլիկումնիի սիրտը¹¹: Ակնհայտ է զուգահեռը հայկականում՝ Արտաշեսի և Մաթենիկի երկխոսության, որում վերջինս խնդրում է ազատել գերված եղբորը: Իսկ ժայռի մոտիվը առկա է կովկասյան տարբերակում: Փաստորեն հայկական առասպելում պահպանված «եղբոր համար խնդրելու մոտիվը» բացակայում է կովկասյանում:

Ա. Պետրոսյանի բանավոր հաղորդմամբ՝ Սոսանուերի առաջին *saws*¹² արմատը հնարավոր է, որ համարժեք է Շավուշկայի անվանը: Ըստ Կ. Վիլկեի՝ երրորդ հազարամյակի վերջում Ուրի III դինաստիայի աղբյուրներում պահպանված է Շավուշկայի անվան *sausa* ձևը, որը հավանաբար կարելի է բացատրել նրանով, որ *Šavuška* անվան մեջ *k/ga* վերջավորությունը նվազեցուցիչ մասնիկ է, և նա կարծիք է հայտնում, որ Նինվեի Շավուշկան միաձուլվել է Նինվեի Իշտարի հետ¹³: Այստեղից բխում է, որ Շավուշկայի անվան արմատը *saus*-ն է, որը կարելի է համարել Սոսանվերի *saws* բաղադրիչի հետ: Հետևաբար, հնարավոր չէ՞ արդյոք Սոսանվերի անունը մեկնաբանել որպես «Շավուշկայի նվեր, ընծա», մի զուցե նաև որդի: Սա լրացնում է վերը ներկայացված մեր կարծիքն այն մասին, որ Սոսանվերի մայրը կարող է լինել Շամիրամը: Ի դեպ, Ուլլիկումնիի մասին երգում եղբոր համար խնդրում է հենց Նինվեի Շավուշկան¹⁴: Հետաքրքրական է, որ այս աստվածուհին օլիմպոսում է «բարելական խուռիներին» դիցաբանը, իսկ Կիցցուվատնայում նա հանդես է գալիս արական աստվածությունների շարքում՝ կայծակնային Թեշուբից, Կումարբիից և Էայից հետո¹⁵: Նինվեի Շավուշկան օժտված է նաև ռազմական հատկանիշներով¹⁶, որոնք հավանաբար հատուկ էին նաև Շամիրամին, որը զոհվում է ռազմադաշտում:

Մեկ այլ հնարավոր զուգահեռ կարելի է նկատել Սոսանվերի անվան և խուռի-միտաննիական հնդարիական արքայատոհմի Պարսադատտարի որդի՝ Սաուշատար (Սսուշշատտար) անվանման հետ (Զ.ա. XV դ. երկրորդ կես): Կարծիք է հայտնվել, որ վերջինս կարող է նշանակել հենց «Սոսանվեր»¹⁷:

Չփորձելով լեզվաբանորեն հիմնավորել այս տեսակետը՝ ասենք միայն, որ Սաուշատտար անունը չի ստուգաբանվում խուռիներենով և անվան երկրորդ՝ «դատտա» բաղադրիչը ակնհայտ հնդիրանական է: Դեռ ավելին, Նուզիից պահպանվել է մի նամակ, որտեղ Սաուշատտարը Առափխայի Իբխիա թագավորին տեղեկացնում է Առափխայում կատարված որոշ հողաբաժանումների և արդյունքում ծագած վեճերի մասին: Եվ այս հատվածում նշվում է Մատավատի անվամբ դատավորի մասին, որը Սաուշատտարի հանձնարարությամբ պետք է կարգավորեր այդ խնդիրը¹⁸:

Սատավատի անունը հին հնդկերենում նշանակում է «ճմարտացի, ճմարտախոս», որ իմաստային առումով շատ համապատասխանում է վերոհիշյալ դատավորի կոչմանը, գործառույթին: Բացի այդ, Ա. Պետրոսյանը համադրում է վերը քննարկված կովկասյան Սաթանայի և հնդկական Սատյավատիի՝ Պարաշարա արքայի կնոջ կերպարները և այդ երկու առասպելների սյուժետային ընդհանրությունները¹⁹: Փաստորեն ոչ միայն Սաուշտատար անվանումն իր զուգահեռն ունի Սոսանվերի հետ, այլև նրա ուղարկած դատավորի անունը՝ Սատավատի, բացատրվում է սանսկրիտով և անվանապես համահունչ է հնդկական ավանդության գլխավոր հերոսուհու անվանը՝ Սատյավատիին, որն էլ իր հերթին համարժեք է կովկասյան Սաթանային և հայկական Սաթենիկին:

Եզրակացություններ.

ա. Սոսանվերի անունը համահունչ է կովկասյան առասպելների ժայռածին հերոսների՝ Սոսլան, Սոսրուկո, ինչպես նաև կովկասյան պողոպեռության Սոուրըրը աստծո անվանը:

բ. Սոսանվերը, որպես երրորդ ֆունկցիայի ներկայացուցիչ, համարժեք է ժայռում փակված Արտավազդին և Փոքր Մհերին, ինչպես և կովկասյան ժայռածին հերոսներին:

գ. Ըստ վերակազմության՝ Սոսանվերի մայրը առասպելում կարող է լինել Շամիրամը:

դ. Սոսանվերի անվան saws արմատը հնարավոր է համադրել Նինվեի Շավուշկայի անվան վկայված sausa ձևին: Նինվեի Շավուշկան հետագայի Նինվեի Իշտարն է, որ նախատիպ է հանդիսացել Շամիրամի կերպարի համար: Եվ Սոսանվեր կարող է նշանակել նաև «Շավուշկայի նվեր, ընծա»:

ե. Սոսանվերի անվան նուէր բաղադրիչը իր զուգահեռն ունի խուռիական Ուլլիկումմիի առասպելաշարում, որտեղ ակնարկվում է նրան՝ որպես «նվեր» հանձնելու մասին (տե՛ս վերը): Մյուս կողմից, Ուլլիկումմիի մասին առասպելը սյուժետային ընդհանրություններ ունի Արտաշեսի և Սաթենիկի ու կովկասյան ժայռածին հերոսների հետ:

զ. Սոսանվերի անունն իր զուգահեռն ունի Միտաննիի հնդարիական արքայատոհմի Սաուշտատար քազավորի անվան հետ: Միևնույն տեքստում ի հայտ է գալիս նաև Սատավատի դատավորի անունը, որը սանսկրիտով նշանակում է «ճմարտախոս», իսկ անվանապես համահունչ է հնդկական առասպելի գլխավոր հերոսուհու՝ Սատյավատիի անվանը:

Ի մի բերելով վերոհիշյալ կապերը, կարելի է եզրակացնել, որ խուռիական Ուլլիկումմիի, կովկասյան Սաթանայի և նրա որդիների, հայկական Արտաշես-Սաթենիկ և Արտավազդի, Արա Գեղեցիկ և Շամիրամի առասպելության հատկապես երրորդ հերոսի՝ Սոսանվեր Անուշավանի, հնդկական Սատյավատիի և Պարաշարայի մասին առասպելներում առկա են մի կողմից լեզվակերպաբանի և անվանակերպաբանի, մյուս կողմից

այուժետային և կառուցվածքային ակնհայտ ընդհանրություններ, որոնք կարող են վկայել կամ այս առասպելների և նրանց գլխավոր կերպարների ծագման մեկ ընդհանուր աղբյուրի, կամ նրանց ձևավորման ընդհանուր միջավայրի մասին: Թե երբ և որտեղ դա կարող էր տեղի ունենալ, այսօր միանշանակորեն չի կարելի ասել: Սակայն, Սաուշշաղատտարը, որն անվանապես համարժեք է Սոսանվերին, թագավորել է Ք. ա. XV դարի կեսին, իսկ մինչև Ք.ա. XV դարի վերջը, այսինքն Միտաննիի հնդարիական դինաստիայի թագավորության ժամանակաշրջանը, Միտաննի Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունն էր, քանզի նրա ազդեցության ոլորտում էին գտնվում Առափխամ, Աշշուրը, Հյուսիսային Սիրիայի երկրները, Կիցցուվատնան, Վերին Եփրատի երկրները և Հայկական լեռնաշխարհի զգալի մասը²⁰:

Միգուցե հենց այս ժամանակաշրջանում էլ ձևավորվել են այս առասպելության գաղափարներն ու այուժեները, որոնց գլխավոր հերոսն է մայր աստվածուհին՝ իր ամուսնու կամ սիրեցյալի հետ և ժայռածին կամ երրորդ՝ պտղաբերության ֆունկցիան կրող հերոսը:

HASMIK HMAYAKYAN

(IOS)

SOSANVER ANUSAVAN AND HIS HURRIAN AND NORTH CAUCASIAN PARALLELS

Father of Armenian History Movses Xorenac'i (V c. A.D) in his "History of Armenia" tells about *Sosanver Anusavan* – the son of Arayan Ara (Cardos) and the grandson of Armenian deity Ara Ge'ec'ik (Ara the Beautiful).

The name of *Sosanver Anusavan* is consonant with names of stone-born heroes from North Caucasian mythologies – *Soslan*, Adyge *Sosruko* as well as of Caucasian fertility deity *Sousoroš*. *Sosanver Anusavan* as representative deity of Dumézil's third function is equivalent to Artavazd and *Pok'r Mher* (*Mher the Younger*) and the stone-born North Caucasian heroes. According to myth restoration, the mother of *Sosanver* can be Šamiram (Semiramis). The root of the Armenian "saws" can be compared with the form "sause" of the name of Šavuška of Nineveh. Šavuška of Nineveh is Ištar of Nineveh of the later period that served as a prototype for Šamiram. *Sosanver* may be translated as "Šavuška's gift, endowment". The second compound of the name of *Sosanver* - *nəver* – "gift, endowment" in Armenian can be composed with the Hurrian legend of Ullikummi, according to which it was delivered as a gift. On the other hand the legend about Ullikummi has similarities with Armenian myth of Artašes and Satenik and North Caucasian stone-born

heroes. The name of Sosanver also has its parallel with the name of Sausšadattar – a king of Mitanni's Indo-Aryan dynasty. In the same context it is also known that the name of a judge Satavata of the city Atillu which means “telling the truth” in Sanskrit is in accordance with the name of Indian myth about main female hero Satyavati.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, քարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, գլուխ է:
2. Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հմայակյան Հ., Հայաստան «U.GUR-ը և Արա Գեղեցիկը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Երևան, 2004, էջ 381-394:
3. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գլուխ է:
4. Вильке К., Ти'амат-башти и богиня Ша(в)уш(к)а ниневийская, Древний Восток, 5, Ереван, 1988, с. 23-24.
5. Инал-ипа Ш.Д., Памятники абхазского фольклора, Сухуми, 1977, с. 52, прим. 1. Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997, էջ 116:
6. Պետրոսյան Ա., Արամի առասպելը..., էջ 112-116: Դավալյան Տ., Հայոց վիպական Սաթնիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ, ՊԲՀ, քրվ 2, 2002, էջ 191-213:
7. Нарты, адыгский героический эпос, М., 1974, с. 194.
8. Ардзинба В.Г., Нартский сюжет о рождении героя из камня, Древняя Анатолия, М, 1985, с.152.
9. Лавров Л., Доисламские верования адыгейцев и кабардинцев – Исследования и материалы по вопросам первобытных религиозных верований, М, 1959, с. 216.
10. Иванов В., Луна упавшая с неба. М. 1977, с. 128.
11. Haaz, V., Geschichte der Hethitischen Religion, Leiden-New York-Köln, 1994, S. 90; Hittite Myths, Translated by Harry Hoffner, Atlanta, 1991, p. 56.
12. Սոսանվերի անվան «Սոս» արմատը նախապես ունեցել է saws ձևը, որը հետագայում դարձել է sōs (տե՛ս նաև Дьяконов И.М., К вопросу о символе Халди, Древний Восток, Ереван, 1983., с. 190).
13. Вильке К., Ти'амат-башти, с. с. 23-24 и прим. 3.
14. Haaz V., Geschichte der Hethitischen Religion, S. 90; Hittite Myths, p. 56.
15. Diakonoff I.M., Evidence of the Ethnic Division of the Hurrians, Studies on the Civilizations and Culture of Nuzi and the Hurrians, in honor of E.R.

Lacheman. Edited by Morrison M.A. and Owen D.I., Winona Lake, Indiana, Eisenbruns, 1981. p. 87.

16. Haaz V., *Geschichte der Hethitischen Religion*, S. 352;
17. Այս կարծիքը բանավոր հայտնել է Ա. Դավթյանը: Բացի այդ, Սաուշշադատուար-Սոսանվիր համապատասխանությունը չի կարելի դիտել որպես պատահական նմանություն, քանի որ ըստ Ա. Մովսիսյանի Միտաննիի արքայատոհմի և Հայկազուն նահապետների և արքաների ցանկում առկա են մի շարք համապատասխանություններ, այդ թվում և անվանական, օրինակ, Պարատտաոնա-Պարետ, Վասաշատտա-Վաշտակ (տե՛ս Մովսիսյան Ա., Միտաննիի արքաները Հայկազուն նահապետների և արքաների ցանկում, Երիտասարդ Արևելագետների Հանրապետական 20-րդ գիտական նստաշրջանի թեզիսներ, Երևան, 1999, էջ 25-27):
18. Ավետիսյան Հ., Հայկական լեռնաշխարհը և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII – IX դդ., 2002, էջ 37-39:
19. Պետրոսյան Ա., Արամի առասպելը, էջ 111-112:
20. Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 41:

ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՔԵՐՏ (ԱԽ)

Հ-ԱՅԱՍՍ-ԱԶԶԻԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ (ըստ Մուրսիլիս II-ի տարեգրության)

Խեթա-հայասական ռազմաքաղաքական փոխհարաբերու-թյուններին վերաբերող սեպագիր տեքստերի տվյալների հիման վրա հետազոտողները քննել են Հայասա-Ազգիի ընդգրկած տարածքի և Հայկական լեռնաշխարհում նրա պատմաաշխարհագրական դիրքով պայմանավորված նշանակության հետ կապված խնդիրները:

Իր քաղաքականության 10-րդ տարում, Խաթթիի արքա Մուրսիլիս II-ը (Ք.ա. 1321-1295թթ.) սկսում է ռազմերթ դեպի Հայասա-Ազգի: Նա գրում է. «Հենց որ գարունը բացվեց, դեպի Ազգի երկիր երկրորդ անգամ ճանապարհ ընկա...»¹: Ինգալավա քաղաքում գորատես անցկացնելուց հետո խեթական արքան արշավում է դեպի Հայասա-Ազգի: Հայասացիները որոշել էին ցերեկը ճակատամարտ չտալ ու պատրաստվում էին գիշերը հանկարծակի գրոհել խեթերի վրա: Իրագեկ լինելով այդ մասին՝ Մուրսիլիս II-ը հրամայում է իր բանակին կազմ ու պատրաստ լինել գիշերային հնարավոր հարձակումները ետ մղելու համար: Այնուհետև խեթերը գրավում են «ծովի մեջ գտնվող» Արիպաս քաղաքը², որի բնակիչները հեռացել էին մոտակա լեռները: Արիպասն ավարի մատնելուց հետո Մուրսիլիս II-ը հպատակեցնում է նաև Դուզգամա հայասական քաղաքը, որի բնակիչները դիմադրություն ցույց չեն տալիս: Խեթական արքան քաղաքը չի ավերում, միայն 3000 դուզգամացիների՝ որպես զինվորների, տանում է Խաթթի: Տարեգրությունն ավարտվում է հետևյալ բառերով. «Այնուհետև, Խաթթուսա քաղաք եկա: Եվ Խաթթուսասում ձմեռեցի...»³:

Այսպիսով, Խաթթիի արքան իր գահակալման 10-րդ տարին անցկացրել է՝ արշավելով դեպի Հայասա, արշավը սկսելով գարնանը և ավարտելով ձմեռնամուտին:

Այս արշավանքի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տարբեր տեսակետներ են հայտնվել: Է. Ֆոռերն Արիպասն տեղադրել է Վանա լճի արևմտյան ափին՝ Կիզվան-դաղ կոչվող վայրում, իսկ Դուզգաման՝ Դատվանի տեղում⁴: Նա ենթադրել է, որ Մուրսիլիս II-ն այդ արշավանքի ընթացքում հասել է մինչև Վանա լիճ: Իսկ Ն. Ադոնցը Հայասայի աշխարհագրական դիրքը որոշել է Վերին Եփրատի հովտում: Ինգալավա, Արիպաս, Դուզգամա քաղաքները նա տեղադրել է Կումմախա տանող

ճանապարհների վրա: Ն. Ադոնցն անհավանական էր գտնում, որ Մուրսիլիսը հասել էր մինչև Վանա լիճ⁵: Գ. Ղևփանցյանը համաձայն էր այն մտքի հետ, որ Հայասա-Ազգին զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը՝ Փոքր Հայքի արևելյան և Բարձր Հայքի տարածքները: Նա կարծում էր, որ Արիպսան և Դուզգաման գտնվել են Հայասա-Ազգի արևելյան մասում՝ առավել անվտանգ ու հեռու խեթական հարձակումներից՝ ներկայիս Էրզրումի մոտ⁶: Ըստ Ե. Քասունու՝ Հայասան տարածվել է Արևմտյան Եփրատի ավազանից մինչև Վանա լիճ: Ինգալավա քաղաքը, որտեղից Մուրսիլիս II-ը սկսել է արշավանքը, մի տեղադրել է միջնադարյան Անգեղ բերդի տեղում, իսկ Արիպսան՝ Վանա լճի ափին՝ Դատվանի կամ Խլաքի մոտ: Դուզգամա քաղաքը Ե. Քասունին տեղորոշել է Մանազկերտի մոտ և հավանական է համարել, որ այն հանդիսացել է պետության մայրաքաղաքը⁷: Հ. Մանանդյանը խեթական արձանագրության մեջ հիշատակված Ինգալավան հին հայկական Անգեղ բնակավայրի հետ է համեմատել, իսկ Արիպսան տեղորոշել է Վանա լճի ափին: Այսինքն՝ նա նույնպես Մուրսիլիսի արշավանքի երթուղին հասցրել է մինչև Վանա լիճ⁸: Լ. Բարսեղյանը Հայասա-Ազգին տեղորոշել է Բարձր Հայքում և Փոքր Հայքում՝ նրա հարավային սահմաններն անցկացնելով Իտուվայի տարածքով, որտեղ էլ (Խարբերդի շրջանում) տեղադրել է Արիպսա և Դուզգամա քաղաքները, իսկ Ինգալավան՝ Անգեղտուն գավառում⁹: Ա. Երեմյանը համաձայն չէր այն տեսակետի հետ, որ Հայասա-Ազգին գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք ընկած տարածքներում կամ Սև ծովի մերձայնտոսյան ափերին: Նա Հայասա-Ազգի միության կենտրոնական շրջանները տեղորոշել է անտիկ ադրբայդժանում հիշատակված Ալիլիսենեում¹⁰: Ի. Դյակոնովը սկզբնապես Հայասա-Ազգին տեղորոշել է Վերին Եփրատի ավազանում¹¹, սակայն իր հետագա աշխատություններից մեկում առաջարկել է տեղադրել այն Սև ծովի հարավարևելյան ափերին: Ըստ նրա՝ Մուրսիլիսն, անցնելով Արևելապոնտական լեռները, հասել էր Սև ծովի ափերը: Ի. Դյակոնովը նույնպես Դուզգաման նշել է որպես Ազգիի կենտրոն¹²: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Խաթթիի արքան անցել է Սև ծովի հարավային ափերով, որտեղից նա հասել էր Ճորոխ գետի հովիտը և գորքի ստուգատես էր անցկացրել Ինգալավա քաղաքում (Ճորոխի ստորին ավազանի միջնադարի հայկական Նիգալ գավառի տեղում), այնուհետև Ճորոխի ավազանի կենտրոնական մասում գրավել Արիպսա և Դուզգամա քաղաքները¹³:

Այսպիսով, ուսումնասիրողների հիմնավորումները Մուրսիլիս II-ի արշավանքի և Հայասա-Ազգիի նշյալ բնակավայրերի տեղադրման շուրջ կարելի է խմբավորել հետևյալ կերպ:

ա) Հայասա-Ազգին գտնվել է Վերին Եփրատի, Վերին Գայի ու Ճորոխի ավազաններում, և Մուրսիլիս II-ի արշավանքի իրադարձությունները տեղի են ունեցել հիմնականում Բարձր Հայքի տարածքում:

բ) Հայասա-Ազգին տեղորոշվել է Սև ծովի ափերին, և Խաթթիի արքան,

անցնելով Պոնտական լեռները, գրավել է Սև ծովի հարավ-արևելյան ափերին գտնվող Ազգիի քաղաքները:

Չ) Հայասա-Ազգի գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք ընկած տարածքներում, իսկ Արիպսա քաղաքը տեղադրվել է Վանա լճի ափերին, և Մուրսիլիս II-ն արշավանքի ընթացքում հասել էր մինչև Վանա լճի ավազանը:

Հեղինակների մեծ մասը առավել հստակ ցույց է տվել Հայասա-Ազգիի հատկապես արևմտյան սահմանները, որոնք անցնում էին հիմնականում պատմական Փոքր Հայքի կամ Բարձր Հայքի տարածքով, որտեղ Հայասա-Ազգի սահմանակցել է Խաթթիի հետ, իսկ Արևելապոնտական լեռներով՝ կասկերի ցեղերի հետ: «Ծովի մեջ գտնվող» Արիպսա քաղաքը հարկավոր չէ Սև ծովի ափին փնտրել, քանզի շուներերեն A.AB.BA գաղափարագիրը նշանակել է նաև լիճ: Սև ծովի ափերին այս քաղաքը չէր կարող գտնվել նաև այն պատճառով, որ այդ դեպքում խեթերը ստիպված պետք է անցնեին Արևելապոնտական լեռները, ինչը կհանգեցներ կասկերի ուսգմատենչ ցեղերի հետ անխուսափելի բախման և, բացի այդ, տարեգրության մեջ կնշվեր, որ խոսքը խեթերին ծանոթ ծովի մասին է:

Դուգամա քաղաքը խեթական գորքը գրավել է Արիպսան նվաճելուց հետո, ուստի այս քաղաքները մոտ են գտնվել իրար: Այն հիշատակվել է նաև «Պախսուվացի Միտայի» խեթական տեքստում¹⁴: Դուգաման՝ որպես բնակավայր, գոյություն է ունեցել դեռևս Արևուվանդաս I-ի օրոք (Ք.ա. XIV սկզբ) և խեթերի կողմից դիտվել է որպես դաշնակից քաղաք: Հայասայի աստվածների շարքում հիշատակվել է «Դուգամայի Բաթաիզ աստվածը»¹⁵: Այս վկայության հիման վրա դժվար չէ ենթադրել, որ Դուգաման հանդիսացել է Հայասայի ոչ միայն քաղաքական, այլ նաև պաշտամունքային կարևոր կենտրոններից մեկը:

Պատմագրության մեջ կարծիք է հայտնվել, որ Ինգալավան Հայասա-Ազգիի քաղաքներից մեկն է եղել և գտնվել է հին հայկական Անգեղ տուն գավառում, առաջարկվել են նաև այլ տեղադրություններ: Հարկ է նշել, որ Մուրսիլիսի տարեգրությունում չի նշվել, որ նա անցել է Եփրատ գետը և առաջացել Իսուվայի տարածքով (հետագայի Ծովքը), եթե ընդունենք, որ Ինգալավան գտնվել է Անգեղ տուն գավառում: Քաղաքն, ամենայն հավանականությամբ, գտնվել է հայասա-խեթական սահմանային գոտում: Կս:րելի է առաջարկել քաղաքի տեղադրությունը Վերին Եփրատի ավազանում, որտեղից ճանապարհ էր բացվում դեպի Հայասա-Ազգի պետության խորքերը:

Խեթերը դեռևս Մուպալիուլիումաս I-ի օրոք (Ք.ա. 1344-1322թթ.) իրենց վերահսկողությունն էին հաստատել Իսուվայի, Կումմուսայի (ներկայիս Կեմախ) և Ծուխապայի տարածքների վրա: Ծուխապան տեղորոշվել է Իսուվայի հարևանությամբ և սահմանակից է եղել Հալոսային, որտեղ և գտնվել են Լախս լեռները (կամ լեռը): Հավանաբար, այս լեռներն Իսուվայից հյուսիս-արևելք են գտնվել (Վ. Խաչատրյանը կարծիք է հայտնել, որ Լախս լեռները

ներկայիս Բյուրակնյա կամ Հայկական Պար լեռներն են¹⁶):

Ժամանակային սրունով արշավանքը բավականին ձգձգվել է, հաշվի առնելով նաև այն, որ խեթական բանակը գրավել էր ընդամենը երկու հայասական քաղաք, որից մեկն անձնատուր էր եղել: Սուրսիլիսն այդ ընթացքում Բարձր Հայքի տարածքից կարող էր հասնել մինչև Վանա լճի ափերը, որտեղ և գտնվել է «ծովի մեջ գտնվող» Արիպսան: Կարելի է հաշվի առնել նաև, որ արշավանքի ընթացքում և մինչև Արիպսա հասնելը որևէ ռազմական բախում տեղի չի ունեցել խեթական և հայասական ուժերի միջև: Այսինքն, խեթերն-իրենց վերահսկողության տակ գտնվող Բարձր Հայքի և Շուքի տարածքներից կարող էին հասնել մինչև Վանա լճի ավազան: Սակայն, խեթերն այդ արշավանքի ժամանակ Իսուվայի տարածքով չեն շարժվել: Հարավից՝ Հյուսիսային Միջագետքի կողմից շարժվելու դեպքում պետք է նշվեր Ալզին (հետագայի՝ Աղձնիքի տարածքը), որը Սուսայիլուլիումաա I-ի օրոք հիշատակվել է որպես առավել ազդեցիկ ուժ այդ տարածաշրջանում:

Այսպիսով, խեթական բանակը Արևմտյան Եփրատի վերին հոսանքների շրջանից շարժվել էր դեպի Վանա լճի ավազան՝ անցնելով Տուրուբերանի տարածքով, և Հայաստանի տեղորոշումը այդ տարածքներում առավել հավանական է թվում:

ROBERT GHAZARYAN

(IOS)

ON THE ISSUE OF THE LOCATION OF HAYAŠA-AZZI (According to the Annals of Muršiliš II)

During the 10th year of Muršiliš II (1321-1295 B.C.), the king of Hatti, started a campaign into Hayaša-Azzi. The king of Hatti spent the whole year in Hayaša, from spring until early winter.

The campaign lasted very long if we take into account the fact that the army of Hatti invaded only two Hayašan towns, one of which surrendered. Including upon the territory of Upper Armenia, Muršiliš had an opportunity to reach the banks of Lake Van where Aripša – “the town in the sea” was situated. It was not difficult for the army of Hatti to get from Upper Armenia to the basin of Lake Van, especially, before reaching Aripša no military confrontation had taken place during the campaign of Muršiliš. This means that he could reach the Lake Van from the territory of Upper Armenia and Tsopk which were already under his control.

ԾԱՆՈԹՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Keilschrifttexte aus Bobazkdi (այսուհետև՝ КВо), IV 4 III 57-58.
2. КВо IV 4 IV 5.
3. КВо IV 4 IV 40-41.
4. Forrer E., *Hajasa-Azzi, Caucasia*, № 9, 1931, p. 18-20.
5. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 45:
6. Капанцян Г., *Хайаса-колыбель армян*, Ереван, 1948, с. 59-63.
7. Քալուսի Ե., Նախահայկական Հայաստան, Պէրոպ, 1950, էջ 76, 102-104:
8. Манандян Я., *О некоторых спорных проблемах истории и географии древней Армении*, Ереван, 1956, с. 99-101.
9. Բարսեղյան Լ., *Խաշառ-Ազգիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը*, ՊԲՀ, քիվ 3, 1963, էջ 310-311:
10. Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, քիվ 2, 1970, էջ 30-31:
11. Дьяконов И.М., *Хетты, фригийцы и армяне*, ПСБ, № 1, 1961, с. 333-368 (տե՛ս հոդվածում գնտեղված քարտեզը):
12. Дьяконов И.М., *Предыстория армянского народа*, Ереван, 1968, с. 95-96.
13. Խաշառյան Վ., Հայաստանը մ. ք. ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 74-77:
14. Keilschrifturkunden aus Bobazkdi, XXIII 72.
15. Forrer E., *Hajasa-Azzi, Caucasia*, № 9, 1931, p. 60-61.
16. Хачатрян В., *Восточные провинции Хеттской империи*, Ереван, 1971: 141; նույնի, Հայաստանը մ. ք. ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 58:

ON THE ISSUE OF THE LOCATION OF HAYASAZZI

(According to the findings of the excavations)

During the 19th cent. of the 19th century, the excavations of the site of Bobazkdi in the region of the city of Bobazkdi in the province of Hajasa-Azzi were carried out. The findings of the excavations are of great interest for the study of the history of the region.

The excavations of the site of Bobazkdi have shown that the site was inhabited from the 19th century BC to the 1st century AD. The findings of the excavations are of great interest for the study of the history of the region. The excavations have shown that the site was inhabited from the 19th century BC to the 1st century AD. The findings of the excavations are of great interest for the study of the history of the region.

ՄԱՂԱԼՅԱՆ ԱՐՏԱԿ

(ՊԻ)

ՎԱՐԱՆՂԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆԸ

Վարանդա գավառի մելիքության տարածքը սկսվում էր Կարկառ գետից և տարածվում մինչև Քիրս-Դիզափայտ լեռնագոտին: 17-րդ դարի սկզբից Վարանդա գավառի տիրակալներն էին Մելիք-Շահնազարյանները, որոնց իշխանանիստը Ավետարանոց բերդավանն էր: Սույն հռչակածում ներկայացված է Վարանդայի մելիքության համառոտ պատմությունը:

Դռփյան իշխանական տոհմից սերված Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների տան ներկայացուցիչ Միրզաբեկը 17-րդ դարի սկզբին բնակություն է հաստատել Վարանդա գավառի Ավետարանոց գյուղում և այնտեղ սկիզբ դրել Մելիք-Շահնազարյանների տիրապետությանը: Սույն Միրզաբեկի՝ Վարսնդայի Ավետարանոց գյուղում հաստատվելու մասին Ս. Ջալալյանը գրում է. «Վերանորոգող մեծաշէն գիւղաքաղաքիս եղև մելիք Միրզայրեգ որդի մելիք Մելիքբեգի, թոռն Ապովայ տեստն Գեղամայ, եղբայր Շահնազարայ տեստն Գեղարքունայ, քանզի ի գորանալ Կովկասական ասպատակաց և յարծակլի ի վերայ նահանգին Գեղամայ ի թուին Հայոց ՌԼԱ /1582/, որպէս երևի ի տապանագիրս այնր գաւառի թէ «ի փոխիլ Դուզիլքաշին Տաղստանայ Լեկզին՝ որ գաւառս աւերեցաւ թվին ՌԼԱ-ին»: Այնուհետև սկիզբն եղև աւերանաց բարեբեր աշխարհին Գեղամայ. վասն որոյ և բնակիչք նորա աճապարեալ անկան յամուրս Արցախու և Գարդմանայ, յայնժամ և Մելիքբեգ ընտանեօք իւրովք էջ ի գիւղն Աւետարանոց և սկիզբն արարեալ վերանորոգեաց գաւ և շքեզացոյց որպէս վայելն էր իւրումն փառաց և պատուոյ, յորոյ սերնդոց ելին արք հզորք և անուանիք. և եղեն տիրապետօք այսոցիկ գաւառաց»: Հետագայում այս տեսակետը գրեթե նույնությամբ մեջբերել է նաև Ս. Մմբատյանը²:

Սակայն Կ. Տեր-Սկրտչյանը մերժել է Ս. Ջալալյանի առաջարկած 1582 թվականը, հիմնավորելով, որ թեև վերջինս «Միրզայ բեկի տեղավախությունը Սոթքից Վարանդայ եղած համարում է 1582 թուին, երբ Լեկզիք արշաւել աւերել են Գեղարքունիքը, և այն ժամանակից սկսուել է այդ գաւառի աւերումը և բնակիչների ցիրոցան լինելը: Սակայն նորա յիշած արձանագրութիւնը, որի հիման վրայ նա այդ թուին աւերուած է համարում Գեղամայ երկիրը, մենք ոչ մի տեղ չենք գտնում և տեսանք ընդհակառակն, թէ դեռ 1606 թուին ինչպէս շէն էր այդ գաւառը, կամ Միրզայ բեկի հօր տունը: Այլ և Ծարեցու պատմելով սոսկալի սով էր այդ թուին Վարանդայում, և ուրեմն աւելի շուտ այնտեղից մարդիկ կփախչէին, քան թէ Միրզայբեկի պէս մի մեծատուն իշխան այնտեղ

կերթար: Շատ առեկի հաւանական է, որ նորա տեղափոխութիւնը կատարուած լինի նոյն 1603 թուին, երբ Մելիք-Շահնագարն էլ ստիպուած էր Շարում ապաստան գտնել»³:

Գուցե վերջին վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ պատմիչ Հովհաննեսիկ Շարեցին 1572-1600թթ. անցքերն ընդգրկող իր ժամանակագրության մեջ, ցնցող գույներով նկարագրելով Վարանդա գավառում 1579-1580թթ. տեղի ունեցած սովը⁴, ոչինչ չի հաղորդում նման մի տեղափոխության մասին:

Իսկ ահա 1603թ. տեղի ունեցած այդպիսի մի տեղաշարժի մասին վկայություն, իրոք, գտնում ենք Դավիթ եպիսկոպոսի գրած հիշտակարանում. «Յորժամ եղև գարուն, այս բարեմիտ և իմաստուն իշխանս պարոն Մելիք Շահնագարս, իմացաւ զոխս սրտից Օմար ազգին, հրաման արար երկրիս, թէ «Եկայք մտցուք յամուրս, զի մի՛ լիցուք կոխան այլազգաց» և ինքն գնաց ի Շար և ի Տպլ: Եւ որք զհետ նորա գնացին, զերծան ի սբոյ և ի գերութենէ այլազգեաց»⁵: Հավանաբար այդ ժամանակ էլ Մելիք-Շահնագարի եղբայր Միզաբեկը հաստատուել է Վարանդայի Ավետարանոց գյուղում, իսկ 1606-ին Իրանի Շահ-Աբբաս Ա-ի (1587-1629) հրամանագրով մելիք կարգվել այդ գավառում: Վարանդայի մելիքի պաշտոնում նրան հաջորդել է որդին՝ Մելիք-Բադի Ա-ը (Բադրխան, Բադրխան): Հայտնի է Իրանի շահ Մեֆու (1629-1642թթ.) կողմից 1633թ. նրան տրված հրովարտակը, որի պատճենը Ա. Լագրևից ստանալով հրատարակել է Մ. Բարխուտարեանցը⁶:

Մելիք-Բադուն Վարանդայում հաջորդել է որդին՝ Մելիք-Շահնագար Ա-ը: Այդ մասին ստույգ տեղեկություններ ենք գտնում Շահ-Աբբաս Բ-ի (1642-1666թթ.) կողմից 1646թ. նրան տրված հրովարտակում⁷: Մելիք-Շահնագար Ա-ը որպէս Վարանդայի տիրակալ հիշվում է նաև 1673-ին, համաձայն Հերիեր գյուղի Ս. Գրիգորիս եկեղեցու արևմտյան դռան ճակատակալ քարին վարագրված արձանագրության⁸:

Մելիք-Շահնագար Ա-ին հաջորդել է որդին՝ Մելիք-Բադիր կամ Բադի Բ-ը, որի գործունեության վերաբերյալ պահպանվել են որոշ վկայություններ: Այսպէս, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն իր պատմության մեջ, նկարագրելով լեզգիների արշավանքները, վկայում է, որ նրանք 1722թ. սարքիլին «անցան Վարանդա երկիրը, նույնն (ավերն ու ավարը – Ա.Մ.) սկսեցին այնտեղ անել: Մակայն սրանց Պադիր անունով մելիքը վաթով ընդառաջ ուղարկեց մի քանի մարդու իր ընծաներով, փրկեց գերիների կեսն ու իր երկիրը»⁹:

Մելիք-Բադիր Բ-ը հավանաբար 1730-ին արդեն վախճանված էր, որովհետև այդ թվականին Իրանի շահ Թահմասպ Բ-ի (1722-1732թթ.) հրովարտակով Վարանդայի մելիքի պաշտոնում նշանակված ենք տեսնում նրա եղբայր Մելիք-Հուսեյնին¹⁰, որը հայտնի է օսմանյան թուրքերի դեմ տարած մի քանի հաղթանակներով:

Մելիք-Հուսեփինն հաջորդել է նրա եղբայր Մելիք-Բաղու որդի Մելիք-Միրզաբեկ Բ-ը, որի մասին չափազանց քիչ բան է հայտնի, այն էլ կապված էրանի Նադիր շահի կողմից մահապատժի ենթարկվելու հետ (1744): Այսպես, 19-րդ դարի պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովն այդ մասին գրում է. «Նադիր շահը նրանցից ոմն Միրզաբեկի, հանցանք վերագրելով, պարանով խեղդամահ է անում»¹:

Նադիր շահը իր հրամանով մահապատժի ենթարկված մելիքի փոխարեն Վարանդայի տիրակալ է նշանակել Մելիք-Հուսեփինի ավագ որդի Մելիք-Հովսեփին, սակայն նրա կրտսեր եղբայր Մելիք-Շահնագար Բ-ը, օգտվելով Նադիր շահի սպանությանը (1747թ.) հաջորդած քառսից, սպանել է եղբորը, կոտորել նրա ընտանիքը և իրեն հռչակել Վարանդայի մելիք: Նրա քողովության շնորհիվ է վաչկատուն սարջալիների-ցեղապետ Փանահ Ալին (մահ. 1762թ.) 1750-ականներին հաստատվել Արցախում:

1792թ. մահացած Մելիք-Շահնագարին հաջորդել է ավագ որդին՝ Մելիք-Ջուշուղը (մահ. 1812թ.), որն իշխանության է եկել իր հոր աջակցությամբ կայացած Ղարաբաղի խանության դեմ անհաշտ պայքար մղելու վճռականությամբ:

Մելիք-Ջուշուղին հաջորդած Մելիք-Խուդադադը (մահ. 1833թ.) Վարանդա գավառի վերջին տիրակալն էր: 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Մելիք-Շահնագարյանների տան ներկայացուցիչները որպես տոհմիկ ազնվականներ մտան ռուսական ծառայությունների մեջ:

ARTAK MAGHALYAN (II)

THE MELIKDOM OF VARANDA

The Armenian history is rich in Melik (noble) families that are of great interest. For several decades (beginning from the 17th century up to the first quarter of 19th century), the representatives of these families led the national liberation movement. The most famous of them were Melik-Beglaryan of Gyulistan, Melik-Israelyan of Jraber, Hasan-Jalalyan of Khachen, Melik-Shahnazaryan of Gegharkunik and Varanda, Melik-Eganyan (Melik-Avanyan) of Dizak and Melik-Aghamalyan of Yerevan. This article presents a brief history of the Melikdom of Varanda.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ջալալիան Ա., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տփլիս, 1858, էջ 247:
2. Սմբատեանց Ս., Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 810:
3. Տեր-Սյրտչեան Կ., Դօսիեանք եւ Մելիք Շահնագարեանք, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, Էջմիածին, 1914, էջ 133-134:
4. «Ճոռարդ», Մոսքոա, 1859, տետրակ Գ, էջ 73-75, Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896: 608-611, Մանր ծանանակագրություններ xiii-xviiiդդ., հ.2, Երևան, 1956, էջ 242-244:
5. Տեր-Աւետիսեան Ա., Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջոնայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970: 68, Հայերն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1601-1620), հ. Ա, Երևան, 1974, էջ 218, Հակոբյան Ա., Միմոնյան Հ., Դաղիվանքի նորահայտ արձանագրությունը և Տալի տեղադրության հարցը, ՊԲՀ, քիվ 1-2, 1998, էջ 227:
6. Բարխուտարեանց Ս., Պատմութիւն Աղուանից, ի. Բ, Թիֆլիս, 1907, էջ 41-42:
7. Լեռ, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 500-501:
8. Բարխուտարեանց Ս., Աղուանից երկիր եւ հրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 214, Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 37:
9. Եսայի Հասան-Ջալալյան, Համառոտ պատմություն Աղվանից երկրի, Երևան, 1997, էջ 30:
10. Սատեմաղարան, Կարողիկոսական դիվան, թղթ. 2ր, վավ. 173, պատճեն:
11. Միրզա Յուսուֆ Ներսիսով, Ճշմարտացի պատմություն (թարգմանությունը քննարկից՝ Զ. Կոստիկյանի), Երևան, 2000, էջ 42:

ARMENIAN MANUSCRIPTS

(19)

THE BELLICOM OF ARMENIA

The Armenian bellicom is mentioned in the 13th century...
The bellicom is mentioned in the 13th century...
The bellicom is mentioned in the 13th century...
The bellicom is mentioned in the 13th century...
The bellicom is mentioned in the 13th century...

ՄԱՐՏՈՅԱՆ ԹԵՂՄԻՆԵ

(ԱԻ)

ԻՐԱՆՈՒՄ ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՈՒՐՁ

Իրանում Կարմեյան միաբանության գործունեությունը լուսարանող հիմնարար սկզբնաղբյուր է հանդիսանում իրենից մեծ հետաքրքրություն ներկայացնող, 1939թ. Լոնդոնում անանուն հեղինակի հրատարակած «Կարմեյանների տարեգրությունը. Պարսկաստանում և պապական քարոզչությունը XVII-XVIII դարերում» աշխատությունը¹:

Սկզբնական շրջանում Կարմեյաններն իրենց գործունեությունն Իրանում ծավալել են ինչպես մահմեդականների, այնպես էլ քրիստոնյա բնակչության շրջանում: Սակայն, բնականաբար, իսլամական երկրում մահմեդականների շրջանում կաթոլիկ քարոզչությունը չէր կարող գրկաբաց ընդունվել:

Հինք ընդունելով այն իրողությունը, որ բնակավայրերի հիմնումը Կարմեյանների համար Իրանում հաստատվելու և գործունեություն ծավալելու կարևոր մախապայման էր, անհրաժեշտ է անդրադառնալ Իրանում Կարմեյանների հիմնած բնակավայրերին:

Կաթոլիկ քարոզիչները, ներթափանցելով Իրան, հաստատվել էին հենց «Իսլամական աշխարհի աստղ» համարվող Մեֆյան արքայատոհմի մայրաքաղաքում², որի արդյունքում Կարմեյանների կենտրոնակալ բնակավայրը դարձավ Սպահանի մենաստանը: Այս իրողության հետաքրքիր լրացում է հայր Ֆաուստինի հետևյալ հիշատակումը. «Հավատացե՛ք, ու Եվրոպայում ունեցած մեր մեծաթիվ մենաստաններից և ոչ մեկը կիսով չափ նույնիսկ հավասար չէ սրան»³: Եկեղեցին, որի շինարարական աշխատանքներն ավարտվեցին 1638թ., ուներ հինգ մատուռ և իր չափերով գերազանցում էր Ավգուստինյանների (Օգոստոսյաններ) եկեղեցուն⁴: Հայր Վալերիուսի հավաստմամբ, տասնվեց տարվա ընթացքում միաբանության մատյանում գրանցված մկրտվածների թիվը գերազանցում էր յոթ հազարը, որոնցից (մկրտվածներից - Թ. Մ.) և ոչ մեկը ողջ չէր մնացել (հիմնականում մկրտվելու ցանկություն հայանում էին այն հիվանդները, որոնք գտնվում էին մահվան սպառնալիքի տակ)⁵:

Փաստենք նաև, որ Սպահանում բոկոտն Կարմեյանները⁶ մկրտել էին հինգ պարսիկի, որոնք կաթոլիկություն ընդունելու պատճառով ծանր

հալածանքների էին ենթարկվել մահմեդականների կողմից: Նրանց մարտիրոսության վերաբերյալ հաշվետվությունը հրատարակվել էր Հոռմում 1622թ, իսկ այնուհետև՝ թարգմանվել ֆրանսերեն⁷:

Կարմելյանները բնակություն հաստատեցին Հորմուզում, Շիրազում, Խարքում, Բանդար-Աբբասում, Բուշեհրում, Համադանում, Նոր Ջուղայում:

Հատկանշական է, որ նրանց գործունեության մեթոդները, կապված կաթոլիկության տարածման հետ, բազմազան էին և բազմաբնույթ: Օրինակ, հաստատվելով այս կամ այն բնակավայրում, միաբանության ներկայացուցիչները կառուցում էին եկեղեցիներ, մատուցներ, հիմնում էին դպրոցներ, բժշկական հիմնարկություններ, քարոզում էին, մկրտում և այլն:

Անառարկելի է, որ Հոռմի ուշադրության կենտրոնում հայտնվեցին հատկապես նորջուղայեցիները: Իրանահայ գաղթօջախում Նոր Ջուղան հանդիսանում էր հայկական լուսավորչական եկեղեցու թեմական կենտրոնը (առաջնորդանիստ վայրն էր Ս. Ամենափրկիչ վանքը⁸):

Կարմելյաններն առաջին անգամ Նոր Ջուղա են մտել 1625թ, որոնց հաջորդել են Կապուչինյան, Հիսուսյան և Դոմինիկյան կրոնավորները⁹: 1640-ական թվականներից քարոզիչներն ակնհայտորեն սկսում են կենտրոնանալ Ջուղայում Տուն հիմնելու գաղափարի շուրջ: Հայր Դիոնիսիուսի Մպահանհից հղված նամակում այդ կապակցությամբ ասվում էր.

«... Ինչ վերաբերում է Ջուղային, ապա կասեմ, որ սպասելիքներն անփոխարինելի կլինեն, մինչդեռ նույնքան դժվար է այնտեղ հաստատվելը: Եթե նույնիսկ ձեռք բերենք այնտեղ հաստատվելու արտոնագիր, ապա կրկին արդյունքներն անորոշ կլինեն, որովհետև յուրաքանչյուրը զբաղված է իր սեփական հետաքրքրություններով...»¹⁰:

Կարմելյանները՝ ի դեմս հայր Էլիասի (Եղիա), Ջուղայում հաստատվելու թույլտվություն են ձեռք բերում 1683թ.: Շահ Սուլեյմանի հրովարտակի համաձայն, վերոհիշյալ հայրը Ջուղայում դպրոց բացելու և մատուռ կառուցելու, իսկ 1687թ. հոկտեմբերին՝ Տուն հիմնելու իրավունք է ստանում: 1691թ. միաբանների ջանքերով «Մուրբ պատրիարք» Էլիասի անունով մի նոր եկեղեցի է հիմնվում¹¹:

Հետաքրքրական են հայր Բալթազարի տպավորությունները կապված Նոր Ջուղա այցելության հետ: Նա պատմում է, որ «երբ առաջին օրը Կարմելյաններն այցելեցին ջուղահայերին, վերջիններս հյուրընկալեցին նրանց ու անչափ բարություն ցուցաբերեցին: Տասնհինգ օր հետո, երբ Հիսուսյան հայրերը Մպահան եկան, իսկ այնուհետև՝ Նոր Ջուղա, և երբ մեկ տարի անց այնտեղ ժամանեցին Կապուչինյանները, հասարակությունն այդքան շատ եվրոպացի կրոնավորների տեսնելով՝ նախ զարմանքից քար կտրեց, և ապա, շատ կարճ ժամանակ անց, մի փոթորիկ բարձրացավ՝ առաջացնելով իրարանցում ողջ քաղաքում»¹²:

Կարմելյան հայրերը խաղալություն և իսկապատություն էին վայելում Նոր-Ջուղայում՝ բարեկամանալով հատկապես նրա քաղաքագլխի՝ Սարֆրազի հետ¹³: Սակայն, շուտով Նոր Ջուղայի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսը հայտնում է պարսից տերությանը, որ քարոզիչները հայ ժողովրդի մեջ խռովություն են սերմանում և նրանց նպատակն է Իրանում լրտեսություն անել, ուստի խնդրում է փակել դպրոցները և խափանել քարոզչությունը: Երբեմն էլ հայ հոգևորականությունը տերությանը տեղեկացնում էր, որ քարոզիչները բուռն ցանկություն ունեն կաթոլիկացնելու մահմեդականներին: Հայ հոգևորականության այդօրինակ վարքագծի դրսևորման ապացույց է քարոզիչներից մեկի մտավախությունն այն մասին, որ այդ պարագայում իրենք դուրս կվճռվեն ոչ միայն Նոր-Ջուղայից, այլև Իրանից¹⁴:

Երկար պայքարից հետո, ի վերջո, 1689թ. հայերը շահից հրովարտակ ստացան, որով քանդեցին Կարմելյանների եկեղեցին: Շուտով կաթոլիկ քարոզիչները փակել են տալիս Ստեփանոս եպիսկոպոսի տպարանը՝ պարսից տերությանը հայտնելով, թե իբր հայերը Ղուրանին հակառակ գրքեր են տպագրում¹⁵:

Հայերի վերաբերյալ, որպես քարոզիչների հալածիչների, բազմիցս հանդիպում ենք «Կարմելյանների տարեգրությունում»: Նման օրինակներից է Կարմելյան կրոնավոր Մորիսի՝ Թավրիզից 1711թ. հղված նամակը, ուր բացահայտորեն ասվում է, թե հայերը քարոզիչների և ընդհանրապես՝ ճշմարիտ կաթոլիկների հարստահարիչներն են¹⁶:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը, հարկ է նշել, որ թեև Կարմելյաններն անկոտրում պայքար էին տանում հանուն իրենց քարոզչական առաքելության իրականացման, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ կանգնում էին լուրջ խոչընդոտների առջև, որոնցից էին հանդիսանում, օրինակ, ֆինանսական խնդիրների առկայությունը, մահմեդականների կողմից առկա ճնշումները, որոնք հանգեցնում էին Կարմելյանների բնակավայրերի կոբստին, Իրանում տեղակայված տարբեր միաբանությունների միջև առկա մրցակցությունն ու պայքարը և այլն:

Այսուհանդերձ, Կարմելյանների գործունեությունը չի կարելի միանշանակորեն դիտել որպես բացասական երևույթ: Նկատի ունենալով պատմական այն իրողությունը, որ քարոզիչների հարուստ գիտելիքների փոխանցումը, լեզուների իմացությունը, և այն հանգամանքը, որ նրանց քարոզմանչական գործունեությունը նպաստեց Եվրոպայի գիտական, գրական, դավանաբանական, փիլիսոփայական մտքի կարևորագույն նմուշներին ծանոթանալուն (օրինակ, Ջոն Թադդեսոսի կողմից Ավետարանի քարզմանությունը, հայր Փիթերի կողմից Ս. Թոմասի “*Contra Gentes*” կոչվող աշխատության ավելի քան յոթանասուն գլուխների քարզմանությունը և այլն¹⁷), խոսում է նրանց գործունեության նաև դրական նշանակության մասին:

TEHMINE MARTOYAN
(IOS)

ON RESIDENCES ESTABLISHED BY THE
CARMELITES IN IRAN

The Carmelite missionaries penetrating into Iran established residences in Isfahan, Hurmus, Shiraz, Kharg, Bandar-Abbas, Bushihr, Hamadan, and New Julfa.

The paper analyses the established residences of the Carmelites in Iran. The Carmelites baptized five Persians in Isfahan who were persecuted by the Muslims. An account of the martyrdom of the five Persians baptized by the Discalced Carmelites in Isfahan was published in Rome in 1622 and translated into French.

The methods of activity of the Carmelites were different. For instance, in the residences they built churches, chapels, established schools, medical institutions, preached, baptized and so on.

The Carmelites entered New Julfa in 1625 and established themselves there in 1683. They were befriended by the headman of Julfa, whose name was Sarfraz.

Author attempts to demonstrate that the difficulties which confronted the mission and prevented it from progress in evangelization was not only Shiah fanaticism but also financial troubles, the competition and struggle of the different orders, etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, vol. I, II, London, 1939 (այսուհետև՝ "A Chronicle of the Carmelites").
2. Sht'u. دكار لطفا الله هنر فر، آشتا بی ما شهر تاریخی اصفهان، اصفهان، ۱۳۷۳، ص. ۱-۳۳.
3. Семенова Л.А., Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, Ближний и Средний Восток, Москва, 1962, с. 95.
4. Sht'u "A Chronicle of the Carmelites", h. II, էջ 1033.
5. Նույն տեղը, h. II, էջ 10 39:
6. 16-րդ դարի վերջին տրոհվում է միաբանությունը, որի խստապահանջ հետևորդները պատմության մեջ մնում են որպես «րոկոտն» (Discalced) Կարմելյաններ՝ խորհրդանշելով չքավորությունը (չարադրանքում բացառապես խոսվում է րոկոտն Կարմելյանների մասին):
7. Sht'u "A Chronicle of the Carmelites", h. I, էջ 265:
8. Մինասեան Լ.Գ., Դիհան Ն. Ջոտայի Ս. Ամենափրկիչ վանքի 1600-1960, Ն. Զ., 1983:

9. Տե՛ս Ջամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմություն, մասն Բ, Նոր-Նախիջևան, 1909, էջ 95:
10. "A Chronicle of the Carmelites", հ. II, p. 1072-1073.
11. Քաղվածքն ըստ մույն աշխատության, էջ 1077:
12. Տե՛ս մույն տեղը, հ. I, էջ 378:
13. Մեջբերումը տե՛ս մույն տեղում:
14. Նույն տեղը, հ. II, էջ 1075:
15. Տե՛ս Ջամինյան Ա., նշվ. աշխ., էջ 95-96:
16. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", հ. II, էջ 1081:
17. Մեջբերումը տե՛ս մույն տեղում, հ. I, էջ 373:

ՄՈՂԱՍՄԱԴ ՄԱԼԵՔ-ՄՈՂԱՍՄԱԴԻ
(ԵՊՀ)

**ՄԻ ՔԱՆԻ ՎԱՂՆՁԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ ԵԶՆԻԿ
ԿՈՂԲԱՅՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆՂՈՑ» ԵՐԿՈՒՄ**

Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ «Եղծ աղանդոց»-ը ավանդում է վաղնջական այնպիսի հավատալիքներ, որոնք ձևավորվել են դեռևս այն ժամանակ, երբ հայը բնակից էր իր հնդեվրոպական ցեղակիցների հետ, նրանց լեզվով խոսում էր և նրանց հավատալիքներով կազմել էր իր կրոնը՝:

Եզնիկի առաջին գրքի ԺԵ-ԻԷ հատվածները կարևոր տեղեկություններ են հաղորդում հայերի ու դրացի ժողովուրդների առասպելական պատկերացումների և պաշտամունքների վերաբերյալ: Հիշյալ հատվածների համար, ըստ երևույթին, հիմք է հանդիսացել մի հին հիշատակարան, որը կոչվում է «Հարցումն և պատասխանիք սրբոյն Գրիգորի Պարթևի», որի հեղինակն է Հիպպոլիտը²: Հիշյալ հատվածների հիմնական աղբյուրներից է նաև Եզնիկի ժամանակաշրջանի հայ բանահյուսությունը (բերանացի աղբյուրները: Հատկանշական է, որ Գրիգոր Պարթևի անունը կրող «Հարցումնքը» հայ գրականության ամենավաղ շրջանի ստեղծագործություններից է եղել, և որ այն Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» անունով հայտնի երկի սկզբնաղբյուրներից մեկը լինելով՝ գրվել է 5-րդ դարի 40-ական թթ. շատ առաջ: «Հարցումի» և «Եղծ աղանդոցի» զուգակշիռ հատվածների համեմատությունը ցույց է տալիս, «որ այդ երկու բնագրերն էլ արմատական խմբագրության չեն ենթարկվել հարյուրամյակների ընթացքում»³:

«Եղծ աղանդոց»-ի 68-110 և 149-180 էջերը (Եղծ աղանդոց, ՌՄՀԵ)⁴ վերաբերում են ժողովրդական հավատալիքներին, նախապաշարումներին և սնունդի ապաշտություններին: Եզնիկն իր աշխատանքում ներկայացնում է հայ ժողովուրդի ըմբռնումը տիեզերքի՝ երկինքի, աստղերի, արևի, լուսինի, լույսի ու խավարի, դրախտի, դժոխքի և երկրի վերաբերյալ: Տարբեր տեսանկյուններից հավատալիքներ են բերվում Մարդու հոգու, մարմնի, ճակատագրի, ոգիների հետ ունեցած հարաբերության, մահվան և անդրաշխարհի կյանքի մասին: Արալեզը, շահապետը (վայրացը, նհանգը, հուշկապարիկը, պարիկը, պայը, ծովացուլը, վիշապը հին աշխարհում տարածված ժողովրդական երևակայական բարի և չար ոգիներից են, որոնք նկարագրված են Եզնիկի երկում:

Հիշյալ ոգիները համապատասխան այն տեղին, ուր նրանք բնակվում կամ հայտնվում են մարդկանց, հարմար անուններ են կրում: Այսպես՝ «Քանգի

դիաց է կերպարանս ցուցանել, և մարտիկ ըստ կերպարանաց անուանս դնեն, որպէս յորժամ քաղաքք և գիւղք աւերեսցին, և անդ դէք բնակիցեն, և կեղծս ի կեղծս յայտնիցին, և մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եղեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն համբարու կոչիցեն» (Եզնիկ, էջ 97-98):

Ինչպես երևում է հետևյալ տողերից, գետերի մեջ բնակվողները նհանգ են կոչվում, դաշտերին՝ շահապետք. «Կարծեցուցանէ, թէ և նհանգք ինչ իցեն գետոց և շահապետք վայրաց. և յետ դարձուցանել ինքն (սատանան): կերպարանի կամ ի վիշապի կերպարանս, կամ ի նհանգի իմն և ի շահապետի...»: Աւերակներում բնակվող դևերը հուշկապարիկ են անվանվում, անտառներում՝ պարիկ կամ պայ, որը մի մարդուց է առաջացել, գետերում կամ ծովափերին՝ համբարու, ծովերում՝ իշացու կամ ծովացու, որը կովից է առաջացել, ժայռերին՝ արալէզ (առլեզ), որը շնից է առաջացել և որը պատերազմում քաջաբար ընկած հերոսի վերքերը լիզելով առողջացնում է:

Հատկանշական է Փափստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ առկա գրույցը արալեզների մասին, որը համարվում է ամենահինը հայ մատենագրության մեջ: Այստեղ հիշյալ ոգիները «առլեզք» են անվանվում: Երկրորդ հնագույն տեղը անշուշտ գտնվում է Եզնիկի մոտ, որտեղ այդ անունը երկու ձևով է առաջ գալիս՝ «առլեզ» և «արալէզ»: Նույն առասպելական ոգիների մասին, առանց նրանց անունը նշելու, ակնարկ կա նաև Մովսես Խորենացու պատմության մեջ:

Հիշյալ ոգիներն ի բնէ ոչ չար են, աչ բարի, այլ քմահաճո, հտպիտ ոգիներ են: Առալեզներն պատերազմում ընկած հերոսներին են առողջացնում, այնինչ նհանգը երբեմն կնոջ կերպարանք ընդունելով, երբեմն ծովահորք դառնալով՝ լողորդին նախ դեպի ինքն է գրավում, ապա բռնում ոտքերից, քաշում ծովի խորքը և խեղդում. «Ձի եթէ էր ինչ նհանգ անձնատր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ ոտս անկեալ հեղձուցանէր»:

Ինչ վերաբերում է վիշապներին, ապա Եզնիկի մոտ հանդիպում են երկու տեսակ վիշապներ՝ ա. Վիշապն իբրև առասպելական մի հսկա կենդանի, որի էությունը չի որոշված, բ. Վիշապն իբրև իրական կենդանի՝ հավասար համարված մեծ օձերի և ձկների: Առասպելական վիշապը զանազան կերպարանքներ կարող է առնել, թեև մարմնավոր է (էջ 119: այդ վիշապները կսկերում երբեմն ջորու կամ ուղտի կերպարանքով կերևան, կամ իբրև որսորդ ձիու վրա աշտանակած՝ իրենց որսը կհետապնդեն: Այս երկու վիշապները Եզնիկի մոտ իրար հետ զրեթե նույնացած են, քանի որ առասպելական վիշապը միշտ իբրև հսկա օձ կամ ձուկ ըմբռնված է և իրական օձերի հավասարը համարված:

Փաստորեն, դևերի առանձին տեսակը վիշապներն են, իսկ Եզնիկի կարծիքով՝ նույն սատանան է, որ երբեմն օձի, վիշապի կերպարանքով է երևում, որպեսզի կարողանա օձապաշտությունը հաստատել աշխարհում.

«Նույնպես զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերք մարդ երևեր և մերք օձ, որով և զօճապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մութանել (106): «Եզնիկը շատ է աշխատում վիշապ և օձ գաղափարները նույնացնել, ասելով՝ «և այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օձք մեծամեծք ցամաքային կամ ձկունք ամառիք ծովականք, գորոց ասեն, թէ լեռնաբերձք և մեծամեծք են» (էջ 104):

Մինչդեռ ժողովուրդը հավատում էր, որ վիշապները դևերի առանձին տեսակն են և առանձին կյանք, հակումներ և զբաղմունքներ ունեն: Նրանք. օրինակ, մարդկանց նման որսի են գնում և մարդկանց նման նրանք էլ բնակութեան պալատներ ունեն: Նրանք շատ դյուցազուն թագավոր մարդկանց որսացել և տարել են իրենց մոտ. «և ոչ զոք ի թագաւորագգեաց և ի դիւցազանց ունեն կապեալ առ իւրեանս կենդանի» և կապած կենդանի պահում են: Այսպես այդ դև-վիշապները հայոց Արտավազդ թագավորին էլ շղթայել և պահում են: Նա մինչև այժմ կենդանի ապրում է նրանց մոտ, բայց մի օր պիտի դուրս գա և տիրի աշխարհին²:

Վիշապները համարձակվում են մինչև իսկ մարդու մեջ մտնել և այնտեղ բնակվել: Այն մարդը, որի մեջ մտնում է օձ-վիշապը դիվահար է դառնում, և երբ նա շնչում է, այդ իսկապես մարդու մեջ մտած օձն է, որ Ֆշշում է զայրացած. «Եւ ոչ ի մարդ իբրև զդև մտանէ վիշապ, որպէս ոմանք ի շշեւոյ դիւահարին կարծեցին... (Եզնիկ, էջ 107)»:

Եզնիկը հաղորդում է նաև ժողովրդական մի քանի այլ հավատալիքներ, որոնք վերաբերում են սովորական և ամենօրյա երևույթներին. օրինակ՝ աչք խաղալը, որ նոր բան կամ բարեկամի տեսանելու նշան է համարվում, մարմնի անդամների միս խաղալը, որ նշան է կամ ձի նստելու, կամ նոր շոր հագնելու, բարեկամի պատահելու կամ ծեծ ուտելու, ոտքի կամ ձեռքի ծակելը, քորելը, որը ազդանշան է ճանապարհ գնալու, կամ անձրև գալու, կամ փոդ ստանալու կամ տալու: Նույնպես վիշապ-դևի ազդեցությամբ են վերագրվում փնչացնելը, լեզվի կծելը, ականջի կանչելը, կոկորդի մեջ ծակոց զգալը, հորանջելը, ձիգ ու պարզ լինելը, հոգոց հանելը, որը նշան է, թե մեկն իրեն հիշում է, սրսփալը ևն (տե՛ս 175-178⁶):

Քրիստոնեական և մուսուլմանական հավատալիքներում մեծ տեղ են զբաղում հրեշտակներն ու սատանաները: Նրանք երկու հակառակ աշխարհների ներկայացուցիչներ են, որոնք վճռականապես վարձում են մարդ աբարածին իրենց կողմը շահել: Հրեշտակներն ու սատանաները նախաքրիստոնեական և նախաիսլամական չար ու բարի ոգիների դեր են ստանձնել:

Ինչպես իրավամբ նշվել է՝ «Եզնիկի սատանան նույնքան հայ ժողովրդական է, որքան բիբլիական, թեպետ տարբեր, առանձնահատուկ գծեր էլ պետք է լինի երկուսի մեջ: Մատանան ըմբռնված է Եզնիկի մեջ իբրև Աստծուց ստեղծված, բայց նրանից ապստամբած մի էակ. դա բիբլիական հասկացողությունն է: Հայկական հավատալիքի մեջ սատանան պարսկականի

մման ճանաչված է իբրև Աստծուց անկախ և նրա դեմ մշտապես կռիվ մղող չարության սկզբունք: Մատանա բառը, ինչպես Եզնիկն իրավմամբ նկատում է, սեմական բառ է. դա չարության հավաքական անունն է, հայ ժողովրդական հավատալիքի մեջ չարության ոգիներին դևեր են անվանում»:

MOHAMMAD MALEK MOHAMMADI
(YSU)

ON SOME ANCIENT BELIEFS IN "E'c A'ANDOC"
("THE REFUTATION OF SECTS") BY EZNIK KO'BAC'I

Sectors 15-17 of Eznik's first "book" (chapter) provide important information about the mythological conceptions and ideology of the Armenians as well as other neighboring nations. It is probable that an old diary entitled "Hârc'umn ev patasxanik'srboyn Grigori Part'evi" and the Armenian folklore of Eznik's time served as a basis for the mentioned sectors.

Pages 68-110 and 149-180 of "E'c A'andoc" (1826) refer to the popular faiths, prejudices and superstitions.

In this work Eznik presents the Armenian people's comprehension of the space about the Sky, the Stars, the Sun, the Moon, Light and Darkness, the Paradise, the Hell and the Earth. From different viewpoints, the faiths are brought about the Man's soul, body, fate, relations with souls, death and the life of the next world. *Aralez, šahapet, nhang, huškaparik, parik, pay, višap* were the good and evil souls spread in the imagination of the people of the old world, which were depicted in Eznik's work.

The mentioned souls bear proper names in accordance with the places, where they live or appear to people.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարծիքներ կան, որ հայ ազգագրության գլխավոր տվյալներն իրանական աշխարհից են քիտում (F. Macler, *Trois conferences sur l'Arménie*, Paris, 1927, p. 57, հմմտ. մալ. Գարամանյան Ա., Հրեշտակներն ու սատանաները հայ ժողովրդական հաւատքին մէջ, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1931, էջ 236).
2. Ադունց Ն., Զննական նշմարներ Եզնիկի մասին, Բազմավեպ, 1925, էջ 366-367: Ադունց Ն., Զննական նշմարներ Եզնիկի մասին Բազմավեպ, 1926, էջ 13:
3. Խաչիկյան Լ., Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը», որպես հայ մատենագրության երախայրիք, Բանբեր մատենադարանի, Երևան, 1964, քիվ, 7, էջ 312-313:

4. Եզնիկ Կողբացի, Եզնիկ Կողբացույ Բագրևանդայ եպիսկոպոսի եղծ աղանդոց, 1826, ի Վեներտիկ, ի Ս. Ղազար, ՌՄՀԵ:
5. Տե՛ս Եզնիկ Կողբացի, Եզնիկ Կողբացույ Բագրևանդայ եպիսկոպոսի եղծ աղանդոց, 1826, ի Վեներտիկ, ի Ս. Ղազար, ՌՄՀԵ, էջ 104-105:
6. Հետաքրքիր է, որ ըստ Իրանի Բախտիարի նահանգում տարածված ժողովրդական հավատալիքների՝ ոտքի քորելը ազդանշան է ծեծ ուտելուն, իսկ ձեռքի քորելը փող ստանալուն, լեզվի կծելը ե ականջի կանջելը նույնպես նշան է, քե մեկն իրեն հիշում է:
7. Խոստիկյան Մ., Ազգագրական նյութեր Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի մեջ, Ազգագրական հանդես, 1917, էջ 139-140:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ)

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԶԱՐՏԵԶԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հին Աշխարհի առ այսօր հայտնի ամհնաուշագրավ գրավոր հուշարձաններից է աշխարհի բաբելոնյան քարտեզը: Այն առաջին անգամ հրատարակել է Ֆ.Է. Փայզերը 1889 թվականին, որին հետևել են մի քանի հրատարակություններ: Սակայն, դրանք բոլորն էլ ունեցել են որոշակի թերություններ¹: Զարտեզի առավել ամբողջական և անթերի հրատարակությունը կատարել է Վ. Հորովիցը², որն էլ կօգտագործենք մեր հրապարակման մեջ:


Հայագիտության մեջ (որքան մեզ հայտնի է) այն երբևէ ամբողջական չի հրատարակվել, չնայած քարտեզում Հայաստանի՝ ուշբաբելոնյան «Ուրաշտու» անվանաձևով հիշատակվելուն: Ավելին, եղել են մի շարք թերի, նաև սխալներով հրապարակումներ³: Այդ բացը լրացնելու նպատակով ստորև բերում ենք քարտեզի բնագրի ամբողջական թարգմանությունը, նկատի ունենալով, որ Հայաստանի՝ ուշբաբելոնյան «Ուրաշտու» անվանաձևի հիշատակությունից բացի այս բացառիկ քարտեզը մեր լեոնաշխարհի հետ կապվում է մեկ այլ առումով ևս: Այնտեղ հիշատակվում է, որ «թռչնի պես՝ քներով» Ծովը հաղթահարել են միայն երեք հոգի՝ Ութնապիշտիմը, Մարգոն Աքադացին և Բուրշախանդայի (Պուրուշխանդայի) արքա Նուր-Դագանը: Վերջին երկուսի՝ Փոքր Ասիայում եղած լինելու մասին պատմում է Մարգոն Աքադացուն նվիրված «Պատերազմի արքան» վիպասքը⁴, իսկ Ութնապիշտիմը՝ «բաբելոնյան Նոյը», հիշատակվում է «Գիլգամեշ» էպոսում, ըստ որի նա հանգրվանել է Մաշու լեոներին⁵ հյուսիս: Մաշու լեոները վաղուց նույնացվել են Հայկական լեոնաշխարհի հարավը եզերող Մասիուս/Մասիոն լեոների հետ⁶, այսինքն՝ Ութնապիշտիմի հանգրվանը եղել է Հայկական լեոնաշխարհը:

Թարգմանությունը կատարված է Վ. Հորովիցի հրատարակությունից:

Զարտեզի գրությունները.


1. Լեո
2. Զաղաք
3. Ուրաշտու (Հայաստան)
4. Ասորեստան

5. Դեր
6. ?-ra- [...]
7. Ճահճուտ
8. Սուգա (Շուշան)
9. Ջրանցք
10. Բիթ Յակին
11. Քաղաք
12. Խարքան
13. Բարելոն
14. Օվկիանոս
15. Օվկիանոս
16. Օվկիանոս
17. Օվկիանոս
18. Շրջան. 3 ասպարեզ է արանքում, որտեղ Արևը չի երևում
19. Շրջան. 6 ասպարեզ է արանքում
20. [Շրջան]. [(...)]
21. [Շրջան]. [(...)]
22. Շրջան. 8 ասպարեզ է արանքում
- 23-25. (արձանագրություն չկա)



Երեսակողմ.

1.] [.....
2.] .. կործանված քաղաքները [.....] . [.]
3. ... անձոյ]ը [ծովը], որ տեսել է Մարդուկը: Կամուրջը ներ[սում նրա?]
4. ...] . կործանված աստվածները, որ նա [հաստատել է] Ծովյ ներսում:
5.] .. ներկա են; իժը, ծովի մեծ օձը ներսում: Անգու-թռչունը և կար[իճ-մարդը]
6. ... լեռ[նային] այծ, վիթ, զեբու (սապատավոր եզ), հովազ, ցուլ-մարդ
7. [.. առ]յուծ, գայլ, կարմիր եղջերու, բորե[նի],
8. [կապ]իկ, էգ-կապիկ, այծեղջյուր, ջայլամ, կատու, քամելիոն (զետնառյուծ),
9. [...] կենդանիներ, որոնց Մարդուկն արարեց անհանգիստ ծովի վերևում,
10. [.. Ու]թնապիշտիմը, Մարգունը և Նուր-['Դ-]ազանը՝ արքան Բուրշախանդայի,
11. թռչնի պես՝ թևե[րով], որի ընդարձակությունը ոչ ոք չի կարողացել ը[մբռնել]:



Աշխարհի բարեւոյնյան քարտեզը (երկու երեսի լուսանկարներն ու գրչանկարները)

Շրջերես.

1.] x [.....
2.] x հրաշ[քներ ?
3.] մեծ [.....
4. [Առաջին ? շրջանը ?, երբ մեկը մտ]նում է, դու կճամփորդես ...
ասպարեզ ...
5. Դեպի երկրորդ շրջանը, որտեղ դու կճամփորդես 7 ասպարեզ ...
6. [...] մեկը ... ներքև ...
7. Դեպի երրորդ շրջանը, ուր կճամփորդես 7 ասպարեզ ...]
8. Թևավոր [թռ]չումը չի կարող բարեհաջող ավար[անել իր թռիչքը]
9. [Դեպի չորրորդ շրջանը], ուր կճամփորդես 7 ասպարեզ ...
10. [...] հաստ են parsikum չափի/անոթի մման, 10/և մատ-(ները) [...]
11. [Դեպի չորրորդ շրջանը], ուր կճամփորդես 7 ասպարեզ ...
12. [...] է] դրա բարձրացումը/հեղեղումը; 780 արմնկաչափ է դրա ...
13. [...] դրա առջև/անձրևը; 120 արմնկաչափ է [դրա ...]
14. [...] դրա արյունը նա չի տեսնում [...]
15. [...] մենք պետք է մ]ազլցենք, ուր կճամփորդես [1...]
16. [...]ես կճամփորդեն 7 ասպարեզ ...
17. [...] հեռացումը, որ գտնվում է [...] -ում
18. [...] նրա ... նա կտրեց-անցավ [...]
19. [Դեպի վեցերորդ շրջանը, ուր կճամփորդես 7 [ասպարեզ ...]
20. [...] գազաթի [վրա?], ես [...]
21. [Դեպի յոթերորդ շրջանը, ուր կճամփորդես [7 ասպարեզ ...]
22. որտեղ խաշոր եղջյուրավոր անասունը՝ զինված եղջյուրներով [...]
23. նրանք վազում են արագ և հասնում [...]
24. Դեպի [ու]թերորդ շրջանը, ուր կճամփորդես 7 [ասպարեզ ...]
25. [...] տեղը], ուր ... լուսաբացներ դրա մուտքի(?) մոտ:
26. [...] ամբողջի Չորս Բաժինների [...]
27. [...] ում ներսը ոչ ոք չի կարող ճան[աչել]:
28. [...] պատճենված իր հին օրինակից և ստու[գված]
29. [...] Իծծուրուի որդին, էա-բել-իլ[ի]ի ժառանգը:

ARTAK MOVSISYAN
(IOS)

THE BABYLONIAN MAP OF THE WORLD AND ARMENIA

The Babylonian Map of the World connects with Armenia in two aspects. The first is the record of the name of Armenia in Late-Babylonian form "Uraštu" amongst the cited Lands on the Map. The second is the mention of Utnapishtim – "Babylonian Noah". According to Epic of Gilgamesh, Utnapishtim survived the Flood and found safe haven to the North from the Mashu Mountains (= Masius/Masion of the Greek and Armenian Sources), i.e. – in the Armenian Highland.

The article presents the first full publication of the Map with attached cuneiform text in Armenia and Armenian translation.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հրապարակումների հղումները՝ թերությունների մատնանշմամբ, տես Horowitz W., The Babylonian Map of the World, "Irag", vol. L, 1988, էջ 147:
2. Horowitz W, նշվ. աշխ., էջ 148-165, լուսանկարները՝ աղ. X:
3. Հայագիտության մեջ հանդիպել ամենատարածված սխալը քարտեզի գրություններում (3-րդ կետում) Ուրաշտու-Հայաստանի փոխարեն «Արմենիա» երկրանվան նշումն է, ինչն անտեղյակության հետևանք է. բաբելոնյան աղբյուրներում Հայաստանը երբևէ հանդես չի գալիս «Արմենիա» անվամբ:
4. Weidner E.F., Der Zug Sargons von Akkad nach Kleinasien, "Boghazköi Studien", 6, 1922, էջ 62-71:
5. Գիլգամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ (թարգմ. Ն. Մարտիրոսյանի), Ե., 1963, էջ 74; Ancient Near Eastern Texts Related to the Old Testament (ed. by J.B. Pritchard), New Jersey, 1969, էջ 88-89; Հին Արևելքի պոեզիա, Ե., 1982, էջ 163-165; Myths from Mesopotamia, Creation, The Flood, Gilgamesh and Others (A new translation by St. Dalley), London, 1989, էջ 119:
6. Lehmann-Haupt C.F., Die älteste Kunde über Armenien, «Հանդես Ամսորեայ», 1927, թիվ 11-12, էջ 797-798; Ինգլիզեան Վ., Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947, էջ 119-132; Lipinski E., El's abode: Mythological Traditions Related to Mount Hermon and to the Mountains of Armenia, "Orientalia Lovaniensia Periodica", 1971, No. 2, էջ 49-50; հմմտ. Մովսիսյան Ա., Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Ե., 2004, էջ 17-19, 28-29, 46-49:

ՇԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ
(ԱԻ)

**ԲՈՆԱԳԱՂԹՆ ՈՒ ՄԱՆԿԱՀԱՎԱԶԸ ՈՐՊԵՍ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ՎԵՐԱԴԱՍՍՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Օսմանցի նվաճողները զավթված տարածքներում, այդ թվում և Արևմտյան Հայաստանում հանդիպեցին բավականին բարդ իրավիճակի, որը բազմաչափ լուծումների կարիք ուներ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ առումով:

Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Փոքր Ասիայի արևելյան տարածքներում օսմանցիներն ունեին մի խնդիր. քրիստոնեական, հայկական միատարր միջավայր, որտեղ նրանք պարզապես օտար էին, եկվոր ու հստակորեն սահմանազատվում էին: Ուստի պետք էր դրա դեմն առնել, դա խաթարել, քանի որ ավելի հեշտ է քանդել, ձուլել բազմատարր զանգվածը, քան միատարր ազգաբնակչությունը, որն իր միատարրության մեջ արդեն ենթոյնադաս էր: Եվ ի վերջո, հպատակ քրիստոնյաները, նվաճված հայերը տվյալ տարածքներում պարզապես քանակապես ավելի շատ էին, կազմում էին ճնշող մեծամասնություն՝ համեմատ եկվոր թյուրքերի հետ, նամանավանդ, որ օսմանցի զինվորները շարունակելու էին իրենց արշավանքը՝ թողնելով միայն շատ փոքրաթիվ կայազորներ այն էլ միայն ռազմավարապես կարևոր վայրերում: Այդպիսի համամասնությամբ զերազանցող զանգվածին կառավարելը օսմանցիներից պահանջում էր լինել բավական խելամիտ ազգային քաղաքականություն վարելու համար, այլապես ամեն մի արված սխալ քայլ կարժեհար նրանց տարածքներ, կարուստներ, իսկ ուշ միջնադարյան այդ միջավայրում ամեն մի սայթաքումը կարող էր լինել ճակատագրական. այն պետք է բացառվեր:

Օսմանյան պետությունը իր գոյության սկզբից ի վեր վարել է ծրագրավորված քաղաքականություն հպատակ ժողովուրդների հանդեպ, որի վերջնական նպատակներից մեկն էր հպատակ թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական ազգերի ձուլումը:

Որպեսզի նոր նվաճումը լինի ապահով օսմանցիներն օգտագործում էին զաղութացման ու զանգվածային բռնազաղթման (sürgün) մանրամասն մշակված համակարգ: Գյուղի կամ նույնիսկ քաղաքի անհնազանդ քոչվորները կամ ապստամբ բնակչությունը, որն անհանգստություններ էր պատճառում կամ կարող էր պատճառել, տեղափոխվում էին կայսրության հեռավոր մասեր: Օսմանյան կայսրությունը նաև մեծապես մտահոգված էր նվաճված տարածքներում թյուրքերի բնակեցմամբ:

Հին օսմանյան ժամանակագիր Աշըրփաշագաղեի մոտ Գալիպոլիի քերակղզու առաջին նվաճման մասին կարդում ենք. «Սուլեյման փաշան՝ որդին Օրհան ղազիի, տեղեկացնում է իր հորը, որ մեծաքանակ մահմեդական բնակչություն է պահանջվում այս գրավված տարածքներում ու ամրոցներում: ...Օրհանը հավանություն է տալիս դրան ու բռնագաղթում Ռում-իլի Քարա Արաբներ կոչվող քոչվորների, որոնք եկել էին իր տարածք:...»: Նույն հեղինակի մոտ կարդում ենք, որ Սուլեյման փաշան հրամայում է տանել Եվրոպայում գտնվող քրիստոնյա զինյալներին ամրոցներից ու ուղարկել նրանց Փոքր Ասիա, որպեսզի նրանք չկարողանան անհանգստություններ պատճառել ապագայում²:

Բազում են ժամանակագրություններում գրանցված բռնագաղթերի նման օրինակները: Ակներևորեն զանգվածային բռնագաղթերը կիրառվում էին օսմանյան պետության կողմից վաղ ժամանակներից:

Ավելի ուշ ժամանակաշրջանների փաստաթղթերը հաստատում են զանգվածային բռնագաղթի հին ավանդույթները ու տալիս հետաքրքիր մանրամասներ: Համաձայն բռնագաղթի վերաբերյալ կայսերական որոշման, որը թվագրված է 1572 թվականով, Անատոլիայի, Ռումի (Ավագ), Քարամանի ու Ջուրադդիյեի շրջանների ամեն տասը ընտանքից մեկը պետք է ուղարկվեր նոր գրավված Կիպրոս: Այս բռնագաղթի շարժառիթները կղզու կյանքի վերականգնումն էր ու անվտանգությունը: Վերաբնակիչներն ընտրվում էին հասարակության բոլոր խավերից՝ գյուղացիություն, արհեստավորներ և այլն: Ինչչևիցե, կղզի ուղարկվող առաջին վերաբնակիչները գյուղացիներ էին ոչ բերրի տարածքներից, աղքատներ, անգործներ ու քոչվորներ: Այս մարդիկ գրանցվում էին դեֆթերներում ու տեղափոխվում կղզի: Քանի որ սովորաբար այս մարդիկ չէին ուզում լքել իրենց տները, այդ գործով զբաղվող պաշտոնյաներին հրամայված էր դա իրականացնել ամենայն խստությամբ: Ավելի ուշ Կիպրոս էին ուղարկվում դատապարտված վաշխառուներն ու հանցագործները (որպես պատիժ)³:

Հայտնի են Մեհմեդ Երկրորդի (1451-1481թթ.) կողմից կազմակերպված զանգվածային բռնագաղթերը Սերբիայից, Ալբանիայից, Մորեային ու Քաֆֆայից դեպի Ստամբուլ: Գլխավոր նպատակն էր ապահովել նոր մայրաքաղաքի բարգավաճումը: Բռնագաղթվածների մեծ մասը պատերազմի զերիներ էին ու տեղավորվել էին Կոնստանդնուպոլսի շրջակա գյուղերում որպես սուլթանի գյուղացի ստրուկներ⁴:

Քրիստոնյա երկիր զանգվածային բռնագաղթի հետաքրքիր օրինակ է մահմեդական 1025 ընտանիքների տեղափոխումը Անատոլիայից բուլղարական մի շրջան՝ Պրավադի: Այս մարդկանց տրվել էր բռնագաղթվածների հատուկ կարգավիճակ, և նրանցից կազմավորվել էր առանձին վարչական միավոր: Այս մարդիկ առանձնացված էին մնացել մինչև

16-րդ դարի կեսերը, երբ նրանք այդ ժամանակ արդեն ձուլված էին տեղաբնիկ ռայաների հետ⁵:

Կարճ ասած, օսմանյան արխիվներից օրինակները փաստերով հաստատում են վաղ ժամանակագրությունները, որոնք ցույց են տալիս, որ զանգվածային բռնազաղթերն օգտագործվել են օսմանցիների կողմից որպես նոր նվաճված տարածքների վերակազմակերպման միջոց:

Ռազմավարական առումով հայ ժողովրդին ձուլելու ավելի հիմնավոր քայլ էր մանկահավաքի կամ այլ կերպ ասած դեվչիրմեի իրականացումը:

Ինչու՞ էր դա կայանում: Մի քանի տարին մեկ օսմանյան հարկահավաքները շրջում էին բոլոր բնակավայրերով ու հավաքում սեռական հասունության տարիքին հասած տղաներին, ընդ որում ոչ թե պարզապես հավաքում էին որևէ քանակ, այլ անցկացնում էին բավականին մանրամասն ընտրություն՝ տանելով ամենաուժեղներին, ամենախելացիներին, ամենաամենամեծերին⁶: Այս տղաները հետագայում անցնում էին խորը ուսումնառության և պատրաստվածություն, որի արդյունքում դառնում էին օսմանյան պետության ամենահավատարիմ ծառաները՝ ծառայելով թե՛ բանակում որպես ենիչերի⁷, թե՛ պալատում որպես հմուտ կառավարիչներ կամ մանկավիհներ⁸:

Այսպիսով, եթե մի կողմ թողնենք այն անասելի օգուտը, որ տրվում էր օսմանցիներին, դիտարկենք այն հզոր հարվածը, որ ամեն տարի կտրում էր հայ ժողովրդի ծառը՝ տարվում էր լավագույն սերունդը, լավագույն արյունը: Ժողովրդի արյունը աղքատանում էր՝ հակառակ բնության կանոններին գոյատևում էին այն հիվանդոտ, այն թույլ տղաները, որոնք անտեսվում էին օսմանցի հարկահավաքների կողմից, նրանք էին շարունակում հայ գեներացիոնը: Հայ ժողովուրդը մնում էր սաանց օգնական ձեռքի, չկար այն զանգվածը, այն ներուժը, որի վրա հնարավոր կլիներ հենվել: Գլխատվում էր հայոց ազգը, մնում էր առանց պոտենցիալ առաջնորդի: Բացի նրանից, որ տարվում էին ամենաուժեղ և խելացի երիտասաղները, որոնք ապագայում կարող է ցուցաբերելին առաջնորդական ունակություններ ու միավորելին հպատակ հայությանը, հավաքի ժամանակ հատուկ ուշադրության ներքո էին մտնում ազնվականների ու կրթնավորների որդիները, որոնց առաջնորդությունն ազգում ավանդական էր⁹:

Այսպիսով, օսմանցիները բազում դարեր վարում էին ռազմավարական հեռանկարային ծրագիր, որն ուղված էր կայսրության հպատակ ազգերի ձուլմանը, իսկ որոշ դիմադրության հանդիպելու դեպքում՝ դրանց ոչնչացմանը:

ARTAK SHAKARYAN

(IOS)

DEPORTATION AND DEVSHIRME AS A TOOL OF
DEMOGRAPHIC REORGANIZATION
IN THE OTTOMAN EMPIRE

Ottoman invaders encountered a difficult situation in the newly conquered lands, particularly in the Western Armenia. In order to make their new conquest secure, the Ottomans used an elaborate system of colonization and mass deportation (*sürgün*). The turbulent nomads or the rebellious population of a village and even of a town, which had caused or might cause trouble were shifted to a distant part of the Empire. The Ottoman state was also greatly interested in settlement of Turkish element in the conquered lands.

In short, the examples from Ottoman archives corroborate earlier accounts in the chronicles, which illustrate the use of mass deportation by the Ottomans as a tool for reorganizing of the newly conquered lands.

Devshirme, or "boy tribute", was a strategic and basic step in assimilation of the Christian population, particularly Armenians. Ottoman officers gathered Christian boys of puberty age. Much attention was given to the qualities of the boys: strong, intelligent, handsome were preferred. In such a way, the gene pool of the subject nations was seriously damaged.

It is also worthy of mention that much attention was given especially to the gathering of the boys of clerical and/or noble class. As we know from many leadership theories mostly representatives of these classes turn insurgency leaders. Hence, devshirme helped a lot in preventing rebellions in the conquered lands.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երեմյան Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 180:
2. Ynalçik H., The Ottoman Empire: Conquest, Organization and Economy, London, Variorum Reprints, 1978, p. 122-123.
3. Նշվ. աշխ., էջ 123:
4. Նշվ. աշխ., էջ 123:
5. Նշվ. աշխ., էջ 123-124:
6. Георгиева Ц., Еничарите в българските земи, Наука и изкуство, София, 1988, с. 84.
7. Uzunçarşılı Y., Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I, Ankara, 1943, s. 14.
8. Uzunçarşılı Y., Osmanlı devletinin saray teşkilâtı, Ankara, TTK basımevi, 1945, s. 300.
9. Yavuz E., Devşirme sorunu, devşirmenin Anadolu ve Balkanlardaki türkleşme ve islamlaşma etkisi, Belleten, 1986 Aralık, TTK basımevi, Ankara, 1987, s. 717.

ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԵՐՍԵՍ

(ԱԻ)

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀՌՈՍԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՆԱԿԵՏ ԺԴ. ԴԱՐԻ
ՍԿՁԲԻՆ

ԺԴ. դարի սկզբին փոխվել էր միջազգային իրադրությունը Կիլիկյան Հայոց պետության համար, որը կանգնած էր մահմեդական հրոսակներից երկիրը փրկելու խնդրի առջև: ԺԳ. դարի վերջերից Կիլիկյան հայկական թագավորությունը պարբերական ասպատակությունների էր ենթարկվում հյուսիսից փոքրասիական սելջուկ թուրքերի, իսկ հարավ-արևմուտքից՝ Եգիպտոսի մամլուքների կողմից: Միանգամայն տրամաբանական էր, որ թշնամիների դեմ պայքարում միայնակ մնացած Կիլիկյան հայկական պետությունը պետք է նոր և հզոր դաշնակիցներ ձեռք բերելու ուղիներ փնտրեր: Հավանական օգնությունը կարելի էր սպասել Եվրոպական պետություններից՝ Հռոմի պապերի միջնորդությամբ:

Միաժամանակ՝ 1291թ. Միջերկրականի արևելյան ափի վերջին հիմնական հենակետ Աքքայի կորստից հետո, կաթոլիկ եկեղեցու ղեկավարների համար Մերձավոր Արևելքում քաղաքական ազդեցություն տարածելն ավելի անհնարին դարձավ: Հռոմի պապերը սկսեցին վերանայել Արևելքում իրենց ունեցած աջակիցների նշանակությունը: 1295թ. մոնղոլական նոր խան Դազանը հռչակեց իր և իր ենթակաների մահմեդական լինելը, իրեն անկախ հայտարարեց Մեծ Խանից¹: Այս իրադարձությունից հետո ոչ միայն ձևական դարձավ 1254թ. հայ-մոնղոլական դաշինքը, այլև դադարեցին մոնղոլական պատվիրակություններ ուղարկվել Հռոմ: Ճիշտ է, պապական ղեկավարող Հովհաննես Մոնտեկորվինացին շուտով մեկնեց Պեկին, սակայն Մեծ Խանն այլևս հետաքրքրված չէր Մերձավոր Արևելքում Եվրոպայի ծրագրերով²: Փաստորեն՝ Աուրբ Երկիրն ազատագրելու գործում որպես դաշնակից Միջերկրականի արևելյան հատվածում մնացել էին միայն Կիպրոսը և Կիլիկյան Հայաստանը:

Այս պայմաններում իշխանության եկան «եվրոպական արժեքներ քարոզող» մի շարք հայ կառավարողներ, որոնք նախ մեղմ (եկեղեցական աշխարհաժողովներ, եկեղեցու արարողակարգում վտիտխություններ), ապա՝ բիրտ (աքսորներ, բանադրանքներ և այլ բռնություններ) եղանակներով փորձում էին հավատափոխել ազգը: Այս քաղաքակա-նության վառ իրականացնողներից էր Հեթում Բ., որին լիովին աջակցում էր Գրիգոր Է. Անավարզեցի կաթողիկոսը: Վերջինս արդեն մինչև 1287թ. հասցրել էր

խմբագրել Հայսմավուրքը և նրա մեջ մուծել լատին սրբերի վարքեր, գրել էր նաև նրանց նվիրված շարականներ³: Խաչակրաց արշավանքի կազմակերպման խնդրանքով պարբերաբար Եվրոպա էին ուղարկվում տարբեր պատվիրակություններ: Այս անգամ Անավարզեցու ջանքերով Բենեդիկտոս Ը. պապի մոտ ուղարկված հերթական պատվիրակությունը վերադարձավ կրկին նույն հրահանգով՝ «հանել հայ ժողովրդին մոլորությունից»⁴: Ըստ երևույթին, հասկանալով, որ հաջողության հասնելու համար հնարավոր չէ անտեսել նաև Մեծ Հայքի հայությանը, Գրիգոր Անավարզեցին Կոստանդին Կեսարացու գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեց Սյունիք, որտեղ կայացած եկեղեցական ժողովը, Ստեփանոս Օրբելյանի գլխավորությամբ, մերժեց միաբանության առաջարկը՝ ասելով. «Հաւան ենք մեր հարսն ի դժոխս իջանել, և ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել»⁵:

Պապականության պահանջ - առաջարկների վերաբերյալ 1304թ. կամ մի վաղը ավելի ուշ Անավարզեցին գրել է իր նշանավոր Թուղթը՝ ուղղված Հեթում արքային, որի թե՛ թվագրման⁶ և թե՛ անգամ իսկության⁷ վերաբերյալ հակասական կարծիքներ կան: Անավարզեցու թուղթը Վատիկանին հնազանդվելու ուղին ապահովող փոփոխությունների ծրագիր է: Այն գրված է մեծ զգուշավորությամբ, խուսափելով հակազդեցություններ առաջացնելուց: Թղթի շարադրանքից երևում է, որ պապական քարոզիչները Հեթումին տեղեկացրել են ինչ-որ բանադրանքի մասին, որը ստույգ դժոխք է խոստանում ամբողջ հայ ժողովրդին⁸:

Տեսնելով, որ կաթոլիկ եկեղեցուն զգուշորեն միանալու փորձերն ապարդյուն են՝ Հեթում Հովհաննեսը և Գրիգոր կաթողիկոսն իրենց վճիռը հաստատելու համար որոշեցին հրավիրել եկեղեցական աշխարհաժողով, որն էլ տեղի ունեցավ 1307թ. Սսում: Հայոց եկեղեցու բարձրագույն մարմինն ընդունեց կաթոլիկ եկեղեցու դավանանքը, ծեսը և պապի գերիշխանությունը: Չնայած ժողովրդի զգալի մասը ցույցերով և բողոքներով պահանջում էր չեղյալ հայտարարել այդ որոշումները, կառավարողները ո՛չ միայն իրենց որոշումը բեկանևու մտադրություն չունեին, այլև վճռեցին խաղաղությունը վերահաստատել բռնությամբ: Միայն Մխիթար Ապարանեցու վկայությամբ՝ Օշին արքան 500 հոգու աքսորել է Կիպրոս⁹: Բազմաթիվ հայեր լքեցին Կիլիկիան, մեծապես աճեց գաղթականների թիվը:

Լատինասերների հակառակորդ հոսանքի դժգոհության ամփոփ և ընդհանրական արտահայտությունը ժողովի նախօրեին Կիլիկիայից հեռացած Մովսես Երզնկացու գրած շրջաբերական թուղթն է¹⁰, որում հեղինակը մի շարք հիմնավորումներով ընդդիմանում է ժողովի որոշումներին:

Բռնի կամ խաղաղ բոլոր քայլերն ապարդյուն եղան, ուստի վարձ եղավ 1317թ. Աղանայում հրավիրված նույնաբնույթ երկրորդ աշխարհաժողովում նախորդի որոշումները վերահաստատելու միջոցով լուծել խնդիրը:

Ըստ ամենայնի՝ հայոց վերնախավն անկեղծորեն հավատում էր Հոռմին միաբանելու (հպատակվելու) գնով ռազմական օժանդակություն ստանալու իրական լինելուն: Թերևս շատ դեպքերում դա պայմանավորված էր նրանց անհեռատեսությանը և մասամբ նաև Եվրոպայում Հոռմի պապի ունեցած փաստական իշխանության գերազնահատմամբ: Սակայն խնդրի համակողմանի ուսումնասիրման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև բանակցություններում երկրորդ կողմի՝ Հոռմի վերաբերմունքը:

Եվրոպայում հոգևոր և քաղաքական իշխանություն հաստատած Հոռմի պապերը հեռատեսորեն գիտակցում էին, որ օգնության խնդրանքով իրենց ուղարկված գրությունները հաջող առիթ են հայոց եկեղեցին ու պետությունը և իրենց հնազանդեցնելու համար: Վատիկանի աշխարհամված քաղաքականությունը Կիլիկիայում իրականացնելու համար արդեն պարարտ հող էր ստեղծվել դեռևս Լևոն Ա.-ի թագադրումից ի վեր: ԺԳ. դարի 40-ական թթ. կաթոլիկ քարոզիչներն արդեն թափանցել էին Սեծ Հայք, իսկ նույն դարի երկրորդ կեսին տարանցիկ առևտրով զբաղվող հայերի ջանքերով Եվրոպական մի շարք վայրերում, հատկապես Իտալիայի Հոռմ, Վենետիկ, Բոլոնիա, Պերուջա, Սալերնո և այլ քաղաքներում ստեղծվել էին «Հայոց տներ» ու եկեղեցիներ: Իսկ ԺԴ. դարի սկզբին Իտալիա տեղավտխվեց Կիլիկյան Տավրոսի կամ Սեվ լեռների «Բարսեղյան» միաբանությունը, որն աստիճանաբար կաթոլիկացավ, հետզհետե ծավալվեց ամբողջ իտալիայում և հայ կամ հայկական անունով գոյատևեց մինչև 1650թ.¹¹:

Եվ զարմանալի չէ, որ 1289թ. Արևելք ուղարկված պապական 26 մամուկներից 6-ը, իսկ 1291թ. 17-ից 4-ը հասցեագրված են Կիլիկյան Հայաստանի հոգևոր և աշխարհիկ վերնախավին¹²: Աղեմես Ե. (1303-1314) և Հովհաննես ԻԲ. պապերի օրոք հայերին հասցեագրված մամուկների թիվը անցնում է 50-ից¹³: Այս բոլոր փաստաթղթերի քովանդակությունը հիմնականում նույնն է. պապը շարունակաբար խրախուսում է կամ գովում հայերի կողմից կաթոլիկություն ընդունելուն ուղղված ցանկացած ձեռնարկ, իր «կրտսեր հավատակիցներին» խոստանում ամեն կերպ աջակցել և հորդորում լինել միշտ պատրաստ կազմակերպվելիք խաչակրաց արշավանքին:

Ճիշտ է՝ աշխարհագրորեն մոտ լինելով Եվրոպային և որպես տնտեսության հիմնական ճյուղ ուժեղացված միջազգային առևտուրը, Կիլիկյան հայոց քաղաքական, հոգևոր և տնտեսական վերնախավը պատրաստ էր դավանաբանական հարցերում զիջումներ անելու¹⁴, սակայն Կիլիկիան հնազանդեցնելու պապական քաղաքականության «հաջողությունը» միայն Հեթում Բ.-ի կամ նրան նախորդած հայոց արքաների «վաստակը» չէր:

NERSES TER-VARDANYAN

(IOS)

CILICIAN ARMENIA AS A PROP FOR ORIENAL POLICY OF ROME IN THE BEGINNING OF XIV CENTURY

At the beginning of the 13th the isolated Cilician Armenian State had to find ways of acquiring new and powerful allies in the struggle against its enemies. The possible aid could be expected from European countries by means of the Popes of Rome. And even though the Europeans lost their last crusader continental base in the East – at Acre, in 1291, the Papacy still had political authority in Europe, and thus the hope for new crusades was not completely lost.

The Popes of Rome, who had the religious and political power in Europe, far-seeing, realized that the letters asking help were a good occasion to subdue the Armenian Church and the State. The Councils of Sis (1307) and Adana (1317) adopted the faith and worship of the Catholic Church, and papal supremacy. The acceptance of such a decision was mostly because of the lack of far-seeing governors in Armenia. But the "success" of Papal policy in subduing Cilicia was not only Hetum I and his precedents' "merit".

It also has to be taken into consideration that a fertile situation had already occurred for realizing the Vatican's hegemonistic politics in Cilicia from the time of crowning Levon I. Starting from 40s of the 13th century the catholic missionaries had already penetrated Armenia Major (Mec Hayk'), and during the 13th-14th centuries the propaganda machine of the Papacy has done his work very well.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Runciman S., A History of Crusades, Cambridge, 1954, vol. III, p. 429:
2. Atiya A.S., The Crusade in the Later Middle Ages, London, 1938, pp. 34-36, 248-252:
3. Ավդալբեգյան Մ., «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պատմագիտական արժեքը, Երևան, 1982, էջ 79-82, տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան, Վեներտիկ, 1885, էջ 242, Օրմանեան Մ., Ազգապատում, Էջմիածին, 2001, Բ., «1206:
4. Sicut Pontificia comisio ad rodigendum codicem iuris canonici orientalis. E regestis Vaticanis, alisque fontibus collegit Alosius L. Tautu, vol. V, t. II (ab Innocentio V ad Benedictum XI), Romae, 1954, p. 205-6:
5. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 459:
6. Այս փաստաթղթի թվագրման վերաբերյալ տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, Բ., «1207, հմմտ. տե՛ս Խաչիկյան Լ., Արտազի հայկական

իշխանությունը և Ծործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», 1973, թիվ 11, էջ 138-139:

7. Կղեմենս Գալանոսը հայտնել է, որ Հայոց պատմությունը քննելու համար ինքը հրատարակում է մի բնագիր, որի հիմք - ձեռագիրը 1366թ. գրվել է Սսում: Այս հաղորդման ամկեղծությանը և աղբյուրի վավերականությանը կասկածում են Ա. Տեր-Միքելյանը և Մ. Օրմանյանը: Նրանք համարում են, որ բնագիրը կեղծիք է: Սակայն այսօր Սաշտոցյան Մատենադարանում պահվում են նույն բնագիրը պարունակող ևս երկու ձեռագիր, որոնցից առաջինը՝ Հ^Գ 2037-ը, 1421թ. գրվել է Կաֆայում, իսկ Հ^Գ 7841-ը 1668թ. նախորդից օրինակվել է Նախիջեանի Կեծուկ գյուղում: Անկասկած, սա ամուր կողան է, որով բացառվում է այն հնարավորությունը, որ այս ձեռագրերն ընդօրինակված լինեն Գալանոսի հրատարակության հիմք՝ «կեղծ» համարված բնագրից:
8. Տե՛ս ՄՄ ձեռ. հմբ. 2037, էջ 135բ - 137ա:
9. Ալիշան Ղ., Հայապատում, հատ. Բ., Վենետիկ, 1901, էջ 552: Այս շրջանից սկսած՝ Կիպրոսում գրված հայերեն ձեռագրերի քանակը զգալիորեն աճել է (տե՛ս ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ.Ս. Խաչիկյանը, Երևան, 1950թ., էջ 123, 135, 150 և այլն):
10. Այս գործի մի քանի հատվածներ հրատարակված են: Տե՛ս Սամուելի քահանայի Անեցոյ հաաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 298-299: Գործի մի մասը տե՛ս Տեր-Միքելիան Ա., Սսի և Ատանայի իշխանաժողովը, «Լուսնայ», 1901, գիրք Ա, էջ 302-16: Գործի ամբողջական հրատարակությունը տե՛ս Պետրոսյան Ե., Մովսես Երզնկացու «Ընդդիմադրություն սակս ջրոյ խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՉԾԸ(1309)» դավանաբանական թուղթը - «Էջմիածին», 1974, Հ^Գ 9, էջ 33-42, Հ^Գ 10, էջ 49-64:
11. Տե՛ս M.A.v.d. Oudenrijn, Les Constitutions des Frères Arméniens de Saint Basile et Italie-Orientalia Christiana Analecta, t. V, Roma, 1940, էջ 7-10, հմմտ. Ինգլիզիան Վ., Հայ Բարսեղեանց միաբանությունն յԻտալիա և անոնց սահմանադրութիւնը՝ ըստ Մ. Ա. վ. դ. Ուղենրիյնի, «Հանդես ամսօրեայ», 1948, էջ 426-434:
12. Տե՛ս Tautu, vol. V, t. II, §§ 83, 85, 86, 88, 89, 90, 110, 111, 113, 114:
13. Ibid. vol. VII, t. I, pp. 8-102, t. II, pp. 5-142:
14. Տե՛ս Լ. Խաչիկյան, Արտագի հայկական իշխանությունը ..., էջ 132:

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՄՅԱՆ ՄԵԼԻՆԵ

(ՀՅԹԻ)

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ. ԵՐԵՔ ՄԱՀԱՊԱՏԻԺ

Թեև ժամանակակից Թուրքիան շարունակում է ժխտել Մեծ Եղեռնի փաստը, այնուամենայնիվ, անհերքելի իրողություն է, որ Հայոց ցեղասպանությունն առաջինը դատապարտած երկիրը հանդիսանում է հենց ինքը՝ Օսմանյան կայսրությունը: Խոսքը վերաբերում է 1919-1920թթ. Ստամբուլի Ռազմական արտակարգ ատյաններում տեղի ունեցած 29 տարբեր դատական գործերին, որոնք բոլորն էլ հարուցվել էին հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով:

Դատավարությունների արդյունքում ընդունվել է ընդհանուր թվով 16 մահապատժի դատավճիռ, որից 13-ը՝ առանց ամբաստանյալների ներկայության (դատապարտյալները փախուստի մեջ էին գտնվում): Դատավարությանը ներկա գտնվող և մահապատժի ենթարկված դատապարտյալները հետևյալ անձիք էին. Բողազլյանի գավառապետ, Յոզղատի գավառապետի տեղակալ Մեհմեդ Քեմալը (Յոզղատի դատավարություն), Երզնկայի ժանդարմերիայի հրամանատար, Հայրան Բաբա մականունը կրող Հաֆըզ Աբդուլլահ Ավնին (Երզնկայի դատավարություն), Բաբերդի կառավարիչ, հետագայում՝ Ուրֆայի գավառապետ Բեհրամզադե Նուսրեթը (Բաբերդի դատավարություն):

Հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված առաջին դատական գործը վերաբերում էր Յոզղատ գավառին: Դատավճիռը կայացվեց 1919 թվականի ապրիլի 8-ին, համաձայն որի ամբաստանյալներից Քեմալը դատապարտվեց մահվան, իսկ ժանդարմերիայի պետ Թեվֆիկը՝ տասնհինգ տարվա տաժանակիր աքսորի: Դատավճռում բերված մեղադրական ապացույցները վկայում էին Քեմալի դաժանության և հայերին իսպառ բնաջնջելու մտադրության մասին: Այսպես օրինակ՝ նշվում էր, թե հայությանը կոտորելու նպատակով Քեմալը ոտքի էր հանել ոչ միայն իր

տրամադրության տակ գտնվող սանջակի, այլև բոլոր մահմեդականներին էր դիմել հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու կոչով²:

Պետք է նշել, որ Մեհմեդ Քեմալը հայտնի էր հայերի նկատմամբ իր առանձնահատուկ ատելությամբ: Յոզղատի դատավարության ընթացքում կատարված բացահայտումների համաձայն՝ հայոց վայրագ կոտորածների քատերաբեմններից մեկը դարձած Քեյլեր գյուղ այցելությունից հետո Քեմալը հայտնել էր իր կնոջը, թե թատրոն էր գնացել և «վայելել» այդ սարսափազդու տեսարանները³:

Քեմալը մահվան դատապարտվեց կայսերական քրեական օրենսգրքի 170-րդ և 171-րդ հոդվածների հիման վրա: Դատավճիռն անմիջապես վավերացվեց սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի կողմից: Քեմալը կախաղան բարձրացվեց 1919թ. ապրիլի 10-ին Ստամբուլի Բայազետ հրապարակում⁴:

Մահապատժի արարողությունն իրականացվեց տարօրինակ կերպով: Օրենքի համաձայն՝ կախաղանի դատապարտվածը մահապատժի էր ենթարկվում նախքան արևածագը, դատապարտյալի մարմինը հրապարակում էր մնում ևս 5-6 ժամ, որից հետո՝ անշուք կերպով թաղվում: Մինչդեռ Քեմալի մահապատժին ի կատար ածվեց կեսօրից հետո: Արարողությանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ և հոծ բազմություն: Մահապատժից հետո Քեմալի դիակը դրվեց Բայազետի մզկիթի վացարանում. անթույլատրելի գործողություն՝ մահապատժի դեպքում⁵:

1919 թվականի ապրիլի 11-ին մեծ շուքով կազմակերպվեց Քեմալի թաղումը, որին մասնակցում էր ավելի քան 10.000 ցուցարար⁶: Ոճրագործը հռչակվեց «տոզային մահատակ»⁷: Վերոնշյալ իրադարձությունները վկայեցին, որ երիտթուրքերը դեռ շարունակում էին որոշակի ուժ ներկայացնել:

Երզնկայի դատական գործը հարուցվել էր «տեղահանության ընթացքում հայերի սպանությունների և բնաջնջման» (katl ve imha), ինչպես նաև՝ հայերի ունեցվածքի կողոպտման (mallaryny yađma eyledikleri) մեղադրանքներով⁸:

Շեշտենք, որ ի տարբերություն մյուս դատավարությունների՝ Երզնկայի դատավճռում օգտագործվում էր ոչ թե taktıl (կոտորած), այլ՝ imha (բնաջնջում) բառը:

Երզնկայի դատավճռով, կայսերական քրեական օրենսգրքի 170-րդ և զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածներով հեռակա կարգով մահապատժի դատապարտվեցին Երզնկայի պատգամավոր Մաղրըզադե Հալեթը, ավագակապետ Քըրմե Յուսուֆը և Երզնկայի ոստիկանության ենթասպա Արսլանը⁹:

Երզնկայի ոստիկանության հրամանատար Հաֆըզ Արդուլահ Ավնիի ներկայությամբ անցկացված դատաքննության արդյունքում վերջինիս

նկատմամբ մահվան դատավճիռ կայացվեց, որն ի կատար ածվեց 1920թ. հուլիսի 22-ին:

1920թ. հուլիսի 20-ին մահվան դատավճիռ կայացվեց նաև Բաբերդի կառավարիչ Բեհրամզադե Նուսրեթի նկատմամբ, որը նույնպես ներկա էր դատավարությանը: Մահապատիժն ի կատար ածվեց 1920 թվականի օգոստոսի 5-ին Բայազետ հրապարակում¹⁰: Բաբերդի դատավճռում նշվում էր հետևյալը. «...բազմազան վայրերու մէջ տեղի ունեցած ողբերգական ջարդերու շուրջ մինչեւ հիմա Պատերազմական ատեանէն կողմէ կատարուած դատավարութեանց եզրակացութիւնը եղած է այն, թէ յիշեալ ճիւղները մախ եւ առաջ Իթքիհատ եւ Թերազզը ճեմիյէթին (ընկերության Մ.Ա.) Ընդհանուր Կեդրոնին մէջ կանխամտածուած եւ որոշուած են»¹¹: Բաբերդի դատավճռում ընդգծվում էր նաև այն փաստը, թե մեղադրյալ Բեհրամզադե Նուսրեթը կազմակերպել էր 20.000 հայերի կոտորածը, որից հետո նրա պաշտոնը բարձրացրել էին¹²: Դատապարտյալը մահապատժի ենթարկվեց 1920թ. օգոստոսի 5-ին¹³:

1920թ. նոյեմբերի 8-ին տարօրինակ իրադարձություններ տեղի ունեցան. ձերբակալվեցին Բաբերդի դատավճիռն արձակած դատավորները: Նրանց դեմ հարուցվեց քրեական գործ՝ Բեհրամզադե Նուսրեթին մահվան դատապարտելու կապակցությամբ: 1921թ. հունվարի 5-ին դատավոր Մուստաֆա փաշան և դատավճիռը ստորագրած մյուս դատավորները դատապարտվեցին 3 ամիս ազատազրկման¹⁴:

Թուրքերը ոչ միայն հետևողական չէին հայերի կոտորածների պատասխանատուներին բացահայտելու և դատապարտելու խնդրում, այլև ազատազրկում էին 20.000 հայի բնաջնջման պատասխանատուին մահվան դատապարտած դատավորներին:

Այսպիսով, մեկ ու կես միլիոն հայության ոչնչացման համար մահապատժի ենթարկվեց ընդամենը 3 հոգի: Ակնհայտ է, որ թուրքական ռազմական արտակարգ ստյաններին դատավորները մահվան դատավճիռ արձակելիս առավել շոայլ էին փախուստի մեջ գտնվող մեղադրյալների հանդեպ:

Ինչպես վերը նշեցինք, Յոզղատի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում, և Մեհմեդ Քեմալի մահապատժի նպատակը միջազգային հասարակական կարծիքի առջև արդարադատ երևալու ցանկությունն էր: Իսկ Հաֆըզ Աբդուլլահ Ավնիի և Բեհրամզադե Նուսրեթի դատավճռերն արձակվեցին Սևրի դաշնագրի կնքման նախօրեին և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու նպատակ էին հետապնդում:

MELINE ANUMYAN
(MIAG)

**COURT PROCESSES OF DEPORTATION AND MASSACRES
OF ARMENIANS:
THREE EXECUTIONS**

Although modern Turkey continues to deny the fact of the Armenian Genocide, it cannot be refuted that the Ottoman Empire was effectively the first state to condemn the Genocide of Armenians. In 1919-1920 Istanbul Military Tribunals carried out 29 court processes all of which were initiated on charges of deportation and massacres of Armenians. These trials resulted in 16 verdicts of death penalty, of which 13 verdicts were issued in absence of the convicted. The other three convicted were:

1. Mchmed Kemal, the Governor of Boghazlian (Yozghat trial),
2. Hafiz Abdullah Avni, Chief of Erzindjan Police Departement (Erzindjan trial),
3. Behramzade Nusret, Governor of Bayburt, later governor of Urfa (Bayburt trial).

The prompt execution of Mehmed Kemal following Yozghat trial, which marked the start of 29 trials, had its main purpose to impress the international opinion. The other two executions were carried out just before the signing of the Sevre Agreement and had their puprose to influence the positions of the Ally states.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1. Taner Akçam, Ermeni tabusu aralanyrken dialogtan başka çözüm var mı?, Ystanbul, 2000, s. 93
2. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտրորքերի դատավարության փաստաթղթերի (առաջաբանը, քարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա.Հ. Փափազյանի), Երևան, 1989, էջ 165:
3. Микаелян В.А. (отв. ред.), Геноцид-преступление против человечества (Материалы I Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995 г.); Дадрян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, Москва, 1997, с. 27.
4. Танер Акçam, İnsan hakları ve Ermeni sorunu, İmge kitabevi yayınlary, 2002, s. 472.
5. Գրիկեր, Եղգատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 330:

6. Նույն տեղում:
7. Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը, Պոսթրն, 1921, էջ 272:
8. Takvim-i Vekayi, N 3917, Mahkumiyet, 31 temmuz, 1336 /1920/.
9. Peyam-i Sabah, Bir canynın idamı 30 temmuz, 1336 /1920/.
10. Taner Akçam, İnsan haklaryve Ermeni sorunu, s. 552.
11. Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը, Պէյրուք, 1968, էջ 298:
12. Նույն տեղում:
13. Bilâl İmîr, Malta sürgünleri, Bilgi yayınları 1985, s. 196.
14. Հայկազն Գ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 301-302:

**ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ
(ԱԻ)**

**ԱՐԱԲ ՍՊԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ՄԵԶ.
ԱԶԻԶ ԱԼԻ ԱԼ ՄԻՍՐԻ**

Արաբական ազգային-ազատագրական շարժման մեջ արաբ մտավորականության և ուսանողության հետ համատեղ մեծ դեր խաղացին նաև թուրքական բանակում ծառայող արաբ սպաները: Ազատագրական շարժմանը վերջիններիս մասնակցությունը կարևոր նշանակություն ունեցավ նաև այն առումով, որ նրանց շնորհիվ հնարավոր եղավ ազգային զաղափարներ տարածել թուրքական բանակի արաբ զինվորների մեջ, որոնք դարձան արաբական շարժման ամենաակտիվ տարրերից մեկը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան բանակում ծառայում էր մոտ 20 հազար սպա, որոնցից հարյուրավորները և նույնիսկ հազարավորները արաբներ էին¹:

Արաբական ազգային շարժման մեջ ընդգրկված Սիրիայի և Իրաքի արաբ սպաների թվաքանակի մեջ բավական մեծ տարբերություն կար: Էռնեստ Դատունը նշում է 126 արաբ զործիչների անուններ, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել ազգային շարժմանը մինչև 1914թ.: Համաձայն նրա տվյալների՝ 113 զործիչներից, որոնց ազգությունը հնարավոր է եղել պարզել, 18-ը իրաքցի էին, 51-ը՝ սիրիացի, 22-ը՝ պաղեստինցի, 21-ը՝ լիբանանցի և մեկը՝ եգիպտացի: Ի դեպ, 51 սիրիացիներից միայն տասն էին սպա, մինչդեռ իրաքցիներից՝ բոլոր 18-ը²:

Արաբական ազգայնական շարժման մեջ արաբ սպաներից առանձնահատուկ դեր են ունեցել Ազիզ Ալի ալ Սիսրին, Սելիմ ալ Ջազսփրին, Նուրի Սաիդին, Ջաֆար ալ Ասկարին, եղբայրներ Յասին և Տահա ալ Խաշիմիները, Աբդալգաֆուր ալ Բադրին, Ջամիլ ալ Սիդֆահին, Մախմուդ Խիլմի ալ Տարաբլուսին և այլք³: Նրանց միավորում էր «արաբների կորսված իրավունքները» վերակնգնելու ձգտումը և թուրքական ղեկավարների, երբեմն նույնիսկ իթթիհարական առաջնորդների հանդեպ անվստահությունը: Նրանց մեծ մասը չէր հավատում քաղաքական ուղիներով իրենց նպատակներին հասնելու հնարավորությանը և ավելի արմատական մեթոդների կողմնակից էր: Նրանք ակտիվորեն մասնակցում էին արաբական կազմակերպությունների՝ հատկապես ալ-Քահտանիայի, «Գրական ակումբ»-ի, Երխտասարդ Արաբիայի, ալ Անդի զործունեությանը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հիասթափվելով հրիտթուրքերից՝ արաբ սպաների մեծամասնությունը ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը հավատարիմ էր մնում սուլթանին և Օսմանյան կայսրությանը:

Արաբ սպաները առավել ակտիվորեն սկսեցին մասնակցել ազգայնական շարժմանը հատկապես 1909թ. հակահեղափոխական վտորձից հետո, երբ երիտթուրքական իշխանություններն էլ ավելի սաստկացրին ազգային ճնշումները:

1909թ. վերջին Ստամբուլում ստեղծվեց ալ-Քահտանիան՝ առաջին գաղտնի արաբական կազմակերպությունը: Որոշ հետազոտողներ ալ-Քահտանիայի հիմնադիր են համարում թուրքական բանակի սպաներ Սելիմ ալ Ջազաիրին և Ազիզ Ալի ալ Միսրիին⁴: Ալ-Քահտանիան երկար չգոյատևեց, սակայն նրա ստեղծման փաստն արդեն իսկ վկայում էր, որ արաբ սպաների և հասարակական այլ շրջանակներ մոտ հասունանում էին ընդդիմադիր տրամադրություններ:

Արաբ սպաները անժխտելիորեն կարևոր դեր խաղացին նաև Երիտասարդ Արաբիա և Գրական Ալումբ կազմակերպություններում: 1913թ. հոկտեմբերի 28-ին Ազիզ ալ Միսրիի գլխավորությամբ ստեղծվեց ալ Ահդ գաղտնի կազմակերպությունը, որի անդամների զգալի մասը զինվորականներ էին⁵: Ալ Ահդը հանդես չէր գալիս արաբական վիլայեթների լիակատար ազատագրման պահանջով՝ պահպանելով հավատարմությունը Օսմանյան ակթսունին և օսմանիզմի գաղափարին: Կազմակերպության անդամներն առաջարկում էին ստեղծել արաբա-թուրքական դաշնային պետություն, որի ղեկավար մարմինն էր լինելու համաօսմանյան խորհրդարանը, միաժամանակ պահպանվելու էր սուլթանի նմինալ գերիշխանությունը: Արաբական վիլայեթներին տրամադրվելու էր լայն ներքին ինքնավարություն: Ալ Ահդը, անժխտելիորեն, մեծ դերակատարություն ունեցավ արաբական ազգային շարժման հետագա շարժագման մեջ:

Արաբական ազգայնական շարժման ամենակարկառուն և հեղինակավոր ներկայացուցիչներից էր թուրքական բանակի սպա Ազիզ Ալի ալ Միսրին: Նա ոչ միայն վայելում էր արաբ զինվորականության և արաբական ազգայնական կազմակերպությունների, խմբավորումների և մտավորականության մեծամասնության լիակատար վստահությունը, այլ նաև նրանց կողմից հիտվում էր որպես արաբ ազատագրական շարժման հնարավոր ղեկավար: Օսմանյան ռազմական կրթության ստացած ալ Միսրին եղել էր «Ժֆթիհադ վե թերաքքի» կազմակերպության ակտիվ անդամներից մեկը, մասնակցել էր 1908թ. հեղափոխությանը, ինչպես նաև 1909թ. Աբդուլ Համիդի հակահեղափոխական վտորձի տապալմանը: Նա հույս էր փայփայում, որ նոր արաբա-թուրքական պետության մեջ երիտթուրքերը արաբներին կտան ինքնավարություն և հավասար իրավունքներ: Հետագայում ալ Միսրիի դրույթները մտան ալ-Քահտանիա և ալ Ահդ գաղտնի կազմակերպությունների ծրագրերի մեջ: Ալ Միսրին այն սպաներից էր որոնք 1911-ին ուղարկվել էին Լիբիա՝ ղեկավարելու իտալացիների դեմ պայքարը: Թուրք-իտալական պատերազմի ընթացքում նա դրսևորեց իրեն որպես քաջ զինվոր և հնուտ հրամանատար: Վերադառնալով Լիբիայից՝ նա հիմնադրեց և ալ Ահդ կազմակերպությունը:

1914-ի փետրվարին Ազիզ ալ Սիսրին ձեռքակալվեց և դատապարտվեց մահապատժի, որը հետագայում վտխարհեց տասնհինգ տարվա արտաքսման: Ապրիլին արաբա-եգիպտական և բրիտանական դիվանագիտական ճնշմամբ նրան ներում շնորհվեց և ապահովվեց վերադարձը Եգիպտոս:

Այսպիսով, արաբ սպաներն իրենց մեծ ավանդը ներդրեցին արաբական ազգային-ազատագրական շարժման ձևավորման և նրա հետագա զարգացման մեջ: Նրանց անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին մի շարք կազմակերպություններ, որոնք, ոչ թե գուտ զինվորական խմբավորումներ էին, այլ իրենց մեջ ընդգրկում էին հասարակության այլ խավերի՝ հատկապես մտավորականության և ուսանողության մեծաթիվ ներկայացուցիչներին:

ARAM GASPARYAN

(IOS)

THE ROLE OF ARAB MILITARY OFFICERS IN NATIONAL LIBERATION MOVEMENT: AZIZ ALI AL-MISRI

The Arab military officers with the Arab intelligentsia and students have played a major role in Arab national movement. Being one of the most active elements of the society they have gave a new meaning, strength and quality to the movement. The Arab military officers participated in the activities of organizations founded in 1908-1914.

One of the most outstanding representatives of national movement was Ali Aziz al-Misri – an officer of the Ottoman army. He has played the significant role in the further development of the national movement. He contributed directly in the establishing of such organizations as al-Kahtani and al-Ahd.

ՑԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Eliezer Beeni, *Army Officers in Arab Politics and Society*, Jerusalem, 1969, p. 328.
2. Dawn C. E., *The Rise of Arabism in Syria*, *The Middle East Journal*, vol 16, p. 148, 164.
3. Котлов Л.Н., *Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914гг.*, Москва, 1986, с. 317, 374.
4. Majid Khadduri, *Middle Eastern Affairs*, Oxford, 1965, vol., 4, p. 140:
5. Թաուֆիկ ալ Բիրու, ալ արաբ ուա ալ թուրք ֆի ահդ ալ դուսթուրի ալ օսմանի 1908-1914, Դիմաշկ 1991, էջ 357, 521(արաբ.):

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ

(ԱԻ)

ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՁԲԻՆ

Միջարարական հարաբերությունների շրջանակներում մի շարք կարևորագույն հարցերի շարքին դասվում է Պարսից ծոցի արաբական երկրների անվտանգության խնդիրը: 1990-ականների սկզբին արաբական աշխարհում աշխարհաքաղաքական նոր իրավիճակ էր ձևավորվել: Այն անմիջականորեն պայմանավորված էր Եգիպտոսի «արաբական ընտանիք» վերադառնալու, ինչպես նաև տարածաշրջանում ընթացող քաղաքական մի շարք գործընթացների հետ: Արաբական տարածաշրջանի վրա անմիջական ազդում էր նաև միջազգային ընդհանուր լարվածության թուլացումը՝ կապված ԽՍՀՄ-ԱՄՆ-ի միջև գլոբալ դիմակայության և «սառը» պատերազմի ավարտի մոտալուտ ակնկալիքների հետ:

1980-ականների վերջին արաբական աշխարհում արդեն ձևավորվել էին տարածաշրջանային երկու խոշոր միություններ, որոնք մեծ հաշվով դարձյալ ընդգծում էին առկա սոցիալ-դասակարգային, ինչպես նաև քաղաքական բևեռացումը: 1981թ. մարտին Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ կազմավորվեց Ծոցի արաբական երկրների համագործակցության դաշինքը (ՇԱԵՀԴ), որի մեջ մտան Պարսից ծոցի բոլոր 6 միապետությունները¹: 1989թ. փետրվարի 16-ին Իրաքի անմիջական նախաձեռնությամբ հիմնվեց Արաբական համագործակցության դաշինքը (ԱՀԴ)²:

1990թ. ամռանը Իրաքի հարձակումը Քուվեյթի վրա, և այնուհետև 1991թ. հունվարին սկսված «Փոթորիկ անապատում» հակաիրաքյան ռազմական գործողությունները հերթական անգամ հարցականի տակ դրեցին Պարսից ծոցի արաբական երկրների անվտանգության համակարգերի կենսունակության խնդիրը: Իրաքի պարտության հետևանքով տարածաշրջանում ուժերի նոր հարաբերակցություն ձևավորվեց, որի արդյունքում ամրապնդվեց արաբական որոշ երկրների քաղաքական դիրքերը արաբական թերակղզում³:

Եգիպտոսը, որը սկսել էր իր դիրքերի հետզհետե վերականգնան գործընթացը «արաբական ընտանիքում», Ծոցի եկրորդ ճգնաժամի արդյունքում առավել քան որևէ մեկ այլ արաբական երկիր ունեցավ մի շարք

ձեռքբերումներ: Եզիպտոսի կառուցողական դիրքորոշումը իրաքա-
քուվեյթյան ճգնաժամի հանդեպ ապահովեց նրա քաղաքական դերի
վերջնական վերաստիճանումը տարածաշրջանում, որի արդյունքում Կահիրեն
ստանձնեց Պարսից ծոցի արաբական միապետությունների անվտանգության
ապահովման ավանդական երաշխավորողի դերը: Միևնույն ժամանակ
Արաբական Պետությունների Լիգայի, Ծոցի Արաբական Երկրների
Համագործակցության Դաշինքի և Արաբական Համագործակցության
Դաշինքի անգործությունը՝ միջամտելա իրաքա-քուվեյթյան ճգնաժամի խաղաղ
կարգավորմանը, ստիպեց Ծոցի արաբական երկրներին հիմնել իրենց
անվտանգությունն ապահովող նոր կառույց:

Նպատակ ունենալով կանխել հետագա ճգնաժամային
իրավիճակները, ինչպես նաև 1991թ. պատերազմից հետո անվտանգություն և
կայունություն հաստատել տարածաշրջանում և մասնավորապես՝ Ծոցի
արաբական երկրներում, Եզիպտոսը և արաբական ևս 7 երկրներ՝ Սիրիան,
Սաուդյան Արաբիան, Զուվեյթը, Օմանը, Կատարը, Բահրեյնը, ԱՄԷ-ն, 1991թ.
մարտին ստորագրեցին «Կոորդինացման և համագործակցության մասին
հռչակագիրը», որը պատմությանը հայտնի է որպես «Դամասկոսի
հռչակագիր»⁴: «Դամասկոսի Հռչակագիրը» այսպես կոչված արաբական նոր
քաղաքական մտածելակերպի արտացոլումն էր, որը ենթադրում էր
միջարաբական մի շարք լուրջ քայլեր՝ միտված անդամ երկրների միջև
համագործակցության խորացմանը, և որ ամենակարևորն է՝ միջարաբական
ռազմական կառույցի ստեղծումը: Այն նոր հիմքերի վրա դրեց Եզիպտոսի,
Սիրիայի և Ծոցի արաբական երկրների միջև առկա հարաբերությունները:
Մերձավոր Արևելքում կոլեկտիվ անվտանգության ապահովման
տեսանկյունից «Դամասկոսի հռչակագիրը» չափազանց կարևոր ձեռքբերում
էր Կահիրեի համար⁵:

Ստեղծված ուժերի նոր հարաբերակցության պայմաններում
Եզիպտոսը ստանձնում էր արաբական երկրների անվտանգությունն
ապահովելու գլխավոր երաշխավորողներից մեկի դերը⁶:

Հռչակագիր - փաստաթուղթը որոշում էր մի կողմից արաբական
միապետությունների իսկ մյուս կողմից Եզիպտոսի ու Սիրիայի միջև մյուս
կողմից ռազմաքաղաքական համագործակցության հիմնական
ուղղությունները⁷:

Հռչակագիրը նախատեսում էր հիմնական կարգավիճակով Պարսից
ծոցի շրջանում Եզիպտոսի և Սիրիայի զորքերի խոշոր ստորաբաժանումների
տեղակայում: Մակայն դա չիրականացավ, քանի որ զորքերի տեղակայումը
ԾԱԵԴ-ի անդամ երկրներից պահանջում էր լրացուցիչ ծախսեր⁸: Մակայն
շուտով ձևավորվեց այնպիսի մի իրավիճակ, որ թվում էր, թե հռչակագիրը՝ իր
դրույթները դեռևս կյանքի չկոչած, արդեն սպառել էր իրեն:

Ծոցի երկրների և ԱՄՆ-ի ու Արևմտյան Եվրոպայի երկրների միջև պաշտպանության բնագավառում երկկողմ համաձայնագրեր ստորագրելուց հետո⁹, 1993թ. հունիսի 12-ին Աբու Դաբիում դարձյալ Պարսից ծոցի երկրների անվտանգության ապահովման նպատակով տեղի ունեցավ «Դամասկոսյան հռչակագիրը» ստորագրած արաբական երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպումը¹⁰: Մասնակիցները համոզմունք էին հայտնում, որ հռչակագիրը արաբական համատեղ գործողությունների այն շրջանակն էր, որի դրույթների անկատար մնալը կարող էր հանգեցնել մի շարք միջարաբական նախաձեռնությունների վախճանը¹¹:

Քննարկման կենտրոնական հարցը՝ միացյալ պաշտպանական ուժերի ստեղծումը կրկին անգամ չիրականացավ, այս անգամ Իրանի բողոքի հետևանքով, որը պնդում էր, որ Ծոցի պաշտպանական համակարգի կազմակերպումը պետք է իրականացվի միայն Ծոցի երկրների կողմից¹²:

Ծոցի երկրորդ ճգնաժամի արդյունքում արաբական աշխարհում ձևավորված՝ որակապես նոր քաղաքական իրավիճակի պայմաններում առանձնահատուկ կարգավիճակ ձեռք բերեց Եգիպտոսը, որը Սիրիայի և Ծոցի արաբական միապետությունների հետ ստորագրելով «Դամասկոսի հռչակագիրը», մեկ անգամ ևս ամրագրեց միջարաբական հարաբերություններում Կահիրեի քաղաքական լրջագույն գործոն լինելը:

GEVORGYAN GOR

(IOS)

EGYPT AND THE SECURITY PROBLEM OF THE PERSIAN GULF ARAB COUNTRIES IN EARLY 1990's

In March 1991 Egypt gained a special political role on the basis of a new power correlation formed in the region against Iraq after the "Desert Storm" military action. The Damascus declaration was signed in March 1991 among Egypt, Syria and the Arab countries of the Persian Gulf with the objective to avert the approaching crisis and to restore the broken security in the Arabian Peninsula and to replace the US numerous military units located in Iraq and Saudi Arabia with the Arabian one.

The declaration was a serious step aimed at protection of security of the Arabian monarchy of the Persian Gulf via the Egyptian and Syrian personnel. The declaration underlined once more the underestimation of the Egyptian political role in the Arabian Peninsula.

ՇԱՆՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Александров И.А.**, **Монархии Персидского Залива: этап модернизации**, Москва, 2002: 279; [www.palestinefacts.org/pf_1967 to 1991_gulfwar.php](http://www.palestinefacts.org/pf_1967_to_1991_gulfwar.php).
2. **Гусаров В.И.**, **Экономическая независимость арабских стран**, Москва, 1993: 176; <http://countrystudies.us/persian-gulf-states/32htm>.
3. **Пырлин Е.Д.**, **Трудный и долгий путь к миру: Взгляд из Москвы на проблему ближневосточного урегулирования**, Москва, 2002, с. 329.
4. **"Council of Ministers Considers Damascus Summit"**, Baker Talks Broadcast Information Service, Middle East Report, March 11, 1991; **Емельянова Г.М.**, **Влияние ирако-кувейтского кризиса на региональный баланс сил. Последствия войны в Персидском заливе и ситуация в регионе**, Москва, 1992, с. 28; **Кини А.Г.**, **Внешняя политика арабских стран и Израиля**, Москва, 1999, с. 55.
5. **Bodansky Y.**, **Syria's Strategic Posture** (http://www.freeman.org/m_online/feb96/bodansky.htm).
6. **Емельянова Г.М.**, **Աշխարհագրական, էջ 31:**
7. **Bodansky Y.**, **Աշխարհագրական:**
8. **"Council of Ministers Considers Damascus Summit"**, Baker Talks Broadcast Information Service, Middle East Report, March 11, 1991; **Мелкумян Е.С.**, **ССАГПЗ в глобальных региональных процессах**, Москва, 1999, с. 36.
9. **Bernard R.**, **The United states and the Persian Gulf in the Bush Administration after the Gulf War** ([http:// fmso.leavenworth.army.mil/fmsopubs/issues/aftgulf.htm](http://fmso.leavenworth.army.mil/fmsopubs/issues/aftgulf.htm)).
10. **Егорин А.Э., Абдель Хамид Х.А.**, **Война за Ближневосточный мир**, Москва, 1999, с. 138.
11. **Emirates News**, 13. 06. 1993.
12. www.palestinefacts.org/pf_1967to1991_gulfwar.php.

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱԿՈՒԹ

(ՊԻ)

ԱՂԻՔԵԶԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱՐՅԱԽՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1941-1945թթ.)

Ղարաբաղցիները, որ դարերի ընթացքում բազմաթիվ զավթիչների դեմ մղված մարտերում մշտապես բարձր էին պահել իրենց հաղթական ոգին, այս անգամ էլ, զգալով վտանգը, մեկ մարդու պես ոտքի ելան՝ պաշտպանելու հայրենի հողը: Նրանք շատ լավ գիտակցում էին, որ եթե այս պատերազմում հաղթեն գերմանացիները, ապա նրանց դաշնակից Թուրքիան Հայաստան և Արցախ կմտցներ իր բանակը, որը և նոր, անավար կոտորածներ կկազմակերպեր:

Չնայած Հայրենական մեծ պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայի և նրա փաստական դաշնակից Թուրքիայի զորքերը ոտք չդրեցին Արցախի հողի վրա, այնուամենայնիվ Ադրբեջանի կառավարությունը օգտվեց պատերազմի ընձեռած հնարավորությունից, զորակոչի անվան տակ ռազմաճակատ ուղարկեց մի քանի անգամ ավելի շատ արցախահայերի՝ այդ տարածքում ապրող ադրբեջանցիների համեմատությամբ: Այսպես, ըստ Հ. Աբրահամյանի՝ 1941-1945թթ. գործող բանակ է զորակոչվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության մեկ երրորդը՝ 45.000 մարդ¹: Հիշեցնենք, որ 1939թ. մարզում բնակվում էր 150.800 մարդ, որից հայեր՝ 132.800, այսինքն, հայերը կազմում էին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության 88.1%-ը, մնացածը՝ ադրբեջանցիներ և ռուսներ էին²: Համարյա նույն թվերն են բերվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատմաերկրագիտական քանգարանի նախկին տնօրեն Շահեն Սկրտչյանի աշխատություններում: Ըստ նրա՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ է զորակոչվել մարզի հայ բնակչության 30%-ը՝ 45.056 մարդ, որից 1850-ը՝ կին, իսկ զոհվածների թիվը կազմել է 22.000 մարդ³: Իրականում ռազմաճակատ զորակոչված հայերի թիվը տոկոսային հարաբերությամբ որոշ շրջաններում ավելի շատ է եղել: Այսպես, Շ. Սկրտչյանի տվյալներով, միայն Հադրութի շրջանը, որը պատերազմից առաջ ունեցել է 27.139 հայ բնակիչ, ռազմաճակատ է զորակոչել 8.267 մարդ⁴, որը կազմել է շրջանի բնակչության 38%-ը. 1000 մարդու հաշվով դա 5-6 անգամ ավելի էր բանակ զորակոչված ադրբեջանցիների համեմատությամբ⁵. Ըստ գյուղերի, այն ունեցել է հետևյալ պատկերը. Ճարտար գյուղից գործող բանակ է զորակոչվել 1080, Ղզղալայից՝

450, որից 8-ը աղջիկ, Տումից՝ 485, Մեծ Թաղարից՝ 555, Մարաակերտ ավանից՝ 485, Թաղավարդից՝ 475, Նորշենից՝ 400, Հաղորոթ շրջկենտրոնից՝ 803, Տողից՝ 860, Ավետարանոցից՝ 298, Թալիշից՝ 544, Եռշից՝ 700 (որից 8-ը մեկ ընտանիքից), Մոխրսթաղից՝ 337, Հաղորտիից՝ 397, Դահրավից՝ 350, Խնձրիստանից՝ 403, Վանքից՝ 318, Յորից՝ 260, Հին Թաղարից՝ 202 (որից 8-ը աղջիկ), Առաջածորից՝ 415, Քարինտակից՝ 200, Մխտորաշենից՝ 270, Աշանից՝ 240, Մուշկապատից՝ 267, Առաքյուլից՝ 204, Բանագուրից՝ 470, Ազոխից՝ 254, Սոսից՝ 360, Սարգսաշենից՝ 216, Զերթից՝ 228, Ղավախանից՝ 256, Կաղարծիից՝ 268, Խանաբաղից՝ 250, Նախիջևանիկից՝ 244, Բաղարաից՝ 400, Նորագյուղից՝ 210, Դաշբուլաղից՝ 350, Սզնեքից՝ 340, Կուսապատից՝ 250, Մաղավուզից՝ 284, Գյուլաթաղից՝ 209, Զուլատակից՝ 150, Չղրանից՝ 205, Տրախտիկից՝ 120, Քարագլխից՝ 140, Ծակուռիից՝ 103, Դուլանլարից՝ 200, Խծաբերդից՝ 130, Ջրակուսից՝ 162, Ծամձորից՝ 258, Կոխտաշենից՝ 250, Հացի գյուղից՝ 145, Թաղուտից՝ 131, Մյուլքսիդարայից՝ 142, Չափարից՝ 159, Խերխանից՝ 154, Եեխերից՝ 170, Հարավ գյուղից՝ 172, Զոասնից՝ 162, Ղշլաղից՝ 203, Փրջամալից՝ 152, Կարմիր գյուղից՝ 201, Մեծ-շենից՝ 213, Խանցքից՝ 138, Խնածախից՝ 136, Հիլիսից՝ 62, Ներքին Հոռաթաղից՝ 314, Հաթերքից՝ 450 (որից 7-ը մեկ ընտանիքից), Դրձոնից՝ 153 (որից 6-ը մեկ ընտանիքից), Մյուրիշենից՝ 160 (որից 11-ը մեկ ընտանիքից) մարդ և այլն⁶։ Բանակ գորակոչվածների ավելի քան 1/4-ը կազմում էին կոմունիստներն ու կոմերիտականները։ Այսպես, օրինակ, 1941թ. հունիսին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կուսակցական կազմակերպության 5214 անդամներից ռազմաճակատ են մեկնել 3431 կոմունիստ⁷։ Առաջին օրերին բանակ գորակոչվածների թվում էին մարզկոմի քարտուղար Մուշեղ Գրիգորյանը, մարզկոմի բաժնի վարիչներ՝ Սիքայել Ավագյանը, Լևոն Վարդանյանը, սկզբնական կազմակերպությունների 15 քարտուղար, կոլտնտեսությունների 10 նախագահ, 16 հաշվապահ, խորհրդային ապարատի 40 աշխատակից և այլն⁸։ Միայն պատերազմի առաջին 10 օրվա ընթացքում կամավոր բանակ մեկնեցին 1817 կոմերիտականներ։ Նրանց թվում էին երիտասարդ բժշկուհիներ Նելլի Ահալյանը (Ատեփանակերտի մանկական կոմսուլտացիայից), Լյուսյա Աբաղյանը (Մարգուշևանի հիվանդանոցից), Եուշիկ Մուսայելյանը (մարզային սանէպիդկայան), Փառո Իսրայելյանը (Ավետարանոցի հիվանդանոց), Ռուզաննա Մարդանյանը (Տողի հիվանդանոց) և այլն։ Ըստ Փառո Ծահրամանյանի՝ ռազմաճակատ մեկնեց մարզային կոմերիտական կազմակերպության անդամների 72.2 տոկոսը⁹։ Ըստ Ծահեն Մկրտչյանի՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից ռազմաճակատ մեկնած կոմունիստ կոմերիտականների թվում էին նաև մամուլի աշխատողներ, երիտասարդ սկսնակ զրոհներ, բանաստեղծներ, մկարիչներ, բազմաթիվ շնորհալի երիտասարդներ։ Նրանցից Հակոբ Աթալյանը պատերազմի նախօրյակին

հրատարակել էր իր «Աղվեսն ու Աղասին» անդրանիկ գրքույկը: Եփրեմ Լոռեցցը, Արտո Հովեցցը, Արշավիր Գրիգորյանը, Արմիկ Հովսեփյանը, Անդրանիկ Խոբեցցը, Ասատուր Պետրոսյանը, Գուրգեն Բաղդասարյանը, Ռաֆիկ Առուստամյանը, Մուշեղ Բաղդասարյանը հաճախ էին տպագրվում պարբերական մամուլում: «Մովեստական Ղարաբաղ» և «Երիտասարդ բուշևիկ» մարզային թերթերում են աշխատել Սիմոն Մելքոնյանը, Իշխան Մկրտչյանը, Աղասի Առաքելյանը, Համբարձում Ավճյանը, Արամայիս Աղայանը, Մերգեյ Առուստամյանը, Մարտակերտի շրջանային «Սոցիալիզմի ուլիով» թերթի խմբագիր Հովսեփ Գևորգյանը, «Մովեստական Ղարաբաղ» թերթի դպրոցական բաժնի վարիչ Գրիգոր Բաղյանը (հետագայում Խորհրդային Սիւրբյան հերոս) և շատ ուրիշներ, որոնք ռազմաճակատ էին մեկնել առաջինների թվում¹⁰:

Պատերազմի սկզբից մինչև 1941թ. սեպտեմբեր ամիսը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում մոբիլիզացիայի պլանները կատարվեցին՝ պահեստի հրամանատարական կազմինը՝ 105, կրտսեր հրամանատարական կազմինը՝ 111, շարքային կազմինը՝ 120 տոկոսով¹¹:

Նույն իրավիճակն էր տիրում նաև Հյուսիսային Արցախի հայաշատ շրջաններում: Մեր հաշվումներով, պատերազմի նախօրյակին այնտեղ ապրող հայ բնակչության թիվը կազմել է ավելի քան 140.000 մարդ: Ըստ շրջանների՝ Շահումյանի շրջանի հայ բնակչության թիվը կազմել էր 13.000 մարդ, որից բանակ է զորակոչվել շուրջ 4.000-ը (32.5%), Կիրովաբադի (Գանձակում) բնակչությունը կազմել է 40.000 հայ, զորակոչվել է շուրջ 12.000-ը (30%), Շամխորի շրջանում նույնպես բնակվել է 40.000 հայ, զորակոչվել է շուրջ 13.000-ը (32.5%), Դաշքեսանի (Քարհատի) շրջանի հայ բնակչության թիվը կազմել է ավելի քան 20.000 մարդ, որից բանակ է զորակոչվել 6.000 մարդ (30%), Խանլարի շրջանում բնակվող 27.000 հայերից, զորակոչվել է 8.640 մարդ (32%): Այսպիսով, Հյուսիսային Արցախից 1941-1945թթ. ռազմաճակատ է զորակոչվել 43.640 հայ, որը կազմել է բնակչության 31.2%-ը: Նրանցից ավելի քան 18.000-ը զոհվել են մարտերում (41%)¹²: Համեմատության համար հիշեցնենք, որ 1979թ. մարդահամարի տվյալներով Հյուսիսային Արցախի հայ բնակչությունը կազմել է 83.400 մարդ, այսինքն, նախապատերազմյան թվաքանակից 56.600-ով պակաս: Դրանից հստակ երևում է, որ 40 տարվա ընթացքում Հյուսիսային Արցախի բնակչությունը ոչ միայն չի աճել, այլև նվազել է: Իսկ արդեն ավելի քան 12 տարի է, ինչ երբեմնի հայկական երկրամասում այլևս ոչ մի հայ չի բնակվում Գորբաչովի և ազերիների հայահալած քաղաքականության հետևանքով: Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից և Հյուսիսային Արցախից ռազմաճակատ են զորակոչվել շուրջ 90.000 հայ, որոնցից շուրջ 40.000-ը զոհվել են մարտերում: Այս թվերը հայ պատմագրության մեջ առաջին անգամ են դրվում շրջանառության մեջ:

ՀԱԿՈԲ ԳՐԻԳՐՅԱՆ

(II)

AZERBAIJAN'S POLICY IN KHARABAGH DURING THE GREAT PATRIOTIC WAR (1941-1945)

During the Great Patriotic War Azerbaijanians organized deportation of Armenians from Kharabagh (Artsakh). The number of Armenians conscripted into the armed forces was higher than that of Azerbaijanians. According of Azerbaijan's cruel policy about 90.000 Armenians from Kharabagh were sent to the War, more than 40.000 of them were died. It was done for a single purpose: "Artsakh without Armenians". These numbers are brought to light for the first time.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Արրահամյան Հ., Արցախյան զոյամարտը, Ե., 1991, էջ 68:
2. Нагорный Карабах. Историческая справка, с. 47.
3. Տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ (ուղեցույց), Բաքու, 1970, էջ 9; Արցախ, Ե., 1991, էջ 72 և այլն:
4. Նույնի, Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվներին», թիվ 1, 1985, էջ 112:
5. Տե՛ս Արրահամյան Հ., Մկրտչյան Շ., Արցախի համար զոհված ղիզակցիներ, Երևան, 2000, էջ 15:
6. Մկրտչյան Շ., նշվ. աշխ., էջ 112-113:
7. Շահրամանյան Հ., աշխ., էջ 22:
8. Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 9 մայիսի 1965թ.:
9. Շահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 7:
10. Մկրտչյան Շ., նշվ. աշխ., էջ 113-115:
11. Շահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 8:
12. Հաշվարկները կատարվել են մեր կողմից՝ Հրանտ Արրահամյանի, Կիմ Ղահրամանյանի, Շահեն Մկրտչյանի վերը նշված աշխատությունների, ինչպես նաև «Армянский вестник» համդեսի 1998թ. թիվ 2-ի (էջ 33) և Ստեփանակերտում 1998թ. տպագրված «Аннексия и депортация» գրքի (էջ 14) նյութերի հիման վրա:

**ԴՈՒՍԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
(ԱԻ)**

**ԱՋԱԿՈՂՄՅԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՆԵՐԻ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1980 ԹՎԱԿԱՆԻ
ՈԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ**

1980թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայի քարճրաստիճան զինվորականությունը, վերջին քսան տարիներում արդեն երրորդ անգամ, իրականացրեց ռազմական հեղաշրջում: Երկրի ղեկը իր ձեռքը վերցրած Ազգային անվտանգության խորհրդի նախագահ, գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենի հայտարարություններում, զինվորականության՝ որպես քաղաքական կյանքին միջամտելու գլխավոր պատճառներից մեկը նշվում էր 1970-ական թթ. վերջերին աննախադեպ ծավալների հասած ահաբեկչությունը:

Ահաբեկչությունն իրականացնում էին աջ և ձախ ծայրահեղականները, որոնց միջև ընթացող չհայտարարված քաղաքացիական պատերազմի հիմնական նախաձեռնությունը բխում էր աջ ծայրահեղական Ազգայնական շարժում կուսակցությունից (այսուհետ՝ ԱՇԿ): Մույն հողվածի նպատակն է ուսումնասիրել «գորշ գայլեր» (bozkurtlar) անվամբ առավել հայտնի ԱՇԿ-ականների և նրանց վերահսկողության տակ գտնվող զաղափարապաշտների (militaristler)՝ իրականացրած ահաբեկչությունը 1970-ական թթ. վերջերին:

ԱՇԿ-ի քաղաքական և զաղափարական հայեցակարգը 1960-70-ական թթ. ներկայացնում էր թուրքական ազգայնականության առավել ծայրահեղական, պանթուրքիստական տեսակը: Այն կարելի է բնութագրել որպես մեռֆաշիզմի թուրքական տարբերակ: ԱՇԿ-ի կազմակերպական հզորության հիմքը կազմում էին ոչ միայն կուսակցական կազմակերպությունների ընդլայնված ցանցերը, այլ նաև ազգայնական-պանթուրքիստական զաղափարապաշտների ակումբները, որոնք չմտնելով ԱՇԿ-ի կուսակցական համակարգի մեջ՝ ղեկավարվում և վերահսկվում էին վերջինիս կողմից:

Աջ ծայրահեղականների կազմակերպած ահաբեկչությունը հիմնականում իրականացնում էին զաղափարապաշտները: Նախապատրաստվող ահաբեկչական գործողության հրահանգը բանավոր կերպով ստացվում էր ԱՇԿ-ի երիտասարդական բաժանմունքից, զենքը նախօրոք տրվում էր տեղական կազմակերպության ղեկավարների կողմից: Ահաբեկիչների կորիզը կազմում էին «կոմանդոս»-ների ճամբարներում

պատրաստություն անցած գաղափարապաշտները: Այդ ճամբարներում նրանց վարժեցնում էին որպես գրոհայիններ: Այդպիսի ճամբարների թիվը 1970-ական թթ. վերջերում 28-ն էր, որտեղ պատրաստություն էին անցել ավելի քան 1500 երիտասարդներ⁴:

ԱՇԿ-ի ճակատագիրը կտրուկ փոխվեց 1970թ. կեսերից, երբ այն 1975թ. իշխող «Ազգայնական ճակատ» կոալիցիայի մաս կազմեց: ԱՇԿ-ի հիմնադիր ու առաջնորդ Ալիարալան Թյուրքեշը⁵, ստանձնելով վարչապետի տեղակալ-նախարարի պաշտոնը, ամեն կերպ նպաստում էր իր կուսակիցների՝ պետական մարմիններ ներթափանցմանը: ԱՇԿ-ը փոքր կուսակցությունից կարճ ժամանակահատվածում վերաճեց հզոր մի ուժի: Գտնվելով իշխանության հովանու ներքո՝ գաղափարապաշտներին հաճախ հաջողվում էր խույս տալ քրեական պատասխանատվությունից, և այդ ամպատժելիության մթնոլորտն էլ ավելի էր նպաստում ահաբեկչության ալիքի ընդլայնմանը:

Ահաբեկչական գործողությունները նոր թափ ստացան հատկապես այն ժամանակ, երբ «Ազգայնական ճակատ» կոալիցիան դադարեցրեց իր գործունեությունը և կառավարության գլուխ անցավ ձախ կենտրոնամետ Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Բ. Էջևիթը (05.01.1978- 24.10.1979թթ.)⁶: Եթե մինչ այդ աջ ծայրահեղականների ահաբեկչական գործողություններն ուղղված էին ձախերի դեմ և նպատակ ունեին պառակտել ձախ շարժումը, ապա 1978թ. սկսած այն ձեռք բերեց նոր որակ: «Գորշ գայլերն» ամեն կերպ փորձում էին իրենց ահաբեկչական ու սադրիչ գործողություններով այդ պայքարը դարձնել ավելի զանգվածային՝ նպատակ հետապնդելով ապակայունացնել երկրի ներքին դրությունը, ինչը թուլացնում էր Էջևիթի կառավարությանը և ավելի նպաստավոր պայմաններ ստեղծում իշխանությունը զավթելու համար: Այդ են վկայում 1978թ. մարտի 16-ին Ստամբուլի համալսարանի դիմաց՝ Բայազետի հրապարակում գաղափարապաշտների կազմակերպած պայթյունը (զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող)⁷, Բալգաթի արյունալի դեպքերը (4 մարդ սպանվեց)⁸, «Milliyet» թերթի գլխավոր խմբագիր Ա. Իփեքչիի սպանությունը (Մ. Ալի Ազալի կողմից)⁹ և այլն: Այդ գործողությունների զագաթնակետն էին Քահրամանմարաշի դեպքերը: 1978թ. դեկտեմբերին Քահրամանմարաշ քաղաքում «գորշ գայլերի» սադրիչ գործողությունների արդյունքում (նրանք պայթյուն կազմակերպեցին կի՛ռթատրոններից մեկում և պայթյունի համար մեղադրեցին ավելիներին, որոնք ավանդաբար սատարում են ձախերին) բախումներ սկսվեցին ավերի և սուղների բնակչության միջև, զոհվեց մոտ 100, վիրավորվեց 1000-ից ավելի մարդ¹⁰:

Պատկերն ամբողջական դարձնելու համար նշենք մի քանի վիճակագրական տվյալներ. եթե 1976թ. ահաբեկչության զոհ է դարձել 82 մարդ¹¹, ապա 1978-ին՝ 879¹², 1979-ին՝ 1200, իսկ 1980 թ. առաջին 8 ամիսների ընթացքում (մինչև սեպտեմբերի 12)՝ մոտ 2000 մարդ¹³:

Ձիմվորականության՝ իշխանության գլուխ անցնելուց հետո¹⁴ չորս զլխավոր կուսակցություններից ամենածանր պատժամիջոցները իրականացվեցին հատկապես ԱՇԿ-ի նկատմամբ: Մեղադրական փաստաթղթերում տեղեկություններ կային այն մասին, որ գտնվելով իշխող կուսիցիայում՝ ԱՇԿ-ը դավադրություն էր կազմակերպում՝ նպատակ ունենալով երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատել: Ըստ այդ փաստաթղթերի, հաջորդ փուլը «մեկ ազգ, մեկ պետություն» կարգախոսով բոլոր բյուրքալեզու ժողովուրդներին մեկ՝ «Թուրան» պետության մեջ համախմբելն էր լինելու¹⁵: Հաշվի առնելով այդ հանգամանքը և այն փաստը, որ ԱՇԿ-ը 1970-ական թթ. այն եզակի կուսակցությունն էր, որը գնալով ավելացնում էր իր ազդեցությունը (նրա համակիրների թիվը ավելանում էր նաև բանակում), թույլ է տալիս եզրակացնել, որ հեղաշրջման շիրականացման դեպքում և իրավիճակի նմանօրինակ զարգացման պարագայում ԱՇԿ-ն իրական հնարավորություն կունենար զավթելու իշխանությունը, ինչը անկանխատեսելի հետևանքներ կունենար ոչ միայն Թուրքիայի, այլ նաև ողջ տարածաշրջանի համար:

ARTUR DUMANYAN
(IOS)

EXTREME RIGHT TERROR IN TURKEY IN THE EVE OF THE MILITARY COUP IN 1980

Terrorism in Turkey reached such a large scale in the end of 1970-s that this situation made possible the act of military coup on 12 September, 1980. One of the main initiators of terror was extreme right Party of Nationalistic Action (PNA). The founder and leader of PNA Alparslan Türkeş while being a member of governing National Front coalition in 1975-1977 managed to create a powerful organization from a small PNA whose main goal was to usurp the power in the end of 1970-s and establish a dictatorship of fascism. Terror was one of the main tools to achieve that goal. Extreme rights were destabilizing the situation within the country by terrorist and provocative acts to enlarge the possibility of usurping the power.

Taking into account that PNA was in 1970-s the only party that was gradually gaining authority we can conclude that in the case of the absence of the military coup PNA would have had a real opportunity to usurp the power, and that could have lead to unpredictable consequences not only for Turkey, but also for the whole region.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գաղափարը (ülkü)՝ բոլոր թյուրքալեզու ժողովուրդների միասնության գաղափարն էր, մեկ՝ «Մեծ Թուրան» պետության մեջ:
2. Сафрастян Р., Возвращение “серых волков”: Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և Ժողովուրդներ XXIII, Երեւան, 2004, էջ 254-276:
3. Киреев Н.Г., Борьба с террором в Турции, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей), М., 2001, с. 72-110.
4. Аксененко А.Г., Борьба политических партий Турции за влияние на молодежь 1920-1980, М. 1986, с. 78.
5. Ա. Թյուրքեշը 1960թ. ոազմական հեղաշրջման կազմակերպիչների այն խմբին էր պատկանում, որոնք դեմ էին երկրի կառավարումը քաղաքացիական կառավարությանը փոխանցելուն: Նոր հեղաշրջում պատրաստելու համար 1960թ. նոյեմբերի 13-ին նրանք հեռացվեցին Ազգային Միասնության Կոմիտեից: Այս մասին մանրամասն տե՛ս Դанилов В.И., Политическая борьба в Турции, 50-е начало 80-х годов XX в., Москва, 1985, с. 66-88.
6. Alatly E., Mûdahale (12 mart 1971 – 12 eylül 1980), İstanbul, 2002, 256s.
7. Նշված օրինակը հատկանշական է նրանով, որ 1990-ական թթ. կեսերին այս դեպքի շուրջ մեծ աղմուկ բարձրացավ, կապված պայթյունը իրականացրած Ջյուկյուֆ Իսուտի ղնտանիքի անդամների այն հայտարարության հետ, թե իրենց որդին կատարել է Թյուրքեշի հրամանը: Այս մասին մանրամասն տե՛ս Sabah 02.04.1996; Milliyet 02.04.1996; Sabah 31.01.1996.
8. Yalçın S. & Yurdakul D., Gladio'nun Türk tetikcisi; 7. Baskı, Ankara 1998, s. 66-67.
9. Alatly E., M ûdahale (12 mart 1971 – 12 eylül 1980), 1st. 2002, s. 350.
10. M. Ali Birand, 12 Eylül Saat: 04:00, Istanbul. 1981, 68s.
11. Christian Science Monitor, 15.09.1980.
12. Milliyet, 05.03.1980.
13. Christian Science Monitor, 15.09.1980.
14. Հատկանշական են տեղեկությունները այն մասին, որ սեպտեմբերի 12-ի հեղաշրջումից հետո ԱՇԿ-ականները փորձել են սպանել ԱԱԽ նախագահ Քենան Էվրենին: Սպանությունից հետո Էվրենի փոխարեն ԱԱԽ նախագահ էր դառնալու ցամաքային զորքերի հրամանատար Նուրեթթին Էրսինը, որը լոյալ դիրքորոշում ուներ ԱՇԿ-ի նկատմամբ: Սակայն շուտով ԱԱԽ-ին հայտնի դարձավ նախապատրաստվող սպանության մասին և հնարավոր եղավ այն կանխել: Մանրամասն տե՛ս Sabah - 13.12.2003; Sabah 14.12.2003; Sabah 15.12.2003; Sabah 16.12.2003.
15. Турция между Европой и Азией, итоги европейзации на исходе XX века, Москва, 2001, с. 51.

ՉՈՒՐԱԲՅԱՆ ԼԵՎՈՆ

(ՍԻ)

ՄԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՀԱՍՎԱՐԱ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1933թ. հունվարի 30-ին Գերմանիայում Ադուլֆ Հիտլերի կանցլեր նշանակվելուց հետո այդ երկրում սրված հակահրեական տրամադրությունների կապակցությամբ սիոնիստական շարժման մեջ հրեական պետություն ստեղծելու միջոցների և ձևի հարցում առաջացած հիմնական ուղղությունների միջև նոր տարածայնություններ ծագեցին: 1933թ. հունվարին մոտ 600 հզ. հրեա էր բնակվում Գերմանիայում¹, որոնք մեծ մասամբ հարում էին այդ երկրի կոմունիստական կուսակցությանը, որն էլ իշխանության եկած մացիոնալ-սոցիալիստական կուսակցության հակակոմունիստական տրամադրությունների՝ մաև հակահրեականի վերածվելու հիմնական պատճառներից մեկն էր²: 1933թ. ապրիլի 1-ին Գերմանիայի մացիստական կառավարությունը հայտարարեց հրեաներին հասարակական-տնտեսական կյանքից աստիճանաբար դուրս մղելու իր մտադրության մասին, այսինքն՝ հրեաները, որոնք այդ ժամանակաշրջանում Գերմանիայում քաղաքական գործունեությամբ առանձնապես աչքի չէին ընկնում, հեռացվելու էին մաև իրենց զբաղեցրած հասարակական պաշտոններից, իսկ տնտեսական ոլորտում ենթարկվելու էին իշխանությունների հետապնդումներին³:

Գերմանաբնակ հրեաներին մման խտրականություններից գերծ պահելու և Գերմանիայից հրեաների արտագաղթը դեպի Պաղեստին ուղղորդելու նպատակով ընդհանուր (ընդհանուր էին կոչվում այն սիոնիստները, որոնց նպատակը դիվանագիտական ճանապարհով Պաղեստինում ազատական արժեքների վրա հիմնված հրեական պետության ստեղծումն էր) և սոցիալիստ (սոցիալիստ էին կոչվում այն սիոնիստները, որոնց նպատակը դիվանագիտական ճանապարհով Պաղեստինում սոցիալիստական պետության ստեղծումն էր) սիոնիստները վտրձեցին կապեր հաստատել Հիտլերի վարչախմբի հետ, մինչդեռ ունիզիոնիստները (ունիզիոնիստ էին կոչվում այն սիոնիստները, որոնց նպատակը, առանց միջոցների մեջ խտրականություն դնելու, մաև ռազմական ճանապարհով Հորդանան գետի արևմտյան և արևելյան ափերին հրեական պետության ստեղծումն էր) կտրուկ դեմ արտահայտվեցին այդ գաղափարին: 1933թ. ապրիլի 28-ին ունիզիոնիստական սիոնիզմի առաջնորդ Վլադիմիր

Ժաբոտինսկին Լեհաստանի պետական ռադիոյի եթերում կոչ արեց հրեաներին չզնել գերմանական ապրանքները, քանի դեռ Հիտլերի վարչակարգը չէր տապալվել⁴: 1933թ. մայիսի 12-ին Ժաբոտինսկին նաև հեռագիր ուղարկեց Գերմանիայում ռևիզիոնիստական սիոնիզմի առաջնորդ Հանս Բլոկին՝ մասնավորապես նշելով. «Գերմանիայի կառավարության կամ նրա ներկայացուցիչների հետ ձեր հնարավոր շփումները ես պարզապես կհամարեմ հանցագործություն...»⁵: Այդուհանդերձ, 1933թ. հունիսի 21-ին Գերմանիայի սիոնիստական ֆեդերացիան (հիմնադրվել էր 1897թ. հոկտեմբերին Ֆրանկֆուրտում՝ նպատակ ունենալով տարածել սիոնիստական գաղափարները գերմանաբնակ հրեաների շարքերում) հուշագիր ներկայացրեց Հիտլերի կառավարությանը, որում մասնավորապես նշվում էր. «Միոնիզմը համոզված է, որ հրեաները նույնպես կունենան այնպիսի ազգային վերածնունդ, ինչպիսին գերմանացիները՝ մացիոնալ-սոցիալիստների իշխանության գալուց հետո... Միոնիզմը հույս ունի, որ կկարողանա համագործակցել նույնիսկ հրեաների հանդեպ խիստ թշնամական տրամադրված կառավարության (գերմանական - Լ. Ձ.) հետ...»⁶:

Միոնիստների և Հիտլերի կառավարության միջև առաջին գործնական շփումները հաստատվեցին 1933թ. մայիսին, երբ Թեյ-Ավիվի ցիտրուսային մրգերի արտահանմամբ զբաղվող «Հանոտեա» ընկերության նախագահ, ընդհանուր սիոնիստ Սեմ Բոհենն առաջարկեց Գերմանիայի տնտեսության նախարարությանը գերմանաբնակ հրեաներին հնարավորություն տալ, ստանց տարիք վճարելու, իրենց կապիտալը գերմանական ապրանքների տեսքով արտահանել Պաղեստին՝ դրանով իսկ ինչ-որ չափով խթանելով նաև գերմանական արտադրության զարգացումը⁷: 1933թ. մայիսի վերջին Բոհեննին հաջողվեց նախնական համաձայնության գալ վերոհիշյալ նախարարության հետ 1 մլն. գերմանական մարկի գործարք իրականացնելու հարցի շուրջ, այսինքն՝ գերմանաբնակ հրեաները կարող էին իրենց կապիտալով գնել 1 մլն. գերմանական մարկ արժողության գյուղատնտեսական մեքենաներ և, առանց տարիք վճարելու, արտահանել Գերմանիայից Պաղեստին⁸: Շուտով հարցին միջամտեց նաև Համաշխարհային սիոնիստական կազմակերպության (Հիմնադրվել էր 1897թ. Բազելում: ՀՄԿ-ի հիմնական նպատակը Պաղեստինում հրեական պետության ստեղծումն էր) դեկավարությունը, որի ենթակայության ներքո գտնվող Հրեական գործակալության (Հիմնադրվել էր 1929թ. Յուրիխում: Այդ գործակալության հիմնական նպատակը Պաղեստինում տնտեսական գործունեություն ծավալող սիոնիստական կազմակերպությունների աշխատանքների կոորդինացումն էր) քաղաքական բաժանմունքի տնօրեն, սոցիալիստ սիոնիստ Խայիմ Արլոզորոֆը 1933թ. հունիսի սկզբին ժամանեց Բեռլին՝ Գերմանիայից հրեական կապիտալի՝ Պաղեստին ներկրման հարցի շուրջ բանակցության մեջ մտնելով մացիստների հետ⁹: Ըստ Արլոզորոֆի՝ անհրաժեշտ էր համաձայնության գալ Հիտլերի կառավարության հետ գերմանաբնակ հրեաներին Պաղեստին ներգաղթելու հնարավորություն

ընձեռնելու հարցի շուրջ, այսինքն՝ պայմաններ ապահովել, որ վերջիններս կարողանային Գերմանիայում ունեցած իրենց կապիտալը ներդնել Պաղեստինում, որը նրանց՝ այդ երկիր ներգաղթի հիմնական նախապայմաններից մեկն էր¹⁰:

1933թ. հունիսի 14-ին՝ Գերմանիայի տնտեսության նախարարության հետ վերոհիշյալ հարցի շուրջ բանակցելուց հետո, վերադառնալով Պաղեստին՝ Արլոզորոֆն արժանացավ ուկրաինացի սիոնիստների խիստ քննադատությանը: Ռուսիացի սիոնիստ Յոհանան Պոզոբեքինսկին անմտություն համարեց Արլոզորոֆի այն կարծիքը, թե Գերմանիայում հակահրեական տրամադրությունների հարցը կարող էր լուծվել միայն Հիտլերի վարչախմբի հետ համաձայնության գալու միջոցով, և կոչ արեց սոցիալիստ սիոնիստներին միանալ Ժաբոտինսկու հայտարարած գերմանական ապրանքների բոյկոտին¹¹: 1933թ. հունիսի 16-ին Գերմանիայի նացիստական վարչակարգի հետ առնչություններ ունենալու պատճառով Արլոզորոֆն սպանվեց ուկրաինացիներ Աբրա Ախիմեիի, Չվի Ռոզենբլատի և Աբրահամ Ստավսկու կողմից կազմակերպված ահաբեկչական գործողության արդյունքում¹²:

Այնուամենայնիվ, սիոնիստների բանակցությունները Գերմանիայի տնտեսության նախարարության հետ շարունակվեցին, որոնց արդյունքում 1933թ. օգոստոսի 28-ին Հրեական գործակալության վերահսկողության ներքո գտնվող Անգլո-պաղեստինյան բանկի (Հիմնադրվել էր 1902թ. հրեական կապիտալով) և վերոհիշյալ նախարարության միջև ձեռք բերվեց «Հասվարա» (Տեղափոխություն) համաձայնագիրը, որի համաձայն՝ 15-50 հզ. գերմանական մարկ ունեցող գերմանաբնակ հրեաները կարող էին իրենց կապիտալն ավանդել վերոհիշյալ բանկի Բեռլինի մասնաճյուղին՝ Պաղեստին ներգաղթելուց հետո Երուսաղեմի մասնաճյուղից պաղեստինյան ֆունդում ետ ստանալու պայմանով¹³: Անգլո-պաղեստինյան բանկը պարտավորվում էր գերմանաբնակ հրեաների ավանդած կապիտալով ձեռք բերել գերմանական ապրանքներ և արտահանել Պաղեստին, որտեղ պետք է ստեղծվեր տվյալ ապրանքների իրացմամբ զբաղվող համապատասխան գործակալություն¹⁴: Փաստորեն, այդ համաձայնագրով գերմանացիները կարող էին՝

1. հնարավորինս խթանել հրեաների արտագաղթը Գերմանիայից
2. ինչ-որ չափով նպաստել գերմանական արտադրության զարգացմանը,
3. խոչընդոտել որոշ սիոնիստական գործիչների՝ գերմանական ապրանքները բոյկոտելու գաղափարի իրականացմանը:
Սիոնիստները կարող էին՝
1. հնարավորություն տալ գերմանաբնակ հրեաներին, Պաղեստին ներգաղթելով, խուսափել Հիտլերի կառավարության հետապնդումներից,
2. պաղեստին ներգրավել կապիտալ ունեցող հրեաների՝ այդպիսով նպաստելով այդ երկրում հրեական համայնքի դիրքերի ամրապնդմանը:

1933թ. օգոստոսի 21-ից սեպտեմբերի 4-ը Պրոտզայում կայացած սիոնիստական համագումարում ռեզիդենտները փորձեցին «Հաավարա» համաձայնագիրը քննադատող բանաձև անցկացնել, սակայն հաջողություն չունեցան¹⁵: Այդուհանդերձ, մինչև 1935թ. ՀՄԿ-ն իր վրա չվերցրեց այդ համաձայնագրի պատասխանատվությունը՝ այն համարելով ուղղակի մացիստական Գերմանիայի հետ Անգլո-պաղեստինյան բանկի առանձին գործարք¹⁶: Միայն 1935թ. օգոստոսի 20-ից սեպտեմբերի 4-ը Լոկառնոյում կայացած սիոնիստական համագումարում ՀՄԿ-ն պաշտոնապես հավանություն տվեց այդ համաձայնագրին և ստեղծեց «Հաավարա» կազմակերպությունը, որը պետք է զբաղվեր Պաղեստին ներգաղթող գերմանաբնակ հրեաների խնդիրներով¹⁷:

«Հաավարա» համաձայնագիրը շարունակեց գործել մինչև երկրորդ աշխարհամարտը¹⁸: 1933թ. օգոստոսից մինչև 1939թ. սեպտեմբեր այդ համաձայնագրի շրջանակներում գերմանական ապրանքների տեսքով 139,57 մլն. գերմանական մարկ (համարժեք էր 40 մլն. ԱՄՆ դոլլարի կամ 8,1 մլն. պաղեստինյան ֆունտի) ներկրվեց Պաղեստին, որը մեծապես նպաստեց այդ երկրում հրեական համայնքի դիրքերի ամրապնդմանը, եթե նկատի առնենք, որ այդ զույգը կազմեց նշված ժամանակաշրջանում Պաղեստինում ներդրված կապիտալի 60 %-ը¹⁹: Բացի այդ, տվյալ ժամանակաշրջանում 60 հզ. հրեա ներգաղթեց Գերմանիայից Պաղեստին՝ 1933թ. Գերմանիայի հրեա բնակչության մոտ 10 %-ը կամ 1939թ. Պաղեստինի հրեա բնակչության մոտ 15 %-ը²⁰: Թեև ներգաղթած հրեաներից ոչ բոլորը կապիտալ ունեին, Պաղեստինում հրեական համայնքի թվաքանակի աճն ինքնին արդեն ձեռքբերում էր սիոնիստների համար:

LEVON ZOURABYAN

(IOS)

THE "HAAVARA" AGREEMENT BETWEEN REPRESENTATIVES OF THE ZIONIST MOVEMENT AND GERMANY

In 1933 the representatives of the Zionist movement were able to conclude an agreement with the German Ministry of Economy. The agreement intended to grant permission the German Jews to immigrate to Palestine while taking their capital with them. In 1933-1939 sixty thousands German Jews immigrated to Palestine under that agreement. Besides, they invested 139, 57 millions German marks in Palestine.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Black E., The Transfer Agreement, New York, 1984, p. 377.
2. Carpi D., Weisman's Political Activities in Italy from 1923 to 1934, Zionism, 1975, p. 239.
3. Dawidowicz L., The War Against the Jews 1933-1945, New York, 1986, pp. 58-59.
4. John R. and Hadawi S., The Palestine Diary, vol. I, Beirut, 1970, p. 245.
5. Zionism in the Age of Dictators, <http://www.marxists.de/middleast/brenner/ch06.htm>.
6. "Memorandum of June 21, 1933".- Dawidowicz L., A Holocaust Reader, New York, 1976, pp. 150-155.
7. Zionism in the Age of Dictators, <http://www.marxists.de/middleast/brenner/ch06.htm>.
8. Israel's Messenger, 01.06.1933.
9. Arlosoroff C., What Can Palestine Offer to the German Jew?, Labor Palestine, June 1933, p. 9.
10. Haolam, 12. 06. 1933.
11. Liebenstein E., The Truth About Revisionism, Tel-Aviv, 1935, pp. 51-53.
12. Сакер Г., История Израиля: От возникновения Сионизма до создания государство Израиль, т. II, Иерусалим, 1976, с. 56.
13. Haavara Agreement, <http://motlc.wiesenthal.com/text/x09/xm0961.html>; Yisraeli D., The Third Reich and the Transfer Agreement, Journal of Contemporary History, No. 2, 1971, pp. 129-148; Nicosia F., The Third Reich and the Palestine Question, Austin, 1985, pp. 44-49; Black E., Գշվ. աշխ., էջ 150-155; Государство Израиль, Справочник, Москва, 1987, с. 29.
14. Haavara Agreement, <http://motlc.wiesenthal.com/text/x09/xm0961.html>.
15. Jewish Daily Bulletin, 29. 08. 1933.
16. Jewish Chronicle, 06. 09. 1935.
17. Weber M., Zionism and the Third Reich, The Journal of Historical Review, Vol. 13, No. 4, July/August 1993, p. 29.
18. Marcus E., The German Foreign Office and the Palestine Question in Period 1933-1939, Yad Vashem Studies, vol. II, 1999, p. 191.
19. Black E., Գշվ. աշխ., էջ 379; Rosenthal D., Chaim Arlosoroff 40 Years Later, Jewish Frontier, August 1974, p. 23; Ладейкин В., Источник опасного кризиса, Москва, 1973, с. 58.
20. Weber M., Գշվ. աշխ., էջ 34:

ԽԱՏԱՄԻ-ՏԻՐԳՈՐԴԻ ՅՐԻԿ
(ԵՊՀ)

**ԻՐԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ
ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ
(1979-1989թթ.)**

1970-1980-ական թվականները Մերձավոր և Միջին Արևելքի երկրների համար շրջադարձային տարիներ հանդիսացան: Տարածաշրջանի որոշ երկրներում տեղի ունեցան այնպիսի խոշոր քաղաքական իրադարձություններ (1978-1979թթ. Իսլամական հեղափոխությունն Իրանում, Իրանա-իրաքյան պատերազմը 1980-1988թթ., ԽՍՀՄ զինված ինտերվենցիան Աֆղանստանի նկատմամբ և այլն) որոնք Սառը պատերազմի պայմաններում հիրավի փոխվեցին ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում, այստեղ ավելի թեժացավ ԱՄՆ-ԽՍՀՄ մրցակցությունը նորանոր լծակներ ձեռք բերելու համար: Ահա իրադարձությունների այս հորձանուտում էր, որ 1978թ. Աֆղանստանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որը և իշխանության բերեց կոմունիստներին: Սրա հիմքի վրա մեծացավ տարբեր արտաքին ուժերի, այդ թվում և Իրանի միջամտությունը այդ երկրի ներքին գործերին: Սա իր հերթին հանգեցրեց Խորհրդային բանակի ներխուժմանը և թեժացրեց արդեն սկսված քաղաքացիական պատերազմը, որը պետք է տևեր ընդհուպ մինչև 2001 թվականը: Աֆղանստանում արդեն տեղի էր ունեցել հեղաշրջումը, երբ 1979թ. փետրվարին Իրանում հաղթանակեց հեղափոխությունը, այնտեղ իշխանության եկած իսլամական ֆունդամենտալիստները Այաթոլլահ Խոմեյնու գլխավորությամբ, մարտահրավեր նետեցին աշխարհաքաղաքական երկու բևեռներին էլ (ԽՍՀՄ և ԱՄՆ) հավասարապես: Եվ ահա այս հիմքի վրա ուշագրավ է ետհեղափոխական Իրանի դիրքորոշումը և հետագա քաղաքականությունը աֆղանական իրադարձությունների նկատմամբ մասնավորապես և ԽՍՀՄ-ի նկատմամբ ընդհանրապես: Ընթերցողների դատին ներկայացվելիք թեման արտացոլում է ետհեղափոխական Իրանի աֆղանական քաղաքականությունը 1980-ական թթ. ընթացքում, որի բնույթը մեծապես կապված էր Իրանի ընդհանուր արտաքին քաղաքական դոկտրինայի հետ. այն արմատական վտփոխությունների էր ենթարկվել 1979 թ.-ից սկսած:

Խորհրդային բանակի ներխուժումն Աֆղանստան ազդակ հանդիսացավ այդ երկրի հարևանների՝ հատկապես Իրանի և Պակիստանի համար, որպեսզի վերջիններս լուրջ միջոցառումներ ձեռնարկեն սեփական անվտանգությունը ապահովելու համար, քանզի ԽՍՀՄ վերջնական նպատակը հարավային տաք ջրեր դուրս գալն էր և այն ի կատար կածվեր կամ Իրան կամ Պակիստան ներխուժելով:

Թեմայի արդիականությունը հատկապես երևում է նրանում, որ չնայած այն հանգամանքին, որ 1989թ.-ից հետո որոշակի փոփոխություններ կատարվեցին Իրանի արտաքին քաղաքականության մեջ և հեղափոխությունը հարակից երկրներ «արտահանելը» երկրորդ պլան մղվեց, այնուամենայնիվ այժմ էլ Իրանի ղեկավարությունը չի հրաժարվում Աֆղանստանում որոշակի լծակներ ունենալուց՝ ի հակակշիռ այնտեղ ԱՄՆ-ի գերակա դիրքերին: Ինչպես 1980-ական թթ., այնպես էլ այժմ Իրանի ազդեցության հնարավոր լծակներ են հանդիսանում այնտեղ ապրող շիա-դավան բնակչությունը, որը կազմում է տեղի բնակչության 15 տոկոսը, ինչպես նաև Իրանի մշակութային և էթնիկ ընդհանրությունները Աֆղանստանի հետ: Հարակից երկրներում ազդեցության լծակներ ունենալու Իրանի ձգտումը միտված է սեփական անվտանգության խնդիրները ուժեղուն, քանզի գնալով Իրանը սեղմվում է արևմտամետ վարչակարգեր ունեցող երկրների (Իրաք, Թուրքիա, Ադրբեջան, Պակիստան, Աֆղանստան, Պարսից ծոցի միապետություններ) օղակով:

Նշենք, որ թեմայի հետ կապված խնդիրները մանրամասն լուսաբանման և ուսումնասիրման կարիք են զգում, հատկապես Հայաստանի գիտական շրջանակներում: Այս հարցով սկսել է զբաղվել տողերիս հեղինակը, որը 1980-ական թթ.-ի Իրանի Իսլամական Հանրապետության աֆղանական քաղաքականությունը դիտարկում է այդ տարիների Իրանի ընդհանուր արտաքին քաղաքականության համատեքստում:

Թեմայի ամենակարևոր խնդիրներից մեկը Իրանի կողմից Իսլամանան հեղափոխության «արտահանման» տեսությունն է, որը և պայմանավորում էր աֆղանական իրադարձությունների նկատմամբ Իրանի դիրքորոշումը և հետագա քաղաքականությունը: Հայտնի է, որ Իրանին սահմանակից երկրներում շիադավան բնակչությունը որոշակի թիվ էր կազմում, որը և հանդիսանում էր այդ երկրների ամենաիրավազուրկ խավը: Սա, ըստ Իրանի նոր ղեկավարության, պարարտ հող էր ստեղծում հեղափոխությունը «արտահանելու» համար, որի առաջամարտիկ լինելու էին հենց այս իրավազուրկ խավը: Ահա և աֆղանստանը ևս մտնում էր այս ծրագրերի մեջ:

Թեմայի հետ կապված մյուս կարևոր խնդիրը Իրանի նոր ղեկավարության կողմից հռչակված «ոչ Արևելք, ոչ Արևմուտք» կարգախոսն էր, որը ենթադրում էր դիմակայություն ԱՄՆ-ին և ԽՍՀՄ-ին, սա էլ մեծապես

պայմանավորում էր Իրանի աֆղանական քաղաքականությունը մասնավորապես և ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները ընդհանրապես, թեև ժամանակ առ ժամանակ այս կարգախոսի սկզբունքը խախտվում էր թե՛ ԱՄՆ-ի, և թե ԽՍՀՄ-ի դեպքում: Մյուս կարևոր խնդիրը դա ԱՄՆ-ի գործոնն է Իրանի աֆղանական քաղաքականության մեջ: Այստեղ երկու երկրները հայտնվել էին միևնույն ճամբարում, երկուսն էլ ֆինանսավորում էին աֆղան մոջահեդներին և գաղտնագերծված որոշ փաստաթղթերի համաձային նույնիսկ կողողինացված էին գործում: Այստեղ կային համընկնող շահեր: Իրանը և ԱՄՆ-ը 1980-ական թթ. Աֆղանստանում ունեին ընդհանուր թշնամի՝ ԽՍՀՄ օկուպացիոն բանակը, որը սպառնում էր նախ Իրանի անվտանգությանը և հետո ԱՄՆ-ի տարածաշրջանային շահերին:

Թեմայի էական խնդիրներից մեկն էլ Աֆղանստանում արտաքին միջամտության և այդտեղ Իրանի դերի և հնարավորությունների հարցն է: Ինչպես հայտնի է աֆղան մոջահեդներին աջակցում էին զանազան իսլամական երկրներ, որտեղ առավել ծանրակշիռ դեր ուներ Պակիստանը, որոշ չափով նաև Պարսից ծոցի արաբական միապետությունները: Նշենք, որ սրանք հիմնականում ֆինանսավորում էին սուննի մոջահեդներին, որոնք ավելի շատ էին և ավելի մեծ չափով էին ազդում պատերազմի ելքի վրա: Իրանը չնայած որոշ չափով աջակցում էր սուննիներին, սակայն նրա հիմնական հենարանը շիաներն էին, որոնց թիվը Աֆղանստանում քիչ էր և նրանք այնքան մեծ դեր չէին խաղում ռազմական գործողություններում, ինչքան սուննի-դավան մոջահեդները: Այստեղ հետևաբար սահմանափակվում էին նաև Իրանի հնարավորությունները մեծ ազդեցություն ունենալու համար: Մա բնորոշ է նաև 1989թ.-ին հաջորդած տարիներին:

Թեմայի վերաբերյալ կան մի շարք կարևոր աղբյուրներ և ուսումնասիրություններ: Անդրադառնալով աղբյուրներին նշենք, որ դրանք հիմնականում գաղտնագերծված փաստաթղթեր են, որտեղ հիշատակություններ կան 1980-ական թթ. Աֆղանստանում Իրանի վարած քաղաքականության մասին: 2001թ., երբ ԱՄՆ-ը պատերազմ սկսեց թալիբների ռեժիմի դեմ Ջ. Ռ. Կաշինգթոնի անվան համալսարանը նախաձեռնեց 1980-ական թթ. Աֆղանստանին վերաբերող արխիվային նյութերի գաղտնագերծումը ամերիկյան արխիվներից, որտեղ որոշակի անդրադարձ է կատարվում Աֆղանստանում ապրող շիաների և Իրանի քաղաքականությանը այնտեղ¹: Այդ համալսարանը նաև ռուսերենից անգլերեն թարգմանեց ԽՍՀՄ քաղբյուրոյի նիստերի գրառումները, որոշումները, զեկույցները Աֆղանստանում քաղաքացիական պատերազմի մասին, որոնք ժամանակին գաղտնագերծվել էին ռուսական և արևելագերմանական արխիվներից²: Այս փաստաթղթերում ևս արտացոլվում են ետհեղափոխական Իրանի դիրքորոշումը և

քաղաքականությունը աֆղանական իրադարձությունների նկատմամբ հատկապես 1980-ական թթ. սկզբներին:

Աղբյուրների հետ կապված կարևոր է նաև «Յունայթեդ փրեսս ինթերնեյշնլը» լրատվական գործակալության իրանական բաժնի նախկին լրագրող Ա. Մազանդիի հուշերը, որտեղ ներկայացված են որոշակի դրվագներ Իրանի նոր իշխանությունների կողմից Աֆղանստանի նկատմամբ որդեգրած դիրքորոշումից³:

Մասնագիտական գրականության հետ կապված նշենք, որ Աֆղանստանի նկատմամբ Իրանի քաղաքականությունը հեղինակների կողմից ուսումնասիրվել է տարբեր համատեքստերում: Այստեղ հատկապես առանձնանում են Ա.Ռուբինշտեյնի⁴, Շ.Հանթերի⁵, Մ.Վարասթեի⁶, Ա.Արաբաջյանի⁷ աշխատությունները, որտեղ թեման դիտարկվում է Խորհրդա-իրանական հարաբերությունների համատեքստում, իսկ Ռ. Ռամազանի⁸ և Ս. Աղաբալի⁹ ուսումնասիրություններում թեման դիտարկվում է ետհեղափոխական Իրանի արտաքին քաղաքականության համատեքստում: Ուշագրավ է նաև Աֆղանստանի հարցով ՄԱԿ-ի նախկին քանազնացներ Դ.Կորդեվեսի և Ս.Հարիսոնի¹⁰ գիրքը, որտեղ խոսվում է քանակությունների միջոցով աֆղանական խնդրի կարգավորման հարցում Իրանի դիրքորոշման մասին:

KHATAMI-TIRGORDI FRIK (YSU)

IRAN AND THE AFGHAN CIVIL WAR IN 1979-1989

The 1970-1980-s were very changeful years for the Middle and Near Eastern countries. Some regional countries underwent such great political events such as Islamic Revolution in Iran in 1978-1979, Iran-Iraq war in 1980-1988, Soviet Union's military intervention in Afghanistan etc., which in the condition of Cold War really changed the correlation of powers in the region. The rivalry between the US and the USSR flared up here.

Above-mentioned theme represents Iran's post-revolutionary policy towards Afghanistan during the 1980-s, the essence of which was greatly connected with Iran's general foreign political doctrine, that basically changed from the beginning of the 1979.

There are series of important sources and literature concerning the theme. In the sources we would like to point out especially to important series of declassified documents from the US and Russian archives, which partly demonstrate Iran's policy towards Afghanistan. Certain works have been written by Sh. Hunter, M. Varasteh, R. Ramazani, S. Agaev and others connected with this problem. They observed Iran's Afghan policy from point of view of different aspects: some authors focused on Iran-USSR relations and some on Iran's general foreign policy.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. National Security Archive of George Washington University, Electronic Briefing Book No. 57, "Afghanistan: Lessons From the Last War: US Analyses of the Soviet War in Afghanistan: Declassified", doc. 1,7 (ed. by Prados J.), October 9, 2001. website: www.gwu.edu.
2. "Soviet Union and Afghanistan 1978-1989: Documents from Russian and East German Archives, www2.gwu.edu.
3. Մազանդի Ա., Իրան արողողրաթ-ի դարն ?, Թեհրան: «Ալբորզ», 1997 (պարսկ.):
4. Rubinshtein A., The Soviet Union and Iran Under Khomeini, - International Affairs, vol. 57, No. 4, Autumn 1981, pp. 599-617.
5. Hunter Sh., Soviet-Iranian Relations in the Post-Revolution Period, in: Ramazani R. (ed.), Iran's Revolution: The Search for Consensus, Indiana: Indiana University Press 1990, pp. 85-103.
6. Varasteh M., The Soviet Union and Iran, 1979-1989, in: Enteshami A. and Varasteh M. (eds.), Iran and International Community, N.Y., "Routledge", 1991, pp. 46-59.
7. Арабаджян А. (отв. ред.), Иранская Революция 1978-1979 гг.: Причины и уроки, Москва, "Наука", 1989.
8. Ramazani R., Revolutionary Iran: Challenge and Response in the Middle East, Baltimore, Johns Hopkins University Press, 1986.
9. Агаев С., Иран: между прошлым и будущим, Москва, "Политиздат", 1987.
10. Մորդոցեզ Գ. վա Հարիսոն Ա., Փոշթ-ի փարդե, Աֆղանեստան, Թեհրան: Էմբեշարաթ-ի բեյն-ալմեյլաի 1998 (պարսկ.):

ԽԱՉԱՏՈՒՅԱՆ ԱԼՔԵՐՏ

(ԵՊՀ)

ՆԱՎԹԸ ԵՎ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1973թ արաբա-իսրայելյան պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի՝ Իսրայելին հովանավորելու հանգամանքը պատճառ հանդիսացավ ՕՊԵԿ-ի՝ անդամ արաբական պետությունների կողմից ԱՄՆ-ին նավթային էմբարգոյի հայտարարման համար, որն էլ հանգեցրեց Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք նավթարդյունաբերող երկրների կողմից իրենց նավթարդյունաբերության ազգայնացմանը և համաշխարհային շուկայում նավթային ճգնաժամի առաջացմանը: Հենց այս պայմաններում էլ 1973թ Մանկտ Մորիցեուս Իրանի և Միջազգային նավթային կոնսորցիումի (ՄՆԿ) միջև կնքվեց նոր պայմանագիր, ըստ որի՝ Իրանի ազգային նավթային ընկերության (ԻԱՆԸ) տրամադրության տակ անցան ՄՆԿ-ի նախկին տարածքների բոլոր արդյունաբերական օբյեկտները և ամբողջ ենթակառուցվածքը, ինչպես նաև նավթի արդյունահանումն ու տեղափոխումը մինչև Պարսից ծոցի նավթամբարները¹:

Վաշինգտոնի կողմից այս պայմանագրի կնքելուն չխոչընդոտելու և նույնիսկ նպաստելու քաղաքականությունը կապված էր մի շարք գործոնների հետ.

1. Իրանը, 1954թ ՄՆԿ-ի հետ կնքված (25 տարի ժամկետով) պայմանագիրը վաղաժամկետ չեղյալ հայտարարելով, հնարավորություն տվեց ԱՄՆ-ին դառնալու Իրանի նավթի հիմնական գնորդ և մյուս անդամներին՝ Անգլիային, Հոլանդիային և Ֆրանսիային զրկեց այդ իրավունքից²:
2. Արաբական աշխարհի կողմից Վաշինգտոնին «նավթային պատերազմ» հայտարարելուց հետո Իրանի նավթը կարևորագույն նշանակություն ստացավ Միացյալ Նահանգների պահանջների բավարարման համար: Այդ նպատակով էլ ԱՄՆ-ը նախընտրեց Իրանի հետ ջերմ հարաբերությունների պահպանումն ու սերտացումը³:
3. Վաշինգտոնը նպատակ ուներ նաև Իրանը վերածելու Պարսից ծոցի իր «հսկիչ-պահապանի»՝ այդ շրջանում կայունություն պահպանելու նպատակով, որի համար էլ սկսում է վարել Իրանի ռազմականացման

¹ Organization of Petrol Exporting Countries

քաղաքականություն՝ վաճառելով նրան գերժամանակակից զենք ու զինամթերք:

4. ԱՄՆ-ը կարևորում էր նաև Իրանի հետ տնտեսական սերտ համագործակցությունը և նավթից ստացած մեծ եկամուտների ներգրավումը Միացյալ Նահանգների, ինչպես նաև ամբողջ կապիտալիստական աշխարհի տնտեսական համակարգ և դիտում էր Իրանը որպես իր ապրանքների սպառման լայն շուկա:

1970-ական թթ. սկզբին համաշխարհային շուկայում նավթային ճգնաժամի առկայության պայմաններում, ինչպես նաև ՕՊԵԿ-ի ջանքերով սկսեցին կտրուկ բարձրանալ նավթի գները՝ 1973թ սկզբին \$3.11-ից 1973թ հոկտեմբերին հասնելով 11.65\$⁴ (1 բարելի համար): Գների բարձրացման հետևանքով մեծացավ նաև Իրանի եկամուտը, որը 1973թ-ին կազմեց \$5.6 մլրդ, 1974-ին՝ \$17.5 մլրդ, 1976-ին՝ \$22 մլրդ⁵:

Տարեցտարի աճող եկամուտները մեծ ազդեցություն ունեցան Իրանի տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի վրա, վերանայվեց երկրի զարգացման ռազմավարությունը, կազմվեց վարչակարգի ռազմա-քաղաքական դոկտրինան, փոխվեց կառավարության արտաքին քաղաքական կուրսը⁶: Կառավարության կողմից մշակված 5-րդ Զարգացման պլանի (1973-78թթ.) ծախսերը կրկնակի ավելացան՝ հասնելով \$69 մլրդ⁷: Պետության կողմից հիմնական գումարները հատկացվեցին երկրի արագ ինդուստրացման համար, որն էլ հանգեցրեց արտաքին աշխարհի (հատկապես ԱՄՆ-ի) հետ առևտրի ընդլայնմանը, զարկ տրվեց գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի և կապի, ջրային տնտեսության և էներգետիկայի զարգացմանը:

Միջազգային խոշոր կոնցեռնների հետ ստորագրվեցին տնտեսական համագործակցության բազմաթիվ համաձայնագրեր, մի շարք զարգացող և զարգացած երկրների տրվեցին խոշոր դրամական վարկեր և փոխառություններ, կատարվեցին ֆինանսական ներդրումներ արևմտյան հզոր ընկերություններում, այդ թվում նաև գերմանական «Կոուպս»-ում⁸:

Մոհամմեդ Ռեզա շահը հատկապես կարևորում էր իր հիմնական հենարանի՝ զինված ուժերի արդիականացման խնդիրը: Երկիրը մեծացրեց գերժամանակակից զենքի և զինամթերքի ներմուծումը ԱՄՆ-ից, ինչպես նաև Անգլիայից և Ֆրանսիայից, որի համար 1973-77թթ ծախսվեց ավելի քան \$10մլրդ դոլար⁹:

Այսպիսով, 1970-ական թթ Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցած աշխարհա-քաղաքական և տնտեսական փոփոխությունների հետևանքով Իրանին փաստորեն հաջողվեց իր ազդեցության տակ վերցնել երկրի նավթարդյունաբերությունը և նավթից ստացած եկամուտներն օգտագործել իր սեփական շահերի համար, որի շնորհիվ մինչև 1980թ. Իրանում գրանցվեց շուրջ 9% տնտեսական աճ¹⁰: Մտեղծված անախադեպ ֆինանսական և տնտեսական հնարավորությունների նպատակային օգտագործումը նախապայման կհանդիսանար երկրի սոցիալ-տնտեսական և ռազմական զարգացման համար:

ALBERT KHACHATURYAN
(YSU)

**OIL AND IRAN'S ECONOMIC AND POLITICAL
DEVELOPMENTS IN THE 1970's.**

The US support for Israel during Arab-Israeli war of October 1973, served as a catalyst allowing Arab members of OPEC to lay an oil embargo on the USA, which caused immediate spark in the world crisis in oil. The USA decided to strengthen its relations with Iran for keeping oil supplies from Persian Gulf. By the new agreement of 1973 between the Iranian Government and International Oil Consortium the whole oil industry of Iran went under control of National Iranian Oil Company. The quadruple increase in the oil prices in 1973-74 and the subsequent price rise, resulting from OPEC activities and world crisis in oil, effectively increased Iran's revenues from \$5,6 billion (1973) to \$22 billion (1976). The government exaggerated expenditures of the Fifth Development plan up to \$69 billion for rapid industrialization and militarizing of the country. Enormous economic cooperation agreements were signed with various foreign concerns, loans aid and credits were granted to various countries, developed and underdeveloped, as well as international financial agencies and investments were made in such prestigious western industries as West Germany's Krupps.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Алиев С.М.**, Нефть и общественно-политическое развитие Ирана в XX веке. Москва, 1985, с. 198.
2. 1954թ ստեղծված Միջազգային նավթային կոնսորցիումի բաժնետերերն էին «Անգլո-իրանական նավթային ընկերությունը» (40%), ամերիկյան «Մեծ հնգյակ» հինգ խոշոր նավթային ընկերությունները (40%), անգլո-հոլանդական «Ռոյալ - Դաբլ Շելլ» (14%) և ֆրանսիական «Ֆրանսեզ դե Փեթրոլ» (6%) ընկերությունները (Avery P., Modern Iran, London, 1965, p. 454).
3. **Борисов Р.В.**, Нефтяные монополии США на Ближнем и Среднем Востоке. Американский Экспансионизм, Москва, 1986, с. 509.
4. **Андреасян Р.Н., Казюков А.Д.**, ОПЕК. В мире нефти, Москва, 1978, с. 118.
5. Նույնի էջ 178.
6. **Алиев С.М.**, նշվ. աշխ., էջ 207.
7. **Moghtader H.**, The impact of Increased Oil Revenue on Iran's economic Development 1973-1976; **Kedouri E., Haim S.**, Towards a modern Iran. Studies in Thought, Politics and Society, London, 1980, p. 253.

8. Широков Г.К., Нефтедоллары и социально – экономическое развитие стран Ближнего и Среднего Востока, Москва, 1979, с. 39.
9. Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, Москва, 1977, с. 222.
10. Широков Г.К., *Бүт. шүж.*, т. 40.

ՀԱԿՈՒՅԱՆ ԱՐՄԻՆԵ

(ԱԻ)

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԶ ՄԱՏԹԵՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԻԶՄԻՐԼՅԱՆԻ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Դարեր շարունակ Կ. Պոլսի հայոց պատրիարքները արեմտա-հայոթյան գլխավոր ներկայացուցիչ և միջնորդ էին Օսմանյան կայսրության կառավարման բռնապետական համակարգի բարձրագույն առյուծկալը: Նրանց շարքում առանձնանում են գործիչներ, որոնք կարևոր նշանակություն են ունեցել Արևմտյան Հայաստանի և ողջ արևմտահայոթյան ոչ միայն հոգևոր, այլև հասարակական-քաղաքական կյանքում: Այդպիսի հոգևոր առաջնորդ էր Կ. Պոլսի 104-րդ պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանը (1894-96թթ., 1908-1909թթ.), որը «զուլումի» տարիներին հայ ժողովրդին վիճակված ողբերգության և հերոսական ցասման մասնակիցը և վկան էր: Ինչպես նախանշում է Իզմիրլյանի կենսագիրներից Ս. Գաբանանյանը. «այդ տխուր շրջանին մեջ Պատրիարք եղողին անխուսափելի էր կամ մահ, կամ աքսոր»¹:

1894թ. դեկտեմբերի 7-ին ընտրվելով պատրիարք՝ Իզմիրլյանը իր հիմնական խնդիրը դարձրեց ոչ միայն ղեկավարել և պաշտպանել ժողովրդի շահերը, այլ նաև վերականգնել պատրարքարանի՝ նախորդ պատրիարքի օրոք «խանգարուած դիրքը»²:

Իբրև ազդեցիկ և գործունյա հոգևորական, որը նպաստում էր Հայկական հարցի բարձրացմանը և «թուրքահայոց» խնդիրների լուծմանը, Իզմիրլյանը մեծ հեղինակություն էր վայելում նաև մինչև պատրիարք ընտրվելը: Ժամանակակից թուրք հեղինակ Զ. Գյուրյունը, որը նրան համարում է Խրիմյանի գործի շարունակողը, նշում է, որ 1876թ. սեպտեմբերին Կ. Պոլսի կոնֆերանսին մասնակցող մեծ տերությունների ներկայացուցիչներին Իզմիրլյանը հուշագիր է ուղարկել: Կոնֆերանսի ընթացքում արծարծվում են հողային, հարկային և այլ հարցերի հետաքննման հանձնաժողովի ստեղծման խնդիրները³:

Շարունակելով ազգանպաստ գործունեությունը՝ 1878թ. փետրվարին Իզմիրլյանը մեկնում է Էջմիածին, խնդրում Գեորգ IV Կաթողիկոսի միջնորդությունը ռուսական կայսեր և Մեծ տերությունների լիազորների նախապատրաստվող համագումարին ներկայացնելու արևմտահայոթյան խնդիրը: Բայց չկարողանալով վախել այդ հարցի նկատմամբ նախապես հայտնի ընդդիմությունը՝ ձեռնունայն վերադառնում է Կ. Պոլսի⁴: Մակայն

Էջմիածնում չեն մոռանում Իզմիրլյանի «լուրջ, անձնուեր և անբասիր անհատականությունը»⁵: Իսկ հետագայում, պատրիարքության ժամանակաշրջանում նա այնպիսի հաստատական և սկզբունքային գործելակերպ է դրսևորում, որ ժամանակակիցները Իզմիրլյանին անվանում են «Երկաթյա Պատրիարք»: Նույնիսկ թուրք պատմաբաններից Էսաթ Ուրասը իր աշխատության մեջ այդպես է հիշատակում Իզմիրլյանին⁶:

Ստեղծված ներքին և արտաքին քաղաքական պայմաններում, երբ տեղի էին ունեցել Սասունի արյունալի իրադարձությունները և եվրոպական տերությունները կրկին արժարժում էին Հայկական հարցը, դեռևս 1895թ. հունվարին պատրիարք Իզմիրլյանի և Բ.Դռան միջև սկիզբ առած խուլ պայքարը հետզհետե վերածվում է բացարձակ հակամարտության⁷:

Արմտահայության դատն առավել միասնական և արդյունավետ ներկայացնելու նպատակով՝ պատրիարքը հատուկ շրջաբերականով արգելում է առաջնորդներին Հայկական հարցի խնդիրներով դիմել կառավարությանը⁸: Իզմիրլյանը շարունակում է ակտիվ գործունեությունը և իր նամակներով, իրատեսական ու հեռատես խորհուրդներով հնարավորինս աջակցում եվրոպական դեսպաններին՝ բարեփոխումների «Մայիսյան ծրագրի» մշակման հարցում⁹: Սակայն սուլթանական կառավարության ծրագրերը բոլորովին այլ էին: Հետևաբար, նախագծի ընդունմանն ուղղված պատրիարքի անձնական միջնորդության վարձերը նույնպես հաջողության չեն հասնում¹⁰: Իբրև վերը նշված պատճառների հետևանք, Հայոց պատրիարքը դառնում է սուլթան Աբդուլհամիդի բռնապետական ռեժիմին սպասարկող լրտեսների մշտական ուշադրության «օբյեկտ»: Կառավարությունը նորանոր դավեր էր նյութում պատրիարքի դեմ և դրա համար նոր հնարավորություն ընձեռեց 1895թ. օգոստոսի 18-ի Բաբ-Ալիի ցույցը: Խաղաղ ցույցը «դիտարկելով» իբրև զինված ապստամբություն, կառավարությունը ողջ պատասխանա-տվությունը աշխատում է զցել պատրիարքի վրա, փորձում երկպառակություններ առաջացնել արևմտահայերի միջև¹¹:

Այս իրադարձությունը մանրամասն քննության է ենթարկել վերոհիշյալ Բ. Գյուրյունը, որը, կեղծելով փաստերը² նշում է, որ ցույցի մասնակիցները զինված էին, իսկ Կ. Պոլսի պատրիարքը վաղուց տեղեկացված էր կազմակերպվող իրադարձության մասին¹²: Մեկ այլ թուրք հեղինակ Չ. Դւանըշմանը նույնպես, չնշելով աղբյուրները, Բաբ-Ալիի ապստամբության ղեկավար համարում է Իզմիրլյանին¹³: Իսկ իրականում, ցուցարարների Մայր Եկեղեցու բակում հավաքված լինելու փաստը թուրքական կառավարությունն օգտագործեց որպես պատրիարքի նկատմամբ ճնշում գործադրելու շարժառիթ:

Այդուհանդերձ «Երկաթյա» պատրիարքը նույնիսկ մինչև իր հրաժարական տալը, հավատում էր, որ եվրոպական տերությունները և

Ռուսաստանը սուլթանին կայարտադրեն բարեփոխումներ անցկացնել, և հայ ժողովուրդը կվերագտնի իր «խաղաղ ու ապահով» գոյատևումը:

1895թ. հոկտեմբերին Օսմանյան կառավարությունը վերջիվերջո «ընդունեց» բարեփոխումների ծրագիրը, որն իրականում հետզհետե մեծ չափով ծավալվող հայերի զանգվածային կոտորածների «քողարկման» տարբերակ էր: 1894-96թթ. Օսմանյան կայսրությունում իրագործվեց հայ քրիստոնյաների կոտորած, որի քաջալերման և օրինականացման հարցում առանցքային դեր էին կատարում մահմեդական առաջնորդները, խրախուսելով և ուղղելով ջարդարար ֆանատիկներին ոչնչացնելու քրիստոնյաներին և քրիստոնեության խորհրդանիշները¹⁴:

Մատենադարանում պահվող մի վավերագրի համաձայն Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում ոչնչացված ու քանդված հայ առաքելական, հայ բողոքական և հայ կաթոլիկ եկեղեցիների և վանքերի քիվը հետևյալն է. կողոպտված՝ 880, քանդված՝ 204, հրկիզված՝ 79, մզկիթի վերածված՝ 60, զորանոցի վերածված՝ 3¹⁵: Չանգվածային կոտորածների ժամանակ բազմաթիվ հոգևորականներ ոչ միայն իրենց, այլև իրենց հավատացյալ հոտի կյանքը փրկելու համար հավատափոխ էին լինում: Շատերն էլ հաստատական մնալով իրենց հավատին և կոչմանը՝ աննկարագրելի խոշտանգումների էին ենթարկվում և սպանվում¹⁶: Կան փաստեր, որ զինված ոստիկանները, առանց պատրիարքարանի համապատասխան որոշման, բանտարկում, մահվան դատապարտում կամ աքսորում էին հայ հոգևորականներին¹⁷:

Արևմտյան Հայաստանի տարբեր հատվածներում իրականացվող ջարդերի մասին օրեցօր ահագնացող այդ սուկալի լուրերը, խորը տառապանք և տագնապ էին առաջացնում Իզմիրյանի սրտում: Չնայած կառավարության հետ լարված հարաբերություններին, նա շարունակում է պաշտոնական քաղաքականությունը դիմել սուլթանին¹⁸, եվրոպական դեսպաններին, ռուսական կայսերը, տեղեկություններ ուղարկում Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ փորձելով միջոցներ գտնել կանխելու ջարդերը¹⁹: Գործադրվող ջանքերը ոչ միայն անօգուտ էին, այլև ավելի էին սրում ներքին և արտաքին տագնապները:

Հետզհետե սուլթանի կողմից ճնշումներն ուժեղանում էին, «փոխադարձ հակառակությունը ատելության էր հասած»²⁰: Բռնապետական ռեժիմի կողմից իրականացվող ծանր հալածանքների անխուսափելի արդյունքը եղավ այն, որ 1896թ. սկզբին սուլթանը պարտադրեց Իզմիրյանին հրաժարական տալ: Սուլթանի կողմից այլևս անհանդուրժելի էր օտար պետությունների միջամտությանը դիմող և կառավարությանը բողոքներ ներկայացնող պատրիարքի գործունեությունը: Հայոց պատրիարքը, գտնվելով վատառողջ վիճակում, հոգնած ու վշտաբեկ, 1896թ. հուլիսի 20-ին ի վերջո ստիպված էր իր պաշտոնական հրաժարականն ուղարկել²¹:

Գրեթե միաժամանակ Ոստիկանության նախարարը սուրբանի պալատ է կանչում Կրոնական և Քաղաքական ժողովների անդամներին: Արդուլիամիդ II-ը զգուշացնում է, որ հեղափոխական գործունեության համար նրանց բանտ ե աքսոր է սպառնում²²: Այդ պաշտոնական զգուշացմանը հետևում այն, որ հուլիսի 25-ին սուրբանն ընդունելով Իզմիրյանի հրաժարականը՝ կարգադրում է ներկա գտնվել հրամանագրի («պայթույթուի», որն ընթերցում է սաղրագամը)²³ ընթերցմանը, որով Հայոց սահմանադրական ժողովները հայտարարվում են կազմալուծված, հրամայվում է պատրիարքական տեղապահ ընտրել:

Հետևյալ մի քանի ամիսների ընթացքում պաշտոնանկ պատրիարքի բնակարանը շարունակում է հսկվել լրտեսների կողմից: Ի վերջո Իզմիրյանն աքսորվում է Երուսաղեմ, որտեղ ծանր տարիներ անցկացնելուց հետո 1908թ. «որպես երկրորդ անգամ ընտրուած պատրիարք, մեծ շուքով վերադարձավ Կ. Պոլիս, վերստին բազմեց պատրիարքական Գահին»²⁴:

Վերը նշված փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ սուրբանական կառավարությունը առավել անհանդուրժող քաղաքականություն էր վարում այն հոգևոր առաջնորդների նկատմամբ, ովքեր ձգտում էին նույնիսկ ամենածանր քաղաքական իրավիճակում պաշտպանել հայ ժողովրդի շահերը: Ոստիկանական պատրիարքի համագործակցությունը Հայկական հարցը պաշտպանող եվրոպացի պաշտոնյաների հետ, ինչպես նրա յուրաքանչյուր ոչ «պետականամետ» նախաձեռնությունը, «ասպտամբություն» է որակվում: Կ. Պոլսի Հայոց պատրիարքի նկատմամբ կիրառվող հալածանքները, դավերը և մշտական լրտեսությունը այն բազմաթիվ միջոցներից էին, որոնցով Արդուլիամիդ II-ը ճնշում էր գործադրում և փորձում «հնազանդեցնել» «Երկաթյա» պատրիարքին: Մակայն արդյունքի չհասնելով, ի վերջո, պատճառա-բանելով նաև բացահայտ արևմտամետ դիրքորոշումը, պարտադրում է հրաժարական տալ:

Կարծում ենք, որ ստեղծված ծանր քաղաքական պայմաններում դժվար թե գտնվեր առավել ճկուն և դիվանագետ հոգևոր առաջնորդ, որը կփոխեր իրադարձությունների ընթացքը և հարկադրված չէր լինի թողնել հայրենիքը կոտորածների և ավերման հորձանուտում:

ARMINE HAKOBYAN
(IOS)

ABOUT THE REASONS OF RESIGNATION OF ARCHBISHOP M. IZMIRLYAN, ARMENIAN PATRIARCH OF CONSTANTINOPLE

Recognized as "Iron Patriarch", Archbishop Mattheos Izmirlyan has played an important role in religious, social and political life of Western Armenia and Armenians in general.

The Armenian massacres in the era of Sultan Abdul Hamid II took place during the first period of his patriarchate (1894-96, 1908-1909). For reopening of Armenian Question Izmirlyan contributed all his efforts to collaborate with the diplomatic representatives of Russia and European countries. Being under the constant oppression and pursuit of sultanate regime Patriarch kept on doing his utmost to secure foreign support for "Reforms of May" in Western Armenia. Actually the "silent" conflict between the Patriarch and Sultan transformed into the mutual hatred. Finally under the pressure of the Ottoman government, Izmirlyan was forced to resign and deported to Jerusalem.

The paper includes the main policy characteristics of Sultanate towards the Armenian Patriarchate, clergy and church in general within the 1894-96. It also indicates the reasons, which forced Patriarch to resign and leaving Armenian defenseless against the perpetration.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սիմոն Գաբամաճեան, Ամենապատիւ Տ.Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան, Բարձրաշնորհ Տ. Եղիշէ ս. Եպիսկոպոս Դուրեան. Կ. Պոլիս, 1908, էջ 17:
2. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Գ Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 5403:
3. Գնրմո Կ., Ermeni Dosyasy, Ankara, 1983, s. 83:
4. Սարուխան, Հայկական խնդիրն եւ ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), Ա Հատոր. Թիֆլիս, 1912, էջ 321:
5. 1892թ. Իզմիրլեանն ընտրվել է կաթողիկոսական թեկնածու: Այդ մասին տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Գ Գ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 5379:
6. Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950, s. 298:
7. Բ. Դուռը մերժում է Սասունի քննիչ հանձնաժողովում պատրիարքարանի ներկայացուցչի մասնակցությունը: Տե՛ս

- Ալեքսանդր Շիրվանզադե, Մատթեոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան, Նոր Նախիջևան, 1908, էջ 42:
8. Ալեքսանդր Շիրվանզադե, Մատթեոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան, Նոր Նախիջևան, 1908, էջ 43:
 9. Պատրիարք Իզմիրլյան, անգլիական դեսպան սըր Ֆիլիպ Քըրրիին, 14/26 յունիս 1895, Լեօ, Հայոց հարցի վաւերագրերը., Թիֆլիս, 1915, էջ 240:
 10. Սիմոն Գաբամաճեան, Ամենապատիւ Ս.Տ. Մատթեոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան, Բարձրաշնորհ Տ. Եղիշէ ս. Եպիսկոպոս Դուրեան, Կ.Պոլիս, 1908, էջ 17:
 11. Ալեքսանդր Շիրվանզադե, Մատթեոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան. Նոր Նախիջևան, 1908, էջ 48:
 12. Gürün K., Ermeni Dosyası, Ankara, 1983, s. 149:
 11. Danyşman Z., Sultan İkinci Abdülhamid Han, Ystanbul, 1966, s. 148:
 14. Vahakn N. Dadrian, The History of Armenian Genocide, Oxford, 1995, p. 150.
 15. Մատենադարան, Արխիվ Իզմիրլյան Կաթողիկոսի, թղթ. 14 , վավ. N615
 16. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Հ.Գ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 5420
 17. Արևմտեան Հայաստանում հալածուած հոգևորականների ցուցակ [1896թ.] (ցուցակում ներկայացվում է 31անուն), Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910թթ.), գիրք Ը. Երևան, 2001, էջ 115:
 18. Մատենադարան, Արխիվ Իզմիրլյան Կաթողիկոսի, թղթ. 14, վավ. No. 621:
 19. Մատթեոս եպս. Իզմիրլեանի նամակը Վեհափառ Հայրապետին 1895թ. կոտորածների վերաբերեալ տեղեկագրությունները Ռուսաստան առաքելու վերաբերեալ: 7 փետրուարի 1896թ. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910թթ.), կազմեց Սանդրո Բեիբուղեան, գիրք Ը. Երևան 2001, էջ 93:
 20. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Հ.Գ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 5423
 21. Ալեքսանդր Շիրվանզադե, Մատթեոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան. Նոր Նախիջևան, 1908, էջ 52:
 22. Մատենադարան, Արխիվ Իզմիրլյան Կաթողիկոսի, թղթ. 14 , վավ. N628:
 23. Մատենադարան, Արխիվ Իզմիրլյան Կաթողիկոսի, թղթ. 11 , վավ. N148:
 24. Սանդրո Բեիբուղեան, Առաջաբան.- Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910թթ.), կազմեց Սանդրո Բեիբուղեան, գիրք Ը. Երևան, 2001, էջ 15:

ՀԱԿՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ
(«Նորավանք» ԳԿՀ)

ԹԱԹԱՆՈՍ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ
20-ՐԴ Դ. ՍԿՁԲԻ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

20-րդ դ. սկզբին Արևելյան Այսրկովկասում շարունակում էին գոյատևել քաթախոս հայերի Մաղրասա, Քիլվար և Նաչմաս գյուղերը: 18-րդ. վերջին Դուբայի, Դերբենտի շրջաններում բնակվող ինքնատիպ լեզվամշակութային դիմագիծ ունեցող հայ ժողովրդի այս հատվածը կոմս Վ. Ջուրովի գլխավորած ռուսական զորքերի հետ միասին հեռանում է Արևելյան Այսրկովկասից և հաստատավում Հյուսիսային Կովկասում:

20-րդ դ. սկզբի կովկասյան տարածաշրջանում սկիզբ ազգամիջյան հարաբերությունների լարվածությունը, դրան ուղեկցող հակահայկական հալածանքների ու ջարդերի ողջ ծանրությունը տարածվեց նաև Մաղրասա, Քիլվար և Նաչմաս գյուղերում բնակվող և իրենց պատմական հայրենիքում գոյատևող քաթախոս հայերի վերջին բեկորների վրա:

Այս խնդիրների ուսումնասիրությունը, ինչպես նաև խմբի ինքնության դրսևորումների վրա հիշյալ գործընթացների ազդեցության հետևանքների հետ կապված հիմնահարցերը դեռևս բաց են մնում: Մաղրասա գյուղի 1918թ. պատմության որոշ դրվագների անդրադարձել է Ս. Կարապետյանը¹:

1905, 1918-1920թթ. իրադարձությունների ողջ ծանրությունն կրեցին նաև քաթախոս հայերի Մաղրասա, Քիլվար և Նաչմաս գյուղերը: Հայտնի է, որ 1905թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Մաղրասա գյուղում էին ապաստանել Շամախու շրջանի Նահիշեն, Դարա-Ջերքենց և այլ հայկական գյուղերի բնակիչները²:

1918թ. դեպքերի ժամանակ Մաղրասան դարձել էր ինքնապաշտպանության կարևոր կենտրոն, և այստեղ էին ապաստանել շրջանի 16 հայկական գյուղերի բնակիչները: Անհավասար ուժերի պայմաններում, օսմանյան բանակի, մուսավաթականների և տեղական մահմեդական բնակչության հարձակումներին չդիմանալով, 3 օրվա դիմադրությունից հետո մաղրասեցիները թողնում են գյուղը, հեռանում Բաքու, Միջին Ասիա³:

Սինչ Ադրբեջանի խորհրդայնացումը մաղրասցիների մի մասն արդեն վերադարձած է լինում հայրենի գյուղ, թեև մուսավաթական կառավարություն

¹ Նյութը պատրաստվել է Հենիխիս Բյուլի անվան հիմնադրամի տարածաշրջանային կրթաթոշակի շրջանակներում:

այստեղ արդեն Երևանից բերված «թուրքեր» էր բնակացրել: Չնայած դրան՝ 1920 թ. մարտին գյուղում բնակվում էին 1400 շունչ կամ 242 տնտեսություն հայեր: Վերջիններս խնդրում են Բաքվի Հայոց ազգային Խորհրդին՝ միջնորդելու Ադրբեջանի կառավարության առջև իրենց օգնություն ցուցաբերելու, առաջին հերթին ցորեն տրամադրելու համար, քանի որ գտնվում են շատ ծանր կենսական պայմաններում: Մադրասցիները բողոքում են, որ Երևանից գաղթած թուրքերին կառավարությունն օգնություն է ցույց տալիս: «Մեր հարցին, թե ինչո՞ւ մեզ հայերիս ևս չեն բաժանում, պատասխան են տալիս. ե՞րբ դիմեցիք և մերժեցինք»⁴:

20-դր դ. սկզբին սկսված ազգամիջյան ընդհարումները, հակահայկական հալածանքները առանձնահատուկ դրսևորումներ ունեցան մահմեդական միջավայրում գտնվող, մեկուսացած Քիվար գյուղում:

1905թ. դեպքերն է նկարագրում և ուշագրավ տեղեկություններ պարունակում Քիվարի քահանայի՝ Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված նամակը: Քահանա Վահան Տեր-Հակոբյանը գրում է, որ չորս կողմից մահմեդականներով շրջապատված Քիվար գյուղը ազգամիջյան արյունոտ ընդհարումների այդ ժամանակաշրջանում դժվար օրեր ապրեց: Նա նշում է, որ ինքը բարեկամական հարաբերություններ ուներ մահմեդական գյուղերի «աֆանդիներին», «մուլաներին» կամ «ստորին ծառայողներին» հետ, և նրանք հավաստիացնում էին, որ քանի իրենք կենդանի են՝ «Չեր գլխից մազ չի պակասիլ», ու այդ օրերին նրանք ցույց տվեցին իրենց բարեկամությունը: Քահանան գրում է, որ երբ դրությունը սրվում է ինքը գնում է հարևան Ղալազա գյուղը, բարեկամ «աֆանդիներին» մոտ, որոնք մեծ հեղինակություն ունեին շրջանում և նրանց օջախը սուլունիների համար ուխտավայր էր: Վերջիններս խոսք են տալիս օգնել և սուլունի դավամանքի բոլոր մուլաներին նամակ են գրում ու պատվիրում կարդալ մզկիթներում, որպեսզի քիվարցիներին ձեռք չտան և եթե շիաները հարձակվելու լինեն, դարձյալ օգնեն Քիվարին: Նկարագրվում է, որ շիաների հարձակման նախօրեին հարևան Ջեյվա գյուղի տանուտերը այդ մասին տեղեկացնում է իրեն և իր մարդկանցով գալիս Քիվար, իսկ ինքը մարդ է ուղարկում Ղալազա «աֆանդիներին» կանչելու և դիմում իշխանություններին օգնության համար: Հետաքրքրական է, որ քահանան պրիստավին նամակ է ուղարկվում «աֆանդիներին» մարդկանց միջոցով: Ըստով Քիվար է հասնում Համդուլահ Էֆենդին իր եղբայրներով և մարդկանցով: Նա տեղեկացնում է շրջակա սուլունի գյուղերին, որպեսզի նրանց մուլաները և ազդեցիկ մարդիկ օգնության գան Քիվար: Վերջիններս շուտով գալիս-հասնում են: Որոշ ժամանակ անց Քիվար է հասնում նաև իշխանությունների կողմից ուղարկված կազակական ջոկատը գավառապետի գլխավորությամբ: Գավառապետը իր մոտ է կանչում սուլունի մահմեդական ներկայացուցիչներին և, ինչպես նշվում է, բոլորի ներկայությամբ «խոստում առաւ մեր գյուղի պահպանության համար»: Այնուհետև հավաքվածներին է դիմում Համդուլահ Էֆենդին և այս «խոքրիկ հոտը» վերցնում իր երաշխավորության տակ: Դրանից հետո գավառապետը գնում է շիա-մահմեդական գյուղեր, իսկ գյուղում մնում են ու «ներկայումս էլ

գտնվում են» կազակական ջոկատը և 4 «աֆանդիները»՝ իրենց մարդկանցով: Քահանան խնդրում է Ամենայն հայոց կաթողիկոսին օրհնության կոնդակ ուղարկել այդ 4 «աֆանդիներին», Ձեյվայի տանուտերին, Փիրաբեդլի գյուղի մի բնակչի և ևս երկու հոգու: Նշվում է, որ նրանց շնորհիվ է, որ Քիվարը պահպանվեց⁵:

1917-1920թթ. հակահայկական ւարյունոտ իրադարձությունների ժամանակ ևս Քիվար գյուղը պահպանեց իր գոյությունը: Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղարկված Բաքվի և Թուրքեստանի թեմի առաջնորդի զեկուցագրում նշվում է, որ 1917-20թթ. Բաքվի թեմում տեղի ունեցած «աւերածութիւնների, կոտորածների ու թալանի» ժամանակ «միակ բացառիկ բաղդատը վիճակ է ունեցել... թրքախօս փոքրիկ Քիվար հայ գիւղը...»: Առաջնորդը հայտնում է, որ գյուղը «խոր քահանայով» ողջ ու անվնաս է մնացել շնորհիվ սուրճի մահմեդական հոգևորականության ձեռնարկած միջոցների⁶:

20-րդ դ. սկզբին Քիվարի շուրջ ստեղծված այս իրավիճակների նկարագրությունները էթնոշակութային կապերի ուշագրավ դրսևորումների օրինակներ են: Ինչպես հայտնի է, Քիվարը գտնվում էր մահմեդական թաթերի հոծ միջավայրում: Սուրճի մահմեդական թաթերի քիվարցիներին պաշտպանելու ու աջակցելու նման վերաբերմունքի և վարքագծի պատճառներից կարող է լինել, թերևս այն, որ այս հատվածի մեջ էր մահմեդականացված, սակայն իրենց «հայկական ծագման» գիտակցությունը որոշակիորեն պահպանած բնակչության մի հատված, որոնց մի մասը, ինչպես հայտնի է, բնակվում էր հենց Քիվարի շուրջը (օր. Ձեյվա գյուղը)⁷: Բացի այդ, ինչպես գիտենք, մահմեդականության սուրճի դավանանքը Այսրկովկասում ունի ավելի հին արմատներ և գալիս է դեռևս արաբական արշավանքների ժամանակաշրջանից: Հետևաբար սուրճի մահմեդական հատվածի և հայկական կամ քրիստոնեական տարրի միջև կային ավելի հին և տևական հարաբերություններ: Այդ առումով նման պարագայում որոշակի դեր կարող էր խաղալ այն, որ դարերի ընթացքում քրիստոնեական և մահմեդական այս շերտերի միջև ձևավորվել էր փոխհարաբերությունների որոշակի մոդել, որն իր արմատներով, թերևս, հասնում էր մինչիսլամական ժամանակաշրջանը և հենվում այդ ժամանակներում առկա ավանդույթների վրա:

1918թ. իրադարձությունները ողբերգական հետևանքներ ունեցան Խաչմաս գյուղի բնակչության համար:

Արևելագետ Բ. Միլլերը դեռևս 1920-ական թթ. նկատում է, որ Խաչմասը գոյատևեց մինչև 1918 թ. և նշում, որ դրանից հետո այդ գյուղի բնակչության մասին այլևս տեղեկություններ չկան⁸: Վերջերս հրատարակված «Հայերի կոտորածների Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում հանդիպում է ուշագրավ մի փաստաթուղթ, որը լույս է սփռում այս խնդրի վերաբերյալ:

Խաչմասի հայության ջարդերից փրկված երեք հոգի Բաքվի «Արև» թերթին են պատմում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Ըստ նրանց, դեռևս 1918թ. մարտի 20-ին շրջանի թուրք գյուղացիները զինված հավաքվում

են հաչմասուգ կայարանում, միևնույն ժամանակ կայարանի թուրք կոմիսարը զգուշացնում է գյուղի հայ բնակչությանը, որ գյուղից չփախչեն և չգնան մոտակա մուսական գյուղը, որովհետև գյուղը շրջապատված է: Դրանից հետո գյուղ է գալիս շխարեցի Հասան բեկը, որը երաշխավորում է, որ հայերին ձեռք չեն տա և գյուղի թուրքերից պահակներ է նշանակում: Մակայն շուտով պահակները թողնում և հեռանում են ու գյուղ են ներխուժում զինյալ թուրքերի բազմաթիվ խմբեր դուբաեցի Իդայաթ Հաջի Շուքուր օղլու, շխարեցի Մահմեդ Մուլթանբեկի, Իբրահիմ Խայիլի և տաճկական մի սպայի զխավորությամբ: Մրանք սկսում են հայերին զինաթափել՝ պատճառաբանելով, որ Բաքվում կռիվ է և իրենց զենք է պետք, միևնույն ժամանակ թալանում են եկեղեցին՝ պահակ թողնելով դմիլցիներին: Երեկոյան Շիխարսկի Մուրսալ բեկի հանձնարարությամբ գյուղ է գալիս նարաջանցի Նուսրաթը՝ հայտնելով, որ հայերին ձեռք չեն տա:

Նուսրաթի հետ գյուղից հեռանում են մոտ մեկ տասնյակ հայեր, այդ թվում՝ կոմիսար Արտեմ Յադուբյանը, քահանան, որոնք սակայն ճանապարհին սպանվում են:

Հաջորդ օրը գյուղ են մանում շխարեցի Իբրահիմ բեկի՝ Դերբենտից բերված զինված չեչենների և թուրքերի երկու էշերներ, որոնք սկսում են հաչմասի հայերի կոտորածը:

Գավառական կոմիսար Ալիբեկ Ջիզիսկու հրամանով հայերին քաքցնող մուսական գյուղերը նույնպես պետք է ոչնչացվեն: Չնայած հետապնդումներին հրաշքով փրկված այս երեք հոգին 14 օր ապաստանում են Սիխայովկա (Նիզավո) գյուղում: Սիայն ապրիլի 3-ին այստեղ է հասնում Բաքվից (այդ ժամանակ Բաքվում խորհրդային իշխանություն էր՝ Ա.Հ.) ուղարկված նավը, որի օգնությամբ փրկվում են Սիխայովկայի բնակիչներին ու այս երեք խաչմասցիները:

Դրանից հետո թուրքերը սկսում են Ելենովկա, Ալեքսանդրովկա, Ալեքսևկա և այլ մուսական գյուղերի ավերն ու ջարդերը:

Հրաշքով փրկված խաչմասցիների վկայությամբ այս ջարդերի ամմիջական կազմակերպիչներն էին նաև ավիանցի Բալարեզ բեկը, նախկին պրիստավ Ջանգիևը, դոնադքենդցի Մայիլ Յուզբաշին, լաջաթցի Մուսաբեկը և ուրիշներ, որոնք դեկավարում էին «թուրք անգիտակից մասսային»:

Այսպիսով, 20-րդ դ. սկզբի Արևելյան Այսրկովկասում հակահայկական հալածանքներն ու ջարդերը ծանր հետևանքներ ունեցան թաթախոս հայերի վերջին բեկորների վրա: Հստակորեն ուրվագծվեցին նոր միտումներ տարածաշրջանում նրանց հետագա գոյության դեմ ուղղված սպառնալիքների առումով: Խմբի՝ բազմեթնիկ և այլադավան միջավայրում գոյևատևան ադապտացիոն մեխանիզմները թեև կարևոր դեր խաղացին նաև այս ծանր ժամանակաշրջանում, սակայն գոյատևան դեմ ուղղված այս սպառնալիքները նոր մարտահրավերների ստղև կանգնեցրին նրանց:

ARSEN HAKOBIAN
(“Noravank” SEF)

**SOME ASPECTS OF THE HISTORY OF THE TAT-SPEAKING
ARMENIANS IN THE CONTEXT OF THE INTERETHNIC
RELATIONSHIP IN THE BEGINNING OF THE 20th CENTURY**

In the beginning of the 20th century in the Eastern Transcaucasus there still existed the villages of Tat-speaking Armenians named Madrasa, Qilvar, and Khachmas. As a result of tension of the interethnic relationships in the region in the beginning of the 20th century the last stream of the Tat-speaking Armenians were chased and slaughtered. The population of Khachmas was slaughtered; Madrasa also became a victim of massacre. And Qilvar had to straggle against these threats all alone.

New anxieties were clearly outlined connected with the future threats of the future existence of the community in the region.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարապետյան Ս., Սաարասա գյուղը և նրա հուշարձանները, ՊԲՀ, թիվ 2, 1989, էջ 225-233: Նույնի, Բուն Աղվանքի հայկական վիմագրերը, Երևան, 1997:
2. «Մշակ», 1905, թիվ 189:
3. Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 226- 227:
4. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի մահանգներում 1918-1920թթ., կազմեցին Ս. Միրզոյանը, Ալ. Ղազիյանը, Երևան, 2003, էջ 438.
5. ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, ց. 16, գ. 136, ք. 162-164:
6. Նույն տեղում, ֆ. 57, ց. 3., գ. 512, ք. 3:
7. Յակոբյան Ա., Հայ-թաթերի տարարաշխվածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից (ԺԸ դդ. սկիզբ - ԺԹ դարի վերջ), Հայկազեան հայագիտական հանդես, 2001, հտ. 21, էջ 134-135:
8. Миллер Б., Таты, их расселения и говоры, Известия общества обследования и изучения Азербайджана, No. 8, в. VII, Баку, 1929, с. 13.
9. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի մահանգներում 1918-1920թթ., կազմեցին Ս. Միրզոյանը, Ալ. Ղազիյանը, էջ 33-34:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ

(ԱԻ)

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹՈՒՐՔԵՍՏԱՆԸ» ԵՎ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ

«Արևելյան Թուրքեստանի» պատմաաշխարհագրական տարածքում գտնվող Մինցզյան-Ույդուրական Ինքնավար մարզը Չինաստանի էթնիկ փոքրամասնություններին պատկանող ամենանոսր բնակեցված վարչատարածքային միավորն է, որի բազմազգ բնակչության 47%-ը կազմում են թրքալեզու ույդուրները, 37%-ը՝ հան չինացիները, մնացածը՝ տարբեր ազգությունների պատկանող մեծամասամբ իսլամադավան ժողովուրդներ են¹:

Պատմականորեն «Արևելյան Թուրքեստանը» Չինական կայսրության կազմի մեջ է մտել 1769թ.՝ Մանջուրական թագավորական տան նվաճումների արդյունքում, սակայն Չինաստանի հետ տարածաշրջանային ինտեգրման գործընթացները մինչև 1949թ. մշտապես հանդիպում էին կրոնական, ռասայական, էթնիկական, տնտեսական և քաղաքական դժվարությունների:

19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանի կողմից Կենտրոնական Ասիայի նվաճման հանգամանքը նպաստեց ոչ միայն տարածաշրջանային առևտրի զարգացմանը, այլև մշակութային ու կրոնական ընդհանրությունների հիման վրա ազգայնական գաղափարների ներթափանցմանը Աինցզյան: Իսկ 20-րդ դարի սկզբներին, մասնավորապես օսմանյան կայսրության փլուզումից հետո, մահանգի մուսուլմանների շրջանում տարածված պանթուրքական, պանիսլամական գաղափարներն ու օսմանամետ զգացմունքները² նպաստեցին կրոնական ծայրահեղականության և ազգայնական գաղափարախոսության հիման վրա «Արևելյան Թուրքեստան» աշխարհագրական տերմինի քաղաքականացմանը, որի արդյունքում ստեղծվեց «Արևելյան Թուրքեստանի» անկախ պետության «գաղափարական ու տեսական հայեցակարգը»:

Հանրապետական շրջանում Մինցզյանում, մինչև ՉԺՀ-ի կազմավորումը, խորհրդային ազդեցության տարածման հանգամանքը անխուսափելի դարձրեց չին-խորհրդային բախումը, որը պայմանավորված էր տարածաշրջանի նկատմամբ Չինաստանի պահանջատիրությամբ և Ռուսաստանի կողմից իր հարավ-արևելյան սահմանների անվտանգության պահպանման մտահոգությամբ: Երկու տերություններն էլ, գիտակցելով

տարածաշրջանի բնական հարուստ պաշարների նշանակությունը և ռազմավարական դիրքի կարևորությունը (Մինցզյանը նաև հին Մետաքսե ճանապարհի կարևոր հատվածն է), փորձում էին միմյանց դեմ պայքարի նպատակով Մինցզյանը վերածել բուֆերսլիմ գոտու³: Արդյունքում, «Արևելյան Թուրքեստանի» մուսուլման անջատողականներին հաջողվեց արտաքին ուժերի աջակցությամբ նահանգը երկու անգամ (1933-1937թթ., 1944-1949թթ.) դուրս բերել Չինաստանի ենթակայությունից⁴: Այնուհանդերձ, 1949թ. չինական լիակատար իշխանության տակ անցած նահանգը 1955թ. հոկտեմբերին հռչակվեց որպես Մինցզյան-Ույղուրական Ինքնավար Մարզ: 1970-ականներին «Արևելյան Թուրքեստանի» անկախության խնդիրը կրկին վերակենդանացավ Մաո Յզեդունի մահվան, Չինաստանում արմատական ղեկավարության անկման ու համընդհանուր բարեփոխումների իրականացման տարիներին, քանի որ տնտեսական բարեփոխումներն ու բաց դռների քաղաքականությունն ակամայից հող նախապատրաստեցին «Արևելյան Թուրքեստանի Անկախության Շարժման» («ԱԹՄՇ») դրսից արհեստականորեն վերակենդանացման համար:

Հարկ ենք համարում նշել, որ ույղուրների անկախական ձգտումների թուլացման ու Աինցզյանի հիմնախնդիրների լուծման ելքը Պեկինը հիմնականում տեսնում էր ոչ թե շարժման ճնշման, այլ տնտեսական բարեփոխումների իրականացման միջոցով՝ 1985թ.-ից որդեգրելով մարզի կառավարման «մեղմ» և «ծանր» ռազմավարություն⁵:

Այնուհանդերձ, 1990-ականներին (Արևելյան Եվրոպայում սոցիալիզմի փլուզումից ու ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո) ույղուր անջատողականների պայքարն ընդունեց զինված ահաբեկչության տեսք: 1990-ականների կեսերին «ջիհադի» անվան տակ սկիզբ առած և Մինցզյանով մեկ տարածված «Արևելյան Թուրքեստանի Հանրապետության» վերականգնման և տարածաշրջանից «անհավատների» վտարմանն ուղղված ընդվզումների ժամանակ ույղուր արմատականների ահաբեկչական գործողությունների թիրախ դարձան հան չինացիներն ու իրավապահ մարմինները:

Թերևս վերոհիշյալ զարգացումներով է բացատրվում նախորդ երկու տասնամյակների ընթացքում «ԱԹՄՇ»-ի հիմնախնդրով Պեկինի խիստ մտահոգվելու փաստը: Վերջինս այն համարում է ինչպես իր ներքին, այնպես էլ տարածաշրջանային անվտանգությանն ուղղված «զլխավոր վտանգ» և Չինաստանի տարածքային ամբողջականությանն ուղղված պոտենցիալ սպառնալիք՝ միաժամանակ կապելով դրանք արտաքին ուժերի միջամտության հետ⁶:

Այս առումով, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում Չինաստանի ռազմավարական դիրքերին մեծ վտանգ էր ներկայացնում տարածաշրջանում զլխավոր դերակատարության հավակնող և ույղուր

ազգայնականության գլխավոր հովանավոր հանդիսացող Թուրքիան, որը ոչ միայն բարոյահոգեբանական ու կրոնական, այլև ֆինանսական ու ռազմական աջակցություն էր ցուցաբերում նրանց⁷:

Չինաստանի անվտանգությանը սպառնալիք են ներկայացնում նաև իսլամական արմատականության ու ահաբեկչական պայքարի օջախներ ունեցող երկրներ Ռուսաստանը, Կենտրոնական Ասիայի պետությունները, Պակիստանն ու Աֆղանստանը: Ուստի պատահական չէ, որ Չինաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղըզստանի, Ուզբեկստանի միջև անվտանգության ու տնտեսական կապերի սերտացման նպատակով 1996թ. հիմնադրված «Շանհայի Համագործակցության Կազմակերպության» առաջնահերթությունների շարքում կարևորագույն տեղ զբաղեցրեց տարածաշրջանային ու գլոբալ ահաբեկչության, կրոնական ծայրահեղականության ու անջատողականության դեմ համատեղ պայքարի խնդիրը⁸: 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո Չինաստանը կոչ արեց գլոբալ ահաբեկչությանը մարտահրավեր նետած ԱՄՆ-ի ու միջազգային հանրության պայքարն ուղղել նաև ույդուր արմատականների դեմ: Սակայն վերջիններս ոչ միայն չընդառաջեցին Չինաստանի կոչին, այլև առավել կարևոր խնդրո առարկա դարձրին ույդուրների ինքնավարության, նրանց քաղաքացիական իրավունքների, կրոնական ազատությունների և մի շարք այլ հիմնահարցեր՝ դրանց տալով միջազգային հնչեղություն: Մինչդեռ՝ ՉԺՀ-ը մեղադրվեց միջազգային ահաբեկչության դեմ պայքարն ույդուր մուսուլմանների անկախական ձգտումների ճնշման նպատակով օգտագործելու մտադրության մեջ:

Հարկ ենք համարում նշել, որ Պեկինը դատապարտում է ահաբեկչության բոլոր դրսևորումները՝ չընդունելով դրանց գնահատման երկակի ստանդարտները, թիրախ դարձնելով ահաբեկչության թե՛ հետևանքները, և թե՛ պատճառները, միջազգային ահաբեկչության տարածման դեմ պայքարում որդեգրելով արդարացի, բանական և անկողմնակալ դիրքորոշում, իսկ երկրագնդի համընդհանուր անվտանգության ու բարեկեցության ապահովման լիակատար պատասխանատվությունը վստահելով ՄԱԿ-ին⁹:

AGHAVNI HARUTYUNYAN
(IOS)

“EASTERN TURKISTAN” AND UYGHUR PROBLEM

In the early 20th century and later, a small number of Uyghur separatists and religious extremists in Xinjiang Uyghur Autonomous Region Xinjiang, also called Xinjiang for short, influenced by the international trend of religious extremism and nationalism, politicized the geographical term “Eastern Turkistan”, and fabricated an “ideological and theoretical system” on the “independence of Eastern Turkistan” claiming that “Eastern Turkistan” had been an independent state. Alive since the 1930s, and especially following the Chinese Communist takeover of Xinjiang in 1949, the quest of Eastern Turkistan independence (‘separatism’ or ‘splittism’ in Beijing terminology) has intensified after death of Mao Zedong and the launch of China’s Open Door policy and reform drive.

Over the past two decades Beijing has become greatly concerned about the “Eastern Turkistan Independence Movement” regarded as a ‘main danger’ to domestic as well as regional stability and a potential ‘threat’ to China’s territorial integrity. After September 11, 2001 China has stepped up its efforts to link its campaign against the Islamic separatists in its north-western region of Xinjiang to the international fight against terrorism, following the Chinese Government’s call for international support against the domestic terrorism.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. History and Development of Xinjiang, Information Office of the State Council of the People’s Republic of China, Beijing, May, 2003: 1.
2. Yitzhak Shichor, China and the Eastern Turkestan Independence movement, The Hebrew University of Jerusalem, 2. Պիկիճի կարծիքով, բոլոր քրքախոսների համար ընդհանուր գաղափարական և ազգայնական հիմք համարվող պանթուրքիզմը, որն արտաքին հովանավորությամբ տարածվող ռեակցիոն, շովինիստական, ռասիստական և ազգայնական գաղափարախոսություն է, և գաղափարական ու մարտական դոկտրինա համարվող պանիսլամիզմը, միասնաբար նպաստում են «անհավատների» հանդեպ կրոնական անհանդուրժողականության սնուցմանն ու տարածմանը: Դրանք «Արևելյան Թուրքեսաանի» անկախական գաղափարների, ազգային անջատողականության և արմատականության սնողներն են:
3. Кальвокоресси П., Мировая политика после 1945 года, Книга 1, Москва, “Международные отношения”, 2000, с. 150.
4. Dickens M., The Soviets in Zinjiang (1911-1949), 1990: 22. Ինտերնետային հասցե՝ Website of Oxus Communication, (<http://www.oxuscom.com/sovinxj.htm>), (<http://directory.google.ru/alpha/Top/Regional/Asia/China/Xinjiang/>)-Google, 2004.

5. Rudelson J., Cross-Border and Transnational Influences on Xinjiang Uyghur Nationalism, *Caucasus and Central Asia Newsletter*, The Caucasus and Central Asia Program at the University of California, Berkeley, Issue 5, Winter 2004, p. 3. «Մեղմ» քաղականությունը՝ Սինցզյանը Չինաստանի տնտեսությանն ինտեգրելու միջոցով ուղղորդելու հաշտեցնելու ռազմավարությունն էր՝ մարզի կայունության պահպանման, տարածաշրջանային (Կենտրոնական ու Հարավային Ասիայի, Աֆղանստանի) հակամարտություններից զերծ պահելու և Կենտրոնական Ասիայի տնտեսության շահագործման միջոցով: Պոտենցիալ ապստամբությունների կանխման, մարզն ամբողջապես Չինաստանին ինտեգրելու և Կենտրոնական Ասիայի հետ կապելու նպատակով Չինաստանը «Մեծ Հյուսիս-արմուտք գարգացում» անվամբ բարենորոգումների ու աշխարհաքաղաքական ռազմավարական ծրագիր մշակեց:
6. Lidster S., China's war on terror, UK-BBC Monitoring, 10 September, 2002. Ինտերնետային հասցեն՝ http://news.bbc.co.uk/1/hi/not_in_website/syndication/monitoring/media_reports/2241025.stm. Չինաստանի մեծագույն մտավախությունը Աֆղանստանի, Պակիստանի և Կենտրոնական Ասիայի իսլամական արմատականների կողմից Սինցզյանում ապստամբության հրահրման միջոցով հակամարտության մեջ Հնդկաստանին, Կենտրոնական Ասիայի երկրներին և Ռուսաստանին ներքաշելու մեջ է: Գուցե առավել իրատեսական մտահոգություն է Սինցզյանի անկայունությամբ Տիբեթի, Հոնգ Կոնգի և Թայվանի ապակայունացման հնարավորությունը, մի բան, որից Չինաստանը գերադասում է խուսափել ամեն գնով: Սա առավել հասկանալի է դառնում ԱՄՆ-ի կողմից դեպի Հարավ-Արևելյան Ասիա տարածվող ահաբեկչական ռազմարշավի և Վաշինգտոնի կողմից Թայվանին շարունակաբար աջակցության պայմաններում տարածաշրջանում ԱՄՆ-ի աճող ռազմական ներկայության լույսի ներքո:
7. Ուղղորդների և Սինցզյանի թուրք այլ էթնիկ խմբերի հետ պատմա-մշակութային ու քաղաքական միասնությունից ելնելով, Թուրքիան ոչ միայն հնարավորություն տվեց ուղղորդ վտարանդիներին ու փախստականներին բնակվել իր երկրում, այլև ստարեց ուղղորդական, այսպես կոչված, ազգային ազատագրական շարժման՝ «ԱԹԱԸ»-ի շտաբակայանի հիմնադրման և թուրքական բանակի ուսումնավարական ծրագրերում ուղղորդների ընդգրկման գործին: Ստամբուլում 1976 թ. հիմնադրված «Արևելյան Թուրքեստանի Հիմնադրամի» աջակցությամբ «ԱԹԱԸ»-ը 1987 թ. պաշտոնապես դարձավ «Ոչ Կառավարական Կազմակերպություն»: Այնուհանդերձ, 20-րդ դարի ավարտին Պեկինը վտրձում էր իր հարաբերությունները քարելավել Թուրքիայի հետ՝ ոչ միայն երկկողմանի հիմնախնդիրների կարգավորման, այլև Թուրքիայում ուղղորդների հակաչինական գործունեությանը վերջ դնելու նպատակով:
8. «Շանհայի Համագործակցության Կազմակերպության» գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում սահմանային սահաբեկչության, ծայրահեղականության, հայրենադարձման, սեփական տարածքը միմյանց դեմ չօգտագործման խնդիրները, որոնց իրականացման շնորհիվ Պեկինին հաջողվեց սահմանափակել հարևան թյուրքական երկրներից ուղղորդական շարժմանը ցուցաբերվող աջակցությունը:
9. Guangkal Xiong, An Overview of International Strategic Situation, Chinese Institute of International Studies, Volume 3, May 2004, p. 8.

ՂԱՐԻՔՉԱՆՑԱՆ ԳԵՎՈՐԳ

(ԱԻ)

1980-ԱԿԱՆ ԹԹ. ՄԿՁԲՆԵՐԻՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇ ՁԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

1982թ. մուսուլման-եղբայրների ելույթները (որոնք ուղղակիորեն սպառնում էին Սիրիայում վարչակարգի գոյությանը և ուղղիչ շարժմանը), ճնշելուց հետո իրադրությունը երկրում թեև որոշակիորեն կայունացավ, սակայն մնում էր լարված հիմնականում սոցիալ-տնտեսական դժվարությունների և իշխանական վերնախավում ի հայտ եկած որոշ տարածայնությունների հետևանքով:

1980-ականների սկզբից Սիրիայում փաստորեն տնտեսական ճգնաժամ էր տիրում: 1970-ական թթ.-ին ուղղիչ շարժման հայեցակարգի ներքո տեղի ունեցած սոցիալ-տնտեսական բարեփոխումները կանգ առան, և սկսվեց լճացման ժամանակաշրջան (ֆաթաթ առ-ռուքուդ ալ-իկթիսադիյ):

Սիրիայի տնտեսությունը հնգամյա պլանային էր, որը նմանակվել էր Խորհրդային Միությունից և որի հիմքը դրվել էր դեռևս 1960-ականներից, սակայն հնգամյա պլանները հիմնականում ձևական բնույթ էին կրում և ամբողջովին չէին իրագործվում: Դրանց մեջ ամենաարդյունավետը 1971-1975 թթ. պլանն էր, երբ 1970թ. մոյսեբերի 16-ին Հաֆեզ ալ-Ասադի կողմից սկզբնավորված ուղղիչ շարժման հայեցակարգի ներքո երկրում իրականացվեցին արմատական բարեփոխումներ, և Սիրիան դուրս եկավ խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամից: Այն առանձնանում էր նախանշած բարեփոխումների ուղղվածությամբ, մասնավորապես՝ տնտեսության ազատականացմամբ և մասնավոր հատվածի զարգացմամբ:

1980-ական թթ. սկզբից Սիրիայի տնտեսությունը բախվեց մի քանի գլխավոր խնդիրների հետ: Սոցիալ-տնտեսական դժվարությունների հիմնական պատճառներից էին 1980-ական թթ. սկզբներից նավթի գնի կտրուկ նվազումը միջազգային շուկայում և բնականաբար նավթարդյունահանող հարուստ արաբական երկրների կողմից Սիրիային հատկացվող օգնության զգալի նվազումը: Սիրիային հատկացվող ֆինանսական օգնությունը կրճատվեց մաև այն պատճառով, որ 1980թ. սկսված իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում Իրաքի պահանջով և Իրանից բխող վտանգի

առկայության պայմաններում Ծոցի երկրները հսկայական ֆինանսական միջոցներ էին տրամադրում Իրաքին¹:

Արտաքին օգնությունը կարևորագույն դեր էր խաղում տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման գործում: Եթե 1980-81թթ. Սիրիային հատկացվող ամբողջ անհատույց ֆինանսական օգնությունը կազմում էր 1.8 մլրդ դոլար, ապա 1985թ., աստիճանաբար նվազելով, այն ադյեն կազմում էր 780 մլն. դոլար (ներառյալ իրանական անվճար նավթի առաքումները)²: Նշված ժամանակաընթացքում ընկան նաև բամբակի համաշխարհային գները, որը Սիրիայի ամբողջ արտահանման ծավալի մեջ մեծ տոկոս էր կազմում:

Սիրիայում կարևորագույն տնտեսական գործոն էր նաև արտասահմանում, մասնավորապես նավթարդյունահանող արաբական երկրներում աշխատող սիրիացիների ամենամյա դրամական փոխանցումները հայրենիք, որոնք նույնպես զգալիորեն նվազեցին 1980-ական թթ. սկզբներին՝ կապված այդ երկրներում գործարար ակտիվության անկման և Հարավ-Արևելյան Ասիայից ելած աշխատուժի և սիրիացիների միջև առկա մրցակցության պատճառով: Այդ փոխանցումները 0.5 մլրդ. դոլարից իջան 0.3 մլրդ. դոլարի³: Արդյունքում՝ 1980-ականների կեսերին Սիրիան չստացավ ընդհանուր առմամբ սպասվելիք մոտ 5 մլրդ. դոլարի չափով օգնություն, որի միջոցով ծածկում էր ոչ միայն բյուջեի դեֆիցիտը, այլև մարում էր արտաքին պարտքերը⁴:

Մյուս խնդիրը գոյություն ունեցող մի շարք ներքին և արտաքին քաղաքական պատճառներով բանակի, անվտանգության ծառայությունների և սպառազինությունների վրա ուղղվող հսկայական ծախսերն էին: Եթե 1970թ. սիրիական բանակի թվաքանակը կազմում էր 80 հազ., ապա 1984թ. սիրիական բանակը կազմում էր 362 հազ., այսինքն, երկրի ամբողջ բնակչության մոտ 3.5 տոկոսը⁵: 1985թ. այն հասավ արդեն 400-404 հազարի⁶: Ակնհայտ է, որ մոտ 11 մլն. բնակչություն ունեցող երկրի համար 400 հազարանոց զինված ուժեր պահելը չափազանց դժվար է և անխուսափելիորեն պետք է դժվարություններ ստեղծեր երկրի տնտեսության համար: Լիբանանում սիրիական զորքերի ներկայությունը և ռազմական ծախսերը օրական կազմում էին 250 հազար ԱՄՆ դոլար⁷: 1982թ. արդեն ռազմական ծախսերը կազմում էին Սիրիայի բյուջեի 29.1%-ը⁸:

Ներքաղաքական ոլորտում Սիրիայում գլխավոր զարգացումներից մեկն այն էր, որ 1980-ական թթ. սկզբից մուսուլման-եղբայրների և միավորված իսլամական ընդդիմության՝ իսլամական ճակատի կողմից Սիրիայի քաղաքական համակարգի դեմ կազմակերպված ընդդիմության փոխարեն Սիրիայում ի հայտ եկավ միջանձնային մրցակցություն և միանձնյա ընդդիմություն՝ ի դեմս նախագահ Հաֆեզ ալ-Ասադի կրտսեր եղբայր Ռիֆաաթ ալ-Ասադի, որը Բասսի մարզային ղեկավարության անդամ էր և *սառայա ադ-ռիֆա'յի* (պաշտպանական ջոկատներ) էլիտար. գորամիավորումների

հրամանատարը ու զգալի դեր էր կատարել 1982թ. Հոմսում և Համայում մուսուլման-եղբայրների հակապետական ելույթները ճնշելու գործում:

1984թ. մարտի 11-ին Միրիայում ձևավորվեց փոխնախագահների ինստիտուտ, սահմանվեց երեք փոխնախագահի պաշտոն, որոնք զբաղեցրեցին նախկին արտգործնախարար և փոխվարչապետ Աբդ ալ-Հալիմ Խադդամը՝ առաջին փոխնախագահ, Բասսի մարգարին ղեկավարության անվանի գործիչ Ջուհեյր Մաշարկան, ինչպես նաև Ռ. Ասադը՝ նախագահի եղբայրը: Վերջինս որոշ ժամանակ անց գրկվեց իր բոլոր իրավասություններից և աքսորվեց երկրից Ասադին մարտահրավեր նետելու և իշխանությունը Միրիայում զավթելու փորձի պատճառով:

1980-ական թթ. սկզբներին փոխզիջումների նպատկով գնալով Եգիպտոս էր ալլախներին՝ ներկայացվածությունը Բասսա կուսակցության բարձրագույն օղակներում, որն իհարկե ձևական բնույթ էր կրում: Մա հին մշակված մարտավարություն էր Ասադի կողմից և նպատակ ուներ մեղմել իշխանական մարմիններում երկրի կրոնա-համայնքային ներկայացվածության անհավասարակշռությունը և խուսափել վարչակարգի նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններից և բողոքի ելույթներից Միրիայում մեծամասնություն կազմող սուննի ազգաբնակչության կողմից:

1980-ականների սկզբին Միրիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցած ընդհանուր առմամբ զլխավոր զարգացումն այն էր, որ բասսական գաղափարախոսությունն ու կուսակցության հիմնարար սկզբունքներն սկսեցին հետզհետե փոխարինվել նախագահ Հաֆեզ ալ-Ասադի անձի պաշտամունքով, որը ձեռք բերեց առաջնային նշանակություն վարչակարգի պահպանման համար: Երկրում կայունության հիմքում ընկած էր Ասադի անձը, թեև մուսուլման-եղբայրներին ճնշելուց հետո էլ ավելի ակտիվ սկսվեց կուսակցության գաղափարախոսական աշխատանքը բնակչության շրջանում: Եթե 1975թ. Միրիայում Բասսի անդամ էր 22.549, 1980թ.՝ 45.010, ապա 1985թ. երկրում կուսակցության անդամների ընդհանուր թիվը կազմում էր արդեն 111.595 քաղաքացի¹⁰:

GEVORG GHARIBJANYAN

(IOS)

ON SOME POLITICAL AND SOCIO-ECONOMIC DEVELOPMENTS IN SYRIA IN THE EARLY 1980's

Since the 1980's, socio-economic reforms in Syria carried out under the doctrine of the Corrective Movement of the 1970's, stopped, and replaced by a period of economic stagnation.

Since the early 1980's, the economy of Syria faced several main challenges. Among the socio-economic difficulties were the sharp decrease in oil prices on the international market in the early 1980's and the resulting reduction of aid provided to Syria by the rich oil-producing Arab countries.

In the early 1980's, the main development in Syria's domestic political life in general was a gradual shift from the ideology and the founding principles of the Ba'ath party to the President Hafez al-Assad's cult personality, which gained a great significance for preserving the regime.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Huda Hawwa, Linkages and Constraints of the Syrian Economy, State and Society in Syria and Lebanon, edited by Youssef M. Choueiri, University of Exeter Press, 1993, p. 91.
2. БПИ ТАСС, 17.03.1987, № 53, с. 31.
3. Նույն տեղում:
4. Сирия, справочник, Москва, 1992, с. 308.
5. Zeev Ma'oz, The evolution of Syrian Power, 1948-1984, Syria under Assad, Domestic Constraints and Regional Risks, edited by Moshe Ma'oz and Avner Yaniv, London and Sidney, 1987, p. 72.
6. Zeev Ma'oz, նույն տեղում, Ахмедов В.М., Армия и политика в современной Сирии, с. 160.
7. Сирия, справочник, с. 226.
8. Kais Firro, The Syrian Economy under the Assad Regime, edited by Moshe Ma'oz and Avner Yaniv, London and Sidney, 1987, p. 63.
9. Ալավիներն իրենցից ներկայացնում են մեծամասամբ Սիրիայի հյուսիս-արևմտյան և Սիջերկականի ավիամերձ շրջաններում ապրող ցեղերի ամբողջություն, որոնց հավատքի հիմքում ընկած է իսլամը, որն իրենից ներկայացնում է ինքնուրույն շիական աղանդ: Նախագահ Չաֆեզ ալ-Ասադը ալավիական համայնքի ներկայացուցիչ էր:
10. الحركة التصحيحية المعجزة في الذكرى الخامسة والعشرين، دمشق، ١٩٩٥، ص. ١١١.

ՄԱԻԼՅԱՆ ԲԵՆԻԱՍԻՆ (ԱԻ).

ՀԱՄԵՆԱՀԱՅԵՐԻ ԶՈՐԱՄԱՍԸ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ (1919-1920թթ.)

Վրաստանի անկախության հռչակումից ի վեր՝ 1918թ. մայիս-հունիսին նրա բանակը հաղթանակ տարավ Աբխազիայում բուլղարների զինված ուժերի դեմ պայքարում: Հեաապնդելով «կարմիրների» ջոկատներին վրացական զորքերը 1918թ. հուլիսին մուտք գործեցին հարևան Սոչիի շրջան: Թեպետ, սկզբնապես, Վրաստանի կառավարությունը այդ քայլը բացատրում էր ռազմական անհրաժեշտությամբ, սակայն հետագայում մտադրություն էր առաջացել շրջանի պետական պատկանելիության հարցը լուծել Փարիզի խաղաղարար վեհաժողովում: Վրաստանի կառավարության ռոնձգությունները բախման բերեցին Ռուսաստանի հարավում հզորացած «Սպիտակ շարժման» հետ: Նրա առաջնորդները, բացի հակաբուլղարյան պայքարի, նաև մարտնչում էին հանուն «միացյալ և անբաժանելի» Ռուսաստանի և որևէ կերպ չէին կարող համաձայնվել Սոչիի շրջանի կարգավիճակի շուրջ առաջացած հարցի միջազգայնացմանը: Բացի այդ, նրանք համոզված էին, որ Վրաստանի համար Սոչիի շրջանը ուներ հսկայական նշանակություն որպես գոտի, որն առանձնացնում էր Աբխազիան Ռուսաստանից: Վրաստանի կառավարությունը մտավախություն ուներ, որ այդպիսի անմիջական հարևանությունը կբերի Աբխազիայի տարանջատմանը Վրաստանից, քանի որ այդ պահին առաջինի կարգավիճակը վերջնականապես չէր պարզվել: 1918թ. սեպտեմբերին Եկատերինոպոլսում (այժմ՝ Կրասնոդար) տեղի ունեցան բանակցություններ «սպիտակ» հրամանատարության և Վրաստանի կառավարության ներկայացուցիչների միջև: Առաջինները՝ պահանջում էին իրենց վերահսկողությանը հանձնել Սոչին և Գագրան: Բանակցություններն ավարտվեցին անարդյունք²: 1919թ. փետրվարին «սպիտակ» Կամավորական բանակը դուրս քշեց Սոչիից վրացական զորքերը, որից հետո նվաճեց Գագրայի գավառը: Առաջացավ Սոչիի ռազմաճակատը: Վրաց զինվորականները տարածում էին ասեկոսներ, թե Կամավորական բանակի հաջողության պատճառը տեղի հայերն էին³: Բանը նրանում էր, որ այդ բանակի առաջխաղացումը համընկել էր անկարգություններ անող վրաց զինվորականների դեմ համշենահայ բնակչության մասնակի զինված ելույթի հետ⁴: Վրաց զինվորականները կասկածում էին տեղի համշենահայերին Կամավորականներին աջակցության գործում և վրեժ էին լուծում նրանց նկատմամբ⁵: Նույնիսկ ՀՀ ԱԳՆ-ում տեղյակ

էին, որ հայ-վրացական հարաբերությունները այս շրջանում դարձել էին սոսկալի թշնամական⁶: Գագրայի գավառի հայ բնակչությունը «սպիտակների» և վրացական զորքերի բախումների ժամանակ ենթարկվել էր սնանկացման⁷:

«Սպիտակ» հրամանատարության կարգադրությամբ իր տիրապետության ներքո հայտնված Մոչիի և Գագրայի տարածքում հայտարարվել էր զորահավաք: Տեղի ուս գյուղացիները, չցանկանալով ներքաշված լինել Քաղաքացիական պատերազմի մեջ, իրենց հավաքում ընդունել էին բանաձև, որը մերժում էր հրամանը⁸: Միայն հայերը, որոնք ողջունում էին «սպիտակների» տիրապետությունը, որպես ազատություն վրացական լծից, համերաշխ չեղան ուս գյուղացիների հետ⁹: Արդյունքում Կամավորական բանակի կազմում գոյացել էր հայկական զորամաս¹⁰: Այն կազմում էր Կամավորական բանակի 52-րդ առանձին հետևակային բրիգադի մաս¹¹: Հայկական զորամասը գործել էր վրաց զորքերի դեմ Մոչիի ռազմաճակատում¹²: Խուսափելով ավելորդ մեղադրանքներից վրաց իշխանությունների կողմից Սուխումի շրջանի Հայոց խորհուրդը հայտարարում էր նրա ռազմիկներին եկվորներ: Իրականում զորամասի գումարտակներից մեկի երկու վաշտը, կապիտան Չմշկյանի հրամանատարությամբ, համալրված էր ոչ տեղացի հայերից: Հավանաբար նրանցից էր նշանակվել զորամասի հրամանատարական կազմը, որի թվում էին նաև ուս սպաներ¹³: 1919թ. նոյեմբերին Սուխումի Հայոց խորհուրդը դիմել էր Թիֆլիսում ՀՀ դեսպանորդ Եվանգուլովին խնդրանքով՝ ջանք գործադրել հայկական զորամասը ռազմաճակատից հեռացնելու ուղղությամբ, քանի որ նրա մասնակցելը Կամավորականների և վրաց բանակի միջև բախումներում նյութ էր տալիս Աբխազիայի հայերի դեմ սադրանքներ կազմակերպելու համար: Որպես հետևանք սրվում էին հարաբերությունները վրաց իշխանությունների հետ, ինչը լուրջ վատացնում էր Սուխումի շրջանում հայերի վիճակը: Խորհրդի կարծիքով զորամասը հայերի որևէ շահին չէր ծառայում և նրա հեռանալուց հետո շրջանի հայության դրությունը կբարելավվեր¹⁴: 1919թ. ապրիլին, չկարողանալով հնազանդեցնել Մոչիի շրջանի ուս և մեզրել գյուղացիներին Կամավորական բանակի հրամանատարությունը, օգտագործելով նույն շրջանի Հայոց խորհրդի համբավը և նրա միջնորդությամբ՝ համոզել էր գյուղացիներին զենքը ցած դնել, սակայն հետագայում ելույթի մասնակիցների նկատմամբ դաժան պատժամիջոցներ էին կիրառվել¹⁵: Հայկական զնդի զինվորները մասնակցություն էին ունեցել զանազան պատժիչ խմբերի մեջ: Ապստամբած գյուղացիների դեմ գործում էր առանձին հայկական գումարտակ՝ սպա Չմշկյանի գլխավորությամբ: Այդ գումարտակը միշտ ուղարկվում էր առաջավոր ու վտանգավոր դիրքեր և այդ պատճառով զգալի զոհեր էր ավել: Գումարտակի գործունեությունը զայրույթ

էր առաջացրել տեղի ռուս բնակչության մեջ, ինչը նրանք, մասամբ, նաև արտահայտում էին հարևան հայերի նկատմամբ¹⁶:

1919թ. նոյեմբերին Վրաստանում ՀՀ ներկայացուցչության ռազմական կցորդը հաղորդում էր իր կառավարությանը, որ Ա. Դենիկինը տվել էր համաձայնություն «սպիտակ» բանակում ծառայող մի քանի հազար հայերի տեղափոխությանը Հայաստանի հանրապետություն: Բացի այդ, ինչպես հավաստիացնում էր Եկատերինոդարում գտնվող Հարավային Ռուսաստանի «սպիտակ» կառավարությանը կից ՀՀ ներկայացուցիչ Հ. Մաղաթեյանը, Դենիկինը խոստանում էր զենքը թողնել հայ ռազմիկներին և ապահովել զինամթերքով: Իսկ Եվանգուլովը հաղորդում էր, որ Վրաստանի կառավարությունը չի ստեղծի որևէ խոչնդոտ նրանց համար և, որպես «զաղթականների», բաց կթողնի իր տարածքով¹⁷: Սակայն այս ծրագիրը չհաջողվեց իրականացնել, քանի որ 1920թ. հունվար-փետրվարին Ռուսաստանի հարավում «Սպիտակ շարժումը» պարտություն էր կրել Կարմիր բանակի հարվածներից: 1920թ. հունվարին Սոչիի և Սուխումի շրջանների սահմանագծին տեղի ունեցավ ելույթ Կամավորական բանակի դեմ: Ելույթը զլխավորում էր «Սևծովյան ափի ազատագրման կոմիտեն»¹⁸: Այն նախապատրաստվել էր և իրականացվել Վրաստանի կառավարության գործուն աջակցությամբ, որը չէր հրաժարվել այս կամ այն կերպ Սոչիի շրջանը վերահսկելու մտքից: «Կոմիտեն» ձևավորել էին Թիֆլիսում ռուս սոցիալիստ-հեղափոխականները և նրանց ենթարկվող աշխարհագրայինները՝ նրանք կոչվում էին «կանաչներ»՝ կոմունիստ «կարմիրներից» ու միապետական «սպիտակներից» տարբերվելու համար: «Սևծովյան գյուղացիական աշխարհագրորդ» ընդհարումներից հետո գրավեց Սոչին: Շարժման սկզբից Սոչիի հայության ժողովը որոշեց խիստ չեզոքություն պահպանել և դիմել ինքնապաշտպանության, եթե նրա գոյության վտանգ սպառնար¹⁹: Կամավորական բանակի շարքերում ծառայող հայերը մասնակցեցին կռիվներին: Հայտնի է, որ հայկական գումարտակներից մեկը, լինելով Սոչիի կայագոր, մինչև քաղաքի զիջումը մասնակցել էր Մացեստա գետի վրա 1920թ. հունվարի 31-ի մարտին: Մյուս գումարտակը փետրվարի 13-ին՝ Շախե գետի վրա²⁰: Կամավորական բանակի նահանջի ժամանակ բավական թվով հայ սպաներ և զինվորներ մնացին Սոչիում և մեծ մասամբ թեև ձերբակալվեցին, բայց հետեզհետե ազատ արձակվեցին²¹: Հետագա դրության մասին «Կոմիտեի» անդամ Ն. Վ. Վորոնովիչը ասում էր, թե «սպիտակների» պարտվելուց հետո հայերը կտրուկ փոխեցին իրենց քաղաքական ուղղությունը և փորձեցին վերականգնել նախկինում եղած բարիդրացիական հարաբերությունները ռուս գյուղացիների հետ: Սակայն վերջինները չէին ուզում խաղաղվել «սպիտակների» նախկին դաշնակիցների հետ և վերաբերվում էին նրանց բացահայտ թշնամանքով: Լուրեր էին պտտվում հայերի նախապատրաստվող ջարդի մասին²²: Սոչիի Հայոց խորհուրդը

համարում էր, որ խռովարար ռուս գյուղացիների դեմ գործողություններում «մասնակից հայերի Սոչիում մնալը չափազանց անհարմար կողմեր ունի ազգերի հարաբերությունների տեսակետից» և այդ անբարեացական մթնոլորտում «Ազատագրման կոմիտեի» ստջև հանդես եկավ միջնորդությամբ՝ հայ զինվորականներին ՀՀ տեղափոխելու մասին²³: Այսպիսով, Սոչիի և Սուխումի շրջանների սահմանամերձ տարածքում շուրջ մեկ տարի գործող հայկական զորամասի ճակատագիրը աննախանձելի ավարտ ունեցավ: Կամավորական բանակի կործանումից հետո տեղի զինվորները ցրվել էին իրենց տները: Եթե 1920թ. հունվարի կեսին Սուխումի ՀՀ հյուպատոսը հիշատակում էր 1.500 ռազմիկի առկայություն, ապա փետրվարի վերջերին ընթացիկ զրագրության մեջ խոսք էր գնում 80-150 զինվորի մասին, այն էլ որպես կապիտան Չմշկյանի գումարտակի մնացորդներ: Չիմելով տեղաբնիկ՝ նրանք մնացել էին զուրկ որևէ պարենային մատակարարումից: Չիմվորների ճակատագրով խիստ մտահոգված էին Սոչիի Հայոց խորհուրդը, Սուխումի հյուպատոս Վ. Մահակյանը և Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Եվանգուլովը: Նրանց հեռագրերի և դիմումների շնորհիվ²⁴ գործը դրական լուծում ստացավ ՀՀ կառավարության մակարդակով: Հայտնի է, որ 1920թ. մարտին Սոչիից տեղափոխված 200 զինվոր արդեն գտնվում էր Թիֆլիսում²⁵:

BENIAMIN MAILYAN

(IOS)

HAMSHIN ARMENIANS' MILITARY UNIT IN THE VOLUNTARY ARMY ROWS (1919-1920)

After proclamation of independence of Georgia, Sochi district was ruled by Georgian military force. Sochi's status was not finally juridical legalized. The question of border evoked the military conflict between of Georgia and Russian "White" movement from the suffered Hamshin Armenian population of the Sochi district. The violence of Georgian troops had such result as formation Hamshin Armenians' military unit in the "white" Voluntary Army structure.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մախլյան Բ., Արխագիայի կարգավիճակի հարցը վրաց-արխագական հարաբերություններում (1917 թվականից մինչև 1921 թվականի փետրվար), Երիտասարդ արևելագետների հանրապետական XXV գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, Եր., 2004, էջ 33-35:
2. Տե'ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 391-414, док., № 196-197:
3. ՀԱԱ, Արտաքին գործերի նախարարության ֆ. 200, ց. 1, գ. 350, ք. 3:
4. Մախլյան Բ., Զաղարական իրադրությունը և համընդհանրային կացությունը Արխագիայում 1918-1920թթ., ՊԲՀ (ընդունվել է հրատարակման համար):
5. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, ք. 5, ուս:
6. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 15:
7. Տե'ս Գազրայի գավառի 7 գյուղերի համընդհանրային բնակչության մամուլ-րոդըրը (Дзидзария Г.А., Очерки истории Абхазии 1910-1921, Тб. 1963, с. 231-232):
8. Деникин - Юденич - Врангель, Мемуары, Москва-Ленинград, 1931, с. 166:
9. там же, с. 165, 187:
10. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 350, ք. 3:
11. Деникин - Юденич - Врангель, с. 179:
12. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, ք. 3, ուս; նույնը, ց. 1, գ. 551, ք. 4:
13. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 2, 8:
14. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, ք. 1-2:
15. Деникин - Юденич - Врангель, с. 167:
16. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 1 շրջ:
17. ՀԱԱ, ՀՀ Կառավարության քարտուղարության ֆ. 199, ց. 1, գ. 110, ք. 4-5, ուս.:
18. Фавицкий В., Зеленая армия в Черноморье, "Пролетарская революция", Исторический журнал Испарта, № 8-9, 1924, с. 43-65:
19. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 2:
20. Фавицкий В., Зеленая армия... с. 59; Деникин - Юденич - Врангель, с. 182:
21. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 2-2 շրջ:
22. Воронович Н.В., "Зеленые" повстанцы на Черноморском побережье, Деникин - Юденич - Врангель, с. 187:
23. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 2 շրջ:
24. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 5, 7, 9:
25. Տե'ս ՀՀ խնամակալության և վերաշինության նախարարի գեկույցը Վարչապետին, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 13:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳՈՂԱՐ
(ԵՊՀ)

**ԻՐԱՆԻ ԵՎ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՌԵԶԱ ՇԱՀ ՓԱՀԼԱՎԻԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Ռեզա շահի կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղվածությունը 1925-1928 թվականներին գերազանցապես որոշվում էր երկրի ազգային ինքնիշխանությանը սպառնացող այն վտանգի գիտակցումով, որը բխում էր անգլիական իմպերիալիզմից: Իրանի կառավարող շրջանները շատ դեպքերում փորձում էին օգտագործել ԽՍՀՄ-ի բարեկամական աջակցությունը՝ բրիտանական վտանգը վնասագործելու համար: Իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում իրանական կառավարությունը օգտվում էր նաև հարևան Թուրքիայի և Աֆղանստանի հակաիմպերիալիստական ուժերի աջակցությունից:

Ռեզա շահի կառավարությունը, հատկապես 1934-1941 թվականներին (իշխանավարության երրորդ փուլ), արմատական փոփոխությունների ենթարկեց իր հարաբերությունները մեծ տերությունների հետ: Նկատելիորեն սառեցին իրանա-խորհրդային հարաբերությունները: Փոխարենը՝ առավել սերտացան Իրանի տնտեսական և քաղաքական շփումները Արևմուտքի երկրների հետ (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա և այլն):

Միանգամայն նոր որակ ձեռք բերեցին իրանա-գերմանական հարաբերությունները՝ կապված Գերմանիայում ֆաշիստական վարչակազմի հաստատման հետ: Իրանի արտաքին քաղաքականության մեջ սկսեցին կարևոր տեղ զբաղեցնել իրանա-գերմանական հարաբերությունները, ինչը բախտորոշ նշանակություն ունեցավ ինչպես Ռեզա շահի, այնպես էլ նրա կառավարության համար: Իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո (1933թ.), ֆաշիստները նկատելիորեն ակտիվացրեցին իրենց քաղաքականությունը Մերձավոր Արևելքի երկրներում և հատկապես Իրանում: Այստեղի հետադեմ տարրերն էլ իրենց հերթին համակրանքով լցվեցին իշխանության գլուխ անցած ֆաշիստների նկատմամբ և քաջալերեցին նրանց գործունեությունը իրենց երկրում: Հիտլերականները Իրանը դիտում էին որպես սպառման շուկա և հումքի աղբյուր (բամբակ, բուրդ, բրինձ)՝ միաժամանակ փորձելով նրա տնտեսական ինքնուրույնությունը իսպառ վերացնելու միջոցով այդ երկրում ամրապնդել իրենց քաղաքական դիրքերը:

Չբավարարվելով տնտեսական ու քաղաքական էքսպանսիայով՝ ֆաշիստները Իրանում մեծ ջանքեր գործադրեցին նաև հասարակական

կարծիքի գաղափարական ձևավորման համար: Հիտլերյան քարոզիչները ամենուրեք տարածում էին գերմանացիների և պարսիկների ընդհանուր արհակալան ծագում ունենալու մասին տեսությունը: Նրանք չէին զլանում անընդհատ կրկնել, թե Իրանը Անգլիայի ու ԽՍՀՄ-ի ոտնձգություններից կփրկվի Գերմանիայի շնորհիվ, ընդ որում ֆաշիստները, Իրանը համարելով իրենց կրտսեր եղբայր, խոստանում էին ջանք չխնայել «եզր Իրան» ստեղծելու գործում: Ջարմանալի չէ, որ իրանական հասարակության մեջ աստիճանաբար ավելանում էր ֆաշիստներին համակրողների թիվը: Շուտով իրանցի գերմանամետ տարրերը թափանցեցին նաև շահական կառավարություն, ինչի հետևանքով ազգային քաղաքական սկզբունքները մղվեցին հետին պլան: Մինչև Երկրորդ աշխարհամարտի սկիզբը Իրանի ողջ տարածքը հայտնվեց գերմանական աքցանի մեջ: 1938 թվականի ապրիլից վերահսկվում է Բեռլին-Բաղդատ-Թեհրան-Ջաբուլ օդային գիծը, իսկ հուլիսից նաև դեպի Բանգկոկ գիծը, որն անցնում էր Պարսից ծոցի իրանական ափերով (վերահսկողությունն իրականացնում էր «Լյուֆտհանզան» ավիացոն ընկերությունը): 1937 թվականի տվյալներով՝ Իրանի արտաքին առևտրում Գերմանիայի մասնաբաժինը երկրորդն էր՝ զիջելով միայն ԽՍՀՄ-ին¹: Մակայն Գերմանիայի հետ առևտուրը ոչ միայն չէր նպաստում իրանական տնտեսության զարգացմանը, այլ ավելի էր խորացնում սկիզբ առած ճգնաժամը: Գերմանական ֆաշիստները Իրանում ընդարձակեցին իրենց լրտեսական ցանցը և փորձեցին այստեղ ստեղծել ֆաշիստական կուսակցություն: Իրանցի ֆաշիստամետները հիմնականում համախմբվել էին «Հին Իրան» թերթի շուրջ²: Անշուշտ, Ռեզա շահի կառավարությունը որոշակի քայլերի դիմեց՝ սահմանափակելով նրանց գործունեությունը (արտասահմանյան գովազդների սահմանափակում և այլն):

Երկրորդ աշխարհամարտի սկսվելուց հետո կտրուկ ակտիվացավ իմպերիալիստական տերությունների նվաճողական քաղաքականությունը: Մասնավորապես, գերմանական գլխավոր հրամանատարությունը պլան նախապատրաստեց՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, այդ թվում նաև Իրան ներխուժելու մասին: 1939 թվականի սեպտեմբերի 4-ին Իրանի կառավարությունը հանդես եկավ սկսված պատերազմում իր չեզոքության մասին հայտարարությամբ: Մակայն իրականում իրանա-գերմանական հարաբերություններն ավելի ակտիվացան: Երկուստեք առկա էին վտխադարձ շահեր: Իրանի չեզոքության քաղաքականությունը համապատասխանում էր Գերմանիայի հեռահար նպատակներին, ուստի և դրական արձագանք գտավ Ֆաշիստական Գերմանիայի կողմից: Վերջինս մույնիսկ մտադիր էր, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, Իրանին պատերազմի մասնակից դարձնել: Ֆաշիստներին հատկապես հուսադրում էր Ռեզա շահի՝ իրանական ռազմական ներուժը մեծացնելու շահագրգռությունը: 1940 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Գերմանիայից Իրան ներկրվեց 3000

հրանոթ ու զնդացիք²: Իրանում էապես աճեց գերմանացի մասնագետների թիվը:

Մասնագետի անվան տակ Իրանում հայտնվեցին հազարավոր ֆաշիստական լրտեսներ, որոնց նպատակն էր Իրանը վերածել ԽՍՀՄ-ի դեմ պայքարի հիմնական հենակետի: Հիտլերականների մյուս նպատակը անգլիական դիրքերին վճռական հարված հասցնելն էր: Ֆաշիստները կողմնակիցներ ունեին նույնիսկ շահի պալատում: Փաստորեն, Ռեզա շահի կառավարությունը դրության տերը չէր: Շահը հիմնականում տեղեկացվում էր իր նախարարների միջոցով, որոնք դեպքերը ներկայացնում էին առավել «հարմար» ձևով: Ուստի իրանական կառավարության՝ չեզոքություն պահպանելու ուղղությամբ զործադրած ջանքերը անարդյունք եղան: Ռեզա շահի կառավարությունից միաժամանակ դժգոհ մնացին ինչպես գերմանական կողմը, այնպես էլ անգլո-խորհրդային ուժերը: 1941թ. գարնանից հիտլերականները սկսեցին Իրանում ֆաշիստական հեղաշրջում նախապատրաստել և, անգլոմետ շահական կառավարության վտխարեն, Իրանում հաստատել հանրապետություն՝ Երրորդ Ռայխի օրինակով: Հեղաշրջումը իրականացնելու նպատակով Իրան ժամանեց Գերմանիայի ռազմական հետախուզության պետ, ծովակալ Կանատիսը: Այս դեպքերից անհանգստացած ԽՍՀՄ-ը երրորդ անգամ նոտա հղեց շահին (հունիսի 26, հուլիսի 19, օգոստոսի 16), որը նույնպես անպատասխան մնաց⁴: Լրջորեն անհանգստացած էր նաև բրիտանական կառավարությունը, որը շտապում էր զորքեր մտցնել Իրան: ԽՍՀՄ-ը և Մեծ Բրիտանիան միասնական մոտեցում ցուցաբերեցին, ինչը պաշտպանվեց նաև ամերիկյան կառավարության կողմից: Դաշնակիցների վճռական կեցվածքը գերմանական կողմին ստիպեց նահանջել: 1941 թվականի օգոստոսի 25-ին դաշնակից զորքերը մտան Իրանի տարածք⁵: Ռեզա շահի կառավարությունը մինչև վերջ հավատարիմ մնաց իր երկչու, երկդիմի ու սպասողական քաղաքականությանը՝ արժանանալով ինչպես ֆաշիստների, այնպես էլ դաշնակից տերությունների սուր քննադատությանն ու պարսավանքին: Ռեզա շահը աջակցություն չգտավ նաև սեփական երկրում: Նրան այլ բան չէր մնում, քան հրաժարական տալ, ինչը և արեց 1941 թվականի սեպտեմբերի 16-ին:

GOHAR MIKAYELYAN
(YSU)

**THE RELATIONS BETWEEN IRAN AND NAZI GERMANY
DURING REZA-SHAH-PAHLAVI'S REIGN**

The problem deals with the relations between Iran and Nazi Germany during the reign of Reza-Shah-Pahlavi.

The political victory of fascism in Germany favoured development of relations between two countries. Germany tried to see in Iran its military stronghold in the Middle East. Iranian reactionary forces wanted to restore the former "Big Country" with the help of fascists but Reza-Shah's government led an improvident policy, which forced the allied forces attack Iran. As a result Reza-Shah-Pahlavi had to resign on 16 September, 1941.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Агаев. С.Л, Иран: Внешняя политика и проблемы независимости 1925-1941гг., Москва, 1971г., с. 232-233.
2. Иран: Очерки Новейшей Истории, Акад. Наук Москва, 1976 г., с. 274.
3. Tarikhe Iran pas ar Islam Abas Eghbal Ashtiani Tehran 1378, safhe 776-777.
4. Tarikhe siasie moasere Iran jeldeawal doston seed Jalal Oldin Madani Tehran 1380, safhee 262-263.
5. Rahnama va moshakhasat, moahedate dajanebee Iran ba saer doval Nehran 1380 safhee 243. Ashade moahedate dojanebe Iran ba saer doval, jelde awal, Tehran 1360, safhee 78-79.

ՎԵՐԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

(«Նորավանք» ԳԿՀ)

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՄՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՁ

Խորհրդային Միության փլուզումից և հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկությունից հետո գլոբալ աշխարհակարգում ընթացան որակապես նոր և արմատական տեղաշարժեր: Միացյալ Նահանգները՝ որպես գերտերություն, Եվրոպայում և հետխորհրդային տարածքում տիրապետող դիրքերի հաստատմանն ուղղված պայքարում ստիպված էր մրցակցել թե՛ արագ տեմպերով ընդլայնվող եվրոպական ընտանիքի, թե՛ օրեցօր զարգացող Ռուսաստանի, և թե՛ հեռավորարևելյան ապագա գերտերության՝ Չինաստանի հետ: Այս և այլ գլոբալ ռազմավարական-քաղաքական ու աշխարհատնտեսական շահերի համատեքստում ԱՄՆ կառավարության համար էլ ավելի կարևորվեց Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում ազդեցության ամրապնդումը:

Հարավկովկասյան տարածաշրջանում ամերիկյան ազդեցության տարածման ու ամրապնդման հարցում էական նշանակություն է տրվում տարածաշրջանում իրականացվող ամերիկյան տարբեր ֆինանսական ծրագրերին, որոնք ըստ էության կազմում են ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը: Ամերիկյան ֆինանսական քաղաքականությունն իր օրենսդրական հիմքերը ստացավ մասնավորապես ԽՍՀՄ փլուզումից հետո: 1992թ. ապրիլի 1-ին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց այսպես կոչված «Ազատության աջակցման մասին» ակտը (*“Freedom support act”*), որտեղ հստակորեն սահմանվում էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը հետխորհրդային պետությունների նկատմամբ¹: Փաստաթղթում մասնավորապես նշվում էր, որ «ԽՍՀՄ փլուզումը ԱՄՆ ղեկավարությանը հնարավորություն է ընձեռում տարածել ժողովրդավարության սկզբունքներն ու ազատության չափանիշները Ռուսաստանի ու Եվրասիայի տարածքներում»²: Ամերիկյան ֆինանսական ծրագրերում առաջնակարգ նշանակություն է տրվում այնպիսի հիմնախնդիրներին, ինչպիսիք են քաղաքացիական հասարակության կայացումն ու զարգացումը, պետական ու հասարակական կյանքում ՀԿ-ների դերի ակտիվացումը, ժողովրդավարության ամրապնդումը, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը, անվտանգության ապահովումը³:

Այսպես, ԱՄՆ կառավարությունը զգալիորեն կարևորում է Վրաստանի հետ բազմաշերտ համագործակցությանը, և դա հատկապես շեշտադրվել է երկրում 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունից հետո: Վերջին մի քանի տարիների կտրվածքով, ի տարբերություն Հայաստանի, որտեղ ուշադրության կենտրոնում էին գտնվում առավելապես երկրի տնտեսական ու սոցիալական բարենորոգումներին ուղղված նախագծերը, Վրաստանում իրականացվող ամերիկյան ծրագրերը հիմնականում շեշտադրում են անվտանգության ապահովման, սահմանների պաշտպանության, ինչպես նաև ժողովրդավարության ոլորտները: Մի հանգամանք, ինչը թերևս պետք է դիտարկել իրանա-ամերիկյան օրեցօր սրվող հարաբերությունների համատեքստում:

2003թ. ԱՄՆ կառավարությունը Հայաստանին է հատկացրել \$106.5 մլն օգնություն⁴, որից \$46.8 մլն ուղղվել է տնտեսական և սոցիալական բարենորոգումներին, ժողովրդավարության զարգացման ծրագրերի չափաբաժինը կազմել է \$22.4 մլն, իսկ անվտանգության և իրավակարգի պահպանությանը՝ \$18.4 մլն: Նույն միտումը նկատելի է նաև 2004թ., երբ Հայաստանին տրամադրված \$89.7 մլն օգնության զգալի մասը՝ \$50.2 մլն, կրկին ուղղված էր երկրում իրականացվող տնտեսական ու սոցիալական բարեփոխումներին⁵:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա 2003թ. վերջինիս հատկացվել էր \$110.4 մլն⁶, որի մեծ մասը՝ \$41.4 մլն, ինչպես նշվեց, նախատեսված էր անվտանգության և իրավակարգի պահպանության ծրագրերի իրականացմանը, իսկ տնտեսական և սոցիալական բարենորոգումներին ու ժողովրդավարության աջակցման ծրագրերին՝ համապատասխանաբար \$26.1 և \$20.4 մլն⁷: ԱՄՆ կառավարությունը զգալի միջոցներ է հատկացնում նաև Վրաստանի ռազմական ոլորտին: «Ասուցում և զինում» ծրագրի շրջանակներում ամերիկացի հրահանգիչները Վրաստանում վերապատրաստեցին պայմանագրային զինծառայողների երեք զումարտակ՝ Վազիանիի 11-րդ մոտոհրաձգային բրիգադի 113-րդ «Շավնաբադա» զումարտակը, երկու զումարտակներ՝ «կոմսոդոն» բազայում (ծովային հետևակի զումարտակը տեղակայված է Փոթիում), և Մաչխետյան լեռնային հրաձիգների 16-րդ բրիգադը (Արևմտյան Վրաստան)՝ հատկացնելով ընդհանուր առմամբ \$64 մլն: Ծրագրի այս փուլի իրականացմանը հաջորդեց նաև վրաց չորրորդ զումարտակի վերապատրաստման գործընթացը (Թելավիի 111-րդ տանկային զումարտակի բազայում): 2005թ. պաշտոնական Վաշինգտոնը նախատեսում էր իր ռազմական բյուջեից «օդաչվական ծրագրի» իրականացման համար Վրաստանին տրամադրել \$10 մլն: Հարկ է նշել, որ վերջինս կազմում է Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում Ջանգվածային ոչնչացման զենքի չտարածման՝ ամերիկյան նոր «Մետաքսե ճանապարհ» նախաձեռնության մաս⁸: Ռազմական աջակցություն

ցուցաբերվում է նաև «Աջակցություն ահաբեկչության դեմ պայքարում» ծրագրի շրջանակներում: 2005թ. նախատեսվում էր նրան հատկացնել \$15 մլն-ից ոչ պակաս օգնություն⁹: Նշենք միայն, որ վերջին երեք տարիների ընթացքում ԱՄՆ կառավարությունը «Աջակցություն ահաբեկչության դեմ պայքարում» ծրագրի շրջանակներում Վրաստանին է տրամադրել \$47 մլն¹⁰:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա հարավկովկասյան այս երկրում իրականացվող ամերիկյան կառավարական ֆինանսական ծրագրերի դիտարկումը նպատակահարմար է ներկայացնել առանձին, քանզի այդ ծրագրերի ընդհանուր պատկերն ու ուղղությունները մեծապես հանգուցավորված են հայ-ադրբեջանական հարաբերություններով: Խնդիրն այն է, որ 1993թ. ԱՄՆ Կոնգրեսում «Հայկական խմբի» ակտիվ գործունեության արդյունքում Կոնգրեսն ընդունեց «Ազատության աջակցման մասին» ակտի «907-րդ» հոդվածը: Որոշումը հաստատում է, որ Ադրբեջանը Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սահմանել է տրանսպորտային շրջափակում, ուստի արգելում է Ադրբեջանին հատկացնել ուղղակի կառավարական օգնություն՝ ներառյալ ռազմական ուրուտը: 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո իրավիճակը որոշակիորեն փոխվեց, մասնավորապես Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը իր լիակատար աջակցությունը հայտնեց Աֆղանստանի դեմ ամերիկյան օդային հարվածներին, դեռ ավելին, նա առաջարկեց Վաշինգտոնին օգտագործել իր երկրի օդային տարածքը՝ դեպի Կենտրոնական Ասիա գործերի փոխադրման նպատակով: Արդյունքում ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը 2002թ. հունվարի 25-ին «907-րդ» հոդվածը դադարեցրեց մեկ տարի ժամանակով, իսկ 2004թ. սկզբին երկարաձգեց «907-րդ» հոդվածի պատժամիջոցի դադարեցման մասին հրամանը՝ հիմնավորելով իր որոշումը միջազգային ահաբեկչության պատերազմով, Ադրբեջանի սահմանների պահպանությամբ և որ պատժամիջոցի դադարեցումը «չի խզի ու չի սառեցնի Հայաստանի ու Ադրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ համաձայնությունների ձեռքբերման աշխատանքները, իսկ տրամադրվող օգնությունը չի օգտագործվի Հայաստանի դեմ հարձակողական նպատակների համար»: Միայն 2004թ. պաշտոնական Վաշինգտոնը Ադրբեջանին տրամադրեց \$67.5 մլն օգնություն, որի զգալի մասն ուղղված էր հումանիտար նախագծերին՝ \$27.1 մլն, տնտեսական ու սոցիալական բարեփոխումների իրականացմանը՝ \$13.6 մլն, իսկ անվտանգությանն ու իրավապահ մարմինների ուժեղացմանն ու ժողովրդավարության զարգաման ծրագրերին՝ համապատասխանաբար \$11.3 և \$12 մլն:

ԱՄՆ կառավարությունը տարածաշրջանի վերոնշյալ երեք երկրներից զատ, ֆինանսական ծրագրեր իրականացնում է նաև Լեռնային Ղարաբաղում, որը հիմնականում հատկացվում է հումանիտար օգնության տեսքով: 2002թ. կեսերին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց Լեռնային Ղարաբաղի

Հանրապետությանը ֆինանսական օգնության տրամադրման ծրագիր, որը նախատեսում էր ԼՂՀ-ին տրամադրել \$19.8 մլն: Ծրագրի միջոցներն ուղղվելու էին ոչ թե այն ոլորտներին, որոնք նպաստում են Լեռնային Ղարաբաղի տնտեսության զարգացմանը, այլ ծրագրվում է դրանք ներդնել հանրապետության տների վերակառուցման, բնակչության առողջական վիճակի բարելավման, ջրմուղ ցանցի արդիականացման ոլորտներում:

VERANYAN KAREN
("Noravank" SEF)

THE US AID PROGRAMS IN SOUTH CAUCASUS

After the collapse of the Soviet Union and especially after the September 11 tragedy in 2001 new and fundamental transformations were realized in the global world politics. As a great state the United States was to compete with the European Union, Russia and economically and politically developing Chinese superpower to keep its strong political instruments in Europe and Eurasian region. In this context the political dominance in the regions of Southern Caucasus and Central Asia became more essential in the United State's foreign policy. To reach the political and strategic dominance in these regions, the USA administration pays great attention to the implementation of the American assistance programs as an important component of the USA Eurasian foreign policy.

In April 1992 the USA administration adopted the so-called "Freedom Support Act", which determined the USA assistance programs toward New Independent States [NIS]. These programs are directed to the formation and development of the civil society, democratic norms, the promotion of NGO's active involvement in the public and state spheres, the improvement of the social-economic situation of the society.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. <http://www.fas.org/spp/starwars/offdocs/b920401.html>, The White House, "Freedom Support Act of 1992 Fact Sheet", 1.04.1992.; <http://bushlibrary.tamu.edu/research/papers/1992/92102407.html>, George Bush, The White House, "Statement on Signing the Freedom Support Act", 24.10.1992.
2. <http://www.fas.org/spp/starwars/offdocs/b920401.html>, The White House, "Freedom Support Act of 1992 Fact Sheet", 1.04.1992.
3. <http://nalog.krd.ru/inf/223.html>, Гранты Фонда Евразии.

4. <http://www.day.az/print/news/armenia/4521.html>, "Армения получила от США 106,5 млн. долларов в 2003-м году", 19.02.2004.
5. <http://usinfo.state.gov/russian/Archive/2005/Feb/02-944367.html>, "Помощь США Армении в 2004 финансовом году", 02.02.2005.
6. http://www.from-ua.com/eco/eco1/41ac272598529/view_print/, "Кавказский связной".
7. <http://usinfo.state.gov/rusски/>, "Справка: Помощь США Грузии", 18.02.2004.
8. <http://lenta.ru/world/2004/10/10/bill/>, "США выделили Грузии 10 миллионов долларов из своего оборонного бюджета", 10.10.2004.
9. <http://www.polit.ru>, "Конгресс США поможет Грузии бороться", 20.09.2004.
10. <http://www.polit.ru>, "Конгресс США поможет Грузии бороться", 20.09.2004.

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ

(ԱԻ)

ԱՆԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՈԳՈՒ ԶԱՐԹՈՆՔԸ
ՆԱԳԻԲ ՄԱՀՅՈՒԶԻ «ԲԱՅՆ-ԱԼ-ԿԱՍՐԵՅՆ» ԵՎ ԹԱՈՒՖԻԿ
ԱԼ-ՀԱՔԻՍԻ «ՈԳՈՒ ՎԵՐԱԴԱՐՉԸ»
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Եզիպտական ժողովրդի ազատագրական ոգու և անձնագուհի պայքարի արտահայտման օրինակները 20-րդ դարի կեսերին պատկանող գրականության ստեղծագործություններում բազում են: Մական բևեռելով մեր ուշադրությունը հատկապես երկու ստեղծագործությունների՝ Թաուֆիկ ալ-Հաքիմի «Ոգու վերադարձի» («Աուդաթ-առ Ռուհ»), 1935թ. և Նազիբ Մահֆուդի «Բայն-ալ-Կասրեյնի» («Բայն-ալ-Կասրեյն»), 1956-57թթ. վրա, փորձենք ներկայացնել ազատագրական պայքարի ազդեցությունը եզիպտական միջին խավի կենցաղային կյանքի օրինակով:

Նազիբ Մահֆուդի «Բայն-ալ-Կասրեյն» եռագրությունն կազմված է երեք մասից, որոնք կոչվում են հին Կահիրեի փողոցների և թաղամասերի անուններով՝ «Բայն-ալ-Կասրեյն», «Կասր-աշ-Շաուկ», «Աս-Մուքքարիյա»: Վաճառական Ալ-Գավվադի ընտանիքի երեք սերունդների զարգացման ընթացքի օրինակով այս երկում կարելի է հետևել ընդհանուր եզիպտական իրականության զարգացումներին, աշխարհայացքի և սովորույթների փոփոխությանն ու վերանայմանը, քաղաքական զարգացումներին, հեղինակը մեզ է փոխանցում վերհառնող ժամանակաշրջանի ոգին: Արտաքնապես եռագրության շարադրանքը ներառում է իր մեջ վաճառականի ընտանիքի կյանքը 1919-1944թթ.:

Եռագրության առաջին մասում՝ «Բայն-ալ-Կասրեյնում», Մահֆուզը մեզ տեղափոխում է Առաջին Աշխարհամարտի ժամանակաշրջանի Կահիրեի հին անկյուններից մեկը։ Վաճառականն հին ավանդական հայացքների տեր մարդ է, որն ընտանիքի ներսում անհանդուրժող դեսպոտ է. իր հայեցողությամբ տնօրինում է ընտանիքի անդամների կյանքը, ամուսնացնում, ապա բաժանում է իր որդուն՝ Յասինին, լուծում դուստրերի՝ Աիշայի և Քադիգայի ամուսնական հարցերը, դաժանորեն պատժում է կնոջը՝ Ամինային ինքնագլուխ՝ մզկիթ այցելելու համար։ Հեղինակը ներկայացնում է ստեղծված իրավիճակի ողջ անհեթեթությունը, որ տիրում է ընտանիքի ներսում Ալ-Գավվայի պահվածքի հետևանքով։ Մակայն վաճառականը միայն բացասական հատկանիշներով չէ, որ օժտված է։ Հակառակը, հեղինակը պատկերում է կերպարի, և կերպարի միջոցով նաև ավանդական պահանջներից համապատասխանող հասարակության երկակիությունը. դրսում ընտանիքի գլուխը ներկայացված է իբրև կենսուրախ, շփվող, կատակասեր, կանանցով հրապուրված անձնավորություն։

Մանրամասներեն և անաչառ վերլուծելով միջընտանեկան հարաբերությունները՝ հեղինակը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ ստեղծված իրավիճակում ընտանիքը բաժանված է երկու ճամբարների՝ մի կողմից հայրն է, մյուս կողմից թեկուզ և թույլ, բայց միակ պաշտպան հանդիսացող մոր շուրջ հավաքված ընտանիքի մյուս անդամներն են։ Մակայն բոլոր այս կոնֆլիկտները չեն հասցնում բացահայտ առճակատման. դուստրերը համակերպվում են իրենց ճակատագրի հետ, Յասինը գտնում է հետաքրքրություն այլ հաճույքներում։ Բոլորից ամավել հոր ազդեցիկներից տառապում են երիտասարդ Ֆահմին և փոքրիկ Քեմալը։ Վաճառականի միջնեկ որդուն՝ Ֆահմին անչափ հետաքրքրում է Եզիպտոսի ճակատագիրը։ Հայրը չի կարողանում հաշտվել որդու ինքնուրույն հայացքների հետ։ Ներգրավված լինելով ազգային ազատագրական պայքարի մեջ՝ խաղաղ ցույցերից մեկի ժամանակ Ֆաթհին, բազում եզիպտացի երիտասարդների հետ, դավադրաբար զնդակահարվում է անգլիացիների կողմից։ Այս փաստը դեռ երկար ժամանակ հիշեցնելու է եզիպտական ժողովրդին անձնագոհ երիտասարդության հերոսական ոգու մասին։

Մի քանի տարի անց զարգանում են եռագրության երկրորդ մասի՝ «Կասր-աշ-Շաուկի» իրադարձությունները։ Չնայած այս տարիների ընթացքում տեղի ունեցած փոփոխություններին՝ ընտանիքի ներսում կյանքը շարունակում է հոսել սովորական հունով։ Մակայն վաճառականն ստդեն ավելի մեղմ է և հանդուրժող։ Փոփոխություններ են կատարվում հերոսների կյանքում, արդեն պատկերվում են նաև Ահմադ ալ-Գավվայի թոռնիկները։ Առավել ուշադրության է արժանացած Քեմալի կերպարին։ Պատանոհ արթնացող գիտակցության միջոցով ներկայացվում է Եզիպտոսի երիտասարդության փնտրտույքներն ու հոգևոր ճգնաժամը։ Հետզհետե Քեմալի

աշխարհընկալումը փոխվում է, նա ծանոթանում է Դարվինի աշխատություններին՝ կորցնելով հին դավանանքի կարծրացած հասկացությունները:

Շոազրության երկրորդ մասում մեծ տեղ է հատկացված 1919-1921թթ հեղափոխության հետևանքով ձեռք բերված արժեքների և փոփոխությունների պահմանմանն ուղղված լարված պայքարին: Այս պայքարի մոտիվը նկատվում է շարադրանքի ողջ ընթացքում:

Երկրորդ մասը ավարտվում բավականին ողբերգորեն. Սաադ Չագլուլի մահվամբ՝ պետա-քաղաքական մակարդակում և Աիշայի անուսնու և երեխաների մահվամբ՝ ընտանեկանում:

Երրորդ մասում՝ «Աս-Սուքքարիյայում» մենք արդեն 1935-44թթ.-ում ենք: Ավագ սերնդի համար նոր հեղափոխական իրադարձությունների և Երկրորդ Աշխարհամարտի այս ժամանակաշրջանը դարձավ բախտորոշ, իսկ երիտասարդների համար՝ կտրուկ գործողությունների հնարավորություն:

Նազիբ Մահֆուզի «Բայն-ալ-Կասրեյն» եռագրության մեջ բավականին դինամիկ է պատկերված կարծրացած արժեքների փրակափոխումն ու Եզհայտոսի ձգտումը նոր, անկախ կյանքի:

Գրեթե նույնն է իրավիճակը Թաուֆիկ ալ-Հաքիմի «Ոգու վերադարձը» ստեղծագործության մեջ: Այստեղ զարգացող իրադարձությունները կարծես ավելի սևեռված են Սաադ Չագլուլի ապստամբության ժամանակաշրջանի Եզհայտոսի միջին խսկի կենցաղային կյանքի արտահայտման վրա: Հեղինակը իր ստեղծագործություն մեջ Եզհայտոսը համեմատում է Հին Եզհայտոսի վերածնվող աստված Օսիրիսի հետ, դրանով իսկ ներկայացնելով եզհայտական անկոտրում ոգին:

Ընտանիքը, որը պատկերված է այստեղ, փոքր-ինչ անսովոր է, քանի որ այս բաղկացած է եղբայրներից և իրենց հետ ապրող չամուսնացած քրոջից: Նրանք իրենց անվանում են «ժողովուրդ», և չնայած ամենօրյան մանր վեճերի՝ անչափ միավորված են: Այսպես է ներկայացվում ողջ եզհայտական ժողովուրդը՝ չնայած տարածայնությունների՝ միասնական: Բոլոր եղբայրներն էլ սիրահարված են իրենց հարևանուհուն՝ Սաննիային: Այս կերպարում շատ զրաքննադատներ տեսնում են երիտասարդ Եզհայտոսի ալլեգորիան: Եվ իհարկե նրանք բոլորն էլ պայքարում են Եզհայտոսի ազատագրման համար:

Եվ Նազիբ Մահֆուզը, և Թաուֆիկ ալ-Հաքիմը իրենց ստեղծագործություններում ստույգ տարանջատում են հին և նոր, ավանդական և փոխառնված արժեքների դրական և բացասական կողմերը՝ տալով թե սուր քննադատություն և թե զովաբանում:

NAIRA KARAPETYAN
(IOS)

**THE AWAKING OF THE SPIRIT OF THE INDEPENDENCE
IN THE NAGIB MAHFUZ'S "BAYN-AL-KASRAYN" AND
TAWFIQ AL-HAKIM'S
"THE RETURN OF THE SPIRIT"**

In these two novels the authors tried to demonstrate the national spirit of the Egyptians, fighting for their independence in the beginning of the XX century. Both Mahfuz and Al-Hakim describe the real scenes of live of the ordinary Egyptian family of that period concerned. In the Mahfuz's trilogy novel, the life of three generations is shown. He explains gradually the necessity to changes both political situation and in ordinary family relations. The young members of the described families in these two novels are eager to see a free Egypt. They are greatly impressed by the national movement of Sa'ad Zaghlul. Also in their families they see the necessity to escape traditional bases and build new Egypt.

ՀԱԿՈՔՅԱՆ ԼԻԱՆԱ (ԼԻ)

ՏՐԱԿԱՆ ՀՈՂՈՎԻ ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենում տրական հոլովը աչքի է ընկնում իր գործառնությունների քազմազանությամբ: Այն կարող է լինել հանգման խնդիր, մատուցման խնդիր, վերաբերության խնդիր, տեղի և ժամանակի պարագա: Մենք հակված ենք ենթադրելու, որ տրական հոլովի տեղի և ժամանակի գործառնությունները ավելի ուշ առաջացած երևույթներն են:

Ըստ Գ.Ա. Միլիքիշվիլու՝ քացի իր սովորական գործառնություններից, տրական հոլովը ուրարտերենում, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է նաև գործողության ժամանակը ցույց տալու համար, օրինակ՝ *ikukani šale* «նույն տարում», *šusine šale* «մեկ տարում», «մեկ տարվա ընթացքում»: Ուրարտերենում տրական հոլովը կատարել է նաև ներգոյական հոլովի գործառնություն, օրինակ՝ *terubi manini esini LUGAL-tuḫ ini* «ես դրեցի նրան թագավորական տեղում» կամ *ersidubi^{kur} ebanuike* «տեղավորեցի ես (նրանց) իմ երկրում» և այլն²:

Կարելի է ենթադրել, որ ուրարտերենի և հայերենի երկարատև շփման ընթացքում տրական հոլովի տեղի և ժամանակի գործառնությունները անցել են հայերենին: Հօգուտ մեր այս ենթադրության է խոսում մի շարք փաստեր.

1. Լեզուների երկարատև շփման ընթացքում հոլովական իմաստները հեշտությամբ են անցնում մի լեզվից մյուսին.
2. Հնդեվրոպական լեզվաընտանիքի՝ հայերենին մոտ կանգնած լեզուների (հնդիրանական լեզուներ, հուներեն) հոլովական համակարգերի քննությունը ցույց է տալիս, որ տրական հոլովը, քացի հուներենից, մյուս լեզուներում նշված իմաստներով չի գործածվում: Իսկ հուներենում էլ դա դեռևս հնդեվրոպական ընդհանրության ժամանակաշրջանից եկող «սինկրետիզմի» արդյունք է³:

3. Գրաբարում տրականը հանդես էր գալիս որպես

ա) մատուցման անուղղակի խնդրի հոլով,

բ) որպես անորոշ դերբայի, ինչպես նաև պարտ է, մարթ է և այլ անդեմ դարձվածների տրամաբանական ենթակայի հոլով,

գ) որպես որոշ բայերի և ածականների պահանջած խնդրի հոլով⁴:

Այսպիսով՝ այս և մի շարք այլ փաստեր, որոնք կներկայացնենք զեկուցման մեջ, հիմք են տալիս ենթադրելու, որ տրական հոլովի տեղի և ժամանակի գործառնությունները արտաքին ազդեցությամբ առաջացած երևույթներ են և ամենայն հավանականությամբ առաջացել են ուրարտերենի ազդեցությամբ՝ հայ-ուրարտական երկարատև շփման ընթացքում:

LIANA HAKOBYAN

(IL)

**UTILIZATION OF PLACE AND TENSE IN DATIVE CASE IN
ARMENIAN**

In our report we summarize the place and tense utilization of the Dative case in Armenian. We inclined to assume that the mentioned utilization of the Dative is later arisen phenomenon. It could probably arise upon the influence of Urartian (during the prolonged contact of Urartian and Armenian) as, according to G. Melikishvili, Dative of Urartian has the same meaning. In favour of this assumption speaks for the facts that:

1. During the prolong contact of the languages the meanings of the cases easily move from one language to another.
2. The mentioned meaning of the dative didn't appear in the Indo-European languages close to Armenian.
3. In Grabar (ancient Armenian) this utilization of Dative also did not take place.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960, с. 57.
2. Шантрен П., Историческая морфология гречекского языка", Москва, 1952, с. 24-25.
3. Ջահուկյան Գ.Բ., Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1967, էջ 129.

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՆԻ
(ԵՊՀ)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՄԱՍՏՈՒՅԹԻ
ՉԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ ՊԱՐՁ ԵՌԱԿԱԶՄ
ԲԱՅԱՀԻՄՔԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Արաբական լեզվաբանական ավանդույթն արաբերենի բայական միավորների կառուցվածքում որպես հիմք առանձնացնում է արմատական երեք բաղադրիչներից՝ հարֆերից՝ բաղկացած պարզ եռահարֆ բայական հիմքը ('al-fiʿāl'al-mujarrad'al-eulaei), որն արաբերենի նկարագրման համակարգում դիտարկվում է որպես նվազագույն լեզվական միավոր՝ հիմք հանդիսանալով ձևաբանական բնույթի բոլոր լեզվական կառույցների համար: Յուրաքանչյուր հարֆ ավանդույթում դիտարկվում է որպես բաղաձայնի և ձայնավորի անքակտելի զուգակցություն¹:

Պարզ եռահարֆ բայահիմքի ելքային տարբերակում արմատական երեք հարֆերից (fā'al-fiʿāl,āyū'al-fiʿāl,lām'al-fiʿāl) յուրաքանչյուրը ձևավորվում է իր դիրքի սահմաններում իրացվող «հարֆի հնչյուն» (jaras'al-harf) և ֆաթհա (ā) «հարֆի ձայնավորում» (harakatu al-harf) վանկաչափական ցուցիչի միահյուսման արդյունքում (fā + ā + lām = fāāilā), որը կայուն իրացում ունի եռահարֆ բայահիմքի lām'al-fiʿāl դիրքի սահմաններում միայն:

Ձևահնչության կանոններով սակարկվում բաղկացած լինելով երկանդամ տարրերից՝ հարֆերից, արաբերենի բայական միավորները շարահյուսական կիրառություն ստանալիս ևս դրսևորում են երկանդամ ֆունկցիոնալ կազմություն՝ ներառելով երկու անքակտելի և փոխադարձաբար սերտաճած հատվածներ՝ գործողության իմաստության ('al-fiʿāl), և այդ գործողությունը կատարողի կամ գործողության սուբյեկտի իմաստության արտահայտման ('al-fāʿil) դիրքերը²:

Շարահյուսական հարթությունում 'al-fiʿāl և 'al-fāʿil դիրքերը միասին ձևավորում են մեկ գործառական ամբողջություն, որն արաբական լեզվաբանական ավանդույթում հայտնի է որպես *պարզ բայական ստորոգական կառույց* և ենթադրում է բայական ստորոգյալի ('al-fiʿāl-'al-musnad) և գործողության սուբյեկտի ('al-fāʿil-'al-musnad' ileyhi) գծային հաջորդականություն: Բայական ստորոգական կառույցի 'al-fiʿāl հատվածը, լինելով շարահյուսական հարթությունում բայական միավորների գործողության իմաստության արտահայտման դիրք, բացի այդ իմաստային արտահայտելը, կոչված է որոշակի ինֆորմացիա հաղորդել իրեն գծայնորեն հաջորդող գործողության սուբյեկտ ('al-fāʿil) հատվածի վերաբերյալ: Այդ

ինՖորմացիայի փոխանցումը կատարվում է շարահյուսական մակարդակում բայական միավորների 'al-fiál հատվածում հանդես եկող պարզ եռահարֆ բայահիմքի առաջին fâ"al-fiál, և երկրորդ՝ áayn 'al-fiál դիրքերում³:

Այսպես 'al-fiál հատվածում իրացվող պարզ բայահիմքի fâ"al-fiál դիրքում սկզբնական ցուցում է տրվում գործողության սուբյեկտի"al-fâál-ի հայտնի կամ անհայտ լինելու վերաբերյալ: Այս դիրքում ելքային ֆաթհա (á) ձայնավորման դեպքում ենթադրվում է, որ ձևավորվող շարահյուսական միավորն իմաստաբանական ու քանակական առումով ինքնաբավ է, ամբողջական և այնտեղ առկա և իմաստաբանորեն որոշելի է գործողության սուբյեկտի՝ 'al-fâál-ի նշանակությունը (maálím):

Մինչդեռ, երբ fâ"al-fiál դիրքում ելքային ֆաթհայի փոխարեն իրացում է գտնում դամմա վանկաչափական ցուցիչը, նախնական ինֆորմացիա է փոխանցվում ձևավորվող շարահյուսական միավորի ոչ ամբողջական լինելու և, բնականաբար, գործողության սուբյեկտի բացակայության և իմաստաբանորեն անորոշ, անհայտ (majhál) լինելու մասին⁴:

Ինչ վերաբերում է 'al-fiál հատվածի միջին áayn 'al-fiál դիրքին, ապա նրա սահմաններում գործողության սուբյեկտն արդեն բացահայտվում է իր կողմից կատարվող գործողության բնույթի տեսանկյունից: fâ"al-fiál դիրքում ֆաթհայի առկայության ժամանակ, գործողության սուբյեկտի հայտնիության պայմաններում, այստեղ կարող են իրացվել թե՛ ֆաթհան(a), և թե՛ մյուս երկու հնարավոր՝ ցուցիչները՝ դամման (u) և քասրան (i): Ֆաթհա ցուցիչի առկայությունն այս դիրքում հիմնականում վկայում է արդեն «հայտնի» սուբյեկտի կողմից կատարված գործողության ակտիվ բնույթի մասին (հմմտ. darasa-սովորել, kataba-գրել): Մինչդեռ դամմա ձայնավորման իրացումն, ընդհակառակը, խոսում է սուբյեկտի գործողության ոչ ակտիվ բնույթի մասին, ավելին, այն վերագրվում է վերջինիս, բնութագրում նրան (հմմտ. jamala-զեղեցիկ լինել, kabura-մեծ լինել): Սա կիրառել է նաև այս դիրքում երրորդ ցուցչի՝ քասրայի առկայության ժամանակ(áarija-կաղ լինել)⁵:

Ժամակակից արաբերենի որոշ բայերի հիմքում, սակայն, áayn'al-fiál-ի քասրա ձայնավորումը սկսել է արտահայտել նաև սուբյեկտի կատարած գործողության, առաջին հայացքից, բացարձակապես ակտիվ բնույթի իմաստային տարբերակում: Խոսքն այն բայերի մասին է, որոնք արաբերենում սկզբնապես արտահայտել են իրենց սուբյեկտին հատուկ հատկանշային, ոչ ակտիվ բնույթի գործողություն, սակայն սուբյեկտն այդ հատկանիշը ոչ թե կրում է ի սկզբանե (ինչպես áarija բայի դեպքում), այլ այն, որպես բնութագիր, ինչ-որ ժամանակամիջոցում ուղղվում է դեպի սուբյեկտը, անցնում նրա վրա (հմմտ. labisa - նախկինում՝ հազուստով պատված լինել-ներկայումս՝ հազմվել, fahima - ըմբռնող լինել - ներկայումս՝ հասկանալ):

Անհրաժեշտ է նշել նաև, որ առաջին *fā' al-fiāl* դիրքում դամմայի իրացման ժամանակ, երկրորդ *āyān 'al-fiāl* դիրքում կարող է իրացվել միմիայն քասրա ձայնավորումը, քանի որ գործողության սուբյեկտը կամ գործողությանը բնութագրվող սուբյեկտը սկզբունքորեն անհայտ է (*maǰhūl*): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ քասրա վանկաչափական ցուցիչը, ի տարբերություն ֆաթհայի և դամմայի, օժտված է գործողության սուբյեկտի նշանակությունը նվազեցնելու և գործողությանը որոշակի պասիվություն, կրավորական կամ անդրադարձ նշանակություն հաղորդելու հատկությամբ⁶:

Ի հավելումն վերն ասվածի, հարկ է հիշատակել *āyān 'al-fiāl* դիրքում իրականացող, թերևս ամենակարևոր գործառույթի մասին:

Շարահյուսական հարթությունում բայական միավորների *'al-fiāl* հատվածում իրացվող եռահարֆ բայահիմքի *āyān 'al-fiāl* դիրքում սկզբնական ցուցում է փոխանցվում այս հատվածի հիմնական գործողության նշանակության վերաբերյալ: Այս դիրքի գործառական կազմությունը ֆաթհայով, ինչպես արդեն նշվել է, վկայում է կատարվող գործողության ակտիվ բնույթի մասին: Իսկ *āyān 'al-fiāl* դիրքում դամմայի կամ քասրայի (որոշ բացառություններով) առկայությունը գործողության ոչ ակտիվ լինելու ցուցումն է:

Պարզ բայահիմքի վերջին *lām 'al-fiāl* դիրքում միավորվում են այդ բայահիմքի բոլոր երեք դիրքերը մեկ՝ *պարզ եռահարֆ բայահիմք* (*'al-fiāl 'al-muǰarrad 'al-ēulaēi*) հասկացության մեջ:

lām 'al-fiāl դիրքի սահմաններում կայուն իրացում ունեցող ֆաթհան ազդարարում է հիմքի ամբողջական ձևավորման մասին, միավորում նախորդ երկու դիրքերում արտահայտված գործողության և գործողության սուբյեկտի նշանակությունները՝ ձևավորված միավորը փոխանցելով շարահյուսական հարթություն, որտեղ այն սկսում է դիտարկվել որպես ստորոգական ամբողջություն՝ *բայական ստորոգական կառույց* (*'al - jumla 'al-fiāliya*):

Հարկ է նկատել, որ արաբերենի բայական ստորոգական կառույցում, գործողության սուբյեկտի (*'al-fāāil*) խոսողին անհայտ լինելու հանգամանքը կասկածի տակ է դնում ողջ ստորոգական կառույցի գոյությունը⁷:

Չէ՞ որ բայական ստորոգական կառույցի առանցքային *'al-fiāl* և *'al-fāāil* դիրքերը միահյուսված և փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով, և նրանցից մեկի բացակայությունն ինքնաբերաբար բացառում է նաև մյուսի գոյությունը:

Գործողության սուբյեկտի անհայտ լինելու դեպքում առաջ է գալիս ձևավորվող բայական ստորոգական կառույցի իմաստաբանական անբավարարությունն ու վերջինիս քանակական թերիությունը լրացնելու առաջնահերթ խնդիր, որն իր լուծումն է գտնում բացակայող *'al-fāāil* դիրքում

նոր՝ «գործողության սուբյեկտին փոխարինող» կամ, այսպես կոչված, «կեղծ սուբյեկտ» (na'ib'al-fā'il) շարահյուսական դիրքի գոյացմամբ:

na'ib'al-fā'il դիրքում իրացվող միավորները դիտվում են որպես բայական նախադասության քերականական ենթակա ('al-musnad 'ileyhi), բայց ոչ երբեք տրամաբանական սուբյեկտ ('al-fi'āl), այլ ընդամենը նրան «փոխարինող» կամ «կեղծ սուբյեկտ» (na'ib'al-fā'il):

Իմաստաբանական հարթությունում բայական նախադասության տրամաբանական սուբյեկտին՝ «կեղծ սուբյեկտ» (na'ib'al-fā'il) դիրքում կարող են փոխարինել.

1. Գործողության տրամաբանական օբյեկտը (եթե գործողությունն արտահայտված է ներգործական /ակտիվ իմաստ արտահայտող անցողական բայաձևով ('al-fi'āl 'al-muta'addi), կամ ներգործական իմաստ արտահայտող, սակայն նախդիրով (harf jarr) միջնորդավորված ուղիղ խնդիր ընդունող բայով:

2. Գործողությանը մասնակից իմաստաբանական այլ ակտանտներ /ժամանակ, տեղ, վիճակ և այլն/ (եթե գործողությունն արտահայտված է չեզոք/ ոչ ակտիվ իմաստ. արտահայտող անանցողական բայով ('al-fi'āl 'al-lazim):

ANI MANUKYAN (YSU)

THE FORMATION OF THE ACTION'S SUBJECT MEANING IN THE ARABIC SIMPLE VERBAL THREE-COMPONENT STEM

In the Arabic linguistic tradition the simple verbal stem ('al-fi'āl' al-mujarrad 'al-eula'i), which consists of three components named "the harfs", is considered to be the minimum linguistic unit for the whole morphological structures. In the initial form of the simple verbal stem, its three basic harfs (fā''al-fi'āl, āyn'al-fi'āl, lām'al-fi'āl) are being formed in consequence of merging of the so-called "the sound of harf" (jaras'al-harf) and the fatha (a) "the vowel of harf" (harakatu al-harf) (fā + ā + lā = fāāālā), which remains stable inside the structure of the last lām'al-fi'āl only.

Being consisted of two undivided components on the phonetic-morphological level, the Arabic verbal units get two-component functional structure: 'al-fi'āl - the action meaning position, 'al-fā'il - the position of the action's subject meaning. On the syntactic level together 'al-fi'āl and 'al-fā'il form the Arabic verbal sentence called ('al-jumla 'al-fi'āliyya).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գարուշյան Հ.Մ., Կարաբեկյան Ս.Բ., Գրական արարքերնեի զործառական քերականություն, Երևան, 2003, էջ 8:
2. Սահակյան Ա.Կ., Կարաբեկյան Ս.Բ., Ստորոզման առանձնահատկությունները և ասույթի հաղորդակցական կառուցվածքը գրական արարքերնում, Երևան, 2002, էջ 5:
3. Ala al-Din Hashem al- Khafaji, Muhadarat fi al-lugha al-arabiyya, Բաղդադ, 2002, էջ 35-39:
4. Muhammad Muhi al-Din Abd al-Hamid, Sharh ibn Aqil, Բեյրութ, 1974, էջ 462:
5. Սահակյան Ա.Կ., Կարաբեկյան Ս.Բ., Ստորոզման առանձնահատկությունները և ասույթի հաղորդակցական կառուցվածքը գրական արարքերնում, Երևան, 2002, էջ 16-17:
6. Sh' u Muhammad Nur Al - Din Al Tauashi, 'Al - Nabu ua Al - Sarf, «Դամասկոս», 1998 - 1999, էջ 46:
7. Ala al-Din Hashem al- Khafaji, Muhadarat fi al-lugha al-arabiyya, Բաղդադ, 2002, էջ 41-42:
8. Նույն տեղում:
9. Muhammad Muhi al- Din Abd Al Hamid, Sharh Ibn Aqil, Բեյրութ, 1974, էջ 548:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ

(ԵՊՀ)

ՀԱԿԱՍՍԵՐԻԿՅԱՆ ՏՐԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ ԹՈՒՐՔ ԳՐՈՂ ՖԱԶԻՐ ԲԱՅՔՈՒՐԹԻ «ԱՍԵՐԻԿՅԱՆ ՎԻՐԱԿԱՊԸ» ՎԵՊՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների հարաբերությունները սերտանում են մի շարք բնագավառներում: Թուրքիայում հաստատվում է ԱՄՆ-ի տնտեսական, ռազմական, քաղաքական գերիշխանությունը, որն էլ իր հերթին թուրք հասարակության տարրեր խավերի մոտ հակաամերիկյան տրամադրություններ է առաջացնում: Թուրքիայի տարրեր քաղաքներում տեղի են ունենում հակաամերիկյան ուղղվածությամբ բազմահազարանոց ցույցեր՝ «Ամերիկա՛, հեռացի՛ր», «Յանկիներ՛, դու՛րս կորեք» և նմանօրինակ այլ ցուցասպաստուտներով: Ուսանողների և ամերիկացիներին պաշտպանող ոստիկանության միջև արյունալի բախումներ են տեղի ունենում, որոնք ուղեկցվում են ձերբակալություններով և մարդկային զոհերով: Հասարակական մեծ հնչեղություն է ստացել, օրինակ, թուրք հայտնի գրող Յաշար Քեմալի /ծնվ. 1922թ./ 1967թ. հունվարին Ամերիկայի գրողներին գրած նամակը, որտեղ կոչ էր անում նրանց բողոքով հանդես գալ ԱՄՆ-ի՝ ուրիշ երկրների ներքին գործերին միջամտելու քաղաքականության դեմ¹:

Գրականագիտական շրջանակներում կարծիքներ կան, համաձայն որոնց հենց հակաամերիկյան տրամադրությունների հետ է կապված նաև այն, որ 1960-ական թվականների կեսերին թուրք վիպագրության մեջ սկսում է կենտրոնական դառնալ պատմական թեմատիկան: ԱՄՆ-ի տնտեսական, քաղաքական և ռազմական գերիշխանության հաստատումը Թուրքիայում ազդակ է դառնում, որպեսզի գրողները վերհիշեն այն ժամանակաշրջանը, երբ թուրքերը պայքարել են օտարների դեմ և հաջողության են հասել: 1960-ականների կեսերի թուրքական պատմական վեպը հիմնականում անդրադառնում է քեմալական շարժման տարիների իրադարձություններին: Սակայն հարկ է նշել, որ հակաամերիկյան և ընդհանրապես հակաարևմտյան տրամադրությունների թուրք գրականության մեջ հանդիպում ենք նաև ավելի վաղ շրջանի գրողներ Ռեֆիք Հալիթ Քարայի /1888-1965 թթ./, Չիյա Յամաչի /1914/, Մադրի Էրթեմի /1898-1943 թթ./ որոշ ստեղծագործություններում²:

Ֆաքիր Բայքուրթը /1929-1999/ 20-րդ դարի թուրք ճանաչված արձակագիրներից է և, լինելով գյուղագիր, նա պատկերել է թուրք գյուղացիության սոցիալական ծանր վիճակը: Նրա ստեղծագործություններում արտացոլված են նաև անցյալ դարի երկրորդ կեսի Թուրքիայի հասարակական-

քաղաքական մի շարք կարևոր իրադարձություններ: Բայքուրթը որպես ճախ, սոցիալիստ գրող, ինչպես նաև գլխավորելով ակտիվ գործունեություն ծավալող «Թուրքիայի ուսուցիչների արհմիությունը» (TÖS – Türkiye Öğretmenler Sendikası)՝ գտնվում էր հասարակական-քաղաքական իրադարձությունների կիզակետում և, բնական է, որ նա իր ստեղծագործություններով ևս պետք է անդրադառնար հասարակության որոշակի շերտերում առկա հակամարտիկյան տրամադրություններին: Սակայն Բայքուրթը, ի տարբերություն այդ ժամանակի թուրք շատ գրողների, հակամարտիկյան հայացքների արտահայտման համար չի դիմում պատմական դեպքերի նկարագրմանը, այլ ուղղակիորեն ներկայացնում է հենց ժամանակակից Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները: Ավելին, լինելով գյուղագիր, Բայքուրթը հակամարտիկյան հայացքները նկարագրում է գյուղացիների և գյուղական իրականության պատկերմամբ:

1967 թվականին լույս է տեսնում Բայքուրթի «Ամերիկյան վիրակապը» (“Amerikan Sargısı”) վեպը, որը տվյալ ժամանակի ամենացայտուն հակամարտիկյան ուղղվածություն ունեցող գրքերից է: Գրողը կարծում է, որ ամերիկյան տարատեսակ օգնությունները ընդամենը «իրականությունը ծածկող վարագույրներ են», իսկ իրականությունը այդ վարագույրների հետևում է: Նա նաև գտնում է, որ խորատես գրողը չի կարող շարքային դիտորդ լինել, ուստի և պարտավոր է տեսնել վարագույրվածը և քողարկվածը³: Եվ ահա, ըստ Բայքուրթի, այդ «վարագույրների» հետևում քաջցված իրականությունը Թուրքիայում ԱՄՆ-ի օրեցօր աճող ռազմական, տնտեսական, քաղաքական զերիշխանությունն է: Ահա հենց սրա գեղարվեստական արտահայտությունն է «Ամերիկյան վիրակապը» վեպը: Վեպում պատմվում է, թե ինչպես Թուրքիայում գործող ամերիկյան օգնության կազմակերպություններից մեկը ցանկանում է մայրաքաղաք Անկարայի մոտակա Զոզլուօզ գյուղն ամերիկյան օգնությամբ վերածել օրինակելի բնակավայրի, ընդ որում պատրանք է ստեղծվում, թե դա արվում է անշահախնդիր կերպով, և հենց այս «անշահախնդրությունն» էլ Բայքուրթը համարում է «իրականությունը ծածկող վարագույր»: Գրողը վեպում այն կարծիքն է հայտնում, որ իրականում ամերիկացիները նմանատիպ ձեռնարկներով ցանկանում են թուրքերի մոտ ստեղծել անշահախնդիր բարեկամի տպավորություն և սրանով էլ ավելի ամրացնել իրենց դիրքերը Թուրքիայում: Վեպում ամերիկացիները գյուղացիների առաջարկությամբ վերացնում են Աքթեփե կոչվող բլուրը և այնտեղ առաջացած հարթության վրա տնկում ԱՄՆ-ից ներկրված արքայախնձորի ծառեր՝ այն կոչելով «Բարեկամության այգի»: Բացի այդ՝ ամերիկացիները գյուղում կառուցում են զոմեր, հավարներ, բերում են անդրօվկիանոսյան անասունների, հավերի ընտիր տեսակներ՝ այս գյուղում քաղցանցներու համար և այլն: Սակայն նրանց այդ բոլոր ծրագրերը հաջողությամբ չեն պսակվում. արքայախնձորի ծառերը բերք չեն տալիս, հավերը փուչ ձվեր են ածում, անասունները սատկում են, ամերիկյան քանցարեղենի սերմերը կամ բերք չեն տալիս, կամ էլ դրանք շատ փոքրիկ ու

անալիտան են լինում: Այս մանրամասներով Բայքուրթը ցանկացել է ցույց տալ, որ «թուրքական» հողը չի ընդունում ամերիկյան կեղծ օգնությունը, և վեպի վերջում էլ գյուղացիներն այրում են ամերիկացիների կառուցած շինությունները, ոչնչացնում այգին և սկսում են վերականգնել իրենց իսկ առաջարկով հողին հավասարեցրած Աքթեիե բլուրը: Ի դեպ, այս բլուրի վերականգնման համար գյուղացիների ջանքերը որոշ գրականագետներ դիտում են իբրև ազատության համար ժողովրդի մղած պայքար, սակայն այս պայքարի խորհրդանշանը ընդհանրապես համոզիչ չէ, քանի որ բլուրը ոչ թե բռնությամբ կամ գյուղացիների կամքին հակառակ է ոչնչացվել, այլ հենց իրենց ցանկությամբ:

Այս վեպում ծավալվող դեպքերը չեն պատմվում հեղինակի կողմից, այլ ընտրված է հետաքրքիր կոմպոզիցիոն ձև. հեղինակը կարծես բացում է վեպի ամեն մի գլուխը, ու մի քանի նախադասությունից հետո ընթերցողը նկատում է, որ պատմում է ոչ թե հեղինակը, այլ գործող անձերից մեկը, և հետաքրքիր է, որ այս անցումը հստակորեն տարանջատված չէ: Շատ հաճախ դիմորոշ վերջածանցներից են պարզ դառնում, որ պատմողը ոչ թե հեղինակն է, այլ հերոսը: Կոմպոզիցիոն այս ձևը հնարավորություն է ընձեռում Բայքուրթին ավելի խորությամբ և մանրամասնորեն ներկայացնելու տարբեր սոցիալական խմբերին պատկանող մարդկանց բնորոշ մտածելակերպը, նրանց անհանգստացնող խնդիրները՝ հենց իրենց մտածողությամբ և լեզվով: Այս վեպում հեղինակի գլխավոր գաղափարի կրողը «արթնամիտ» տարեց գյուղացին է՝ Քըզըլօզ գյուղի պահակ Թեմելոշը: Նրան ի սկզբանե ամերիկյան օգնությունները վտանգավոր, պարտադրված և օտար են թվում, և նա չի հավատում դրանց արդյունավետությանը: Բայքուրթը հենց Թեմելոշին է վերապահել գյուղացիներին «արթնացնելու», իրականությունը ցույց տալու պարտականությունը: Որպես վեպի երկրորդ սյուժետային գիծ՝ կարելի է դիտել նաև ամերիկացի աշխատող Բոբիի և գյուղական ուսուցչուհի թրքուհի Թուլայի սիրո պատմությունը: Մակայն Բոբիին Բայքուրթը հիմնականում ներկայացնում է որպես դրական կերպար. նա համեստ է, հասկացող, հարգալից, նրան գյուղացիները լավ են վերաբերվում, նրան սիրում է նույնիսկ Թեմելոշը: Բայքուրթը սրանով միզուցե ցանկացել է ցույց տալ, որ ժողովուրդների միջև դրական հարաբերություններ ձևավորելու համար պետք է փոխադարձ հարգանք, ինչպես նաև այդ հարաբերությունները չպետք է լինեն կեղծ և պարտադրված, այսինքն՝ անհրաժեշտ է, որ գործի հավասարը հավասարի հետ սկզբունքը: Մակայն, այս ամենով հանդերձ, բավականին տարօրինակ են, և իրենց մեջ կրոնական ու ազգային թշնամանքի տարրեր են պարունակում այն արտահայտությունները, որոնցով Բայքուրթը ցանկանում է դրական հատկանիշներով օժտել ամերիկացի երիտասարդին՝ Բոբիին: Այսպես, նրա սիրած աղջկա՝ Թուլայի մայրը որպես «դրական» հատկանիշ նշում է, որ Բոբին ընդհանրապես մման չէ մանկության տարիներին Բուրսայում իր տեսած «գյավուրներին», այսինքն՝ քրիստոնյաներին⁴: Բայքուրթը մի կողմից ազգերի միջև անուղղակիորեն և ուղղակիորեն հավասարություն և

փոխադարձ հարգանք է քարոզում և միևնույն ժամանակ վատի, ստորի խորհրդանիշ համարում քրիստոնյաներին: Եվ, ընդհանրապես, այս վեպում հաճախ ենք հանդիպում քրիստոնյաների նկատմամբ արհամարհական վերաբերմունքի արտահայտությունների, կրոնական խտրականության դրսևորումների: Նկատելի են նաև ուրիշ ժողովուրդներին ձուլելու քաղաքականության որոշ միտումներ, որոնք հատուկ են թուրքերին: Օրինակ՝ նույն այդ ուսուցչուհու մայրը ամերիկացի Բոբիին ասում է. «Բոբի ... Սա ի՞նչ անուն է որ: Փոխի՛ր, մեր անուններից մեկը վերցրո՛ւ»⁵: Իսկ պահակ Թեմելոշը, որպես իր ջերմ վերաբերմունքի արտահայտություն, առաջարկում է Բոբիին կրոնափոխ լինել. «Ա՛յ Բոբի, տե՛ս, քեզ լուրջ են ասում, արի մահմեդական դարձի՛ր, թուրքացի՛ր»⁶:

«Ամերիկյան վիրակապը» վեպում հանդիպում ենք ժողովրդին ուղղված միասնականության բազմաթիվ կոչերի: Եվ հենց այս կոչերին անսալով է, որ «արթնացած» միասնական ժողովուրդը քանդում, ավերում և ոչնչացնում է ամերիկացիների կողմից գյուղում ստեղծած ամեն ինչ: Հենց այս դրվագն էլ կազմում է վեպի գագաթնակետը, որին հաջորդած շարադրանքում «արթնացած» ժողովուրդը, հավատալով իր պայքարի արդարացիությանը, չի վախենում ամերիկյան գյուղատնտեսության նախարարի հետ գյուղ այցելած նահանգապետի և այլ պաշտոնյաների սպառնալիքներից՝ գտնելով, որ եթե իրենց ձերբակալեն էլ, մեկ է՝ պայքարը կշարունակեն երեխաները⁷: Ամերիկացիների հեռացումը Բայքուրը համարում է Թուրքիայի ինքնուրույնության վերականգնում, և վեպը հենց այդպես էլ ավարտվում է. գյուղացիները, հայացքով ուղեկցելով գյուղից հեռացող ամերիկացիների և թուրք պաշտոնյաների ավտոշարասյանը, թեթևացած շունչ են քաշում՝ «կարծես փրկվել էին»⁸:

RUBEN MELKONIAN
(YSU)

REFLECTION OF ANTI-AMERICAN SENTIMENTS IN
TURKISH WRITER FAKIR BAYKURT'S NOVEL "THE
AMERICAN BANDAGE"

After the World War II the relationships between Turkey and the USA became closer in several spheres. The US established political, military, economic predominance in Turkey which in its turn resulted in anti-American sentiments within different strata of the Turkish society. They find their reflection in the contemporary Turkish literature.

Fakir Baykurt is one of the famous writers of the 20th century Turkish literature. Being an author, who depicts the rural reality, he has illustrated the hard social conditions of

the rural population in Turkey. In parallel to this, in his literary pieces he has presented several important political and public events of the second part of the past century. As expected, Baykurt has referred to the anti-American moods and being a novelist who writes mainly about rural problems, he reflects the anti-American sentiment through description of village and rural population.

Baykurt's novel titled "American bandage" is one of the most eminent books of its time, which possesses anti-American trends.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Утургаури С., Турецкая проза 60-70-х годов, Москва, 1982, с. 11.
2. Айзенштейн Н., Из истории турецкого реализма, Москва, 1968, с. 255.
3. Anda I F., Anadolu Ayдынlanmacısı Fakir Baykurt, Ystanbul, 2000, s. 100.
4. Baykurt F., Amerikan Sargısı, Ystanbul, 2001, s. 208.
5. Նույնի, էջ 208:
6. Նույնի, էջ 234:
7. Նույնի, էջ 299:
8. Նույնի, էջ 300:

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ԼԻԼԻԹ
(ԵՊՀ)

**ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍՈՒՆԻՐՈՒ
ՌԱՎԱՆԻՓՈՒՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Իմ ողջ էությունը խավարի պատգամն է

*Որ քեզ իր մեջ կրկնելով անվերջ
հավերժ ծլարձակումների ու ծաղկումների
Արշալույսին կառաջնորդի*

*Իրանի ճանաչված բանաստեղծուհի Ֆորուդ Ֆարրուզադի «Մի այլ
ծնունդ» ստեղծագործությունից*

Պարսկական ժամանակակից գրականության մեծահամբավ կին արձակագիր Մունիրու Ռավանիփուրի ստեղծագործությունները բնութագրելիս թերևս կարելի է բնաբան վերցնել գրողի խոհերց ածանցված հետևյալ մեջբերումը. «Իմ կյանքը լի է պայքարով և ընդդիմությամբ՝ հանուն իմ երկրի կանանց, և այսուհետ իմ հերոսուհիները կպատկերեն տառապանքն ու պայքարը այնքան խոստում, ինչքան ճակատագիրն ու երջանկությունն են»¹: Ռավանիփուրի գրական կենսագրությունը սկսվել է Իրանի իսլամական հեղափոխությունից հետո, երբ երկրի հասարակական-մշակութային կյանքում լայն տարածում ստացավ ֆեմինիստական գաղափարախոսական շարժումը:

1980-ական թթ. սկսած գրականությունը դարձավ կանանց ինքնաբերական լայն կարևորագույն միջոց, քանի որ հասարակական ոլորտը սահմանափակ էր և չէր նպաստում ֆեմինիստական բանավեճերին ու քննարկումներին²: Երկրի ներսում և նրանից դուրս կանանց կողմից ու կանանց մասին հրապարակված գեղարվեստական գրականությունը նոր ուղի հարթեց ֆեմինիստական գաղափարախոսության կայացման համար³:

«Արդիականության առաջամարտիկներ»⁴ այսպես անվանվեցին հետհեղափոխական շրջանի այն կին ստեղծագործողները, ովքեր կանանց ինքնության, իրավահավասարության հասարակական-քաղաքական հիմնախնդիրներին տվեցին գեղարվեստական լուծում:

Կանացի գրական ավանդույթների ակտիվ հետևորդներից է նաև Մունիրու Ռավանիփուրը (ծն. 1954թ.): Նրա պատմվածքներն ու վեպերը նոր էջ բացեցին ժամանակակից իրանական արձակի ավանդական նկարագրում, բերելով բովանդակության, ձևի, գրելակերպի ինքնատիպ ձեռագիր: Մ:

Ռավանիփուրը նորարար արձակագիր է, որի ստեղծագործություններում նկատելի է գրողի առանձնահատուկ մտեցումը լատինաամերիկյան արձակյան նորագույն ավանդներին՝ մասնավորապես մեզական ռեալիզմին⁴:

Ռավանիփուրը բեկում մտցրեց ժամանակակից իրանական հասարակության գեղագիտական գիտակցության մեջ, համադրելով երկու խիստ արդիական հիմնախնդիրներ: Դրանցից առաջինը՝ ազգային ավանդույթներին, հատկապես հարավային Իրանի տեղաբնիկների բարոյական արժեքների դարավոր կուտակումները պաշտպանելու խնդիրն էր: Այդ են փաստում հեղինակի «Կանիցու» պատմվածքը, տպագրված 1988թ. և նրան ազգային մեծ ճանաչում բերած «Խեղդվածը» (1989) վեպը:

Երկրորդ հիմնախնդիրը, որը առաջնային դարձավ Մ. Ռավանիփուրի արձակում, իսլամական հասարակության մեջ ժամանակակից կնոջ ազատ ապրելու, ստեղծագործելու, իր իրավունքները պահպանելու պահանջն է: Նրա ստեղծագործություններում կինը չունի այլևս անօգնական զոհի ավանդական բարոյաթը: Կնոջ էությունը այսուհետ պայքարն է:

Իր «Պողպատյա սիրտը» (1990) վեպում Ռավանիփուրը քննարկում է ստեղծագործող կնոջ խնդիրը հետհեղափոխական Իրանում: Վեպի գլխավոր հերոսուհին՝ երիտասարդ գրող Ավսանեն կանգնած է «իր սեփական սենյակը» ունենալու հոգեբանական ու ֆիզիկական փնտրտուքների հավերժական ճանապարհին: Փախչելով բռնաբար ամուսնուց, հերոսուհին իր համար հայտնաբերում է նոր միջավայր, որտեղ վերջ է վերջո ի կատար կածվեր «սեփական պատմությունը գրելու» նրա վաղեմի երազանքը: Մակայն ստեղծագործելու տղամարդկային արհեստավարժությունը ու կնոջ անմնացորդ նվիրվածության բանաձևը հոգեբանական նոր պատենչ են ստեղծում երիտասարդ հերոսուհու համար և նա մնում է «իր սեփական սենյակը» փնտրելու արդեն ծանոթ ու դժվարին ճանապարհին:

Ռավանիփուրը իր «Պողպատյա սիրտը» վեպում փորձում է վերահիմաստավորել հանրաճանաչ անգլիացի ֆեմինիստ գրող Վիրջինյա Վուլֆի հայտնի կնոջ՝ «իր սեփական սենյակը ունենալու» այլաբանությունը⁵: Ստեղծագործող կին անհատականությանն ու նրա խնդիրները ընկալելու համար անհրաժեշտ է հասարակության արդիականացում: «Իր սեփական սենյակին» կինը կարող է տնօրինել միայն արդիակալման ցված հասարակության մեջ ինքնահաստատվելուց հետո:

Ստեղծագործող կնոջ կերպարը իր տրամաբանական զարգացումն է ստանում «Միտ տխուր պատմությունը» պատմվածքում⁶: Նրա հիմնական թեման է կին-տղամարդ հարաբերություններ համամարդկային խնդիրը: Պատմվածքի դիպաշարային առանցքն է ստեղծագործող կնոջ սերը ինքնակենտրոն տղամարդու նկատմամբ: Տղամարդուն հեռաքրքրում է միայն կնոջ գրական գործունեությունը, նրա գրքերի տպաքանակը: Ձգալով տղամարդու անտարբերությունը՝ կինը վարձում է վերավախել իրավիճակը՝

ակնկալելով ապագայում փոխադարձ սեր: Նա փակվում է իր սենյակում ու սկսում է գրել: Նրա գրքերը տպագրվում են իրար հետևից: Ժամանակը ոչ մի էական նշանակություն չունի նրա համար, կարծես այն երբեք էլ չի եղել: Ինչպես խորհում է հեղինակը. «Կինը սովորականի պես էր: Նրա խելքի, գիտակցության ու սրտի միջև չկար որևէ տարանջատում: Նրա բառերը նույնն էին, ինչպես նրա մտքերն ու զգացմունքները, և սիրային հարցերում նա իսկապես չէր հավատում ժամանակին: Նա միշտ սիրահարված էր և այն մարդկանցից մեկը չէր, ով սիրահարվում է մի րոպե և հետո մոռանում»: Պատմվածքի վերջում կին-տղամարդ բարոյական հակասությունները հանգեցնում են անկանխատեսելի արդյունքի: Կինը այլևս չի նկատում տղամարդուն, նա առաջվա նման միայնակ է ու լիովին սպառել է իրեն: Պատմվածքը ավարտվում է հեղինակի այս խոհերով.

«Կինը այլևս կին չէր, նա վերածվել էր բառերի մի քարակոյտի, և երբ տղամարդը փորձեց թափահարել նրա ուսերը, որպեսզի համոզված լինի, հանկարծակի հազարավոր բառեր թափվեցին հատակին և այս հազարավոր բառերի մեջ տղամարդը տեսավ հետևյալը.

Դուք շատ գրավիչ եք, եղեք իմ ընկերը, ես շատ միայնակ եմ»:

Պատմվածքի վերջում կնոջ ընտրած մետամորֆոզի բնութագիրը նմանության եզրեր ունի Շահրանուշ Փարսիփուրի «Կանայք առանց տղամարդկանց» վեպի հետ, որտեղ գլխավոր հերոսուհիներից մեկը՝ Մահդոթթը ծառից վերածվում է սերմերի լեռան⁸: Երկու ստեղծագործություններում էլ կնոջ սիմվոլիկ մահը վերջը չէր, նրանց վերամարմնավորումը ազդարարում էր նոր կյանքի և նոր գիտակցության սկիզբ: Այստեղ և բառերը և ծառի սերմերը խորհրդանշում էին արարման հավերժական աղբյուրը, առաջինը խոսքի, երկրորդը՝ բնության մեջ: Այդ երկու կերպարներն էլ գուգակցվում են կնոջ մարմնի և նոր կյանք պարզևեղու նրա աստվածաշնորհ կարողության հետ:

Ֆեմինիստական քննարկումների կարևոր թեմաներից է նաև կնոջ դեմ բռնության խնդիրը: Այն նույնպես գտել է իր արձագանքը Ռավանիփուրի ստեղծագործություններում: Վերցնենք, օրինակ, «Մատանայի քարերը» պատմվածքը, որի դիպաշարը խիստ գաղափարականացված է: Հեռավոր, լքված մի գյուղաքաղաքում շրջում էր խորհրդավոր ջինը և վերահսկում ու կառավարում էր ամեն ինչ, նույնիսկ մարդկանց ճակատագրերը: Գյուղի կանայք հավատում էին սպիտակ ջինին, որը դարձել էր ամենածեր կնոջ՝ Նանիի պահապանը և հենց նա էլ կանխորոշել էր ծեր Նանիի հավերժական կուտությունը: «Նա միշտ սև հագուստի մեջ էր և միշտ միայնակ գյուղի ամենածեր կույսը», - գրում է հեղինակը:

Ոչինչ և ոչ ոք անվերայ չէր Նանիի սուր այքերից, նույնիսկ երիտասարդ ուսանողուհու վերադարձը հարազատ տուն: Մարիամը բժշկություն էր ուսումնասիրում Շիրազ քաղաքում և որոշել էր տեսակցել հարազատ մորը,

ինչն էլ աղջկա կյանքում վերածվեց մեծագույն ողբերգության: Ըստ գյուլի ավանդապաշտ կանանց, ուսում ստացած կինը կարող էր իր հետ միայն չարիք բերել դրսից: Թերուս այդ կանանց համար կուսության մասին նախապաշարումները հաճախ անհանդուրժողա-կանության բնագոյով պայմանավորված արարքների պատճառ էին դառնում:

Հեղինակը ռեալիստորեն է նկարագրում ռեմակի վերածված կանանց, ովքեր ամենավայրագ մեթոդներով փորձում էին ստուգել երիտասարդ ուսանողուհու կուսության իրողությունը: Հարագատ մայրն անգամ անկարող էր օգնել դստերը: Նա նույնպես ծեր Նանիի նախապաշարումների հպատակն էր դարձել:

Ռավանիփուրի այս պատմվածքում արտացոլված են մի շարք ֆեմինիստական հիմնախնդիրներ: Դրանցից, թերևս, ամենակարևորն է ավագ և երիտասարդ սերնդի կանանց աշխարհակալման անհամատեղելիության հիմնահարցը, ինչը իր արտահայտումն է գտնում ավանդականի ու արդիականի հավերժ բախման հոլովությամբ: Հեղինակը առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում նաև հասարակության մեջ հիվանդագին թաքու դարձած կուսության ավանդական ընկալման խնդրին, որը Իրանում մինչ օրս մնում է կանանց նկատմամբ հոգևոր և ֆիզիկական բռնության պատճառ:

Այսպիսով, Մունիրու Ռավանիփուրը իր ստեղծագործություններում հակված չէ շեշտադրելու կնոջ ներքնաշխարհի գունային զաղտնիքները, բացահայտելու նրա թուլության բանաձևը: Կնոջ գոյությունը ռավանիփուրյան արձակում պայքարի խորհրդանիշն է, իսկ նրա խոսքը՝ գաղափարական այդ պայքարն իրագործելու երկընտրանքային զենքը:

LILIT SAFRASTYAN
(YSU)

FEMINIST ISSUES IN THE WORKS OF MUNIRU RAVANIPUR

The 1979 Islamic Revolution provided grounds for exploring the connection between feminist ideology and literature. Since the late 1980s literature has become a particularly important field for women's self-expression because public space for discussion and debate has been extremely limited. In our days Iran women's literature flourishes in a proliferation of books, articles and journals by and about women inside and outside the country.

Feminist themes predominate in the works of Muniru Ravanipur, a leading post-revolutionary female writer. Ravanipur explicitly addresses issues related to women's identity

and rights by emphasizing the importance of women's literary activities. This article aims at discussing feminist issues in following three works of M. Ravanipur: "Heart of Steel", "Love's Tragic Tale", and "Satan's Stones".

Ravanipur adheres to a feminist notion of literature that portrays women not as helpless victims but rather as rebellious souls.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լազարյան Ժ., Մուսահիբիի բա Մունիրու Ռավանիփուր (Հարցազրույց Մունիրու Ռավանիփուրի հետ), Ադինեհ, թիվ 35 (հոկտեմբեր 1990), էջ 4:
2. Talattof K., *The Politics of Writing in Iran*, Syracuse, New York, 2000, p.140.
3. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, New York, 1992, p. 231.
4. Faraj Sarkohi, «Ich» zu sagen, ziemt sich nicht Frauen erobern ihren Platz in der iranischen Literatur. - *Neue Zürcher Zeitung*, 15. November 2003.
5. Այս եզրակացությանը կարելի է համգել մասնավորապես, վերլուծելով հեղինակի «Խեղդվածը» վեպը: Տես Մ. Ռավանիփուր, «Աիլ- ե դարդ», Թեհրան, 1989:
6. Virginia Woolf, *A Room of One's Own*. New York- San Diego, 1989.
7. «Միրո տխուր պատմությունը» պատմվածքը վերցված է հեղինակի «Մատանայի քարերը» պատմվածքաշարից: Տես Ռավանիփուր Մ., Սանգհայե Շեյթան, Թեհրան 1990:
8. Շահրնուշ Փարսիփուր, Ջաման քիդունե մարդան, Թեհրան 1990:

ՔՈՉԱՐՅԱՆ ՀԱՅԿ

(ԵՊՀ)

«ՈՒՍՄԱ» ԵԶՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԴԻՄՆԵՐՈՒՄ

Մուհամմադ մարգարեի խոսքի ու վարվելակերպի մասին պատմող ավանդությունը կոչվում է *հադիս*, որը բառացի նշանակում է «լուր», «տեղեկություն», «պատմություն»: Հադիսները վերաբերում են մուսուլմանական համայնքի կազմակերպման տարբեր կրոնափրավական կողմերին և բաղկացած են երկու մասերից: Մի մասը բուն ինֆորմացիոն հատվածն է, որը կոչվում է *մաթն*, իսկ մյուս մասը՝ *խմադդ*, որը իրենից ներկայացնում է այդ ինֆորմացիան սերնդից սերունդ հաղորդողների շղթան: Հադիսները Ղուրանից հետո համարվում են իրավունքի երկրորդ աղբյուրը, որոնց վրա է հիմնված սուննան, ինչպես նաև նրանցում է զետեղված իսլամի սկզբունքների ու գաղափարների զգալի մասը:

Յոթերորդ դարի կեսերից սկսած կազմվում էին հադիսների քննատիկ ժողովածուները (*մուսաննաֆ*), և ժողովածուներ, որոնցում հավաքագրվում էին այն հադիսները, որոնց իսնադը սկսվում էր մեկ ընդհանուր հաղորդողից: Այդպիսի ժողովածուները կոչվում էին *մուսնադ*: Մունիական իսլամում առավել հարգանք վայելող հադիսների ժողովածուներն են՝ ալ-Բուխարիի (մահ.870թ.) «Մահիհը», Մուսլիմի (մահ.875թ.) «Մահիհը», Աբու Դաուդ ա-Սիջիստանիի (մահ.888թ.) «Քիտաբ ա-Մունանը», Մուհամմադ աթ-Թիրմիզիի (մահ.892թ.) «Մունանը», ան-Նասա'իի (մահ.915թ.) «Մունանը» և Իբն Մաջիի (մահ.886թ.) «Մունանը» (2:262):

Այժմ դիտարկենք այն հադիսները, որոնք պարունակում են «ուսմա» եզրը և ընդգրկված են վերը նշված ժողովածուներում՝ պարզելու համար, թե ինչ համատեքստում է օգտագործվում այն ու ինչ իմաստային ծանրաբեռնվածություն է կրում:

Պետք է նշել, որ այսպիսի հետազոտությունը հնարավորություն է ընձեռում ավելի լավ հասկանալ, թե պատմագրական այս ժամանակահատվածում (իններորդ դար), երբ հավաքագրվեցին հադիսների ժողովածուները, որքանով էր ձևավորվել «ուսմա» եզրը՝ որպես ինքնուրույն հասկացություն:

«Ուսմա» եզրի իմաստային ծանրաբեռնվածությունը և գործածության որաշակի ընդհանրությունները թե՛ Ղուրանում և թե՛ հադիսներում պայմանավորված են Մուհամմադի անձով: Եթե առաջին դեպքում այսօրները հաղորդվել են մարդկանց նրա միջոցով՝ հայտնության ճանապարհով, այսինքն, նա հանդես է եկել որպես միջնորդ, ապա հադիսներում հիմնականում զետեղված է նրա խոսքը: Այսինքն՝ այստեղ հանդիպող «ուսմա» եզրը արտացոլում է, թե ինչ պայմաններում և ինչ ձևով է Մուհամմադը կիրառել այդ եզրը: Ճիշտ է, այս երկու աղբյուրներում կարելի է գտնել կիրառության նմանություններ, բայց, այնուամենայնիվ, առկա են նաև տարբերություններ:

Օրինակ՝ եթե Ղուրանում հանդիպում են այսքներ (Ղուրան 43:22,23; 11:8; 12:45), ուր գործ ունենք «ուսմա» եզրի վաղ իմաստների հետ, ինչպիսիք են «ժամանակահատված», «ուսմունք» իմաստները (1:78-87), ապա արդեն հաղիսներում նման կիրառությունները բացակայում են: Փոխարենը հաղիսներում հանդիպում ենք «ուսմա» եզրի կիրառությանը միանգամայն նոր բառակապակցություններում և նոր համատեքստում: Նման նոր բառակապակցություններից է «Մուհամմադի ժողովուրդ» (*ուսմաթու Մուհամմադ*) արտահայտությունը: Այստեղ «Մուհամմադի ժողովուրդ» արտահայտությունը ընդգրկում է բոլոր մուսուլմաններին, և այս առումով կարելի է գուգահեռներ անցկացնել Աստվածաշնչյան «Մովսեսի ժողովուրդ» արտահայտության հետ, որով բնորոշվում են հրեաները: Այս արտահայտությունը պարունակող հաղիսները հանդիպում են վերը նշված բոլոր հաղորդողների մոտ (3 - #642, 915, 5100, 6484, 1030, 6394; 4 - #2039, 5047; 5 - #1475, 1501,4005, 4006, 4007; 6 - #2191, 3234, 3844; 7 - #4376; 8 - # 2793):

Արու Դ-սուդ ա-Սիջիստանի մոտ հանդիպում է նաև «Մարգարեի ժողովուրդ» (*ուսմաթու ան-նաբի*) տարբերակը (8 - #4620): Իսկ Ի-Բուխարին և աք-Թիրմիզին հաղորդում են հաղիսներ, որտեղ Մուհամմադը, խոսելով հավատացյալների մասին, նրանց բնորոշում է «Քիմ ժողովուրդ» (*ուսմաթի*) արտահայտությամբ (3 - #6394; 6 - #3234, 2191):

Հաղիսների ժողովածուներում հանդիպում են նաև հաղիսներ, ուր կարելի է տեսնել «ուսմա» եզրի կիրառությունը «քուլու ուսմաթին» կառույցում (3 - #3411, 4464, 4930, 4935, 4600, 4463; 4 - #1819, 1817, 1928, 408; 6 - #3120, 2422, 2374; 7 - #4285; 8 - #3669) և իր իմաստով նման է Ղուրանում հանդիպող նմանատիպ կառույցով արտահայտվող իմաստին, որը կարելի է թարգմանել որպես «յուրաքանչյուր ժողովուրդ» (1:78-87):

Հաջորդ առանձնացված խմբում կիրառվող կառույցը նույնպես հանդիպում է Ղուրանում և վերաբերում է 2:143-րդ այսքի մեկնաբանությանը (1:78-87), որտեղ «ուսմա» եզրը հանդես է գալիս «ուսմաթան վասատան» (միջնորդ ժողովուրդ) տեսքով (3 - #7185, 3269, 4373; 6 - #3048, 3049; 7 - #4376):

Երկու այլ՝ իրար որոշակի նմանություն ունեցող հաղիսներում, հետաքրքիր համատեքստում է հանդես գալիս «ուսմա» եզրը: Բանն այն է, որ այդ հաղիսներում «ուսմա» եզրը կիրառվում է կենդանական աշխարհի ներկայացուցիչների հանդեպ (Համեմատիք Ղուրանի 6:38-րդ այսքի հետ): Առաջին դեպքում այն վերաբերում է մրջյունին (*մամյ*) (3 - #2952; 4 - #5801; 5 - #4338; 7 - #3302; 8 - #5261), իսկ երկրորդ դեպքում՝ շներին (*քիլաք*) (5 - #4260; 6 - #1488, 1491; 7 - #3282; 8 - #2846): Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ «մամյ» կիրառությունը, սակայն մեր կարծիքով այստեղ կարելի է տեսնել որոշակի տրամաբանություն: Հայտնի է, որ մրջյունները կենդանական աշխարհի այն ներկայացուցիչներն են, որոնք ապրում են կանոնակարգված համայնքներով: Մյուս կենդանիները, որոնք հիշատակվում են այս հաղիսներում, շներն են, որոնք նույնպես աչքի են ընկնում իրենց համայնքայնությամբ: Հաշվի առնելով նաև այն, որ Արաբիայի կենդանական աշխարհից այս երկու կենդանիները կարող էին հայտնի լինել Արաբիայի բնակչությանը իրենց

համայնքայնությամբ, կարելի է ասել, որ վերը նշված հաղիսների բնույթը առարկային է, իսկ «ուժնա» եզրը կիրառվում է՝ ցույց տալու համար այդ կենդանիների կանոնակարգված ներքին փոխհարաբերություններն ու համակեցությունը՝ միևնույն ժամանակ բացահայտելով ու բացատրելով «ուժնայի» էությունը:

Հաղիսների մի ստվար զանգվածում հանդիպում է «*հավիհի ուժնաթուն*» ձևը (3 - #6141, 4439, 4949, 3578, 2648, 7271, 798, 6426, 6590, 4273, 7094, 3658, 4275, 3048, 4867; 4 - #7162, 393, 6206, 6205, 6267, 6266, 6429, 2408, 405; 5 - #3180, 4765, 4346; 6 - #3424, 3096, 2180, 2243, 2242, 2215, 2244, 2214, 3915, 3952, 3953, 3208; 7 - #3774, 272, 3185, 1670, 4319, 64, 139, 158, 4384, 4149, 95; 8 - #2790, 4241, 4242, 4683, 4297, 4288, 4277, 4276, 4345), որը կարելի է քարզմանել որպես «*այս ուժնան*»՝ հիմք ընդունելով այն, որ այս հաղիսներում «ուժնա» եզրը համդեմ է գալիս որպես հատուկ անուն և ընկալվում է որպես առանձին միավոր՝ համայնք, իսկ «*հավիհի*» (այս) ցուցական դերանվան կիրառությունը հիմնավորված է դարձնում նման մոտեցումը: Աբու Դաուդ աւ-Միջիստանին հաղորդում է մի շատ հետաքրքիր հաղիս, որը հնարավորություն է տալիս տեսնելու «ուժնա» եզրի սահմանները: Մասնավորապես, հաղիսում կարդում ենք. «... ապրում է այս ուժնայում մի ցեղ (*կաում*) ...» (8 - # 96): Այսինքն երևում է, որ համայնքը՝ ուժնան, իր մեջ ներառնում է տարբեր ցեղեր և ընդլայնում է իր սահմանները՝ ընդգրկելով մեկ ժողովրդից ավելի: Մեկ այլ հաղիսից, որը զետեղված է Մուսլիմի մոտ, կարելի է տեսնել, որ քրիստոնյաներն ու հրեաները նույնպես համարվում են ուժնա (4 - #341):

Առանձին խմբում կարելի է դասել այն հաղիսները, որոնցում «ուժնա» եզրը հանդիպում է «*ուժնաթուն մին*» կառույցում: Մի դեպքում գործածվում է «*ուժնաթուն մին մուսլիմունա*» (մուսուլմանների համայնք) ձևով (4 - #2152; 5 - #1992; 6 - #1023), իսկ մյուս դեպքում՝ «*ուժնաթուն մին ան-մաս*» (մարդկանց համայնք) ձևով (5 - #1993), սակայն նույն տեղում նշելով, որ «մարդիկ» (*ան-մաս*) ձևակերպումը վերաբերվում է մուսուլմաններին: Մեկ այլ հաղիսում օգտագործվում է «*ուժնաթուն մին բնեյ իսրայիլ*» (իսրայելցիների համայնք) տեսքով (3 - #4384, 6728, 3235; 4 - #4999; 5 - #4300; 7 - #3315; 8 - #3795): Կասկածի տակ չդնելով այս հաղիսների իսկությունը՝ կարելի է նաև ենթադրել, որ նման կառույցների ի հայտ գալը ուղղակի կապված է ավելի ուշ շրջանի հաղորդողների հետ, քանի որ չի կարելի բացառել այն, որ հաղորդելուց նրանք կարող էին իմանալ հաղիսի մատնի ընդհանուր բովանդակությունը և չիմանալ կոֆ-կրետ բառերը, որոնցով արտահայտված է եղել այդ իմաստը: Իսկ նման պարագայում վերբաղիզացման ընթացքում նրանք օգտագործել են բառեր, որոնք իրենց ապրած պատմական ժամանակահատվածում յուրովի են ընկալվում: Մեր պարագայում դա վերաբերվում է «ուժնա» բառին, որը, ինչպես տեսնում ենք, օգտագործվում է նոր կառույցներում, որոնք բացակայում են Դուրանում, և իմաստային ծանրաբեռնվածության առումով ցույց է տալիս մարդկային համակեցություն ու համայնքայնություն ընդհանրապես:

Ամփոփելով մեր հետազոտությունը՝ կարելի է ասել, որ չնայած այն հանգամանքին, որ հաղիսներում հանդիպում են «ուժնա» եզրի կիրառության

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱՍ – Հայաստանի հանրապետության Գիտությունների ազգային
ակադեմիա

ԱԻ – ՀՀ ԳԱՍ Արևելագիտության ինստիտուտ

ՊԻ – ՀՀ ԳԱՍ Պատմության ինստիտուտ

ԼԻ – ՀՀ ԳԱՍ Լեզվի ինստիտուտ

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

ՀՅԹԻ – Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ

«Նորավանք» ԳԿՀ – «Նորավանք» Գիտակրթական հիմնադրամ

ABBREVIATIONS

NAS RA – National Academi of Sciences, Republic of Armenia

IOS – Institute of Oriental Studies, NAS RA

IH – Institute of History, NAS RA

IL – Institute of Linguistics, NAS RA

YSU – Yerevan State University

MIAG – Museum-Institute of Armenian Genocide

“Noravank” SEF – “Noravank” Scientific-educational foundation

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գրեկյան Երվանդ Երկու Ուրզանա ⁶	5
Դալայան Տորք Հայաստանի արքա <i>Բարզանեսը</i> լեզվադիցաբանական լույսի տակ.....	12
Թովմասյան Համիկ Խիդրի կերպարը արաբական և առաջավորասիական ժողովուրդների հավատալիքներում (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)	19
Խանգադյան Մարիամ Իսուվայի արքայի և խեթական «մեծ արքայադստեր» դիմաստիական ամուսնությունը	23
Հմայակյան Համիկ Մոսանվեր Անուշավանը և նրա կովկասյան ու խուդիական գուգահեռները	28
Ղազարյան Ռոբերտ Հայասա-Ազգիի տեղադրության հարցի շուրջ (Ըստ Մուրսիլիս II-ի տարեգրության)	35
Մադայան Արտակ Վարանդայի մելիքությունը	40
Մաքառյան Թեմիմեն Կարմեյսունների Իրանում բնակություն հաստատելու շուրջ	44
Մոեամմադ Մալեք-Մոհամմադի Մի քանի վաղնջական հավատալիքներ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում	49
Մովսիսյան Արտակ Աշխարհի Բարեւոնյան քարտեզը և Հայաստանը	54
Շաքարյան Արտակ Բռնագաղթն ու մանկահավաքը որպես Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական վերադասավորման միջոցներ	59
Տեր-Վարդանյան Ներսես Կիլիկյան Հայաստանը՝ որպես Հոռմի արևելյան քաղաքականության հնարավոր հենակետ ԺԴ. դարի սկզբին	63

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անույնյան Մեյիհնե Հայերի տեղահանության և կոտորածների դատական գործերը, երեք մահապատիժ	68
Գասպարյան Արամ Արաբ սպաների դերը ազգային-ազատագրական շարժման մեջ. Ազիզ Ալի ալ Միսրի	73
Գևորգյան Գոռ Եզիպտոսը և Պարսից ծոցի արարական երկրների անվտանգության խնդիրը 1990-ական թվականների սկզբին	76
Գրիգորյան Հակոբ Ադրբեջանի կողմից Հայրենական մեծ պատերազմի տարիներին Արցախում իրականացված խտրկանաբանության քաղաքականությունը	80
Դումանյան Արթուր Աջակողմյան ծայրահեղականների ահարկչությունը Թուրքիայում 1980 թվականի ռազմական հեղաշրջման մախօրեին	84
Ջուրարյան Լևոն Միոնիստական շարժման և Գերմանիայի ներկայացուցիչների միջև «Հավաքար» համաձայնագիրը	88
Խատամի-Տիրգոռյի Ֆրիկ Իրանը և քաղաքացիական պատերազմն Աֆղանստանում (1979-1989թթ.)	93
Խաչատրյան Ալբերա Նավթը և Իրանի տնտեսական ու քաղաքական զարգացումները 1970-ական թվականներին	98
Հակոբյան Արմինե Կ. Պոլսի պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի հրաժարականի պատճառների հարցի շուրջ	102
Հակոբյան Արսեն Թաթարստանի պատմության որոշ դրվագներ 20-րդ դարի սկզբի ազգամիջյան հարաբերությունների համատեքստում	108
Հարությունյան Աղավնի «Արևելյան Թուրքիստանը» և ույղուրական հիմնահարցը	113
Ղաթիրջանյան Գևորգ 1980-ական թթ. սկզբներին Միդիայում սոցիալ-տնտեսական և ներքաղաքական որոշ զարգացումների շուրջ	118

Մալյան Բենիամին Համշենահայերի զորամասը կամավորական բանակի շարքերում (1919-1920թթ.)	122
Միրայեյան Գռիգոր Իրանի և ֆաշիստական Գերմանիայի հարաբերությունները Ռեզա շահ Փահլավիի իշխանության տարիներին	127
Վերանյան Կարեն Հարավային Կովկասում ԱՄՆ ֆինանսական ծրագրերի շուրջ	131

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կարապետյան Նաիրա Անկախ Եգիպտոսի ոգու զարթոնքը Նազիր Մահֆուզի «Բալ-ալ-Կասրեյն» և Թաուֆիկ ալ-Հաքիմի «Ոգու վերադարձը» ստեղծագործություններում	136
Հակոբյան Լիանա Տրական հուլովի տեղի և ժամանակի գործառնությունը հայերենում	140
Մանուկյան Անի Գործողության սուբյեկտի իմաստության ձևավորումն արաբերենի պարզ եռակազմ բայահիմքի շրջանակում	142
Մելքոնյան Ռուբեն Հակաամերիկյան տրամադրությունների արտացոլումը թուրք գրող Ֆաքիր Բայրութի «Ամերիկյան վիրակապը» վեպում	147
Մաֆրասյան Լիլիթ Ֆեմինիստական հիմնահարցերը Մունիրու Ռավանիփուրի ստեղծագործություններում	152
Քոչարյան Հայկ «Ումմա» եզրի կիրառությունը հադիսներում	157

C O N T E N T S

ANCIENT AND MIDDLE AGES

Yervand Grekyan Two Urzanas?	9
Tork Dalalyan The King of Armenia <i>Barzanes</i> in the Light of the Mythological and Linguistic Research	16
Hasmik Tovmasyan The Image of Khydr in the Near-Eastern Beliefs	21
Mariam Khanzadyan The Dynastic Marriage between the King of Išuwa and “Great Princess” Kilushepa	26
Hasmik Hmayakyan Sosanver Anušavan and his Hurrian and North Caucasian Parallels	32
Robert Ghazaryan On the Issue of the Location of Hayaša-Azzi (According to the Annals of Muršiliš II)	38
Artak Maghalyan The Melikdom of Varanda	42
Tehmine Martoyan On Residences Established by the Carmelites in Iran	47
Mohammad Malek-Mohammadi On Some Ancient Beliefs in “E’c A’andoc’” (“The Refutation of Sects”) by Eznik Ko’bac’i	52
Artak Movsisyan The Babylonian Map of the World and Armenia	58
Artak Shakaryan Deportation and Devshirme as a Tool of Demographic Reorganization in the Ottoman Empire	62
Nerses Ter-Vardanyan Cilician Armenia as a Prop for Oriental Policy of Rome in the Beginning of XIV Century	66

MODERN AND CONTEMPORARY HISTORY

Meline Anumyan
Court Processes of Deportation and Massacres of Armenians:
Three Executions71

Aram Gasparyan
The Role of Arab Military Officers in National Liberation
Movement: Aziz Ali al-Misri75

Gor Gevorgyan
Egypt and the Security Problem of the Persian Gulf Arab
Countries in Early 1990's78

Hakob Grigoryan
Azerbaijan's Policy in Kharabagh During the Great Patriotic
War (1941-1945)83

Artur Dumanyan
Extreme Right Terror in Turkey in the Eve of the Military
Coup in 198086

Levon Zourabyan
The "Haavara" Agreement between Representatives of the Zionist Movement and
Germany91

Khatami-Tirgordi Frik
Iran and the Afghan Civil War in 1979-198996

Albert Khachaturyan
Oil and Iran's Economic and Political Developments
in the 1970's100

Armine Hakobyan
About the Reasons of Resignation of Archbishop M. Izmirlyan, Armenian
Patriarch of Constantinople106

Arsen Hakobyan
Some Aspects of the History of the Tat-Speaking Armenians in
the Context of the Interethnic Relationship in the Beginning
of the 20th Century112

Aghavni Harutyunian
"Eastern Turkistan" and Uyghur Problem116

Gevorg Gharibjanyan
On Some Political and Socio-Economic Developments in Syria
in the Early 1980's121

Benjamin Mailyan
Hamshin Armenians' Military Unit in the Voluntary Army Rows
(1919-1920)125

Gohar Mikayelyan
The Relations between Iran and Nazi Germany during
Reza-Shah-Pahlavi's Reign130

Karen Veranyan
The US Aid Programs in South Caucasus134

LINGUISTICS AND LITERARY CRITICISM

Naira Karapetyan
The Awakening of the Spirit of the Independence in the Nagib
Mahfuz's "Bayn-al-Kasrayn" and Tawfiq al-Hakim's "The Return
of the Spirit"139

Liana Hakobyan
Utilization of Place and Tense in Dative Case in Armenian141

Ani Manukyan
The Formation of the Action's Subject Meaning in the
Arabic Simple Verbal Three-Component Stem145

Ruben Melkonyan
Reflection of Anti-American Sentiments in Turkish Writer
Fakir Baykurt's Novel "The American Bandage"150

Lilit Safrastyan
Feminist Issues in the Works of Muniru Ravanipur155

Hayk Khocharyan
The Usage of the Term "Umma" in the Adith160

ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԸ

Պատմություն, քաղաքականություն, մշակույթ

NEAR EAST

History, politics, culture

Գեղ. Խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան

Համակարգչ. ձևավորող՝ Շ. Ա. Հակոբյան

Տպագրությունը՝ օֆսեր: Թուրքը՝ օֆսեր: Չափը՝ 60x84/16

Ծավալը՝ 10,5 տպ. մամ.

Տպարանակը՝ 200: Գինը՝ պայմանագրային

Տպագրված է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում

ՀՀ, Երևան 375051, Կոմիտաս 49/2, հեռ.՝ 23 25 28,

էլ-փոստ՝ info@zangak.am